

ԷԶՄԻԱԾԻՆ



ԺԱ.
2023




Զ. ՏԱՐԻ

ԲԱՊՐԵՐԻՍ

ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՆԻՐ
ԱՐԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԱՅՐ ԹՈՒԻՅ ՄԻՈՅ ԷԶՐԻԼՏԻ

ՆՊԵՏԵՐ

2023
Է. ԷԶՐԻԼՏԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ Գեորգ Մադոյեան

Լեզուատնական խմբագիր՝ Նարէ Սարգսեան

Տեխնիկական խմբագիր՝ Գոռ Գրիգորեան

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Գոհար Աւագեան,
Ազատ Բոգոեան,
Խաչիկ Բաֆֆի Գազեր
Վահէ Թորոսեան**





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Gohar Avagyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer
Vahe Torosyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал


Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Гоар Авакян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер
Ваге Торосян**



**Տ. ԱՐՄԱՆԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՒ ԱՍԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՅԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 24-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻ
ԱՌԹԻՎ՝ ԽՈՍՎԱԾ ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ**

(5 նոյեմբերի, 2023)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ձի՛ք ինչ ծածուկ՝ որ ոչ յայտ լիցի, եւ ոչ
գաղտնի՝ որ ծանիցի եւ եկեացէ ի յայտ»
(Դուկ. Ը. 17):

Սիրելի՛ հավատացյալներ, քույրեր եւ եղբայրներ,

Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ շատ հաճախ տեղի են ունենում գաղտնի հանդիպումներ, փակ դռների հետեւում կատարվում են գործառնություններ եւ գործարքներ: Այս երեւոյթը նոր չէ: Այն մարդկութեան պատմութեան առաջին իսկ օրերից դարձել է մարդու բնավորութեան եւ ապրելակերպի անբաժանելի մի մասնիկը: Դրանք հաճախ կատարվում են հանրութեան աչքից հեռու՝ երբեք չբացահայտվելու հույսով: Եթե դա մթութեան մեջ է տեղի ունենում, ոչ ոք չի տեսնում, եւ մենք կարող ենք խուսափել դրանից կամ գոնե կարծում ու ենթադրում ենք, որ կարող ենք խուսափել բացահայտումից:

Վստահաբար մեզանից ամեն ոք ունի կատարած արարքներ, որոնք բացահայտ են, եւ արարքներ, որոնք ծածուկ են արված: Մեր կյանքում ձեւավորված է այն միտքը, թե այն, ինչ կատարվում է ծածուկ, վատ արարք է, եւ մթութեան մեջ կատարվածն անընդունելի արարք է:

Սակայն մթութեան մեջ արված բաները միշտ չէ, որ վատ բաներ են: Որոշ մարդիկ նախընտրում են իսկապես լավ բաներ անել այլ մարդկանց համար՝ առանց սպասելու բացահայտ ճանաչման կամ առանց ցանկու-

թյուն ունենալու, որ բացահայտվեն արարքները: Այնուամենայնիվ, անկախ թաքուն կատարված արարքներից, լինեն դրանք լավ թե վատ, մեր մտքում եւ հոգում հետեւյալ հարցն է առաջանում. արդյո՞ք Աստված իսկապես տեսնում եւ լսում է այն ամենը, ինչ «արվում է մթուծյան մեջ»:

Այսօրվա Ավետարանն ասում է. «...չկա ծածուկ բան, որ հայտնի չդառնա, ոչ էլ գաղտնի բան, որ չիմացվի ու չբացահայտվի» (Ղուկ. Ը. 17):

Ուրեմն միանշանակ կարող ենք ասել, թե Աստված տեսնում է ամեն ինչ: Այն, որ Աստված տեսնում եւ լսում է մթուծյան մեջ արած մեր գործերը, իրականում լավ բան է:

Ուստի այս հարցի պատասխանը պետք է բացահայտենք մեր հավատքի լույսով: Վստահաբար Նրա մեջ ենք տեսնում Աստծու սերը մեր հանդեպ, Աստծու արդարությունը մեր գործերի համար եւ Աստծու կողմից ճանաչումն ու պարգևատրումը:

Հետեւաբար եկեք խորապես անդրադառնանք այս երեք սկզբունքներին:

1. Առաջինն ապաշխարությունն է (Աստծու սեր մեր հանդեպ):

Երբ Աստված բացահայտում է մեր մեղքերը եւ հանցանքները, կարելի է գիտակցել, որ Նա չի փորձում խայտառակել կամ ամաչեցնել մեզ: Նա փորձում է ճիշտ ճանապարհի բերել մեզ, որը տանում է դեպի ապաշխարություն:

Մտածենք դրա մասին այս կերպ. Աստված մեզ այնքան է սիրում, որ նախընտրում է բացահայտել մեր մեղքերը, քան թույլ տալ մեզ մնալ դրանց որոգայթի մեջ: Նպատակը մեզ ապաշխարության վայր բերելն է, եւ եթե դա նշանակում է, որ Նա պետք է բացահայտի մեր հանցանքները, Աստված դա կանի, քանի որ սիրում է մեզ:

Մեր երկնավոր Հայրն ավելի շատ մեզ հրավիրում է ապաշխարության՝ Իր հետ անհատական անդադրում հարաբերության եւ հաղորդակցության մեջ մնալու, հավիտենական վիճակի առաջնորդելու, քան մեզ մեր մեղքերի ու հանցանքների ճահճային շփոթության մեջ պահելու:

Իսկ դրան կարելի է հասնել միմիայն անկեղծ եւ իրական ապաշխարության միջոցով:

2. Երկրորդն Աստծու արդարադատությունն է:

Եթե մարդը նախընտրում է չապաշխարել, ի վերջո գալիս է հաշվետվության օրը: Շատ մարդիկ կարող են մատնանշել բազմաթիվ ոլորտներ այս աշխարհում, որտեղ, թվում է, արդարադատություն չի իրականաց-

վում, կամ ամեն ինչ արդար չէ: Այն փաստը, որ Աստված իսկապես տեսնում եւ լսում է այն, ինչ արվում է մթության մեջ, պետք է հուսադրող լինի, քանի որ դա նշանակում է, որ ոչ ոք իրականում չի կարող խուսափել արդարադատությունից: Մենք գուցե կարող ենք խուսափել օրենքի ճիրաններից, բայց ոչ երբեք՝ Տիրոջ աչքից:

Յուրաքանչյուր չար խոսք կամ գործ, ամեն մի մեղք, որը չի սրբվել եւ լուծվել Հիսուսի թափված փրկարար արյամբ, անպայման ունի եւ պիտի ունենա հաշվետվության օրը: Ի դեպ՝ սա ոչ թե ուրախանալու, այլ ողբալու բան է: Երբ մենք մտածում ենք մարդու հավերժական նպատակակետի մասին, երբ պետք է վճարենք մեր մեղքի ամբողջ պատիժը, դա պետք է ցավ պատճառի մեր սրտին: Միայն դա պետք է պատճառ դառնա, որ ողորմությունն ու շնորհը բարգավաճեն մեր մեջ եւ միայն բարի պտուղներ տան:

Հիշենք, որ մեզանից ոչ ոք արժանի չէ այն խոստացված ներումին եւ փրկությանը: Մենք՝ բոլորս՝ դուք եւ ես, պարզապես Աստծու փառահեղ շնորհի զավակներն ենք:

3. Երրորդն Աստծու կողմից մեր գործերի ու արարքների ճանաչումն է եւ պարզեւատրումը:

Արդ փաստ է, որ Աստված տեսնում եւ լսում է այն ամենը, ինչ արվում է մթության մեջ: Մեր Տեր Հիսուս Քրիստոսը Մատթեոսի Ավետարանի «Լեռան քարոզի»-ի մեջ սովորեցնում է ողորմությունը, աղոթքը եւ ծոմապահությունը կատարել ոչ ի ցույց մարդկանց, ողորմություն կատարելիս պետք է քո ձախ ձեռքը չիմանա, թե քո աջն ինչ է անում (Մատթ. 2. 3):

Երբ աղոթք անես, չլինես կեղծավորների պես, որոնք սիրում են ժողովարաններում եւ հրապարակների անկյուններում կանգնած աղոթել, որպեսզի մարդկանց տեսանելի լինեն: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ նրանք իրենց վարձն ստացել են: Այլ երբ դու աղոթես, մտի՛ր քո սենյակը, փակի՛ր դուռդ եւ ծածուկ աղոթի՛ր քո Հորը (Մատթ. 2. 5–6):

Եւ երբ ծոմ եք պահում, տրտմերես մի՛ եղեք կեղծավորների պես, որոնք իրենց երեսը խոժոռում են, որպեսզի մարդկանց ցույց տան, թե ծոմ են պահում: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ նրանք իրենց վարձն ստացել են: Այլ երբ դու ծոմ պահես, օժի՛ր գլուխդ եւ լվա՛ երեսդ, որպեսզի ցույց չտաս մարդկանց, թե ծոմ ես պահում, այլ ծածուկ կերպով երեւաս քո Հորը (Մատթ. 2. 16–18):

Քրիստոս այս երեք պարագաներում ասում է. այն ժամանակ քո Հայրը, որ տեսնում է ծածուկը, քեզ հայտնապես կհատուցի:

Գաղտնի բաները, որոնց մասին խոսում է մեր Տերը, ողորմություն տալն է, աղոթելը եւ ծոմ պահելը:

Այնուամենայնիվ, «Լեռան քարոզի» այս ճշմարտությունը վերաբերում է մեր բոլոր արդար գործերին: Բարի գործերը եւ արդար ապրելը մարդու աչքի համար չեն, որպեսզի բոլորը կարողանան խոսել այն մասին, թե որքան «հրաշալի» ես դու: Փոխարենը՝ բարի գործեր անելը եւ արդար կյանք ապրելը արվում են ծածկաբար, որ միայն Աստված է տեսնում:

Հիսուսն անգամ նշում է՝ աղոթելիս մտիր առանձնասենյակդ եւ փակիր դուռը: Սա գաղտնապահ եւ առանձնական աղոթքի թերեւս ամենախիստ դրսևորումն է:

Երբ այս գաղտնի բաներն արվում են ի սրտե կամ մեր նկարագրին համապատասխան, լիիրավ եւ պատշաճորեն ներշնչում են մեզ: Երբ Աստված տեսնում եւ լսում է ծածկաբար կատարված մեր բարի գործերը, նա անպայման վարձատրում է մեզ եւ նույնիսկ բացահայտ հատուցում է մեզ: Եւ սա՝ ոչ թե ի վնաս մեզ, այլ՝ ի պատիվ մեզ:

Ջարմանալի չէ, թե ինչպես եւ ինչ ձեւերով է Աստված պատվում նրանց, ովքեր չեն ձգտում գովասանքի, մարդկանց կողմից հարգանքի, այլ խոնարհեցնում նրանց, ովքեր դա անում են:

Եւ ի վերջո, սիրելի՛ հավատացյալներ, եկեք ապրենք խոնարհության մեջ: Ընդունենք, որ մենք նույնքան խոցելի ենք մթնոլորտի մեջ արարքների եւ խոսքերի համար, ինչպես բոլորը: Թող այս խոնարհությունն ստիպի մեզ ավելի զգոն լինել, որպեսզի մեր հպարտությունը մեզ կործանման առիթ եւ պատճառ չդառնա:

Հովհաննես առաքյալն ասում է. «Իսկ եթե լույսի մեջ ենք քայլում, ինչպես որ Նա է լույսի մեջ, հաղորդության մեջ ենք միմյանց հետ, եւ Նրա Որդի Հիսուս Քրիստոսի արյունը մեզ մաքրում է ամեն մեղքից» (Հովհ. Ա. 7):

Հետեւաբար եկեք աղոթենք եւ ասենք. Տէր, օգնիր ինձ քայլել լույսի մեջ, օգնիր ինձ քայլել Քո շնորհի ազատության մեջ, որպեսզի մաքուր պահեմ իմ մտքերը, խոսքերը եւ ճանապարհները, եւ որպեսզի ոտքերս ինձ շտանեն դեպի մոլոր ու մեղավոր վայրեր: Թող այն ամենը, ինչ արվում է առանձին-առանձին, հաճելի լինի Քեզ՝ ի պատիվ եւ ի փառս Սուրբ Երրորդության:

* * *

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր Հայաստանյայց Եկեղեցին ի Հայաստան եւ ի սփյուռս աշխարհի տոնում է ազգիս Հայրապետ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության եւ օծման 24-րդ տարեդարձը:

Ուստի, նախ եւ առաջ, այս առթիվ թույլ տվեք Մայր Աթոռիս միաբանության եւ նաեւ ձեր անունից շնորհավորել Վեհափառ Հայրապետին՝ գահակալության եւ օծման 24-րդ տարեդարձի կապակցությամբ:

Վեհափառ Տեր, Ձերդ Սրբության գահակալության տարիների ընթացքում մեր Եկեղեցին ապրեց նոր վերելքներ՝ հոգեւոր-կրթական, եկեղեցաշինության եւ հոգեւոր-հովվական ասպարեզներում: Ձեր շնորհիվ վեր խոյացան բազմաթիվ եկեղեցիներ, որոնց զանգերի ղողանջները դարձան անլուելի հրավերներ մեր ժողովուրդի հոգեւոր զարթոնքին: Հայրապետական զգաստացուցիչ պատգամներով հեռատեսորեն մխիթարեցիք տառապյալ հայ ժողովրդի զավակներին՝ առաջնորդելով նրանց հայրենասիրության եւ հայրենատիրության գաղափարներով եւ հեռու պահելով նրանց դժվարին, տագնապալի, ճակատագրական ու փոթորկալից ուղիներից: Հատկապես վերջին տարիներին եւ ամիսներին Արցախի գաղթական ժողովրդին հանդիսացաք նեցուկ, գուրգուրացող հայր եւ խնամատար Հայրապետ: Եւ դեռ բազում ծառայությունների մասին, որոնք կատարվել եւ կատարվում են լույսայն, ամենայն համեստությամբ, եւ որոնք արժանի են հիշատակի, ապագայի պատմիչները պիտի պատմություններ հյուսեն, քանզի, ըստ ավետարանական խոսքի, «չկա ծածուկ բան, որ հայտնի չդառնա, ոչ էլ գաղտնի բան, որ չիմացվի ու չբացահայտվի» (Ղուկ. Ը. 17):

Կիրակնօրյա ավետարանական խորհրդով եւ հոգեւոր ցնծությամբ շնորհավորում ենք Ձերդ Սրբության օծման օրհնաբեր տոնը՝ ազոթք բարձրացնելով առ ամենակալն Աստված, որ Տերը ծաղկուն պահի հայրապետական Ձեր գավազանը՝ հովվելու եւ առաջնորդելու հավատավոր Ձեր հոտին բազում տարիներ: Հայցում ենք Բարձրալից, որ Նա Ձերդ Սրբությանը պարգևի կենաց արեւշատ օրեր, քաջառողջություն եւ երկար տարիներ՝ ի փառս մեր Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ ի բարօրություն հայ ազգին: Ամեն:



Տ. ԴԵՐԵՆԻԿ ԱՐԵՂԱ ՍԱՅԱԿՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(12 նոյեմբերի, 2023)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Մի՛ երկնչիր, միայն հաւատա՛...»
(Ղուկ. Ը. 51):

Փառք Քեզ Աստված, փառք Քեզ, ամեն ինչի համար փառք Քեզ: Փառք այսօրվան, որ Աստծու կամոք արժանի եղա լեփ-լեցուն եկեղեցու մեջ պատարագելու եւ քարոզելու:

Սիրելի՛ հավատավոր հայորդիներ, այսօրվա ավետարանական պատմությունը մեզ պատմում է այսօրվա իրականության մասին: Եկեք մտովի մի պահ հետ գնանք 2000 տարի առաջ, երբ Քրիստոսի փառքը տարածվել էր, եւ ամենուր խոսում էին Հիսուսի զորության, հրաշքների մասին: Եւ այդ օրերին հիվանդանում է Հայրոս ժողովրդապետի դուստրը: Մահամերձ աղքատ հայրը, որ մեծ պաշտոնյա էր եւ լայն հնարավորությունների տեր, վախ է ապրում, ներսում ի հայտ են գալիս անհուսությունը, թերահավատությունը, մոռանում է իր փառքը, տկարանում եւ սկսում է օգնություն փնտրել:

Համատես Ավետարաններում կարդում ենք, որ նա անգամ ծնկաչոք աղաչում է Հիսուս Քրիստոսին, որ գա եւ փրկի իր դստերը: Սա ինչի մասին է խոսում, եթե ոչ վախի, որը մարդս ծննդյան օրվանից սկսյալ իր մեջ կրում է: Մենք ամեն ինչի նկատմամբ վախ ունենք. ապրելու, գործելու, խոսելու, արարելու: Վախը նաեւ հոգեբանական բարդույթ է: Փիլիսոփայության եւ աստվածաբանության մեջ այն բոլոր ժամանակներում ուսումնասիրության նյութ է եղել: Գիտափորձերի միջոցով ամեն ինչ անում են հասկանալու համար վախի պատճառներն ու փորձում գտնել այն հաղթահարելու ուղիները: Եւ այս կյանքի ամենամեծ վախը մահվան վախն է: Մահվան նկատմամբ վախն է, որ մեզ դարձնում է անհույս եւ թերահա-

վատ, սակայն տեսնում ենք, որ ողջ Աստվածաշունչը լի է մահվան նկատմամբ հաղթանակի ոգով: Վախը երբեք չի դադարում մարդկային թուլություն լինելուց, բայց Աստված երբեք չի դադարում ասել՝ «Մի վախեցիր»: Աստվածաշունչը մեզ սովորեցնում է, որ մենք չպետք է վախենանք, եւ այն, ինչ պահանջվում է մեզանից, դա հուսալն ու հավատալն է:

Հիշենք Եղիսեի պատմությունը. Ասորեստանը հարձակվել էր Իսրայելի վրա, եւ նրա ծառան, տեսնելով թշնամու բազմությունը, վախեցած աղաղակում է՝ ասելով, թե մենք պարտված ենք: Ի տարբերություն ծառայի, որ նայում էր միայն մարդկային տկար տեսողությամբ, Եղիսեն, լինելով մարգարե, աստվածային տեսությամբ ասում է. «Ինչից ես վախենում, երբ Տերը մեզ հետ է»:

Եւ Հայրոսի պատմության մեջ կարդում ենք, որ Տերը, տեսնելով տառապող հոր աչքերում վախը, ասում է. «Մի՛ վախեցիր, այլ հավատա»։ Ահա՛, այստեղ երեւում է երկրորդ կարեւոր շնորհը, որ Աստծուց տրված է՝ սերը: Աստվածային սիրով էր Տերն ասում՝ մի վախեցիր: Այստեղ խոսքը նվիրական, զոհաբերական սիրո մասին է: Այն սիրո, որով Տեր Հիսուս Քրիստոս եկավ աշխարհ: Այս աշխարհում չենք գտնի մի մարդու, որ անգամ արդարների համար իր կյանքը կզոհաբերի, առավել եւս՝ մեղավորների համար, իսկ Տերը եկավ աշխարհ՝ հենց մեղավորների համար իր կյանքը զոհելու: Հիվանդ աղջկա կերպարի մեջ տեսանելի է մեր ողջ մարդկությունը, որին Քրիստոսն իր նվիրական սիրով մոտեցավ:

Հաջորդ կարեւոր կետն այս պատմության մեջ այն է, երբ Հայրոսի ծառաները գալիս եւ ասում են, որ զուր տեղը նեղություն մի տուր Վարդապետին, քանի որ դուստրդ մեռավ: Մի պահ, երբ նայենք մեր կյանքին, տեսնենք մեր հարազատների մահը, կտառապենք, քանզի երբ ասեն, որ մեռավ, այդ ժամանակ մեր մեջ կմեռնեն հույսը, հավատը եւ սերը: Ահա այդ ժամանակ է, որ ծագում է Տիրոջ հավիտենական հույսը:

Պողոս առաքյալն ամբողջ իր քարոզչության մեջ խոսեց հույսի մասին, դարձավ հույսի առաքյալ՝ ասելով. «...նեղությունները համբերություն են բերում, համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս: Հույսը երբեք չի ամաչեցնում» (Հռոմ. Ե. 3–4), Աստծուն անվանում է հույսի Աստված: Եւ այն վայրկյանին, երբ արդեն հաղորդում են, որ այլեւս դուստրդ մահացած է, այդ պահին է, որ ծագում է նրա մեջ հույսը: Սակայն հույսի նկատմամբ մեր զգացողությունները տարբեր են: Մենք կարծես երբեմն ընթերցում ենք Աստվածաշունչը որպես անցյա-

լի մի պատմություն, երբեմն գեղագիտական հաճույք ենք ստանում, երբեմն էլ՝ հոգեւոր բավարարություն, բայց նմանօրինակ պատմություններ մեր այս օրերում եւս տեղի են ունենում: Կհիշեք, հուսամ, երբ Նարեկ Պողոսյանը Հայաստանի սահմանային կռիվներից մեկի ժամանակ ծանր վիրավորվել էր, եւ հեռուստատեսությամբ հայտարարեցին, որ մեռած է: Պատկերացրեք այդ ծնողների հոգեվիճակը, երբ կանգնում եւ ասում են՝ քո զավակը մեռած է: Բայց ինչ տեղի ունեցավ ընդամենը ըրպենք հետո. հայտարարեցին, որ Նարեկի սիրտն սկսեց աշխատել: Այստեղ հույսի երկու պատկեր ենք տեսնում. առաջինը բժիշկների հույսն է, որոնք դարձյալ փորձեցին՝ եւս մեկ անգամ հույս տածելով, որ նա կապրի, եւ երկրորդը՝ ծնողների հույսը, որոնք, անգամ լսելով, որ իրենց զավակը մեռած է, դարձյալ հույս ունենին, որ իրենց զավակը կապրի, եւ ապրեց:

Սիրելիներ, հույսի ճանապարհն այս կյանքի կարեւորագույն ճանապարհն է, որովհետեւ Աստված ոչ թե մեր վերջին հույսն է, այլ Աստված մեր միակ հույսն է: Հույսի մասին խոսելով՝ մենք այսօր կտրտմենք՝ նայելով մեր Արցախ աշխարհին, բայց, հուրախություն մեզ, ասեմ, որ ազգիս Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ Արցախի մեր հայոց թեմը չլուծարվեց: Սա ինչի մասին է խոսում, եթե ոչ այն հույսի, որ Հայոց եկեղեցիները դարձյալ պիտի մեր շուրթերի աղոթքներով լցվեն, հայ հոգեւորականը այնտեղ պետք է աղոթք հնչեցնի, եւ մեր հույսը երբեք չպիտի կորցնենք, որովհետեւ Աստված ամոթով չի թողնելու մեզ:

Երբ հարցնում են հույն մեծ փիլիսոփա Արիստոտելին, թե ինչ բան հույսը, պատասխանում է, որ հույսը քունն է, քնելն է, եւ ավելացնում է. որովհետեւ մարդը, որ հույս չունի, թե առավոտյան արթնանալու է, երբեք չի կարող քնել:

Չքնած մարդը պետք է միշտ տառապի, հետեւաբար հույսը նաեւ խաղաղություն է:

Ուրեմն, սիրելիներ, Աստվածաշունչն առաջին իսկ էջից մինչեւ վերջին էջը հույսի ճանապարհ է:

Մարգարեները նույնպես խոսել են հույսի մասին: Երեմիան երանի է տալիս այն մարդուն, որը հույսը դրել է Աստծու վրա: Ուրեմն եկեք ապավինենք Աստծուն, եւ եթե անգամ մահվան պատկերի առջեւ լինենք, Հայրոսի հավատն ունենանք եւ հույսով լցվենք, որ մեր զավակն ապրելու է, մեր սիրելիներն ապրելու են, մեր նպատակները իրականություն են դառնալու, մեր հայրենիքը շենանալու, եւ մեր Եկեղեցին զորանալու է:

Նայեք Հայոց պատմությանը: Որքան էլ ծանր, անհույս օրեր ենք ունեցել, բայց անհուսության վայրկյանին դարձյալ ծագել է հուսո Սրեգակը, մեր հույսի Աստվածը եւ ասել է, որ մի՛ վախեցիր, այլ հուսա, եւ քեզ ամոթով չեմ թողնի: Տեղին է հիշել մեր մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի «Լուսավորչի կանթեղ» գեղեցիկ բանաստեղծությունը.

Ով անմեղ է լի՛ք սիրով
Ու հավատով անսասան,
Ով նայում է վառ հույսերով
Դեպի Հայոց ապագան,
Նա կտեսնի էն մշտավառ
Ջահը կախված երկնից,
Ասես Աստծո աչքը պայծառ
Հսկում է ցած երկնից:

Թող մեր հույսի Աստված առատացնի մեր մեջ հույսը, հավատը, եւ այդ համոզումով քայլենք այս ճանապարհը եւ հավատանք, որ ամենավերջին վայրկյանին անգամ կծնվի մեր մեջ հույսը:

Տիրոջ սերը, խաղաղությունը, հույսն ու հավատը թող որ լինեն բոլորիս հետ այսօր եւ հավիտյանս, ամեն:



Տ. ԹՈՎԱՄՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(19 նոյեմբերի, 2023)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն.

«Որ ո՛ր ընկալցի զմանուկս զայս յանուն Իմ՝
զԻս ընդունի. եւ որ զԻս ընդունիցի՝ ընդունի
զառափիչն Իմ. զի որ փոքրիկն է յամենեսին
ի ձեռն՝ նա եղիցի մեծ»

(Ղուկ. Թ. 48):

Քրիստոս Իր աշակերտներին հետ Կափառնայում քաղաք էր գնում՝
ճանապարհին խոսելով Իր՝ մարդկանց ձեռքը մատնվելու, խաչվե-
լու, հարուժյուն առնելու եւ այլ նյութերի շուրջ: Աշակերտները զրույցի
մի մասը հասկանում էին, մյուս մասը, Ղուկաս ավետարանչի բառերով
ասած, «չէին ըմբռնում»: Բայց մի բան հստակ էր. Հիսուս գոնե ֆիզիկա-
պես վաղ թե ուշ չէր լինելու Իր աշակերտներին հետ:

Այս մտածումների կամ նույնիսկ մտահոգությունների մեջ աշակերտ-
ները խոսում եւ մինչեւ անգամ վիճում էին միմյանց հետ, թե երբ Տերը
գնա, ապա ով է իրենցից մեծը կամ առաջնորդը լինելու: Այդ մասին, սա-
կայն, նրանք վարանում են հարցնել Հիսուսին: Ի վերջո, Հիսուս Իր մոտ է
կանչում աշակերտներին, եւ նրանք ստիպված են լինում խոստովանել:
Իմանալով վեճի պատճառը՝ Հիսուս մի մանուկ է կանգնեցնում նրանց
առջեւ ու ասում է. «Ով որ այս մանկանն ընդունի իմ անունով, ինձ է ըն-
դունում, իսկ ով որ ինձ ընդունի, ընդունում է ինձ Ուղարկողին. որովհե-
տեւ ով որ ձեր մեջ փոքրագույնն է, նա է մեծ» (Ղուկ. Թ. 48):

Սիրելիներ, ինչպես հասկացաք, Ավետարանի՝ այսօրվա մեզ բոլորիս
պատգամը խոնարհության առաքինության մասին է: Խոնարհությունը
բոլոր առաքինությունների մայրն է: Պատահական չէ, որ Եկեղեցու սուրբ
հայրերը խոնարհությունը կարգել են իբրեւ առաջին եւ ամենակարեւոր
առաքինություն՝ ցույց տալով դրա աստվածահաճոյությունը եւ այն կրող
մարդկանց՝ Աստծու սիրելիները լինելու հանգամանքը:

Հետաքրքրական մի փաստ: Լատինական լեզուներում “humility”, այսինքն՝ «խոնարհություն» բառը ծագում է “humus” բառից, որ նշանակում է հող: Ասել է թե՛ մարդն ստեղծված է հողից եւ կրկին հող է դառնալու, այդ դեպքում ինչո՞ւ պետք է մեծամտանա, արդյո՞ք կարճատեւ, անցողիկ ու նյութական հաջողությունների համար:

Խոնարհությունը քրիստոնեական կյանքում ճանապարհն է փրկության, իսկ խոնարհ մարդը հաճելի Աստծուն:

Առաքինությունները շնորհ են, Աստծու պարգեւ, բայց նաեւ՝ ընտրություն: Ծննդոց գրքի առաջին գլխում կարդում ենք, որ մարդն ստեղծված է Աստծու պատկերով եւ նմանությամբ (Ծննդ. Ա. 26): Եթե պատկերը վերաբերում է մարդու հոգեւոր էությանը, այսինքն՝ մարդու հողեղեն շինվածքը հոգով օժտելուն, ապա նմանությունն ընտրությամբ է: Պատկերն ի բնե մարդն ունի, իսկ Աստծուն նմանությունը ձեռքբերովի է: Առաքինությունները, ուրեմն, ընտրություն են, որ Աստծու պատկերով ստեղծվածներս ամենօրյա հոգեւոր աշխատանքով կարողանանք նաեւ նմանվել մեր Արարչին:

Իրապես, խոնարհությունը պետք է լինի կամովին: «Ով խոնարհեցնում է իրեն, ինչպես այս մանուկը, երկնքի արքայության մեջ նա է մեծ» (Մատթ. ԺԸ. 4): Ուրեմն՝ Տերը տարբերություն է դնում խոնարհության եւ խոնարհեցվելու միջեւ: Խոնարհեցվելն այն է, երբ դու խոնարհվում ես ուրիշի միջոցով, ուրիշի նախատինքն է քեզ ստիպում խոնարհվել: Հայրերն այս երեւույթն անվանում են «հարկադիր հնազանդություն» եւ մեզ կոչ անում, որ մենք մեր իսկ կամքով եւ ամենայն հոժարությամբ խոնարհվենք, ճիշտ այնպես, ինչպես Տեր Հիսուս արեց Իր երկրային կյանքում:

Խոնարհության կատարյալ եւ ամենամեծ օրինակը մեր Տերն ու մեր Փրկիչն է՝ Հիսուս Քրիստոսը: Նայենք Նրան, թե ինչպիսի խոնարհությամբ ապրեց Իր երկրային կյանքի ողջ ընթացքը: Զխորշեց աղքատ կամ անգրագետ մարդկանց առաքյալներ կարգելուց, աստվածային շնորհները լիովին բաշխեց հիվանդներին, կարիքավորներին, սգավորներին մխիթարեց, քաղցածներին կերակրեց: Նա Իր ժողովրդի մեջ էր, նրանց հետ՝ աղքատների եւ հարուստների, ռամիկների եւ իշխանավորների, սրբերի եւ մեղավորների:

Իսկ խոնարհության ամենամեծ դասը, որ Նա տվեց ամենքիս, անշուշտ, ոտնւվան էր, երբ խոնարհվեց եւ լվաց Իր աշակերտների ոտքե-

րը՝ տալով մեզ աստվածային այդ առաքինության ամենամեծ եւ հավերժական պատգամը, որպեսզի մենք եւս այդպես վարվենք մեկս մյուսի հանդեպ:

Իսկ այսօր ահա Քրիստոս պատգամում է ամենքիս լինել մանուկների պես խոնարհ ու հեզ: Նա փոխեց մեծի եւ մեծության մասին մարդկության մտածելակերպը՝ մեզանից պահանջելով ոչ թե իշխել իրար, այլ իր օրինակով խոնարհաբար ծառայել մեկս մյուսին, եթե նույնիսկ ունենք իշխելու իրավունք կամ հանգամանք:

Անապատական հայրերից մեկին հարցնում են, թե ինչ է խոնարհությունը: Նա պատասխանում է, որ խոնարհությունը մեծ գործ է՝ Աստծու գործը: Խոնարհության ձեւը մարմնական աշխատանք ստանձնելն է եւ «բոլորի ծառա լինելը»: Կրկին հարցնում են, թե ինչ է նշանակում «լինել բոլորի ծառա»: Սուրբ հայրն ասում է՝ դա «նշանակում է չնայել ուրիշների մեղքերին, այլ միշտ նայել սեփական սխալներին եւ անդադար աղոթք անել»:

Խոնարհությունը մարդուն միանգամից մի քանի հոգեւոր շնորհներով է օժտում՝ սիրով, պարզությամբ, հեզությամբ, բարության, անհիշաչարության, հնազանդության: Խոնարհն ընտրում է հոգով աղքատությունը եւ արժանանում միաժամանակ հոգեւոր հարստության:

Խոնարհությունը որեւէ կերպ պետք չէ շփոթել խեղճության հետ: Այստեղ երկու կարեւոր հանգամանք պետք է ընդգծել:

Ա. Խոնարհ մարդն ինչ-որ բանի հասած մարդն է, որն իր հաջողություններով թերեւս հպարտանալու առիթ ունի, բայց հասկանում է, որ այն, ինչ ձեռք է բերել, Աստծուն է պատկանում, Նրանից է տրված, հետեւաբար չի մեծամտանում, այլ խոնարհվում է Աստծու առաջ: Պիտի ունենաս, որ հրաժարվես, պիտի հասած լինես որեւէ բանի՝ հպարտանալու չափ, բայց ընտրես խոնարհությունը եւ հաստատվես այդ առաքինության մեջ, այն դարձնես քո տեսակն ու էությունը:

Բ. Խեղճությունը հատուկ է թույլ մարդկանց, մինչդեռ խոնարհ մարդն ուժեղ, հզոր, աշխատասեր, առաքինի մարդն է:

Տեր Հիսուս որքան բարձրացնում է խոնարհության առաքինության դերը մարդու կյանքում եւ կարեւորում այն՝ հռչակելով, թե ով ընդունի մանուկներին, Իրեն է ընդունում, նույնքան եւ դատապարտում է խոնարհներին կամ մանուկներին գայթակղեցնողներին՝ ասելով. «Ով գայթակղեցնի փոքրիկներից մեկին, նրա համար ավելի լավ է նրա պարանոցից էջի երկանաքար կախվի, եւ նա ծովի խորքն ընկղմվի» (Մատթ. ԺԸ. 6):

Սուրբ Հովհան Ոսկեբերանը մի կարեւոր դիտարկում է անում խոնարհության վերաբերյալ: Ասում է, որ խոնարհության պետք է ձգտել, բայց եւ պետք է չափազանց ուշադիր լինել, որպեսզի խոնարհությունը չվերածվի փառամոլության, քանի որ, ըստ մեծ հայրապետի, շատ խոնարհներ ընկնում են մեծամտության մեղքի մեջ: Իսկապես, խոնարհությունը փրկության դուռ է, բայց նաեւ հեշտորեն մեծամտության պատճառ կարող է դառնալ: Այստեղ, իհարկե, պետք է միշտ հիշել մեր Տիրոջ մեկ այլ պատգամը. «Երբ կատարեք այն բոլորը, որ ձեզ հրամայված է, ասացեք, թե՛ անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտավոր էինք անել, այն արեցինք» (Ղուկ. ԺԷ. 10): Ոսկեբերան Հայրապետն ասում է նաեւ, որ ավելի լավ է խոնարհ չլինել ընդհանրապես, քան թե ձգտել խոնարհության եւ ընկղմվել փառամոլության մեղքի հորձանուտը:

Եւ, իրապես, «Հարանց վարք»-ում՝ մենակյաց կամ վանական սուրբ հայրերի կյանքը պատմող վկայությունների մեջ, բազմաթիվ են այն դեպքերը, երբ այս կամ այն կրոնավորն իր կյանքը նվիրել է Աստծուն, հրաժարվել աշխարհից, սակայն իր հպարտության մեղքին տրվելով՝ կորցրել է Աստծու բարեհաճությունը: Այսինքն՝ խոնարհության բացակայությունը կործանում է նույնիսկ Աստծու ճանապարհն ընտրած մարդկանց:

Եսայիի մարգարեության մեջ կարդում ենք. «Տերն ասում է. Ես ղմ կնայեմ, եթե ոչ հեզերին, խոնարհներին եւ Իմ խոսքերից դողացողներին» (Եսայի. ԿԶ. 2), իսկ Սիրաքի Իմաստության գրքում կարդում ենք հետեւյալ խրատը. «Որքան մեծ լինես, այնքան խոնարհեցրու քո անձը, որպեսզի շնորհ գտնես Տիրոջ առաջ» (Սիրաք Գ. 20):

Խոնարհ մարդն իր անձով փառաբանում է Աստծուն եւ մեծապես պարգեւներ է ստանալու Աստծուց, ինչպես եւ Տերն է ասում Առաջին Թագավորությունների գրքում. «Ես փառավորելու եմ ինձ փառավորողներին» (Ա. Թագ. Բ. 30):

Ուրեմն՝ խնդրենք այսօր Աստծուց, որ մեզ զարդարի առաքինություններով՝ մեր կյանքը դարձնելով առավել աստվածահաճո:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը եւ խաղաղությունը թող լինի մեզ բոլորիս հետ. ամեն:



Տ. ՊԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱՊԻՆ

(26 նոյեմբեր, 2023)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի քույրեր եւ եղբայրներ, շատերս լսել ենք դրամի, նյութականի պատճառով ավերված կյանքերի, ընտանիքների քայքայման մասին: Ամեն օր լսում ենք տարատեսակ հանցագործությունների մասին, որ տեղի են ունենում ազահույության պատճառով: Ավետարանական ընթերցումն այսօր, կարելի է ասել, ամբողջապես վերաբերում է ազահույության: Մինչև Սուրբ Ծնունդ կիրականօրյա ընթերցումները լինելու են Ղուկասի Ավետարանից: Նաև այսօրվա ընթերցումը Ղուկասի Ավետարանից է՝ ԺԲ. գլխից, ուր մեր Տեր Հիսուս Քրիստոս մի յուրահատուկ ուսմունք է տալիս, որ, կարծես թե, այդ ժամանակվա եւ թերևս այսօրվա մարդկանց համար փոքր-ինչ տարօրինակ կարող է թվալ: Հատվածն ընթերցելիս թվում է, թե Քրիստոսին ընդունում էին իբրև մի պարզ ուսուցիչ: Այսպես՝ մի երիտասարդ, մոտենալով Քրիստոսին, ասում է. «Վարդապետ, ասա եղբորս, որ ժառանգությունն ինձ հետ բաժանի»: Այն ժամանակ ընդունված սովորությունն էր, որ ծնողների մահից հետո եղբայրներն իրենց միջև բաժանում էին ամբողջ ընտանիքի ժառանգությունը. ավագ եղբայրը՝ երկու բաժին, մնացածը՝ ավելի փոքր՝ մեկական բաժին էին ստանում: Եւ ավագ եղբայրը թերևս զրկել էր փոքր եղբորն իրեն հասանելիքից, եւ հետևաբար վերջինս եկել էր Քրիստոսի մոտ, որպեսզի Քրիստոս դատը տեսնի: Իսկ Քրիստոս ասում է. «Ով մահիդ, ով ինձ դատավոր կամ բաժանարար կարգեց ձեզ վրա, — եւ դրանից հետո դարձավ ժողովրդին եւ ասաց, — տեսե՛ք, որ զգույշ լինե՛ք ամեն տեսակ ազահույությունից, որովհետեւ մարդու կյանքն իր կուտակած հարստության մեջ չէ»: Շատ տարօրինակ է. կարծես թե պետք է ավագ եղբորն ասեր, որ կրտսերին տար իրեն պատկանելիք հարստության մասը, բայց Իրեն դիմող երիտասարդին է ուղղում Իր հորդորը: Մենք էլ այսօր, երբ մտածում ենք ազահույության

մասին, նախ և առաջ մեր մտքին գալիս են հարուստները: Մենք մտածում ենք, թե հարուստներն են, որ սիրում են կարողություն դիզել: Իսկապես, որոշ հարուստներ սիրում են ազահաբար ավելի ու ավելի շատ հարստություն կուտակել: Բայց այդպես չէ բոլորի պարագայում, և այնպես չէ, որ բոլոր աղքատները կամ մենք՝ բոլորս, ազահույթյան այս թուլությամբ այդ մեղքի մեջ երբեք չենք ընկնում:

Եւ, սիրելիներ, դրա համար Աստված ասում է. «Որովհետեւ մարդու կյանքն իր կուտակած հարստության մեջ չէ»: Երբեմն մարդ մտածում է, թե արժեքավոր իրերի շնորհիվ է հարգանքի արժանանում մարդկանց կողմից: Բայց իրականում մեզ մարդիկ սիրում և հարգում են ոչ թե մեր ունեցվածքի, այլ մեր արժեքի շնորհիվ: Մենք ենք Աստծու համար այդ արժեքը:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս մեկ այլ առակ է պատմում աշակերտներին մի այլ մեծահարուստի մասին, որն այնքան էր հարստություն կուտակել, որ այլևս տեղ չուներ իր ամբարած ցորենը և այլ հարստությունը տեղավորելու համար, և ասում է, որ ահա այսքան արդեն կուտակել եմ, հիմա պետք է քանդեմ իմ փոքր ամբարները և պահեստները, ավելի մեծերը կառուցեմ և այնտեղ պիտի տեղավորեմ ունեցվածքս և հետո պիտի ուտեմ, խմեմ և ուրախ պիտի լինեմ: Աստված ասում է նրան. «Անմիտ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու եմ, իսկ ինչ որ պատրաստել ես՝ ումն է լինելու»: Տիրոջ այս վերջին խոսքերը կարծես այսօր էլ մեզ պատգամում են կառչած չմնալ որեւէ ունեցվածքի և հարստության:

Այո՛, մեր կյանքի ընթացքում սիրում ենք ապահովություն. դա վատ բան չէ: Մարդիկ առողջապահական ապահովագրություն են անում, դրամ են կուտակում, որպեսզի ավելի ապահովված լինեն: Բայց երբ շարունակ կուտակում են, իրենց կարող է թվալ, թե իրենք են այդ ամենն ստեղծել, և իրենք են այդ ամենի տերը: Հիսուս Քրիստոս այդ պատճառով է, որ մեզ ասում է՝ ում է մնալու այն ամենը, ինչ որ կուտակել ես: Հետևաբար, մեր այդ ապահովության մեջ Փրկիչ մեր Տերն ասում է. «Մի՛ մտահոգվեք վաղվա մասին»:

Տեսեք, յուրաքանչյուրս մտահոգվում ենք մեր և մեր ընտանիքի ապագայի մասին: Եւ այդ մտատանջությունները մեզ թույլ չեն տալիս, որ երջանիկ ապրենք այսօրվա օրը, թույլ չեն տալիս վայելել այսօրվա օրը, որովհետեւ Աստված յուրաքանչյուր օր պարգևել է մեզ, որպեսզի այն ուրախ ապրենք: Ցանկացած խնդրի համար, որն այնքան մեծ ու կարևոր է, որ մեզ համար մտահոգության պատճառ կարող է դառնալ,

պետք է աղոթել: Շատերը մեզ մեղադրում են և ասում՝ մտնում ենք եկեղեցի, եկեղեցու մեջ եղած մարդկանց դեմքերը կարծես խոժոռ են, մարդիկ միշտ տխուր են, ինչո՞ւ է այդպես, եթե Աստծու հետ միասին եք, ինչո՞ւ եք այդքան խոժոռ: Բայց չէ՞ որ մենք գալիս ենք եկեղեցի և ուրախ ենք այստեղ գալով: չէ՞ որ եկեղեցում գտնում ենք Տիրոջը, փառավորում ենք Նրան և դրանով ավելի ենք ուրախանում: Ուստի մտահոգությունը վաղվա նկատմամբ, ապագայի նկատմամբ չպետք է մեզ համար մտատանջություն պատճառ լինի: Այո՛, խորագետ պետք է լինենք, չպետք է վատնենք այն, ինչ ունենք, բայց, սիրելիներ, արի ու տես, որ դրա մեջ չէ ապահովությունը, և շատ շատերն իրենց կյանքում դա զգացել են իրենց իսկ օրինակով, և հետևաբար նորից ու նորից մեր Տեր Հիսուս Քրիստոս մեզ այսօր ասում է, որ այն, ինչ ստեղծել է, Իրեն է պատկանում և մերը չէ: Պատկերացրե՛ք՝ այս աշխարհի մեջ մենք համակարգողներ ենք, կառավարիչներ: Մենք այս կյանքում ոչ թե ղեկավարն ենք մեր կյանքի և մեր ունեցվածքի, այլ Աստված բաշխել է մեզ ամեն բան և պատվիրել, որ զարգացնենք ու ավելացնենք: Մենք երբեմն մտածում ենք, թե դա մերն է, և դրա համար էլ կորսվում ենք մեր այդ հարստության մեջ: Ուրեմն չկարծենք, թե ապահովությունը միայն հատուկ է հարուստ մարդկանց, յուրաքանչյուր մարդ կարող է այդ մեղքի մեջ ընկնել:

Իսկ որտեղ մեր գանձերն են, այնտեղ են և մեր սրտերը: Բնական է, որ մարդկանց ծառայություններ բերելով՝ մենք պետք է գանձեր դիզենք հենց նրանց սրտերում ու նաև երկնքում, և բնական է, որ այդ գանձերն են, որ Աստծու համար առավել գնահատելի են: Աստված նաև ասում է. «Նույնպես և նա, ով իր անձի համար գանձ կհավաքի և Աստծով չի հարստանա, նա նույնպես կկորսվի»: Երբեմն մարդիկ ասում են. «Գանձ մեր երեխային մկրտենք, որպեսզի մեր ընտանիքում հաջողություն լինի»: Արդյո՞ք սա է մկրտության պատճառը կամ մկրտության համար խթանը, որ մկրտվենք: Իրականում մենք մկրտվում ենք, որովհետև ուզում ենք Աստծով հարստանալ, և դարեր շարունակ մարդիկ չեն ըմբռնել իսկական հարստության իմաստը, չեն հասկացել, թե ինչ է իրական Գանձասարը, թե ինչ բան է իրական գանձը, որ երկնքում է կուտակվում: Իսկ մեզ համար, որպես քրիստոնյաներ, Ավետարանի այսօրվա ընթերցումից այդ ամենը շատ լավ պարզ է:


Սիրելիներ, մենք դրամի մասին խոսում ենք, բայց շատերն այն կեղտ են համարում՝ ասելով. դրամ պետք չէ չունենալ և այլն: Ավետա-

րանը, սակայն, շատ հստակ է խոսում դրամասիրության կամ արծաթասիրության մասին: Դրամն ինքնին ոչինչ է, նյութական միջոցն ինքնին ոչինչ է, կարող ես հարստանալ, հաջողել, բնավ որևէ մեկը քեզ չի կարող մեղադրել հարստանալու մեջ, բայց և պետք է հիշես, որ դրամի հանդեպ սերը քեզ կարող է կորստյան մատնել: Մշտապես պետք է հիշել, թե արդյո՞ք, երբ չունեիր այսքան դրամական միջոցներ, այն ժամանակ պակաս երջանիկ էիր կամ պակաս ուրախ էիր: Ուրեմն՝ կուտակելու մոլուցքն է, որ անընդհատ ապագայի հանդեպ մտատանջության պատճառ է դառնում: Դրամը նյութական գործիք է, որը պետք է գործածենք մարդկանց օգնելու նպատակով, որովհետև երբեք չենք իմանում մեր վաղվա օրը: Հիշենք, նաև, սիրելիներ, որ մի օր հաշվետու ենք լինելու: Հիսնակի այս օրերին Ղուկասի Ավետարանից նորից այդպիսի պատմություններ ենք ընթերցելու, տեսնելու ենք, թե ինչպես է Տերը կանչում հաշվետվության:

Որպես իրական մշակներ Տիրոջ անդաստանի և մեր ունեցվածքի՝ մենք պետք է հաշվետվություն տանք Տիրոջը: Եւ բնական է՝ այդ ժամանակ պետք է ներկայացնենք, թե մենք ինչ ենք արել: Աստված ասում է. «Փոքրի մեջ հավատարիմ եղածը մեծի մեջ էլ հավատարիմ կլինի»: Փոքր տաղանդ ունես՝ գործածիր հանուն Աստծու փառքի, հանուն մարդկանց կյանքում երկնքի արքայության փառքի հաստատման: Իսկ Աստված, մեր այդ ձգտումը տեսնելով, կբազմապատկի մեր տաղանդները: Փոքր դրամական միջոցներ ունես՝ գործածիր դա հանուն Աստծու փառքի և երկնքի արքայության, և Աստված կառատացնի քո միջոցները: Եւ այս մեր ճամփորդության մեջ, սիրելիներ, թող որ Տիրոջ այս պատգամները մեզ համար ևս հորդոր դառնան՝ իմաստուն կերպով կառավարելու այն, ինչ որ մեզ տրված է և վստահված է մեզ որպես Աստծու անդաստանի բարի մշակների:

Տիրոջ սերը և ողորմությունը թող լինեն մեզ՝ ամենքիս հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:





Ս. ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱՐԱՆ (ՆԱԶԻԱՆՋԱՑԻ)

ՃԱՌ ԻԷ.¹

ԸՆԴԴԵՍ ԵԽՈՄԻՈՍԱԿԱՆՆԵՐԻ² ԵՒ ԱՍՏՎԱԾԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ՝ ԱՌԱՋԻՆ ԿԱՍ ՆԱԽՆԱԿԱՆ

1. Խոսքս ուղղված է ճարտար լեզուների տեր անձանց, ինչը կսկսեմ Սուրբ Գրքից վկայակոչմամբ. «Ահա ես քեզ վրա եմ գալու... ո՛վ դու ամբարտավան», այսինքն՝ գիտունության վրա՝ եւ լսողության, եւ մտքերի: Այսպես՝ կան, իրապես կան մարդիկ, որոնց եւ լսողությունը, եւ լեզուն, եւ միջին իսկ, ինչպես երեւում է, նաեւ ձեռքերը քոր են գալիս մեր խոսքերը լսելիս: Սրանց հաճո է պիղծ դատարկաբանությունը, եւ բռնված են «հակառակության խոսքեր ու խնդիրներ առաջացնելու հիվանդությամբ» եւ ոչ մի օգտակար բանի չտանող «խաբեպատիր գիտության վեճերով» (Ա. Տիմ. Զ. 4, 20): Արդ, Պողոսի՝ քարոզչի խոսքը հակիրճ է (Հռոմ. Ժ. 8), ուստի նա՝ ուսուցիչն ու ձկնորսների աշակերտը, այդպես է անվանում խոսքի մեջ առկա ամենայն ավելորդությունն ու պերճազարդությունը: Լավ կլիներ, եթե նրանք, ում մասին է մեր խոսքը, դուլզն-ինչ հմուտ լինեին գործնական իմաստասիրության անդաստանում, ինչպես որ ճարպիկ են լեզվով եւ ունակ ազնիվ ու ընտիր խոսքեր որոնել-գտնելու մեջ: Այդժամ նրանք քիչ, հավանաբար, էլ ավելի քիչ, քան ներկայումս, անձնատուր կլինեին անհեթեթ եւ տարօրինակ իմաստակության ու կխաղային բառերով (զավեշտականի մասին զավեշտա-

^{1*} Թարգմանվել է հետեւյալ հրատարակությունից՝ Св. Григорий Богослов, Творения, т. 1, Москва, 2007, էջ 327–332: Թարգմանչի ծանոթագրությունները հետապնդող կտրված կարգային համարի հետ դրված աստղանիշով:

² Եւնոմիոսականները ոչ միայն մերժում էին համագոյությունը, այլեւ Հոր եւ Որդու համանմանությունը: Ավելին՝ ուսուցանում էին, որ մարդկային մտքով հնարավոր է կատարել-լապես ճանաչել Աստծու էությունը:

բար էլ արտահայտվում եմ), ինչպես որ տամա են խաղում: 2. Բայց անտեսելով բարեպաշտության բոլոր շավիղները՝ նրանք մեն-մի բան աչքի առաջ ունեն, այն է՝ ինչ-որ մի հարց բարձրացնել ու պատասխանել՝ ընդամին նմանվելով հանգիստախաղերի ըմբշամարտիկների, որոնք ոչ թե պայքարի կանոնների հաղթանակով են ըմբշամարտի բռնվում, այլ գրավում են գործից անտեղյակների հայացքներն ու նվաճում նրանց հավանությունը: Եւ ինչ պետք էր, որ ամենայն հրապարակ նրանց խոսքերով լցվեր, ամենայն խնջույք ձանձրույթի, դատարկաբանության ու անճաշակության վերածվեր, ամենայն տոն ոչ տոնական դառնար՝ վհատությանմբ հագեցած, իսկ ամենայն տրտունջի պարագայում էլ ավելի մեծ չարիքի մեջ մխիթարություն որոնեին, այն է՝ այնպիսի հարցեր բարձրացնեին, որ ամենայն կանացի վերնասենյակում՝ պարզամտության այդ ապաստարանում, խախտվեր անդորրը, ու խոսքի հապճեպությունմբ առեւանգվեր ամոթխածության գույնը: Իսկ երբ բանն արդեն նրան է հասնում, որ չարն անկասելի եւ անտանելի է դառնում, անգամ վտանգ է առաջանում, որ մեր մեծ խորհուրդ խորինն³ էլ կվերածեն ցածրակարգ արհեստի, ապա այս լրտեսները թող այնքան համբերություն ցուցաբերեն, որ երբ մեր հայրական սիրտը ճմլվի, եւ մեր սրտերի զգայարանները հեծեն, ինչպես ասում է աստվածաշնորհ Երեմիան (Դ. 19), առանց խստասրտություն դրսևորելու ընդունեն իրենց մասին սույն խոսքն ու թեկուզ ըստ կարելիության դույզն-ինչ զսպելով լեզուները՝ ականջ դնեն մեզ: Եւ, անտարակույս, դուք դրանից չեք տուժի: Կամ էլ կբարբառեմ լսելու ունակություն ունեցողների ականջներին, եւ այդժամ խոսքը որոշ պտուղներ կտա, այսինքն՝ պտուղներ, որոնցից որ կօգտվեք իբրեւ խոսքից, քանզի թեեւ սերմանողը խոսքը սերմանում է ամենքի սրտում, բայց այն պտղաբերում է սոսկ բարի ու արգասաբեր սրտում: Կամ էլ կհեռանաք ինձանից՝ ծաղրի ենթարկելով սույն խոսքը՝ նրանում առարկությունների եւ ինձ չարախոսելու նոր առիթ գտնելով, ինչը ձեզ առավել մեծ բավականություն կպատճառի: Ուրեմն չզարմանա՛ք, եթե մի խոսք ասեմ ոչ ըստ ձեր օրինի, որը եւ տարօրինակ կհնչի ձեզ համար, ինչը չափազանց համարձակ ու արիաբար (վախենում եմ վիրավորել՝ ասելով՝ տգիտաբար եւ հանդուգն) պնդում եք ձեր իսկ մասին, թե գիտեք ամեն ինչ եւ ունակ եք ամեն ինչ ուսուցանելու:

³ Քրիստոնեական կրոնը:

3. Ամեն մեկին չէ, որ կարելի է իմաստասիրել Աստծու մասին, այն՝ ոչ ամեն մեկին: Դա թանկ գնով է ձեռք բերվում, այն է՝ ոչ հողի վրա փորսող տվողներին: Ասեմ ավելին. կարելի է իմաստասիրել ոչ միշտ, ոչ ամենքի առաջ եւ ոչ էլ ամենայն նյութ արծարծելով, բայց հարկ է գիտենալ՝ երբ, ում առաջ եւ ինչքան: Բոլորը չէ, որ կարող են իմաստասիրել Աստծու մասին, քանզի դրան ունակ են մարդիկ, ովքեր փորձել են իրենց, իրենց կյանքն անց են կացրել մտահայեցողության մեջ եւ նախեւառաջ մաքրագործել [կամ], համենայն դեպս, մաքրագործում են եւ հոգին, եւ մարմինը: Իսկ անմաքուրի համար, թերեւս, անվտանգ չէ մաքուրին մերձենալը, ինչպես տեսողությամբ տկարի՝ արեգակի ճառագայթներին նայելու պարագայում: Իսկ երբ է կարելի: Երբ ձերբազատված լինենք արտաքին տիղմից⁴ ու ըմբոստությունից, երբ մեր միջի իշխանը⁵ չի միախառնվում անպիտան եւ աստանդական պատկերներին, ինչպես գեղեցիկ գրերի՝ անպաճույճ գրերի հետ համակցման կամ էլ ցեխին միախառնված անուշահոտ մյուռնի պարագայում: Իրապես էլ պետք է խոնարհվել՝ Աստծուն հասկանալու համար (Սաղմ. ԽԵ. 11), եւ «Երբ որ ժամը գա, ես ուղիղ կգատեմ» (Սաղմ. 2Դ. 3) աստվածաբանության իսկության մասին: Իսկ ում առաջ է կարելի: Նրանց առաջ, ովքեր ի սրտե են դրան տրվում, այլ ոչ թե իմիջիապես այլ բաների հետ նաեւ դրանից էլ խոսողներին՝ ձիերի մրցավազքից, այլեւայլ հանդիսություններից եւ երգերից հետո որովայնին հագուրդ տալիս եւ այն ամենն անելիս, ինչը որովայնից էլ վատ է. քանզի այսպիսիների համար զվարճալի է նաեւ նմանօրինակ հարցերի շուրջ վիճաբանելն ու առարկությունների նրբամտությունն ի ցույց դնելը: Ինչի՞ շուրջ է հարկ իմաստասիրել եւ ի՞նչ չափով: Այն ամենի, ինչ մատչելի է մեզ համար եւ այն չափով, ինչ չափով որ հասու է ունկնդրի ըմբռնողության մակարդակին ու ընդունակությանը: Այլ կերպ ասած՝ ինչպես չափն անց ձայներն ու խորտիկները վնասակար են՝ մեկը՝ լսողության, մյուսը՝ մարմնի համար, կամ, եթե կուզեք, ինչպես ուժերից վեր ծանրությունները՝ բարձրացնողների, հորդառատ անձրեւները՝ հողի համար, այդպես էլ ունկնդիրները կկորցնեն նախկին ուժերը, եթե նրանց, այսպես արտահայտվեմ, ծանրաբեռնեն եւ ճնշեն դժվարիմաց վարդապետությունների բեռով:

⁴ Մարմնի ստրկությունից:

⁵ Միտքը:

4. Չեմ ասում, որ իբրեւ թե ոչ հանապազ է հարկ հիշել Աստծուն (թող սույն բանի համար մեզ չքարկոծեն ամեն ինչի պատրաստ եւ կովազան մարդիկ): Աստծուն հիշելն ավելի անհրաժեշտ է, քան շնչելը, եւ, եթե կարելի է այսպես արտահայտվել, բացի սրանից, որեւիցե այլ բան չպիտի արվի: Ես մեկն եմ այն խոսքին հավանություն տվողներից, որոնք պատվիրում են «գիշեր-ցերեկ ուսանել» (Սաղմ. Ա. 2), «Երեկոյան, առավոտյան եւ կեսօրին պատմել ու խոսել» (Սաղմ. ԾԴ. 18), «Ամեն ժամ Տիրոջն օրհներգել» (Սաղմ. ԼԳ. 2): Իսկ եթե պետք է Մովսեսի ասածն էլ հավելել, ապա եւ՝ «Երբ տանը նստած ես, ճանապարհ գնալիս, պառկելիս եւ վեր կենալիս» (Բ. Օր. Զ. 7), ինչպես նաեւ այլեւայլ գործեր կատարողն էլ պիտի հիշի Աստծուն եւ այս մտաբերումով իրեն հաղորդակից դարձնի մաքրությանը: Այսպես ուրեմն՝ արգելում եմ Աստծուն ոչ թե հիշելը, այլ պատվիրում եմ անդադրում աստվածաբանել. նույնիսկ արգելում եմ ոչ թե աստվածաբանելը, ասես թե ոչ բարեպաշտ մի գործ լինի, այլ տարածամոլությունը, ոչ էլ վարդապետություն ուսանելը, այլ չափի խախտումը: Մեղըր, չնայած որ մեղըր է, եթե չափից շատ է ուտվում, մինչեւ հագենալն արդեն փսխում է առաջացնում: Սողոմոնի հետեւողությանմբ խորհրդածում եմ. «Ամեն բանի ժամանակը կա» (Ժող. Գ. 1): Անգամ գեղեցիկը գեղեցիկ չէ, եթե կարգից դուրս է, գործօրինակ՝ բնավ վայելուչ չեն ծաղիկները ձմռանը, տղամարդու հագուստը՝ կնոջ վրա, եւ հակառակը, երկրաչափությունը՝ լաց լինելիս, եւ արցունքները՝ խնջույքի ժամանակ: Մի՞թե առ ոչինչ կհամարենք ժամանակը մանավանդ անդ, ուր առավելագույնս է հարկավոր հարգել բարեպատեհությունը ժամանակի: 5. Ո՛չ, եղբայրներ ու բարեկամներ (ես ձեզ տակավին եղբայրներ եմ անվանում, թեպետեւ ձեզ եղբայրաբար չեք պահում): Այսպես չխորհենք, նպատակից այն կողմ շանցենք, ինչպես կրակոտ ու անզուսպ նժույգները հեծվորին՝ բանականությանն զգեստնելիս, բարի սանձը՝ երկյուղածությունը, ձեռքից բաց թողնելիս, այլ տրվենք իմաստասիրությանը՝ քրիստոնյայի համար ընդունված սահմաններից անդին շանցնելով, Եգիպտոս չզաղթենք, թույլ չտանք ասորեստանցիներին մեզ գերեվարել, չերգենք «Տիրոջ օրհներգը օտար երկրում» (Սաղմ. ՃԼԶ. 4), այսինքն՝ ի լուր ամենքի՛ն եւ օտարականի, եւ յուրայինի, եւ թշնամու, եւ բարեկամի, եւ բարեմիտի, եւ չարամիտի, որը չափազանց մանրազնին հետեւում է մեզ եւ կկամենար, որ մեր մեջ ամենայն հոռի կայծ բոց դառնար: Հենց ինքն էլ ծածուկ վառում է, բորբոքում, իր շնչով թեժացնում՝ կրակի լեզուները երկինքն ի վեր խո-

յացնելով՝ շուրջն ամեն ինչ հրո ճարակ դարձնող բաբելոնյան հրից էլ վեր: Իսկ քանի որ իրենց իսկ ուսմունքներում իրենց համար [ճշմարտության] ոչ մի հիմնավորում չեն գտնում, ուստի փնտրում են այն բանում, ինչը թույլ կողմեր ունի մեզանում: Այդ իսկ պատճառով, ինչպես ճանճերն են վրա տալիս վերքերին, այդպես էլ նրանք են հարձակվում մեր (այլ կերպ ինչպե՞ս անվանեմ) անհաջողությունների եւ վրիպումների վրա:

Բայց մեր իսկ մասին անգիտության մեջ տեւականորեն չհարատեւենք եւ նման հարցերում շանարգենք պարկեշտությունը: Ընդհակառակը, եթե հնարավոր չէ արմատախիլ անել թշնամությունը, ապա գեթ համաձայնենք այն բանում, որ խորհրդավորի մասին խոսենք խորհրդավորապես, իսկ սուրբի մասին՝ սրբազան ակնածանքով: Պղծված լսողություն ունեցողների առաջ գետնով չտանք այն, ինչի մասին պետք չէ բոլորի առաջ տարփողել: Թույլ չտանք, որ մեզ հավասար պատիվների արժանանան դիվապաշտները, ամոթալի առասպելների ու բաների սպասավորները, քանզի սրանք նույնպես ավելի շուտ իրենց արյունը կթափեն, քան իրենց ուսմունքը կբացահայտեն ոչ նվիրյալներին: Պիտի իմանանք, որ ինչպես պարկեշտություն գոյություն ունի հագուստի, սննդի, ծիծաղի եւ քայլվածքի հարցերում, այնպես էլ՝ եւ խոսքի, եւ լուծության մեջ, մանավանդ որ մենք, այլ անուններից եւ գորություններից զատ, Աստծու մեջ պատվում ենք նաեւ խոսքը:

Թող բանավեճերն էլ մեզանում ենթարկվեն օրենքների: 6. Աստծու ծննդյան, արարչագործության, ոչ գոյավորներից [առաջ եկած] Աստծու⁶, հատման, բաժանման եւ լուծման մասին ինչո՞ւ է հարկավոր, որ լսի մեկը, ով դա անբարյացակամորեն է ընդունում: Ինչո՞ւ մեղադրողներից դատավորներ կարգենք: Թշնամիների ձեռքը սուր դնենք: Ի՞նչ ես կարծում, ինչպե՞ս եւ ի՞նչ հասկացություններով կընդունի այս մասին խոսքը նա, ով հավանում է շնությունն ու մանկապղծությունը, ով կրքեր է պաշտում եւ ի վիճակի չէ մարմնականից անդին ինչ-որ այլ բան տեսնել, ով երեկ եւ առաջի օրն այսեր էր պաշտում, ամենամոթալի գործերով աչքի ընկնող այսեր: Արդյոք ո՞չ անտաշ, ամոթալի, տգետ հասկացությունների հիմամբ (որոնց որ սովոր է): Արդյոք քո աստվածաբանությունը չի՞ օգտագործի ի նպաստ իր իսկ աստվածների ու կրքերի ջատագովության: Եթե ինք-

⁶ Արիոսականներն Աստծու Որդու մասին ուսուցանում են, որ էր ժամանակ, երբ Նա չկար, եւ հետեւաբար Նա ոչ գոյավորից գոյավոր դարձավ:

ներս ենք ի շարս գործածում այսպիսի արտահայտություններ, առավել դժվար կլինի մեր ախոյաններին համոզել, որ իմաստասիրեն, ինչպես որ հարկ էր, որ մենք դա անեինք: Եթե մենք ինքներս ենք շարահյար (Հռոմ. Ա. 30), ապա ինչպես նրանք շառնչվեն այն բանին, ինչն իրապես մեր մեջ գոյություն ունի: Ահա մեր երկպառակտչական պատերազմի արգասիքը: Ահա խոսքի համար շարշարվողների օգուտն ավելի, քան դա հաճո է խոսքին, ահա օգուտը խելագարների նույն բախտաբաժնին արժանացածների, որոնք կրակի են մատնում իրենց տները, կամ կտտանքների ենթարկում երեսաներին, կամ էլ քշում ծնողներին՝ նրանց օտար համարելով:

7. Հոգուց, սակայն, վանելով օտարոտին ու մեծաքանակ լեգեոնը՝ թափանցած հոգու խորքերը, եւ դրանց խոզերի երամակի մեջ ուղարկելով՝ դառնա՞նք ինքներս մեզ (ինչը մեր խոսքի երկրորդ առարկան է), եւ, ինչպես արձան, կերտենք աստվածաբանին՝ իր ողջ գեղեցկությամբ հանդերձ: Նախեւառաջ խորհենք, թե ինչ են նշանակում խոսքի նկատմամբ այսօրինակ նախանձախնդրությունը եւ լեզվի այս հիվանդությունը: Այս ի՞նչ նոր ցավ է: Այս ի՞նչ անհագություն է: Հանուն ինչի՞, ձեռքերը կապելով, մենք զինեցինք լեզուն: Մենք ո՛չ գովում ենք ասպնջականությունը, ո՛չ եղբայրասիրությունը, ո՛չ ամուսնական սերը, ո՛չ կուսությունը: Չենք ապշում աղքատների սննդառության վրա. չենք հիանում սաղմոսերգությամբ, ո՛չ գիշերային հսկմամբ, ո՛չ արցունքներով. չենք հյուծում մարմինը պահեցողությամբ. աղոթքով Աստծու հետ չենք հաղորդակցվում. չենք ենթարկում (ինչպես իրենց կազմության մասին ճիշտ դատողություններ անողները) վատը լավին, այսինքն՝ հողեղենը՝ ոգուն. կյանքը չենք վերածում մահվան մասին խոկման. ի մտի ունենալով երկնային ազնվագարմությունը՝ ի վիճակի չենք իշխելու մեր կրքերի վրա. մեր անձերում չենք սանձահարում ո՛չ կատաղությունը՝ մեզ մեծամիտ եւ գազանաբարո դարձնող, ո՛չ նվաստացնող ամբարտավանությունը, ո՛չ անխոհեմ վիշտը, ո՛չ անսանձ բղջախոհությունը, ո՛չ անառակ ծիծաղը, ո՛չ լկտի հայացքը, ո՛չ անհագ ականջալրությունը, ո՛չ անշափավոր շատախոսությունը, ո՛չ հեղհեղուկ մտայնությունը, ո՛չ այն ամենը, ինչը մեզ դեմ է՝ մեր իսկ մեջ շարից հարուցվող, ինչպես ասում է Գիրքը՝ «մահը պատուհանների միջով» (տե՛ս Երեմ. Թ. 21), այսինքն՝ զգացմունքների միջով ներմուծվեց: Մեր դեպքում ամեն ինչ թարս է: Ինչպես թագավորներն են հաղթանակից հետո գթասիրաբար ներում շնորհում, այդպես էլ մենք ենք ազատություն շնորհում այլոց կրքերին, հենց որ ավելորդ

ներողամտություն են ցուցաբերում մեր նկատմամբ եւ ավելի հանդուգն ու ամբարիշտ կերպով ընդվզում Աստծու դեմ, եւ [իսկույն] անբարի բաների դիմաց վատ պարգեւներով ենք փոխհատուցում, իսկ ամբարշտության դիմաց՝ կամայականություն:

8. «Տերն ասաց Հոբին՝ փոթորկի եւ ամպի միջից. «Այդ ո՞վ է, որ խորհուրդները թաքցնում է Ինձանից. խոսքերը հավաքելով իր սրտում՝ կարծում է, թե Ինձանից պահում է դրանք: Տղամարդու պես պնդացրո՞ւ մեջքդ, հարցեր եմ տալու քեզ, ու պատասխան տուր Ինձ» (Հոբ ԼԸ. 1–3): Ի՞նչ ես լսել՝ արդյոք Աստված միայն մե՞կ օթեւան ունի, թե՞ բազում^{7*}: Անշուշտ, կհամաձայնես, թե բազում, այլ ոչ թե մեկ: Դրանք բոլորն էլ պիտի բնակեցվեն, թե՞ միայն մի քանիսը, իսկ մնացյալը՝ ոչ. եւ այդպես դատարկ կմնան ու զուր պատրաստված: Իհարկե՞, բոլորը, քանզի Աստված ոչինչ հենց այնպես չի անում: Իսկ կարող ես ասել, թե ինչ ես հասկանում՝ օթեւան ասելով. այնտեղի հանգստությունն ու փափքը՝ երանելիների համար պատրաստված, թե՞ մեկ այլ բան: Ոչ մեկ ուրիշ բան, այլ հենց դա:

Սույն հարցում համաձայնության գալով՝ քննենք նաեւ հետեւյալը: Մի այնպիսի բան կա՞, ինչպես որ ես եմ կարծում, որ մեզ այդ օթեւանները տաներ, թե՞ այդպիսի բան չկա: Անկասկած, նման մի բան կա: Իսկ ի՞նչն է դա: Կյանքի եւ ընտրության տարբեր տեսակներ կան, որոնք ըստ հավատի՝ այս կամ այն օթեւանն են տանում, ըստ այդմ էլ՝ դրանք մեզանում ուղիներ են կոչվում: Այսպես՝ բոլոր այդ ուղիներն ունենալով թանալ, թե՞ դրանցից մի քանիսով: Եթե հնարավոր է, թող յուրաքանչյուրը բոլորով էլ ընթանա: Իսկ եթե ոչ, ապա հնարավորինս շատ ճանապարհներով: Իսկ եթե դա էլ է անհնար, ապա մի քանիսով: Բայց եթե այդ էլ հնարավոր չէ, ապա հարգանքի արժանի կլինի, ինչպես, համենայն դեպս, ինձ է թվում, եթե մեկը միմիայն մեկով ընթանա: Այդ բանը ճիշտ ես ըմբռնում: Հետեւաբար, ըստ քեզ, ի՞նչ է նշանակում այն խոսքը, երբ լսում ես, որ ճանապարհը մեկն է, այն էլ՝ նեղ: Ճանապարհը մեկն է առաքինության առումով, որովհետեւ թեեւ մեկն է, բայց բաժանվում է տարատեսակների: Իսկ նեղ է չարչարանքների եւ այն բանի պատճառով, որ շատերի՝ այն էլ հենց մեծաթիվ հակառակորդների համար անանցանելի է, բոլոր նրանց համար, ովքեր ընթանում են արատների ուղով: Ես էլ եմ այդպես խորհում: Իսկ եթե սա ճշմարիտ է, ապա ինչու, իբրեւ թե

^{7*} Հմմտ. Հովհ. ԺԴ. 2:

մեր ուսմունքի ինչ-ինչ պակասավորությունները բացահայտելով, մի կողմ թողնելով մյուս բոլոր շավիղները՝ միտում եք եւ աճապարում ընտրել այդ միակ շավիղը, որը հաշւ ձեր՝ բանականության եւ մտահայեցության շավիղ է, իսկ ես կասեմ՝ դատարկաբանության եւ երազկոտության շավիղ: Թող Պողոսը ձեզ խելքի բերի, որը շնորհները թվարկելիս խստագույնս հանդիմանում է դրա համար՝ ասելով. «Մի՞թե բոլորն էլ առաքյալներ են. մի՞թե բոլորն էլ մարգարեներ են» (Ա. Կորնթ. ԺԲ. 29):

9. Ենթադրենք, որ դու շատ ես վեր բարձրացել՝ բարձրերից էլ վեր, իսկ եթե կուզեք, ամպերից էլ վեր. ենթադրենք, որ դու տեսնում ես անտեսանելին, լսում անճառելին, Եղիայի պես [երկինք] ես հափշտակվել, Մովսեսի պես աստվածատեսության արժանացել, աստվածային ես, ինչպես Պողոսը: Ապա ինչո՞ւ ես այլոց ոչ ավելի, քան մեկ օրում, դարձնում սրբեր, աստվածաբաններ կարգում՝ նրանց ասես գիտունություն պարգեւելով, եւ ուսում չստացածներից դպիրների բազում խառնամբոխներ կազմում: Ինչի՞ համար ես սարգոստայնի ցանցերի մեջ առնում առավել տկարներին, ասես թե իմաստուն եւ մեծ գործ անելիս լինես: Ինչո՞ւ ես հավատքի դեմ հարուցում ձիապիծակներին: Ինչո՞ւ ես մեր դեմ հարուցում ախոյաններին, ինչպես հին ժամանակներում հսկաների մասին ավանդում էր դիցաբանությունը: Այդ ինչո՞ւ այրերի մեջ թեթեւամիտներին եւ առհասարակ այր կոչվելու անարժաններին հավաքելով, ինչպես աղբը աղբափոսում, շողոքորթությամբ նրանց ավելի կնաբարո դարձնելով՝ քեզ համար մի նոր բանակ ստեղծեցիր եւ անմտաբար նրանց հիմարությունից օգուտ ես քաղում քեզ համար:

Մի՞թե սրա դեմ էլ կառարկես: Մի՞թե այլ զբաղմունք չունես: Լեզվիդ վրա անհրաժեշտաբար հարկ է իշխել: Ի վիճակի չե՞ս կանգնեցնելու խոսքի ծննդյան ցավերն ու երկար տվյալանքներից հետո երկունքով խոսքը ծննդաբերելու: Դու ուրիշ անթիվ-անհամար առարկաներ էլ ունես: Դրանց վրա շահեկանորեն ուղղիր այս հիվանդությունը: 10. Մահացու հարվածի՞ր պյութագորասյան լռակեցությանը⁸, օրփոսյան ընդեղենին⁹

^{8*} Իրական իմաստության հասնելու համար հնադարի ուսուցիչն իր աշակերտներից լեզվի վերահսկման եղանակով (որ տեսնում էր 5 տարի, իսկ շնորհալիների համար՝ 2), զգալական կյանքից վերանայով, ինքն իր հետ հաղորդակցության աղբսներ հաստատելով՝ պահանջում էր բացարձակ լռություն:

^{9*} Օրփոսյան գաղտնածիսության մեջ ընդեղենն օգտագործվում էր իբրեւ սրբազան կերակուր չաստվածների համար, եւ արգելվում էր դրանց կիրառումը մարդկանց սննդառության մեջ: Այդպես պատվիրում էր նաեւ Պյութագորասը:

եւ նոր ժամանակների այդ փքուն ասացվածքին՝ «ինքդ ասացիր»: Զախ-
ջախիր պլատոնյան գաղափարները մեր հոգիների վերամարմնավոր-
ման եւ շրջապատույտի վերաբերյալ, նաեւ հանուն մարմնի հոգու հանդեպ
բնավ ոչ գեղեցիկ սիրո մտաբերումը: Զգեստներ էպիկուրյան անաստվա-
ծությունը, նրա ատոմների [ուսմունքն] ու իմաստասիրությունը խորթ
վայելքապաշտությունը, ոչնչացրո՞ւ արիստոտելյան ոչ համապարփակ
նախախնամությունը՝ մի արհեստականության մեջ իրերի ինքնուրույնու-
թյուն կազմող¹⁰, մահացու դատողությունները հոգու մասին եւ մարդկա-
յին հայացքները բարձրագույն ուսմունքների վերաբերյալ: Խորտակիր
ստոիկների ամբարտավանությունը, ցինիկների որկրամոլությունն ու
խեղկատակությունը: Զախջախիր դատարկությունն ու առատությունը,
ինչպես նաեւ այն զառանցանքները, որոնք վերաբերում են շաստված-
ներին կամ զոհաբերություններին, կուռքերին, բարեգործ եւ չարագործ
այսերին, ինչպիսիք որ տարփողվում են մեհյանների, դիցականչության,
հոգեկանչության եւ աստղերի գործության առնչությամբ:

Իսկ եթե դու սա անգամ խոսքի չես արժանացնում՝ իբրեւ անկա-
րեւոր եւ բազմիցս հերքած բան, եւ կամենում ես քո նախընտրած առար-
կայով զբաղվել եւ դրանում քո փառասիրության համար սնունդ հայ-
թայթում, ապա աստ եւս լայն ճանապարհներ քեզ ցույց կտամ: Իմաս-
տասիրիր աշխարհի կամ աշխարհների մասին, նյութի, հոգու, չար եւ
բարի բանական բնություն ունեցողների, հարության, դատաստանի ու
հատուցման եւ Քրիստոսի չարչարանքների մասին: Սրանց առնչությամբ
սեփական պրպտումներում հաջողության հասնելն անօգուտ չի լինի,
իսկ հաջողության չհասնելը՝ վտանգավոր: Իսկ Աստծու մասին այժմ շատ
չենք ընդարձակվի, բայց մոտ ապագայում, թերեւս, առավել ամբողջա-
կան կխոսենք Իր՝ Քրիստոսի՝ մեր Տիրոջ մասին, Որին փառք հավիտյանս
հավիտենից. ամեն:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանեց եւ ծանոթագրեց
ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԸ

^{10*} Հնագույն եւ վաղքրիստոնեական ժամանակաշրջանում մերժվել է Արիստոտելի՝
աստվածային նախախնամության արհեստական բաժանումը երկու մասի՝ երկրից մինչեւ
լուսին եւ լուսնից վեր, ընդ որում՝ հատկապես խիստ քննադատվել է նրա՝ լուսնի ներքո եւ
երկրի վրա նախախնամության չգործելու տեսակետը, ըստ որի՝ ամենայն երկրային արարած,
երեւույթ եւ իր օժտված են գործելու լիակատար ինքնուրույնությամբ:

ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՅԻ

ՊԱՐՏԱՎԱՐ

Սկիզբը՝ թիվ Դ., է., Թ.:

ԳԼՈՒԽ Զ.

ՈՐՈՒՄ ՑՈՒՅՑ Է ՏՐՎՈՒՄ, ԹԵ ԻՆՉ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ՀԱՅԵՐՍ
ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄՆԱՅԻՆՔ ԲՈՒՆ, ՃՇՄԱՐԻՏ ՀԱՎԱՏՔԻՆ, ԵՒ ԹԵ ՈՐՈՆՔ
ԷՒՆ ՄԵՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Նամաձայն սուրբ վարդապետների վկայության՝ ճշմարտությունը մեկն է, եւ այն երբեւէ չի կարող խեղաթյուրվել կամ այլալվել: Իսկ ահա ստությունը բազում է, եւ այն, կորցնելով միակ ճշմարտությունը, այս ու այն կողմ է դեգերում՝ չգտնելով մի հիմք, որին կարելի է ապավինել: Եւ Հայոց ազգը մինչեւ այժմ նույնիսկ չմտածեց ու ոչ էլ փորձեց շեղվել կամ հեռանալ այն միակ, բուն ճշմարտությունից, այլ մշտապես բեւեռված մնաց այդ ճշմարտությանը: Որովհետեւ մեր Փրկչի 310 թվականին, երբ քրիստոնյաների բոլոր ազգերն ու Եկեղեցիները դեռեւս Քրիստոսի քարոզած ու Նրա սուրբ առաքյալների միջոցով հաստատված միեւնույն հավատքին եւ դավանանքին էին պատկանում, հավատք եւ դավանանք, որն ընդունել եւ կանոնակարգել էին առաքյալներին իրենց աչքով տեսած ու նրանց հետեւորդը եղած սուրբ հայրերը, այդ ժամանակամիջոցում, երբ մեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը շրջում էր Կեսարիայում, Երուսաղեմում, Կոստանդնուպոլսում՝ «Նոր Հռոմ» կոչված քաղաքում եւ այլ քաղաքներում, ո՛չ ինքն իմացավ նման բան ու ո՛չ էլ այդ վայրերում տեսավ կամ լսեց, որ մեկ Քրիստոսին երկուսի բաժանեին, մեկ Սուրբ Հոգուն երկուսի «ճեղքերին»՝ ասելով, թե Նա «Հորից եւ Որդուց» է [բխում]: Կամ թե՛ սուրբ Խորհրդին ջուր, աղ եւ ձեթ խառնեին ու խմորեին անխմորը եւ անապականը: Կամ էլ հանդերձյալ հուրը «սահմանավորեին» որոշակի ժամանակի մեջ՝ մեղքերի այրման եւ արդարացման «նպատակով», եւ այսպիսի շատ նորամուծ կանոններ, որոնք հետո սահմանվեցին:

Նույնպես նաեւ մեր Սուրբ Լուսավորչից հետո այն կողմերը գնացին Սուրբ Արիստակեսը եւ Ներսես Մեծը, որոնք եւս ո՛չ լսեցին ու ո՛չ էլ տեսան այդպիսի բաներ: Այլ ինչ որ տեսան ու լսեցին, նույնն էր, ինչ իրենք իսկ գիտեին, եւ Հայոց ազգին ավանդեցին այդ ամենը, ինչն էլ մենք մինչեւ այսօր անայլալիկորեն պահեցինք: Այդ իսկ պատճառով էլ միայն Հայոց եկեղեցին հավատարիմ մնաց սկզբնական հավատքին ու չփոփոխվեց:

Եւ եթե մեկն ասի, թե «այդ ինչպէս եղավ, որ ուրիշները խեղաթյուրեցին սկզբնական հավատքն ու դավանությունը, իսկ միայն հայերը հավատարիմ մնացին այդ նույն հավատքին եւ դավանությանը», ես այս երկու գլխավոր պատճառները պիտի մեջբերեմ: Նախ՝ մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչի աստվածահաճո եւ ընդունելի աղոթքները, որով նա Աստծուց խնդրեց, որ ըստ շարականի՝ «այստեղ թշնամիները չգորանան, հերձվածողների աղանդները չբուսնեն»: Եւ երկնքից աստվածային ձայնն էր հնչում՝ ասելով, թե «քո խնդրանքները պիտի կատարվեն»: Երկրորդ պատճառն այն էր, որ ամենագետն Աստված, գիտենալով, որ մեր թագավորներն ու իշխանները բիրտ եւ խստապարանոց էին, որի պատճառով էլ իրենց հետագա ապահով իշխանության տարիներին հավատարիմ չէին մնալու միեւնույն, սկզբնական հավատքին (ինչը որ հայտնապես երեւաց Սուրբ Տրդատից հետո), ուստի այս ճշմարիտ հավատքն ու մաքրամաքուր դավանությունը մեր ազգի մեջ հաստատելուց եւ արմատավորելուց հետո մեր ազգից իսկույն վերցրեց թագավորությունն ու մարմնավոր իշխանությունը եւ մեզ ենթակա դարձրեց ուրիշների իշխանությանը, որպեսզի վերջիններիս ծառայության ներքո կաշկանդված լինելով՝ անկարող լինեինք հավատքի մասին այլեւայլ բաներ խորհելու կամ էլ թե մի որեւէ կանոն նորապես սահմանելու: Ինչպես որ մյուս ազգերի պարագայում եղավ, քանի որ նրանք, որ ունեին եւ դեռեւս ունեն իրենց թագավորությունը, առավել մեծ ապահովության մեջ գտնվելով՝ երբ, որքան եւ ինչպես կամեցան, գործեցին ըստ իրենց ցանկությունների ու կանոններ սահմանեցին եւ դեռեւս սահմանում են այն, ինչ կամենում են: Այդպես նաեւ հունաց ազգը, ինչպես նաեւ ասորիները, որոնք հույների իշխանության տակ էին, նախնիներին դեմ նորանոր ինչպիսի կանոններ էլ որ սահմանեցին, իրենց թագավորության կանգուն լինելու ժամանակահատվածում արեցին, իսկ երբ հույների թագավորությունն անկում ապրեց, նրանք կանգ առան այն տեղում, ուր հասել էին: Իսկ ահա Հայոց ազգի պարագայում, երբ ընդունեցին նախնիների սահմանումներն ու

կանոնները, նրանցից վերցվեց թագավորությունը, այդ իսկ պատճառով էլ նրանք այլևս ժամանակ չունեցան որեւէ նոր կանոններ սահմանելու, այլ հազիվ կարողացան պահել այն, ինչ ընդունել էին:

Եւ թեպետ այդ սկզբնական ժամանակաշրջանում մեր ազգը ժողովներ ունեցավ՝ տվյալ ժամանակի հայրապետների ու իշխանների միաբանությունամբ, սակայն այդ ժողովները ո՛չ թե որեւէ նոր կանոն սահմանեցին կամ սկզբնական կանոնները խեղաթյուրեցին, այլ խափանեցին նորամուտը կանոնները եւ այն առաջինները վերահաստատեցին: Որովհետեւ Քաղկեդոնի աշխարհավեր ու ազգաբաժան ժողովը ոչ միայն իր ժամանակում խանգարիչ բնույթ ունեցավ սկզբնապես հաստատված կանոնների համար եւ պատճառ դարձավ խռովության, այլ նաեւ պատճառ ու ճանապարհ դարձավ զանազան նորանոր հերձվածների եւ հատկապես «զորավիգ» եղավ Նեստորի հայհոյությունը: Քանի որ մինչեւ Քաղկեդոնի ժողովը նեստորականները հալածականներ էին՝ գլխիկոր ու սեւերես երեւալով ուղղափառների մեջ: Նրանք նույնիսկ չէին կարողանում համարձակորեն շրջել, մինչդեռ այս նեստորադավան ժողովից հետո այնքան համարձակություն ձեռք բերեցին, որ մինչեւ իսկ սկսեցին իրենց ազանդը հայտնապես քարոզել հույներին, ասորիներին ու հայերին: Եւ թեպետ այդ ժամանակ Նեստորն արդեն վախճանվել էր, սակայն կարծես թե վերակենդանացավ իր հետեւորդների միջոցով, որոնք գլխավորեցին այդ ժողովը եւ համարձակություն ստացան: Ահա թե ինչու Քրիստոսի Եկեղեցին՝ հույների, ասորիների, հայերի եւ լատինների [երկրներում] երկար ժամանակ ասես ալեկոծության ու խռովության մեջ էր, ինչն անհանգստացնում էր մինչեւ իսկ բարեպաշտ Զենոն թագավորին, որը հրամայեց ժողով գումարել եւ մերժել ու նզովել Քաղկեդոնի ժողովը եւ Լեոնի տոմարը, ինչպես որ ասացինք ավելի վերելում: [Այս վերջին ժողովի մասնակիցները] նամակ գրեցին նաեւ մեր սուրբ հայրապետ Բաբկենին (որը չորրորդն էր Սահակ Մեծից հետո), որպեսզի նա եւս նույնն անի (մերժի ու նզովի Քաղկեդոնի ժողովը եւ Լեոնի տոմարը): Ուստի մեր սուրբ հայրապետը նամակ ուղարկեց ասորիներին դեպի Վիրք եւ Աղվանք ու Փրկչի 495 թվականին ամենքին ի մի հավաքելով՝ միաբանությամբ նզովեց այն նույն [Քաղկեդոնի] ժողովն ու այն ընդունողներին:

Այդ ժամանակներից սկսած՝ նույն խռովությունը չէր դադարում, քանի որ տարբեր-տարբեր վայրերում բուսնում էին միեւնույն ազանդավոր-

ները՝ ապականելով պարզամիտների մտքերը: Ուստի Փրկչի 525 թվականին մեր Ներսես կաթողիկոսը մեծահանդես ժողով գումարեց Դվինում, եւ ժողովականները նզովքներով սահմանեցին Հայոց ազգի համար՝ անշարժ լինել ու հավատարիմ մնալ նախնիների դավանությանը, «Սուրբ Աստուած»-ն ասել «խաչեցար»-ով հանդերձ, սուրբ Խորհուրդն անապականաբար, առանց ջրի կատարել, որպիսին որ սովորություն էր նախնիների ժամանակներից սկսած:

Եւ ապա Փրկչի 642 թվականին Եզր կոչված մեր կաթողիկոսը հույների Հերակլ թագավորի կանչով գնաց Կարին եւ նրա սնոտի փառատրության ու ժամանակավոր խոստումների պատճառով խաբվելով՝ հավանություն տվեց նրա ասածներին՝ ընդունելու Քաղկեդոնի ժողովը եւ երկաբնակ լինելու: Ահա այդպես մեր ազգը փոքր չափով միայն ընդունեց այդ ժողովը: Ինչո՞ւ եմ ասում «փոքր չափով», որովհետեւ մեր ազգի երեւելի վարդապետներից ու եկեղեցականներից շատերը չհետեւեցին Եզրին եւ ընդունեցին նրան, այլ մանավանդ մերժեցին նրան էլ, նրա դավանանքն էլ:

Իսկ ահա Եզրից հետո էլ հաջորդ հինգ կաթողիկոսները՝ Ներսեսը, Անաստասը, Իսրայելը, Սահակը եւ Եղիան, որոնք թեպետ այն նույն աղանդին չէին պատկանում, սակայն անկարող եղան Եզրի ներմուծած հերձվածք դուրս վանել մեր ազգից, որովհետեւ զանազան տեղերում «Սուրբ Աստված»-ն առանց «խաչեցար»-ի էին ասում, սուրբ Պատարագը ջրի խառնումով էին կատարում եւ Եզրից «Ժառանգած» լինելով՝ Քրիստոսի համար «երկու բնություն» էին ասում, ոմանք՝ կամավորաբար, իսկ ոմանք էլ՝ ակամա: Եւ քանի որ հույները տվյալ ժամանակամիջոցում մեր ազգն ու երկիրն իշխանաբար ենթարկել էին իրենց, իբրեւ ծառաների անարգում էին մեզ՝ անխղճաբար ծառայեցնելով իրենց մարմնավոր գործերին, ծաղրում, հայհոյում էին մեզ՝ «հերձված» ու «հերետիկոս» կոչելով մեր ազգին եւ ոչ թե «քրիստոնյա»:

Այնուհետեւ Աստված տեսավ մեր ազգի խեղճությունն ու մի Մովսես բարձրացրեց մեզ համար՝ Մեծն Սուրբ Հովհան Օձնեցուն, որը լցված էր Սուրբ Հոգու շնորհներով ու փառավորված էր Աստծուց եւ մարդկանցից ու մանավանդ նախանձահույզ եւ ջատագով էր ուղղափառությանն ու սուրբ հայրերի կանոններին: Նա Աստծու տնօրինությամբ մեր ազգի կաթողիկոս դարձավ Փրկչի 725 թվականին: Նա (Հովհան Օձնեցին), տեսնելով մեր ազգի լիակատար խեղճությունը, հավատքի արատավորումը եւ նախնիների սահմանած կանոններից շեղումը, «հերետիկոս» կոչվելն ու

մարմնավոր ծառայություն անարգանքին ենթարկվելը, հույներին ծաղրվելը եւ հայհույվելը, չկարողացավ հանդուրժել այդ բոլորը: Ուստի գնաց արաբների իշխանի մոտ (որը զորացած լինելով՝ այդ ժամանակաշրջանում տիրել էր Հայոց աշխարհին) եւ իր մաքուր վարքի ու սքանչելագործի համբավի շնորհիվ մեծ սիրով ընդունվեց վերջինիս կողմից: Իշխանի հրամանով էլ Հովհան Օձնեցին մեր ազգի միջից ու մեր երկրից բոլորովին արմատախիլ արեց եւ հալածեց հույն ազգի բոլոր ներկայացուցիչներին: Եւ ապա ժամանակի եպիսկոպոսների ու իշխանների մասնակցությամբ մի մեծահանդես ժողով գումարեց Մանազկերտ քաղաքում եւ մեր ազգն ու երկիրն իսպառ մաքրեց, սրբեց Քաղկեդոնի աղանդից, որը Եզրից ներմուծվել-մնացել էր, եւ ամենուրեք սահմանեց, որ նախնիների կանոնակարգության համաձայն՝ անհրաժեշտ է «Սուրբ Աստուած»-ը «խաչեցար»-ով հանդերձ ասել, սուրբ Խորհուրդն անապակ գինով կատարել՝ առանց ջրի, եւ Քրիստոսին «մեկ բնությամբ» խոստովանել՝ համաձայն սուրբ հայրերի դավանության: Թող որ օրհնությամբ լինի նրա հիշատակը: Եւ այդպիսով մեր ազգն ու Եկեղեցին, այս սուրբ հայրապետի հաստատած կարգադրությամբ, Աստծու շնորհներով անարատ մնաց հերձվածողների բոլոր աղանդներից՝ մինչեւ Փրկչի 1116 թվականը, երբ Սուրբ Գրիգորը եւ Սուրբ Ներսեսը, անօրեններից վշտացած, հայրապետական աթոռը փոխադրեցին Կիլիկիա:

Սակայն որոշ ժամանակ անց, ինչպես Սուրբ Գրքում է ասվում, խառնակվեցին հեթանոսների հետ եւ ուսանեցին նրանց գործերը: Քանի որ միայն Սուրբ Գրիգորը եւ Սուրբ Ներսեսը՝ նրա Շնորհալի եղբայրը (հոգեկիր եւ Աստծու շնորհներով լցված լինելով), հավատարիմ մնացին ուղղափառ հավատքին ու աստվածահաճո գործերին եւ մեր ազգը նույնպես միեւնույն նախնավանդ ծիրից ներս պահեցին: Նրանք թեպետ բազմիցս հանդիպեցին հույն ազգի ընդդիմությանը, սակայն Աստծու շնորհներով հաղթող գտնվեցին ամեն հարցում, ինչը որ հայտնապես երեւում է սույն երանելիների գրություններից:

Իսկ նրանցից հետո մեր ազգի ներկայացուցիչներից ոմանք՝ կաթողիկոսներ, վարդապետներ ու թագավորներ (որոնք կոչվեցին Ռուբինյաններ՝ առանձնանալով հույների՝ այդ ժամանակաշրջանում տիրապետող թագավորությունից), սկսեցին կաղալ՝ մեկ այս, մեկ այն կողմ ընթանալով: Նրանք մի ժամանակ ժողով գումարեցին՝ կաթողիկոսներով ու թագավորներով հանդերձ, եւ հայտնապես ընդունեցին Քաղկեդոնի ժողովը՝

նմանվելով նրանց, ովքեր ասում էին՝ «այն Մովսեսը, որ մեզ Եգիպտացիների երկրից հանեց, չգիտենք, թե ինչ պատահեց նրան... Եւ կուռք ստեղծեցին ու զոհեր մատուցեցին»: Այս պատճառով էլ Աստված բարկանալով՝ անապատում հարվածեց նրանց կաթողիկոսներով ու թագավորներով հանդերձ, ինչպես նաեւ նրանց, ում վրա իրենց հույսն էին դրել:

Ահա թե ինչու այդ ժամանակ մեր երկրում եղող երեւելի եւ գիտուն վարդապետները հրաժարվեցին Կիլիկիայում բազմող կաթողիկոսներից ու չհնազանդվեցին նրանց եւ դեռ բազմիցս գրություններով նախատում եւ հանդիմանում էին նրանց լուսավորչական դերակրության շեղվելու համար: Այս երեւելի եւ գիտուն վարդապետների թվում էին երանելի Մխիթար վարդապետը՝ Գոշ կոչվածը, Սանահինի Գրիգոր վարդապետը, Այունիքի վարդապետներն ու մանավանդ մեր հավատքի հաղթող սպառազենները՝ Սուրբ Հովհան Որոտնեցին եւ Գրիգոր Տաթեւացին՝ իրենց հետեւորդներով, որոնք ամենքը ո՛չ նրանց (ուրացողներին) ընդունեցին եւ ո՛չ էլ հայրապետին, ինչն էլ պատճառ էր դարձել, որ այս դպրատանն ուսանած երանելիները եւ շատ այլ գիտուն վարդապետներ ժամանակին հրաժարվել էին նրանցից (ուրացողներից), եպիսկոպոսություն ընդունել, ուստի վարդապետության աստիճանին էին մնացել: Իսկ ահա ամբողջ Վասպուրականն էլ ո՛չ միայն ընդունեց նրանց (ուրացողներին), այլ նաեւ ընդգեմ նրանց հատուկ կաթողիկոս ընտրեց Աղթամար կղզում, ինչը, սակայն, այսօր որպէս չար օրինակ է հայտնի՝ նրանց գործած անկարգությունների պատճառով: Ու կարելի է ասել, որ այդ ժամանակաշրջանում մեր խղճալի ազգը ոչ միայն մարմնավոր տերությունից էր զրկված, այլ նաեւ որբացած էր հոգեւոր տերությունից: Այդ էլ առիթ դարձավ, որ քաղկեդոնիկներն ու այլ, զանազան հերձվածողներն սկսեցին համարձակապես ելումուտ անել մեր երկիր՝ մեր ժողովրդի մեջ, եւ իրենց որջերը կառուցել այստեղ եւ այնտեղ ու ապականել պարզամիտներին: Այդ հերձվածողներից էին պիղծ Բարդուղը եւ Հովհան Քոնեցին ու այդպիսի շատ այլ հերձվածողներ:

Այնուհետեւ մեր Լուսավորչի աղոթքների շնորհիվ Աստված գթաց մեր անտերացած ազգին եւ բարձրացրեց մեր վերջին շրջանի լուսավորիչներին՝ Հովհան Որոտնեցուն եւ Գրիգոր Տաթեւացուն, որոնք ոչնչով պակաս չէին Հովհան Օձնեցուց: Այս երկուսը, իրենց աշակերտներով եւ հետեւորդներով հանդերձ, ինչպես հուրը եղեգի դեմ, իսպառ հալածեցին եւ մեր ազգի միջից վտարելով՝ բոլորովին կորստյան մատնեցին

ամեն տեսակի չար որոմները եւ ապա իրենց քարոզությամբ ու ժողովներով, ժամանակի իշխանների եւ վարդապետների հետ մաքրեցին ու վերաուղղեցին ապականվածն ու թյուրվածը եւ մեր ողջ ազգն անսասանորեն հաստատեցին այն առաջին, միեւնույն ճշմարտության հիմքի վրա: Այս իմաստուն վարդապետների հավատն ու դավանությունն ահավասիկ հայտնապես երեւում է իմաստությամբ հեղված նրանց գրություններում:

Իսկ այս երանելիներից հետո ուրիշ երեւելի ու գիտուն վարդապետներ էլ հայտնվեցին, որոնք նույնպես խոսեցին հավատի մասին եւ մեր ազգի համար գրքեր հեղինակեցին՝ նույնաշավիղ ու համաձայնող լինելով մեր նախնի սուրբ հայրերի հետ, որոնց հիշատակեցինք մինչեւ այս պահը, եւ որոնց գրությունն իսկ վկայում է նրանց դավանության մասին:

Մենք նույնպես, որ ամենքից ամենահետինն ենք, մեր այս երանելի նախնիների հավատն ու դավանությունն ունենք՝ Աստծու շնորհներով: Նրանց նույնագիծ շավղին հետեւելով՝ հավատում ենք Սուրբ Երրորդությանը՝ մեկ Աստված եւ Երեք Անձինք. Երեք Անձ՝ Մեկ Բնության մեջ, եւ Մեկ Բնություն՝ Երեք Անձից կազմված.... Համագո եւ համագոր, անհասանելի ու անիմանալի երկնավորների եւ երկրավորների համար: Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի՝ ո՛չ թե երեք աստված, այլ Մեկ Աստված: Միայն Հայրը՝ անսկզբնաբար ու անսպառապես Որդուն ծնող եւ Սուրբ Հոգուն բխող: Սակայն ոչ թե մեկը մյուսից մեծ կամ փոքր, հետին կամ առաջնային է, այլ համագո, համաբնութենական ու համապատիվ՝ ավելի առաջ, քան բոլոր հավիտենությունները: Եւ Սուրբ Երրորդության Երեք Անձանցից մեկը՝ Հոր Որդին եւ Բանը, Աստված՝ Աստծու կամքով ու Հոր եւ Սուրբ Հոգու հաճությամբ ժամանակի մեջ իջավ երկիր՝ Աստվածածին Կույս Մարիամի մեջ, ու նրա ամենամաքուր արգանդում հղացավ Սուրբ Հոգուց եւ միեւնույն պահին նրանից մարմին առավ՝ բանական հոգով ու մտքով հանդերձ: Եւ դա տեղի ունեցավ ո՛չ թե շարունակական գործընթացով, ինչպես մեր պարագայում է, այլ միաժամանակ ու միեւնույն պահին, երբ Սուրբ Կույսն իր հավանությունը տվեց՝ ասելով. «Թող քո խոսքի համաձայն լինի ինձ»: Այդ նույն վայրկյանին ամենամաքուր Սուրբ Կույսի արյունը շնորհվեց, թանձրացավ, ձեւավորվեց, հոգեւորվեց ու աստվածացավ Սուրբ Հոգու ներգործությամբ, Որի կամքը կատարյալ գործ իսկ է: Եւ [Որդի Աստված] հայտնվեց որպես ճշմարիտ ու կատարյալ մարդ՝ ճշմարիտ եւ կատարյալ Աստված մնալով հանդերձ: Ու կոչվեց Քրիստոս, այսինքն՝ Օծյալ Տեր, քանի որ ըստ

Իր մարդկության օծվեց Աստծուց եւ աստվածացավ ու միաժամանակ եղավ Աստված եւ Մարդ։ Քանի որ աստվածությունն ու մարդկությունը միավորվեցին անշփոթաբար եւ սքանչելի խառնումով, ու եղավ մեկ Քրիստոս՝ մեկ անձով, մեկ բնությամբ, մեկ կամքով եւ մեկ ներգործությամբ միավորված։ Ուստի եւ միեւնույն Քրիստոս, Աստված եւ Մարդ լինելով, աստվածային հրաշքներ էր գործում ու կամավորաբար կրում էր մարդկային կրքերը՝ առանց մեղքերի եւ անգոսնելի կրքերի։ Այս նույն Քրիստոս խաչվեց ու մեռավ Իր չարչարելի մարմնով եւ մնաց անչարչարելի ու անմահ՝ Իր Աստվածությամբ։ Նա է՛ Աստված էր, է՛ Մարդ, ոչ թե բաժանաբար, այլ որպես մեկ, միավորությամբ, որովհետեւ Նա, Ով անմահ էր, նույն Ինքը մահացավ մահվամբ, եւ նույն Ինքը, որ մահկանացու էր, անմահացավ Անմահի հետ։ Ինչպես ասում է Սուրբ Ներսես Շնորհալին, «Աստվածային անմահ բնությունը մեռավ մահկանացուի մարմնով, եւ մահկանացուն, Նրան միանալով, անմահ դարձավ Անմահի հետ»։ Ոչ թե մեկն անմահ էր, իսկ մյուսը՝ մեռած, քանի որ այդ դեպքում բաժանում տեղի կունենար, այլ Նա, Ով անմահ է, նույն Ինքը մեռավ, ու Նա, Ով մեռավ, անմահ մնաց։ Եւ թեպետ չարչարանքն ու մահը չեն կարող դիպչել Աստվածությանը, սակայն այն մարմինը, որը չարչարվում եւ մեռնում էր, անբաժանելի միավորությամբ միացած էր Աստծուն ու Աստծու մարմինն էր դարձած, այդ իսկ պատճառով էլ նրա (Քրիստոսի մարմնի) չարչարանքն ու մահը համարվում են Աստծո՛ւ չարչարանք եւ մահ եւ ո՛չ թե մարդու։ Որովհետեւ միեւնույն անչարչարելի եւ անախտակիր Աստվածությունն էր, որ չարչարվեց ու մեռավ Իր չարչարելի եւ մահկանացու մարմնով։ Այս հավատքով է, որ մենք՝ հայերս, ասում ենք. «Սուրբ Աստված, որ խաչվեցիր մեզ համար, ողորմի՛ր մեզ»։ Սա՛ է Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու հավատն ու դավանությունը մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչից սկսած մինչեւ այսօր եւ մինչեւ աշխարհի վախճանը։ Քանի որ եթե այն խաչվածը ճշմարիտ Աստված չլիներ, Նրա խաչվելը մեզ համար որեւէ օգուտ չէր ունենա, եւ այդ դեպքում ի՞նչ պարտավորություն կարող էր լինել մեզ վրա՝ երկրպագելու այդ խաչյալին ու Նրա խաչին, եթե Նա Աստված չէր։ Եւ եթե այդ խաչվածն Աստված չէր, Նրա մարմինն ու արյունն Աստծու մարմին եւ արյուն չէին լինի, այլ լոկ մարդու։ Եւ այդ դեպքում ուրեմն ի՞նչ հարկ էր, որ մենք մարդու մարմինն ու արյունը ուտեինք եւ ըմպեինք, մի՞թե մենք գազան ենք. քա՛վ լիցի, թե այդպես կարծենք.... Այլ մենք հավատում ենք, որ այն խաչյալը ճշմարիտ

Աստված էր, եւ Նրա մարմինն ու արյունն Աստծու ճշմարիտ մարմինը եւ արյունն են: Այն բանի համար ենք ճաշակում, քանի որ հավատում ենք, որ Նրա արյունը մեզ համար փրկություն է լինելու, եւ Նրա մարմինը մեզ՝ մեռածներին համար կյանք ու կենսատու է լինելու՝ ըստ նույն Իր՝ Քրիստոսի անսուտ խոսքի, թե «Ով ուտում է Իմ Մարմինը եւ ըմպում Իմ Արյունը, հավիտենական կյանք ունի»:

ԳԼՈՒԽ Է. (Ա. ՄԱՍ)

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ ԵՒ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿԱՔՆԱԿՆԵՐԻՆ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԻՈՒԹՅԱՆ (ՄԵԿ ԲՆՈՒԹՅԱՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նաեւ հակիրճ խոսենք Քրիստոսի մեկ բնության մասին, որովհետեւ քաղկեդոնականները, համաձայն իրենց դավանության, թեպետ Քրիստոսի մեջ երկու անձ եւ երկու բնություն են խոստովանում՝ ըստ Նեստորի, սակայն հայտնապես չեն ասում՝ «երկու անձ», որպեսզի «նեստորական» չկոչվեն, այլ ասում են՝ «մեկ անձ, մեկ դեմք եւ երկու բնություն»: Ուրեմն մենք նախ հակիրճ ցույց տանք, թե որն է անձը, եւ որն է բնությունը, ու այդուհետեւ միայն խոսենք նրանց հետ:

Համաձայն մեր սուրբ վարդապետների՝ անձն է, որ գործում է, իսկ բնությունն էլ անձն է, որով գործում է: Որպես թե՛ անձն անձն է, որը հատուկ դեմքով ու կերպարանքով է անձնավորված եւ զանազան ձևերով է ներկայանում ուրիշներին, սակայն ինքը միշտ նույնն է մնում, գործում, զգում ու շարժվում է այնպես, ինչպես կամենում է՝ անհաղորդ լինելով մյուս անձերի հետ: Այդպես օրինակ՝ Պետրոսը, որ մեկ անձ է, սակայն մյուս անձերից տարբերվում է իրեն հատուկ դիմային եւ անձնային հատկություններով, գործում, զգում, ապրում ու շարժվում է այնպես, ինչպես կամենում է՝ անհաղորդ մնալով մյուս անձերին: Իսկ ահա բնությունն այն է, որի միջոցով ապրում է Պետրոսի անձը, որով շարժվում, գործում եւ զգում է, որով եւ նմանվում է ուրիշ անձերին ու հաղորդակցվում է նրանց: Մարդու բնությունն արդյունք է հոգու եւ մարմնի միավորության կամ, այլ կերպ ասած, կենդանի, բանական ու մահկանացու լինելուն, եւ բնության այդ հատկանիշների միջոցով է, որ բոլոր անձինք հաղորդակցվում են միմյանց ու միանում են իրար, որովհետեւ ամեն մարդ կենդանի, բանական եւ մահկանացու է՝ բանական հոգու եւ մարմնի միավորություն

լինելով: Մինչդեռ մարդկանց անձերը միշտ անհաղորդելի են միմյանց ու զանազանելի, այս իսկ պատճառով անհնար է, որ երկու անձերը հաղորդակցվեն միմյանց ու միանան մեկմեկու:

Արդ, մեկ անհատ անձը, ինչպիսին Պետրոսն է, միայն իրեն հատուկ «դեմքով» առանձնավորաբար գործում ու անում է այն, ինչ կամենում է: Եւ թեպետ այս գործողն ու զգացողը Պետրոսի անձն է, սակայն այդ անձն իր բնությամբ է ապրում: Ու այդ բնությամբ, այսինքն՝ կենդանությամբ, բանականությամբ եւ մահկանացու գոյությամբ կամ, այլ կերպ ասած, հոգու եւ մարմնի միավորությունում է շարժվում ու գործում: Քանի որ թեպետ անձն է, որ առանձնավորաբար երեւում ու գործում է, սակայն այն իր բնությամբ է կայանում, երեւում եւ գործում: Եւ եթե անձն իր բնությունից, այսինքն՝ կենդանությունից, բանականությունից եւ մահկանացու լինելու հատկորոշիչից կամ, այլ կերպ ասած, հոգու եւ մարմնի միավորությունից բաժանվի, այլեւս ո՛չ անձ կլինի, ո՛չ դեմք եւ ո՛չ գործող, որովհետեւ անձն առանց բնության չի կարող գոյություն ունենալ ու գործել: Նույնպես եւ բնությունն անձի միջոցով է կայանում ու ներգործում եւ առանց անձի միայն անունն է մնում: Այսպես ասած՝ բնությունն առաջ բերողն ու նյութն է, իսկ անձը՝ բնությունից առաջ բերվածն ու տեսակավորվածը: Անձը բնությունից է առաջանում, իսկ բնությունն անձով է հաստատվում եւ կայանում: Այս իսկ պատճառով այդ երկուսն առանց մեկը մյուսի չեն կարող գոյություն ունենալ, անձնանալ կամ մի ինչ-որ բան լինել: Իսկ դեմքն ու կերպարանքն այն տեսքն է, որով անձը հատկորոշվում, ճանաչվում եւ զանազանվում է ուրիշներից, եւ այդ հատկորոշիչներն էլ անձին են պատկանում ու անձին են վերագրվում եւ ոչ թե բնությանը: Ահա այսպես նախապես գիտենանք, թե որն է բնությունը, որը՝ անձը, եւ որը՝ դեմքը, ու այսուհետ միայն խոսենք....

Արդ, քաղկեդոնականներն ասում են, որ Քրիստոսի մեջ մեկ անձ, մեկ դեմք եւ երկու բնություն կա: Նրանք դա մեկնաբանում են՝ ասելով, որ «Բանն Աստծու միայն անձը եւ դեմքը միավորվեցին մարդկային բնության ու մարմնի հետ. ահա՛ թե ինչու ենք ասում մի անձ եւ մի դեմք: Իսկ ահա բնությունները չմիավորվեցին իրար, այդ իսկ պատճառով ասում ենք երկու բնություն»:

Այժմ հարցնենք նրանց. եթե այն աստվածային Անձը, Որին, բացի իր աստվածային բնությունից, միավորված եք համարում նաեւ մարդկային բնությանը, ուրեմն, համաձայն ձեր տեսակետի, այդ միավորու-

Թյան ժամանակ կամ Միավորվածի մեջ աստվածային բնությունը գոյություն չունենա, այդպես չէ, քանի որ դուք ասում եք, որ միայն աստվածային Անձը միավորվեց մարդկային բնությանը: Եւ եթե այդպես է, ուրեմն այն հայտնված Քրիստոսը, Որն աստվածային Անձի ու մարդու բնության միավորության արդյունք էր, Աստված չէր եւ ոչ էլ կարող էր աստվածային գործեր գործել, քանի որ, ինչպես արդեն ասացինք, անձը բնությամբ է կայանում ու գործում եւ առանց բնության ո՛չ կարող է գոյություն ունենալ ու ո՛չ էլ կարող է որեւէ բան գործել: Սակայն, ահավասիկ, տեսնում ենք, որ այդ Միավորվածի մարմինը նույնպես աստվածային գործեր եւ հրաշքներ էր գործում: Ուրեմն՝ այդ մարմինը, որը միավորված էր Բանի անձին, ինչպես որ դուք եք ասում, միավորված էր նաեւ այն անձի բնությանը, որի «միջոցով» աստվածային գործեր էր գործում: Եթե համառաբար պիտի հակադարձես՝ ասելով, թե աստվածային բնությունը միավորված չէր այն մարմնին, ուրեմն ես էլ պիտի ասեմ, որ համաձայն քո տեսակետի՝ հետեւում է, թե աստվածային անձը նույնպես միավորված չէր այն մարմնին, քանի որ, ինչպես նշեցինք, անձն առանց բնության ո՛չ ինքը կարող է գոյություն ունենալ, ո՛չ կարող է մարմնին միավորվել ու ո՛չ էլ կարող է աստվածային գործեր կատարել:

Դարձյալ, նաեւ այն հարցնենք. եթե Քրիստոսի այն մի անձը, ինչպես ասում եք, աստվածային էր (ինչը մենք նույնպես խոստովանում ենք), եւ այն երկու իրարից բաժանված բնություններից մեկն «աստվածային» եք կոչում, իսկ մյուսը՝ «մարդկային», ապա ուրեմն այն մի դեմքին ինչ եք կոչում, «աստվածային», թե՛ «մարդկային»: Եթե «աստվածային» եք կոչում, սուտ եք ասում, քանի որ Քրիստոս մարդկային դեմքով երեւաց երկրի վրա ու իր երկրային ողջ կյանքի ընթացքում մարդկային դեմքով եւ կերպարանքով կենցաղավարեց, ինչը հայտնապես տեսանելի է սուրբ Ավետարանում: Որովհետեւ աստվածային դեմքը ո՛չ երեւում է եւ ո՛չ շոշափվում: Իսկ եթե Քրիստոսի դեմքը «մարդկային» եք կոչում, դարձյալ սխալվում եք, քանի որ դեմքը եւ կերպարանքը անձո՛վ են պայմանավորված ու ո՛չ թե բնությամբ, ինչպես որ ասացինք վերելում: Արդ, եթե Քրիստոսի անձն աստվածային է, ուրեմն դեմքը եւս աստվածային էր, իսկ եթե դեմքը մարդկային էր, ապա նաեւ անձն էր մարդկային: Այստեղից հետեւում է, որ եթե Քրիստոսին հավատում եք որպես մարդացած Աստծու, պիտի ասեք, թե Նա աստվածային եւ մարդկային միավորված մի դեմք ուներ, ինչին նաեւ մենք ենք հավատում:

Կրկին հարցնեմ քեզ. եթե հավատում ես, որ աստվածային անձն ու դեմքը միավորվել են մարդկային բնությանը եւ դեմքի ու նրա հետ մեկ է եղել, ինչպես որ նաեւ դուք եք ասում, ուրեմն ինչո՞ւ չեք հավատում, որ աստվածային բնությունն էլ միավորվել է մարդկային բնությանը եւ նրա հետ մեկ բնություն է դարձել: Չէ՞ որ Բանն Աստված ինքնակամորեն հոժարեց միավորվել մարմնի հետ ու մարդանալ եւ ո՛չ թե ակամա կամ հարկավորությունից ու բռնությունից ելնելով՝ արեց դա. ուրեմն ինչո՞ւ Նա պիտի անձով միավորվեր մարդու բնությանն ու մարմնին եւ այդ մարմնով չարշարվեր ու իր բնությունը բոլորովին հեռու եւ անհաղորդ պահեր այդ մարմնից: Եւ կամ թե՛ անձն առանց բնության ի՞նչ է, եթե ոչ գեթ անուն ու ձայն միայն:

Արդ, թեպետեւ այս քաղկեդոնականները բոլոր հարցերի առջեւ անպատասխան են մնում եւ իրավացի որեւէ ասելիք չունեն, սակայն երեք կարկատանված պատճառ են մեջբերում, որոնք տկար ու անհիմն են: Նախ՝ ասում են. «Սուրբ Երրորդության երեք անձանց դեմքերն ու անձինք իրարից բաժանված եւ զանազանված են, եւ մի բնությունը (էությունը)՝ Որդու անձն ու դեմքը, որը տարանջատված է Հորից եւ Սուրբ Հոգուց, խոստովանում ենք, թե միավորված է մարմնի հետ, քանի որ միայն Որդին մարմնացավ: Եւ չենք ասում, թե բնությամբ (կամ էությունամբ), որով Որդին մեկ է Հոր եւ Հոգու հետ, միավորված է մարմնին, որպեսզի չլինի թե Հայրը եւ Հոգին նույնպես մարմնացած կարծվեն: Այս իսկ պատճառով էլ ասում ենք՝ անձամբ միացած եւ ո՛չ թե բնությամբ»: Սա է երկաթնակների այն գլխավոր պատճառը, որի համար նրանք Քրիստոսին երկու բնությամբ են խոստովանում՝ առանց միավորության:

Այս պատճառաբանությանը պատասխանում են սուրբ հայրերը եւ մենք՝ ասելով, որ թեպետ երեք Անձանց բնությունը մեկն է, սակայն Անձերը տարբեր են: Արդ, միայն Որդո՞ւ անձը մարմնացավ իր առանձնական բնությամբ՝ այն [անշփոթաբար միաձուլելով] մարդուն հատուկ բնությանը, թեպետ [Քրիստոսի այդ մարմնացած] բնությունը մի է, ինչպես որ վերետում նշեցինք, եւ այդ նույն բնությամբ է, որ բոլոր մարդիկ հաղորդակցվում են միմյանց հետ, չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր ոք իր անձով զանազանվում է մյուսներից, եւ յուրաքանչյուր անձ ինչ որ կամենում է, դա էլ անում է իր առանձնավորական անձնավորությամբ՝ անհաղորդ մնալով մյուսներին: Այնպես, ինչպես որ ոմն Պետրոսի ծնվելը կամ հիվանդանալը, վշտանալը եւ ուրախանալն ու

մյուս վիճակները, որոնք Պետրոսն ապրում է, բացարձակապես «պարտադիր» չէ մյուսների համար, որպես թե բոլոր մարդիկ էլ Պետրոսի հետ ծնվեին կամ հիվանդանային, նրա հետ վշտանային կամ ուրախանային: Որովհետեւ անձին հատուկ մի զարմանալի հատկություն է նաեւ այն, որ ամենքի համար ընդհանուր բնությունը նա այնպե՛ս է «առանձավորեցնում» իր համար («հարմարեցնում իրեն»), որ այն դառնում է միայն իրեն բնորոշ բնություն (առանձնավորություն), եւ իր այդ բնությամբ ինչ որ կամենում է, դա էլ անում է, եւ մյուս բնութենակից անձերն անհաղորդ են մնում նրան: Եւ ինչպես որ երբ որեւէ մեկի հայրն իր որդուն ամուսնացնում է, թե՛ նա (հայրը) եւ թե՛ նրա ողջ ընտանիքը կամակից ու գործակից են լինում այդ ամուսնությանը, սակայն ամուսնացողը միայն որդին է: Այդպես էլ Որդու մարդեղության պարագայում Հայրը եւ Սուրբ Հոգին միայն կամով ու հաճությամբ հաղորդակից եւ գործակից եղան ու ո՛չ թե որեւէ այլ կերպ: Քանի որ միայն Որդին մարմնացավ Իր առանձնավորական բնությամբ:

Երկրորդ պատճառն այն է, որ ասում են. «Եթե աստվածային բնությունը միավորվի մարդկային բնության հետ, շփոթ կլինի»: Սրան նույնպես մենք եւ սուրբ հայրերը պատասխանում են, որ թեպետ բնությունները միավորվեցին, սակայն անշփոթ մնացին, քանի որ շփոթը մարմիններին է հատուկ եւ ոչ թե անմարմիններին: Ինչպես որ մարդու մեջ անմարմին հոգին միավորվում է մարմնի հետ եւ մեկ՝ անհատ մարդու է ձեւավորում, սակայն չի խառնվում մարմնի հետ ու ոչ էլ իր բնությունն է այլափոխում:

Երրորդ պատճառաբանությունն այն է, որ ասում են, թե «աստվածային բնությունը միանգամայն պարզ է, անբաղադրելի ու անհպելի՝ արարվածների համար, այդ իսկ պատճառով ո՛չ միանում է արարված բնությանը եւ ո՛չ բաղադրվում»: Այս պատճառաբանությանը եւս մենք պատասխանում ենք՝ համաձայն սուրբ հայրերի դավանության, ըստ որում՝ այո՛, մենք նույնպես հավատում ենք աստվածային բնության պարզ ու անբաղադրելի լինելուն, սակայն ասա՛ ինձ այժմ, ո՛վ բաժանող, այն Անձը, Որը, ինչպես դու հավատում ես, Իր դեմքով միավորվել է մարդկային բնությանը, Աստված, աստվածային անձ եւ դեմք էր, թե՛ ոչ, ի՞նչ ես կարծում: Եթե հավատում ես, որ Նա Աստված եւ աստվածային Անձ էր, ապա ինչո՞ւ ես այդ աստվածային Անձին Իր աստվածային դեմքով անխտրաբար «միախառնում» մարմնին ու մարմնական կրթերին ենթակա դարձնում, իսկ

ահա աստվածային բնությունը հեռու եւ բաժանված ես պահում մարմնական կրքերից: Չէ՞ որ այդ նույն աստվածային Անձն էր, որ Իր աստվածային դեմքով կրում էր թուքը, ապտակն ու այդքան շարժարանքները: Ուրեմն՝ դու Նրան լոկ մարդկային անձ ու դեմք ես համարում եւ ո՛չ թե աստվածային: Քանի որ եթե հավատայիր Նրա աստվածային լինելուն, ապա Նրան նույնպես պարզ ու անախտակիր «կպահեիր», ինչպես Նրա բնությունն ես այդպես «պահում»: Մինչդեռ մենք հավատում ենք, որ այդ Անձն Աստված եւ աստվածային էր՝ Իր դեմքով: Իսկ ուր որ աստվածային անձն է, այնտեղ է նաեւ՝ Նրա աստվածային բնությունը, որով գործում եւ զգում է, քանի որ մեկն առանց մյուսի լոկ կոչում է, ինչպես որ ասացինք:

Սա որեւէ այլ պատասխան չունի: Բայց եթե հավատում է Աստծու Բանի մարդեղությունը, թերեւս միայն սա կարող է ասել, որ «այն անձը եւ դեմքը, որ միավորված է մարմնին, Աստված ու աստվածային է, սակայն Նա մարմնի կրքերի հանդեպ անհպելի ու անախտ մնաց, որովհետեւ Աստվածությունը միշտ պարզ ու անախտակիր է»: Այս առթիվ պիտի ասենք հետեւյալը. ո՛վ բաժանող, այդ ինչպե՞ս է հնարավոր, որ աստվածային անձը, մարմնին միացած լինելով, «կարողանա» ձեռնպահ ու անախտ մնալ մարմնական կրքերից. չէ՞ որ բնության միավորության պարագայում դա անկարելի է: Ուրեմն, քո կարծիքով, աստվածային անձը զորեղ եւ կարող է, իսկ բնությունը՝ տկար ու անզոր. այ՛ քեզ խելագար հերձված.... Արդ, եթե դուք հավատում եք, որ Բանն Աստծու Անձը, Որը կատարյալ Աստված էր, միավորվեց մարդկային բնությանը, ուրեմն պարտավոր եք հավատալ նաեւ այն բանին, որ այդ աստվածային Անձն Իր առանձնավորական բնությամբ միավորվեց, եւ քանի որ Աստված էր, ում հետ որ միավորվեց, նրան նույնպես աստվածացրեց Իր հետ միավորությանմբ, ու նրա հետ միանալով՝ եղավ Աստված եւ մարդ: Որովհետեւ եթե այդ միավորության մեջ աստվածային բնությունը «տեղ չուներ»՝ ձեր կարծիքով, ապա ուրեմն ո՛չ միավորողն էր Աստված եւ ո՛չ էլ միավորվածը, քանի որ Աստվածությունը բնությանն է հետեւում, ոչ թե անձին:

Այսպես ուրեմն՝ երկու տարբերակ կա քո առջեւ, ո՛վ բաժանող, ոչինչ ավելի. մի կո՞ղմ թող ավելորդաբանությունդ եւ այս երկուսից մեկն ընտրիր ու ընդունիր: Այսինքն՝ կամ հավատա, որ Քրիստոս մեկ է ամեն ինչով՝ անձով, բնությամբ, դեմքով, կամքով եւ ներգործությամբ, կամ հավատա, որ Քրիստոս երկուս է ամեն ինչում ու ո՛չ թե մասամբ՝ մեկ, մասամբ՝ երկու: Քանի որ մենք հավատում ենք, որ Բանն Աստծու Անձն Իր առանձ-

նավորական կատարելության միավորվեց մարդկային առանձնավորական կատարելության հետ եւ նրա հետ եղավ մեկ՝ ամեն ինչով, այսինքն՝ անձով, բնության մեջ, դեմքով, կամքով եւ ներգործությամբ՝ անշփոթապես ու անբաժանորեն: Եւ իր վերցրած այդ բնության մեջ Նա կամավորաբար կրեց այդ բնությանը հատուկ բոլոր կրքերն ու թշվառությունները՝ բացառությամբ մեղքի եւ անգոսնելի կրքերի, ու իր Աստվածությամբ նաեւ անախտ եւ մշտապես պարզ ու անհպելի մնաց: Քանի որ Նա կատարյալ Աստված էր, Որը, միանալով մարմնին, կրում էր նաեւ այդ մարմնական կրքերը, թեպետ մարմնով էր կրում: Որպես եւ սուրբ Պողոսն է ասում. «...ինչպես որ Ինքը շարժարվեց՝ փորձառություն ձեռք բերելով, այնպես կարող է օգնել փորձության ենթարկվածներին» (Եբր. Բ. 18): Այսինքն՝ Աստված էր, որ շարժարվեց մարմնով ու փորձառություն ձեռք բերեց: Մենք նույնպես հավատում ենք, որ Աստված իր աստվածային բնությամբ միշտ պարզ, անախտակիր ու անհպելի է արարածների համար, ուստի եւ Նրան չեն կարող մերձենալ ախտերն ու կրքերը, բայց Նա իր կամքով անբաժանաբար միավորվեց մարմնի հետ ու այն իր մարմինը դարձրեց եւ նրա հետ մեկ եղավ, ու այդուհետեւ իր ու իր մարմնի միջեւ որեւէ բաժանում ցույց չտվեց, քանի որ նույն Ինքը՝ Աստված, մարդացավ: Այս իսկ պատճառով էլ Աստվածաշունչ Սուրբ Գիրքը բոլոր տեղերում Քրիստոսին որպես մարդացած Աստված է ցույց տալիս եւ թե՛ աստվածավայել հրաշքները, որոնք Նա գործում էր աստվածաբար, թե՛ մարդավայել կրքերը, որոնք մարդաբար կրում էր, վերագրում է միեւնույն [էակին], այսինքն՝ մարդացած Աստծուն, այլ ո՛չ թե այս մեկը՝ մեկին, այն մեկը՝ մյուսին, այսինքն՝ աստվածավայելը՝ Աստծուն, իսկ մարդավայելը՝ մարդուն: Այդպես դավանողներին սուրբ Կյուրեղը նշում է՝ ասելով. «Եթե որեւէ մեկը Քրիստոսի կամ ավետարանիչների եւ առաքյալների խոսքերից երկու «երես» ու երկու տեսակի զորություններ տարանջատի՝ իբրեւ թե որոշներն Աստծուն, իսկ որոշներն էլ մարդուն են հատուկ, նզովյալ լինի»: Իսկ Նեստորին գրում է. «Ավետարանում մեր Փրկչի խոսքերում ո՛չ իրարից տարանջատված երկու «երես» կամ երկու զորություն ենք տեսնում եւ ո՛չ էլ նույնիսկ մեկ եզոդ Քրիստոսին՝ երկուսի բաժանված, որովհետեւ թեպետ գիտենք, որ Նա երկուսից է «միացած», այսինքն՝ Աստծուց եւ մարդուց, սակայն այդ միության շնորհիվ անբաժանելիորեն է միավորված»: Որպես մարդ՝ Սուրբ Հոգուց ու մարմնից է «կազմված», սակայն թող որեւէ մեկը «երկու» չասի, այլ «մեկ՝ երկուսից»: Այսպիսով՝ մեկ Քրիս-

տոսին, ըստ մարդկության եւ ըստ Աստվածության, որպէս «մեկ» պիտի խոստովանենք: Այդպէս նաեւ Ավետարանի խոսքերը մեկ զորութեան ու մեկ դեմքի, այսինքն՝ մարմնացած Բանին պիտի վերագրենք: Քանի որ, համաձայն Սուրբ Գրքի, Տեր Հիսուս Քրիստոս մեկ է:

Արդ, Սուրբ Գիրքը երեք եղանակներով է խոսում Քրիստոսի մասին. երբեմն խոսում է իբրեւ պարզ Աստծու մասին, երբ ասում է՝ «Ես եւ Իմ Հայրը մի ենք» (Հովհ. Ժ. 30), եւ թե՛ «Ես կայի նախքան Աբրահամի լինելը» (հմմտ. Հովհ. Ը. 58), ու այսպիսի այլ խոսքեր: Եւ դա այն բանի համար էր, որպէսզի մենք, Նրան որպէս մարդ տեսնելով, իբրեւ լոկ մարդ չկարծենք, այլ գիտենանք, որ Նա, Ով որպէս մարդ է երեւում, ճշմարիտ Աստված է, որ գոյություն ունէր ավելի առաջ, քան աշխարհը գոյություն կունենար, ու որ Նա Հոր հետ մեկ էր էությունմբ եւ բնությունմբ:

Երբեմն նաեւ Սուրբ Գիրքը Նրան որպէս լոկ մարդ ցույց տալով է խոսում Նրա մասին, ինչպէս այն ժամանակ, երբ [Քրիստոս] հրեաներին ասում էր. «Ուզում եք սպանել մի մարդու՝ Ինձ, որ ասացի ճշմարտությունը» (Հովհ. Ը. 40): Եւ թե՛ «Իմ Հայրը մեծ է, քան Ես» (Հովհ. ԺԴ. 28), եւ կամ՝ «Աստված Իմ, ինչո՞ւ թողեցիր Ինձ» (Մատթ. ԻԷ. 46), ու շատ ուրիշ նմանատիպ խոսքեր: Սա էլ այն բանի համար էր, որպէսզի չկարծենք, թե Նա միայն երեւութապէս էր հայտնվել, այլ գիտենանք, որ Նա, Ով ճշմարիտ Աստված է, մարմին առավ Ադամի զարմից ու եղավ ճշմարիտ մարդ եւ մարդու Որդի: Ու քանի որ Նա ճշմարիտ մարդ եղավ, հետեւաբար դա պետք է ցույց տար՝ մարդու բոլոր հատկություններն Իր վրա ճշմարտապէս կրելով. ըստ Իր մարդկության՝ Հորն ավելի մեծ համարել եւ Իրեն Աստված կոչել, ու դարձյալ, ըստ մարդկության՝ տրտմել, երկնչել, աղոթել, քաղցել եւ ծարավել ու մինչեւ իսկ մատնվել, խաչվել եւ մեռնել: Քանի որ Նա, Ով Իր կամքով հաճեց մարդ լինել, կամավորաբար հաճեց նաեւ մարդկային կրքերը կրել, քանի որ եթե չպիտի կրեր դրանք, ուրեմն էլ ի՞նչ կարիք կար մարդ դառնալու, կամ ի՞նչն ստիպեց Նրան դա անել: Համաձայն սուրբ Ներսէսի խոսքերի՝ «քանի որ Բանն Աստված մարդկային կատարյալ բնությունը վերցրեց, ուստի հարկ էր, որ Նա Իր տնօրինության մեջ նաեւ երկյուղ եւ տրտմություն կրեր»:

Նաեւ երբեմն Սուրբ Գիրքը փոխատրությունմբ է խոսում Նրա մասին, այսինքն՝ աստվածավայելը մարդուն վերագրելով, իսկ մարդավայելը՝ Աստծուն: Եւ սա էլ այն բանի համար, որ քանի որ Քրիստոս Աստծուց եւ մարդուց էր, Նրան «երկու» կամ իրարից «տարանջատված» Աստված եւ

մարդ չկարծեինք, կամ թե իբր՝ մեկն ուրիշ էր, մյուսը՝ ուրիշ: Այլ որպեսզի գիտենանք, որ անճառելի միավորությունից հետո Նա բոլորովին մեկ եւ նույնն է. մեկ Որդի՝ Հայր Աստծու եւ Սուրբ Կույսի, մեկ Քրիստոս, մեկ Տեր՝ մեկ անձով, մեկ բնությունմբ, մեկ դեմքով, մեկ ներգործությամբ եւ մեկ կամքով: Քանի որ Նա, Ով ճշմարիտ Աստված էր, նույն Ինքը եղավ ճշմարիտ մարդ, ուստի եւ Նա, Ով Աստված էր, միաժամանակ նաեւ մարդ էր, ու Նա, Ով մարդ էր, նաեւ Աստված էր: Այս իսկ պատճառով էլ Քրիստոսի մեջ Աստված եւ մարդը մեկ եւ նույնն է: Ահա թե ինչու [Աստվածաշունչը] Աստծուն վայելը մարդուն է վերագրում, իսկ մարդուն վայելը՝ Աստծուն՝ որպես մեկ եւ նույն համարելով: Ահավասիկ, տե՛ս, Ինքը՝ Քրիստոս, այն, ինչ վայել է Աստվածությունը, մարդկությունն է վերագրում՝ ասելով. «Ոչ ոք երկինք չի ելել, եթե ոչ երկնքից իջածը՝ Մարդու Որդին, որ երկնքից էր» (Հովհ. Գ. 13): Եւ թե՛ «պիտի տեսնեք մարդու Որդուն բարձրանալիս այնտեղ, ուր առաջ էր» (հմմտ. Հովհ. Զ. 63): Աստծու Բանը եւ Որդին՝ իջավ երկնքից, ա՛յն երկնքից, որտեղ որ մշտապես գտնվում էր Հոր հետ, [Աստծո՛ւ] Որդին, եւ ո՛չ թե մարդու, սակայն անբաժանելի միավորության շնորհիվ,— ասում է,— «մարդու Որդին՝ երկնքից իջած, որ միշտ երկնքում է»: Ու շատ ուրիշ այսպիսի օրինակներ: Այդպես նաեւ այն, ինչ մարդկությունն է վայել, [Սուրբ Գիրքն] Աստծուն է վերագրում, ինչպիսին այն դրվագն էր, երբ Քրիստոս ի ծնե կույրին հարցրեց, թե՛ «դու հավատո՞ւմ ես Աստծու Որդուն», եւ կույրն ասաց. «Տե՛ր, ո՞վ է, որ հավատամ նրան»: Եւ Քրիստոս պատասխանեց՝ ասելով, թե՛ «Դու տեսար նրան, եւ Նա, Ով խոսում է քեզ հետ, Նա Ինքն է Աստծու Որդին»: Կույրը մարդու էր տեսնում, մարդու ձայն եւ խոսք էր լսում, բայց Քրիստոս ասում է՝ «Նա՛ է Աստծու Որդին»: Որպես թե կամենա ասել, թե «Նա, Ով մարմնով որպես մարդ է երեւում, նույն Ինքը Աստծու Որդին եւ Հոր Բանն է»: Այսպես նաեւ սուրբ Հովհաննեսն է ասում. «Որ սկզբից էր... Որին ականատես իսկ եղանք... եւ Որին մեր ձեռքերը շոշափեցին... Կենաց Բանը» (Ա Հովհ. Ա. 1): Մարդու էին տեսնում եւ շոշափում էին Նրա մարմինը, ու Նրան է, որ առաքյալը «սկզբից եւեթ եղող» եւ «Կենաց Բան» է կոչում: Իսկ սուրբ Պողոսն ասում է. «Որովհետեւ, եթե ճանաչեին Նրան, արդարեւ, չէին խաչի փառքի Տիրոջը» (հմմտ. Ա Կորնթ. Բ. 8): Ահավասիկ, խաչված մարդուն «փառքի Տեր» է կոչում: Այդ նույն կերպ նաեւ Եսային է ասում. «Նա մեր մեղքերն է վերցնում եւ մեզ համար չարչարվում» (հմմտ. Ես. ԾԳ. 4): Որպես թե՛ նույն իսկալը, Որն Աստված եւ մարդ է, Նա Ինքն Աստվածու-

Թյամբ վերցնում է մեր մեղքերն ու մարդկության մեջ շարժարկով է: «Նա՛ է,— ասում է,— միեւնույն շարժարկովն ու մեղքերը վերցնողը»... «Նա» եւ ո՛չ թե «ներանք», կամ թե՛ մեկ ուրիշը՝ շարժարկով, իսկ մեկ ուրիշն էլ՝ մեղքերը վերցնող: Եւ այսպիսի շատ այլ օրինակներ կան Սուրբ Գրքում՝ անբաժանելի միավորության մասին, որոնք մարդկային հատկություններն Աստծուն են վերագրում, իսկ Աստծու հատկանիշները՝ մարդուն՝ այդպիսով բոլորովին վերացնելով երկվությունն ու այլեւայլությունները: Քանի որ թեպետ նախքան Բանի մարդանալն անհնար էր, որ մարդու հատկանիշներն Աստծուն վերագրվեին, իսկ Աստծուն՝ մարդուն, սակայն այնժամ, երբ Աստված Ինքը խոնարհվեց դեպի մեր աղքատ բնությունը, որը եւ խառնելով՝ անբաժանաբար ու անշփոթապես միացրեց Իր աստվածային բնությանը եւ այդ [աստվածամարդկային բնությամբ] կրեց մարդկային կրքերը ու այդ միեւնույն բնությամբ դարձյալ բարձրացավ Հոր մոտ (Ումից երբեւէ չբաժանվեց) եւ բազմեց Նրա աջ կողմում, նույն այդ մարմնով երկրպագություն ընդունեց երկնավորներից ու երկրավորներից, այդուհետեւ արդեն իսպառ վերացավ այդքան անբավ հեռավորությունը եւ աննմանելի օտարությունը, եւ Աստված ու մարդը մեկ եւ նույն դարձան: Այս իսկ պատճառով էլ մեկ եւ նույն մարդացած Աստծուն առանց խտրության վերագրվեցին թե՛ աստվածավայել եւ թե՛ մարդավայել հատկանիշները: Ինչպես որ նաեւ ձեր բազմագետ ու երբեմնասխալ Ալբերտն է ասում, թե «մի այնպիսի միավորություն էր տեղի ունեցել, որ մինչեւ իսկ ինչ որ Աստծուն է հատուկ, վերագրվում է նաեւ մարդուն, եւ ինչ որ մարդու մասին է ասվում, դա վերաբերում է նաեւ Աստծուն»: Ահա թե ինչու նաեւ մենք՝ հայերս, Քրիստոսի կրած բոլոր կրքերն ու շարժարանքները մեկ եւ նույն մարդացած Բանն Աստծուն ենք համարում ու Աստծուն ենք վերագրում՝ հավատալով, որ նույն Ինքը՝ անշարժարելի եւ անմահ Աստված էր, որ շարժարկեց ու մեռավ մեզ համար: Իսկ ովքեր այսպես չեն դավանում, բնականաբար «երկու» են խոստովանում. մեկը՝ Աստված, իսկ մյուսը՝ մարդ, մեկը՝ շարժարակիր, իսկ մյուսը՝ մեղքերը վերցնող: Ինչպես որ Լեւոնը՝ հավատի խառնակիչն է ասում իր թունալի տոմարի մեջ, թե «յուրաքանչյուրը կրում էր իր հատկությունը. մեկը պայծառանում էր հրաշքներով, իսկ մյուսը ստորին թշվառությանն էր մատնվում»: Անկասկածելի է, որ այսպես ասողներն այն ինչպալին լուի մարդ են դավանում, իսկ լուի մարդու մահը ո՛չ կարող է փրկություն գործել, եւ ո՛չ էլ Նրա մարմինը կարող է կյանք տալ այն ճաշակողներին:

Հարցրո՞ւ երկաբնակին, թե Նրան, Որ Գողգոթայում գամվեց խաչին, Աստված է խոստովանում, թե՞ մարդ։ Եթե ասի՝ «մարդ եմ խոստովանում», դու ասա. «Լոկ մարդու խաչին ինչո՞ւ ես երկրպագում. ուրեմն մարդապաշտ ես...»։ Իսկ եթե ասի՝ «Աստված եմ խոստովանում», այնժամ նաեւ ասա նրան. «Ապա ինչո՞ւ ես «Սուրբ Աստուած»-ից «խաչեցար»-ը դուրս մղել եւ ինչո՞ւ չես ասում, թե «Սուրբ Աստված, որ խաչվեցիր մեզ համար, ողորմի՛ր մեզ», ու դեռ մի բան էլ մեզ ես ծաղրում «խաչված Աստված» ասելու համար»։ Արդ, ասա՛ ինձ, ո՞վ երկաբնակ, դո՞ւ, որ Քրիստոսի երկու բնություններն իրարից բաժանված ես համարում՝ մեկը մյուսից առանձին-առանձին, մեկը՝ աստվածային, իսկ մյուսը՝ մարդկային, ուրեմն Քրիստոս ո՞ր բնությամբ խաչվեց. աստվածային բնությամբ, թե՞ մարդկային։ Բնականաբար այս երկուսից մեկն ես պարտավոր ընտրել, քանի որ Քրիստոս խաչվեց, եւ դու համարում ես, որ այդ Քրիստոսը երկու բնություն ունի՝ առանց միավորության։ Այստեղից էլ, իհարկե, հետեւում է, որ Քրիստոս կա՞մ միայն աստվածային բնությամբ է խաչվել եւ կա՞մ միայն՝ մարդկային բնությամբ։ Եթե ասես, որ միայն աստվածային բնությամբ է խաչվել, ահավասիկ, աստվածաշարժար ու անաստված կղաճնաս, քանի որ աստվածային պարզ ու անախտակիր բնությունը խաչված եւ մեռած ես խոստովանում։ Իսկ եթե ասես, թե միայն մարդկային բնությամբ էր խաչին գամված, ինչպես որ ասում եք, ահավասիկ, մարդապաշտ կլինես, որովհետեւ երկրպագում ես այդ Խաչալին ու Նրա խաչին։ Իսկ եթե, համաձայն քո դավանանքի, նաեւ չերկրպագես, ապա հրեա ու անհավատ կղաճնաս՝ չհավատալով, որ Քրիստոս Աստված է։

Եւ եթե ասես, որ թեպետ մարդկային բնությամբ էր խաչի վրա, սակայն աստվածային բնությունը նույնպես Նրա հետ էր՝ միայն թե առանց որեւէ շարժարանք կրելու, ապա դա էլ կարելի է ասել նաեւ բոլոր սրբերի վերաբերությամբ, որովհետեւ բոլոր սուրբ մարտիրոսներն ուրիշ ի՞նչ կերպ կարող էին կրել այդքան սարսուռի շարժարանքները, եթե Աստված նրանց հետ չլիներ՝ նրանց օգնելու համար։ Չէ՞ որ նաեւ սրբերին է ասում. «Մի՛ երկնչիր, քանի որ Ես քեզ հետ եմ»։ Ուրեմն այդպիսով դու Քրիստոսին որպես սրբերից մեկը համարած կլինես։ Դարձյալ, այդպես խորհելու դեպքում Հոր եւ Սուրբ Հոգու մասին նույնպես կարելի կլինեն ասել, թե խաչի վրա Քրիստոսի հետ էին, քանի որ Քրիստոսի հետ բնությամբ մեկ են, սակայն անհաղորդ էին Նրա շարժարանքներին։ Իսկ եթե այդպես լինեն, ապա ուրեմն ի՞նչ հարկ էր, որ միայն Որդին մարմնանար, կամ այդ

ինչ առանձնահատուկ արդյունք ու երախտիք էր բովանդակում նրա մարդեղությունը մեզ համար. չէ՞ որ, համաձայն ձեր հավատքի, [Քրիստոս] լոկ մարդ էր՝ խաչին գամված, իսկ Աստված էլ նրա հետ էր՝ նրան օգնելու համար:

Իսկ եթե ասես, որ թեպետ միայն մարդկային բնությունն էր շարժարանքներ կրում, սակայն Բանն Աստված այդ շարժարանքներն Իրենն էր համարում սոսկ անվանաբար, դա եւս վերաբերելի է բոլոր սրբերին, ինչպես որ Քրիստոս է ասում առաքյալների առնչությամբ. «Ով ձեզ է անարգում, Ինձ է անարգում» (հմմտ. Ղուկ. Ժ. 16): Եւ Սամուելին էլ ասում էր [Տերը]. «Ոչ թե քեզ արհամարհեցին, այլ Ինձ»: Սրա համար էլ սուրբ Կյուրեղը նշում է այդպես դավանողներին՝ ասելով, որ «եթե մեկը շարժարանքներն ու մահը Բանն Աստծունը համարի միայն վերաբերությամբ (եւ ոչ ճշմարտապես), կամ էլ «երկուսի» բաժանի շարժարանքներն ու հրաշքները՝ մի մասը Աստծուն վերագրելով, իսկ մյուս մասը՝ մարդուն, նզովյալ թող լինի»: Քանի որ թե՛ շարժարանքներն ու մահն էին Բանինը եւ մարմնինը, թե՛ փառքն ու հավերժ կենդանությունն էին Բանինը եւ մարմնինը՝ որպես մեկ բնություն: Հետեւաբար այդ նզովքին են արժանի նրանք, ովքեր «մեկ» Քրիստոսին «երկուսի» են բաժանում եւ շարժարանքները լոկ մարդուն վերագրում:

Շարունակելի

Գրաբարից փոխադրությունը՝
ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
ԵՒ ԳԵՒՈՐԳ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ



ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ

Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ՊԱՐԵԳԻՆ Բ.
ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ԳՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Սկիզբը՝ թիվ Թ., Ժ.

Մեզանում կրթության եւ դաստիարակության գաղափարի ըմբռնումները, ինչպիսի հիմքի վրա էլ կառուցվեն, անվիճարկելիորեն պետք է կոչված լինեն ծառայելու Մայր հայրենիքի հզորացման, հայ ժողովրդի ինֆնության եւ ազգամշակութային արժեքների պահպանության եւ Հայ Առաքելական Եկեղեցու պայծառության գործին, այսպիսին է այս հարցում Գարեգին Բ. Կաթողիկոսի ընդհանրական մոտեցումը: Գնահատելով կրթադաստիարակչական ոլորտում Հայ Եկեղեցու անուրանալի ներդրումը՝ Վեհափառը փաստում է, որ «Հիմնադրման օրվանից Հայաստանյայց Եկեղեցու առաքելության կարեւորագույն մասը կազմել են լուսավորության կրթական նվիրական գործն ու մանկանց դաստիարակությունը՝ հավատարիմ տերունական պատգամին՝ «Ով մանուկներին ընդունում է իմ անունով, ինձ է ընդունում» (Մարկ. Թ. 36): Հայ Եկեղեցին առանձնակի ջանքեր է գործադրել մատաղ սերնդին լավագույն կրթություն ապահովելու համար»¹ (ընդգծումը մերն է.՝ Ա. Ք.): Քննարկվող դիտանկյունից մեծ կարեւորություն է ներկայացնում այն իրողությունը, մատնանշում է նա, որ «...դարերի հոլովութիւն մեր վանական համալիրների հովանու ներքո հիմնվել են դպրոցներ, համալսարաններ ու գրադարաններ, ծաղկել են հազարավոր ձեռագիր մատյաններ՝ լուսավորելու հայ կյանքը գիտության ձեռքբերումներով: Եկեղեցու հոգաժողովյա՞մ տարբեր ժամանակներում բազմաթիվ անհատներ կրթություն են ստացել նաեւ արտերկրի հոշակավոր համալսարաններում՝ հետագայում իրենց վաստակով համալրելով ազգի մեծերի բուլլը»²:

¹ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը «Վարպետաց դպրոց» հայորդյաց տան բացման առիթով (24 սեպտեմբերի 2017 թ., Երեւան), «Էջմիածին», 2017, Թ., էջ 19:

² Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության արարողությանը, «Քրիստոնյա Հայաստան», 2019, սեպտեմբեր Ա., թիվ 17 (541), էջ 1:

Եւ քանի որ շրջանավարտները եւս կոչված են ապագայում իրենց վաստակով համալրելու այդ շարքը, Վեհափառը կոչ է անում բացահայտել ու զորացնել երիտասարդ այդ հայորդիների տաղանդներն ու շնորհները, կերտել ազգային եւ հոգեւոր արժեքների վրա խարսխված նրանց նկարագիրը: Այդ նպատակով նա հայրապետական հայցով ու աղոթքով շրջանավարտներին բարեմաղթում է, որ Աստված «...հանապազ առաջնորդի եւ շնորհազարդի ձեզ [նրանց] եւ դեպի բարի իրադործում առաջնորդի ազնիւ ու շիտակ ձեր [նրանց] հոգու ձգտումները, հույսերն ու նպատակները: Միշտ եւ ամենուր անբաժան ուղեկից ունեցեք [ունենան] աստվածսիրությունը, եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը, որոնք կօգնեն ձեզ [նրանց] ճշմարիտն ու արդարն ընտրելու, ձեր [իրենց] կյանքն առատ արդյունքներով արգասավորելու»³: Հայրապետական եւ հայրական սիրով նա հայցում է նաեւ, որ Աստված իր ամենազոր աշով օրհնի եւ պահպանի ու զորավիճ դառնա շրջանավարտներին, «որպեսզի զարդարյալ իր երկնապարգեւ շնորհներով՝ աստվածահաճո ընթացքով, ազնիւ ու առաքինի գործերով» նրանք կարողանան շենացնել մեր հայրենիքը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ ուրախություն պարգեւեն մեր ժողովրդին⁴:

Այդ ամենը հավաստում է այն իրողությունը, որ քննարկվող հոլովույթում Գարեգին Բ. Հայրապետը շրջանավարտների նկատմամբ հոգատար վերաբերմունքը դիտարկում է որպես այնպիսի անհրաժեշտություն, որին մեծ արժեք է վերապահում ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Հայ Եկեղեցու եւ ողջ հայ ժողովրդի ապագայի համատեքստում: Ահա թե ինչու այդ կապակցությամբ նա հավաստում է, որ «չկա ավելի երախտալից ու շնորհակալ գործ, քան մեր ապագայի հուսալի տեսլականի իրադործումը՝ ի դեմս մեր մատաղ սերնդի արժանավայել կրթության: Նա հավելում է. «Հայրենաշինության, ազգային ոգու մշտանորոգման եւ պահպանման լավագույն գրավականն են կրթական կենտրոններն ու դպրոցները»⁵: Եւ, որ ամենակարեւորն է, արդի պայ-

³ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը շրջանավարտների օրհնության օրվա առիթով, «Էջմիածին», 2010, Ե., էջ 3:

⁴ Տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը շրջանավարտների օրվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2005, մայիս Բ., թիվ 10 (198), էջ 1:

⁵ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը «Վարպետաց դպրոց» հայորդյաց տան բացման առիթով (24 սեպտեմբերի 2017 թ., Երեւան), «Էջմիածին», 2017, թ., էջ 21:

մաններում երիտասարդ սերնդի դաստիարակության վերաբերյալ Վեհափառ Հայրապետի արժեքային մոտեցումները հավասարապես վերաբերում են ինչպես Հայաստանի, այնպես էլ «հայապահպանության դարբնոց» որակվող սփյուռքահայ դպրոցին: Ահա թե ինչու այդ կապակցությամբ Հայոց Հայրապետը պարզաբանում է. «Այսօր էլ Հայոց Եկեղեցին թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքում ջանում է իր գորակցությունը բերել կրթության եւ գիտության զարգացման սրբազան գործին»⁶:

Գարեգին Բ. Կաթողիկոսը կրթության բացառիկ դերը կարեւորում է մեկ այլ դիտանկյունից եւս, քանի որ «...խռովահոյզ է այսօր աշխարհը. տագնապներ, ճգնաժամեր, հակամարտություններ, որոնցից տուժում են նաեւ մեր երկիրն ու ժողովուրդը: Խնդիրներ, մարտահրավերներ կան հայրենական մեր կյանքում»⁷: Խիստ մտահոգիչ այդ գործոնների շարքում նա անդրադարձ է կատարում նաեւ այն իրողությանը, որ «այսօր աշխարհում նկատելի են ազգայինի ու ավանդականի կարեւորությունը նվազեցնելու, ժողովուրդների կյանքում դարերով բյուրեղացած ընկալումները խեղաթյուրելու միտումներ, որոնք նոր մարտահրավեր են նետում նաեւ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին»⁸: Այս կապակցությամբ Վեհափառը ոչ միայն բարձրաձայնում, այլեւ մատնանշում է հայ ժողովրդի համար անընդունելի բացասական այդ երեւույթները հաղթահարելու կարեւորությունը եւ հավաստում. «Ներկա մարտահրավերների առջեւ առավել քան անհրաժեշտ է արդիական կրթության ապահովումը՝ խարսխված ազգային ու հոգեւոր մեր արժեքների վրա, որպեսզի մեր զավակները հարազատ մնան իրենց ինքնությանը եւ աստվածային պատգամների կենսագործմամբ կառուցեն իրենց կյանքն ու ապագան մեր հայրենիքի»⁹: Եւ վստահեցնում է, որ այդ ըմբռնմամբ են անփոփոխ կերպով վերարտադրվել նաեւ քրիստոնեա-

⁶ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության արարողությանը, «Քրիստոնյա Հայաստան», 2019, սեպտեմբեր Ա., թիվ 17 (541), էջ 1:

⁷ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով (31 դեկտեմբերի, 2014 թ.), «Էջմիածին», 2014, ԺԲ., էջ 9:

⁸ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության արարողությանը, «Քրիստոնյա Հայաստան», 2019, սեպտեմբեր Ա., թիվ 17 (541), էջ 1:

⁹ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2022, սեպտեմբեր Ա., թիվ 17 (613), էջ 1:

կան սիրո երկունքով կյանքի կոչված եւ արմատավորված հայ ժողովրդի ձգտումն ու սերը «գիտության եւ լուսավորության հանդեպ, որը [որոնք] դարձել է [են] գրավականը ազգային մեր հարատեւության»¹⁰:

2010 թ. Գարեգին Բ. Կաթողիկոսի եւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գործակցության արդյունքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հիմք դրվեց նաեւ կրթական ոլորտի երախտավորների օրհնության ամենամյա ավանդությանը, որը, ինչպես Վեհափառ Հայրապետն է հավաստում, «հայ ինքնության հիմնադիր Սբ. Սահակ եւ Սբ. Մեսրոպ թարգմանիչ-վարդապետերի եւ եռամեծար հայրերի առջեւ կատարված ուխտն ու Սբ. Էջմիածնի օրհնությունն է կրթության եւ գիտության գործիչներին՝ նոր լիցք հաղորդելու նախանձախնդիր կերպով լծվելու հայորդիների երիտասարդ սերնդի կրթության եւ դաստիարակության սրբազան գործին՝ այդպիսով զորացնելով նաեւ հայոց երկիրը»¹¹:

Գարեգին Բ. Կաթողիկոսը կրթության մշակների գործունեությունն ամենից առաջ գնահատում է այն առնչությամբ, որ նրանք «մեր երկրի զարգացման եւ առաջադիմության նախաշաղկի կրթության»¹² նախանձախնդիր մասնակիցներն են: Այդ կապակցությամբ մանկավարժական համակազմի նվիրական աշխատանքը բարձր գնահատելով՝ նա վկայում է, որ մեր ժողովուրդը ոչ միայն առանձնահատուկ սեր ու ձգտում ունի դեպի կրթությունը, այլեւ «մեծ պատկառանք ու խոնարհում է տաժում ուսուցչի եւ մանկավարժի հանդեպ, ովքեր անմնացորդ նվիրումով ծառայում են սերունդների կրթության եւ դաստիարակության վսեմ գործին»¹³: Հայրապետական սրտաբուխ մաղթանքով բարձր գնահատելով հայոց կրթական մշակույթի եւ կրոնամշակութային ավանդությունների

¹⁰ Ն. Ս. Օ. Ս. Ս. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2016, սեպտեմբեր Ա., թիվ 17 (469), էջ 1:

¹¹ Տե՛ս Կրթության մշակների օրհնություն Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում, «Քրիստոնյա Հայաստան», 2012, սեպտեմբեր Ա., թիվ 17 (373), էջ 4: Նա նաեւ հավաստում է, որ ուսումնական տարվա սեմին կրթության մշակները Մայր Աթոռում նորոգում են ուխտը՝ «...անսպառ եռանդով, աննահանջ սիրով ու անմնացորդ նվիրումով ջանքերու մեր մանկանց իմացությունն ու լույսը հայրենի ավանդների ու հոգեւոր արժեքների», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց կրթության մշակների օրհնության կարգ, «Էջմիածին», 2010, Ը., էջ 154:

¹² Տե՛ս Ն. Ս. Օ. Ս. Ս. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2022, սեպտեմբեր Ա., թիվ 17 (613), էջ 1:

¹³ Ն. Ս. Օ. Ս. Ս. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2015, սեպտեմբեր Ա., թիվ 17 (445), էջ 1:

պահպանության եւ վերարտադրության ուղղությամբ կրթության մշակների կատարած շնորհակալ աշխատանքը՝ Վեհափառը հավաստում է նաեւ. «Մեծ ու պատվական է ձեր կոչումն ու ծառայությունը, ձեզ է վստահված նոր սերնդի կրթությունը, ձեր ձեռքերում է մեր ժողովրդի գալիքը»¹⁴:

Հայոց Կաթողիկոսն արձանագրում է նաեւ, որ Հայաստանում երիտասարդ սերնդի կրթության եւ դաստիարակության գործը դարերի փորձությունն անցած բարձրագույն եւ վեհ առաքելություն է, որ արժանապես ճանաչում են մեր ժողովրդի բոլոր խավերը: «Մեր ժողովուրդը մշտապես բարձրագույն պատվի է արժանացրել կրթության մշակներին՝ միջնադարյան վարդապետներից մինչեւ մերօրյա ուսուցիչներ, — այդ առիթով գրում է Հայոց Նվիրապետը, — խոնարհվել նրանց առաքելության առջեւ, քանզի գիտակցել է ուսման եւ լուսավորության արժեքը կյանքում եւ դերակատարությունը ազգի ապագայի կերտման գործում»¹⁵:

Նա միաժամանակ «ուրախ սրտով, բարի ցանկություններով եւ մաղթանքով» է դիմում «նվիրյալ ուսուցիչներին եւ կրթության բարի մշակներին», որոնց ջանքերով երիտասարդ հայորդիների համար ուսումը, գիրքն ու ընթերցանությունը «դառնում են կյանքի լուսատու կանթեղներ»: Նա վստահեցնում է, որ «նվիրյալ ուսուցիչների եւ կրթության բարի մշակների ջանքերով» է, որ դպրոցականների եւ ուսանողների համար ուսումը, գիրքն ու ընթերցանությունը դառնում են «կյանքի լուսատու կանթեղներ»: Այդ իսկ պատճառով Վեհափառը, բարձր գնահատելով նրանց նվիրյալ աշխատանքը, պնդում է. «Մեծ եւ պատվական է ձեր կոչումն ու ծառայությունը, ձեզ է վստահված նոր սերնդի կրթությունը, ձեր ձեռքում է մեր ժողովրդի գալիքը, որը բոլորս ուզում ենք տեսնել լուսավոր ու պայծառ: Դուք գիտելիքներով հարստացնում եք մեր զավակներին, կրթում նաեւ նրանց հոգին ազգային արժեքներով, բարոյական սկզբունքներով՝ ազնվությամբ, արդարությամբ, մարդասիրությամբ, հայրենասիրությամբ եւ ամենայն առաքինությամբ, առանց որոնց չի կարող կանգուն մնալ ոչ մի հասարակություն, ոչ մի պետություն, նույնիսկ ընտանիք, առանց որոնց կեղծ են եւ քանդվում են անգամ մարդկային հարաբերությունները»¹⁶:

¹⁴ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության օրվա առիթով (31 օգոստոսի, 2014 թ.), «էջմիածին», 2014, Ը., էջ 6:

¹⁵ Մայր Աթոռ Ս. էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ, «Քրիստոնյա Հայաստան», 2020, սեպտեմբեր Ա., թիվ 17 (565), էջ 2:

¹⁶ Միաձնաէջ Մայր տաճարում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգը, «էջմիածին», 2011, Ը., էջ 147:

Հայրապետական սրտաբուխ մաղթանքով դիմելով կրթության մշակներին՝ Հայոց Կաթողիկոսը նրանց մաղթում է, որ ամենակալ Տերն ամենքին անվրդով կյանքի երկար տարիներ եւ բեղմնավոր գործունեություն պարգևի: Եւ այդ համատեքստում կարեւորելով կրթական ոլորտի երախտավորների օրհնության ամենամյա դարձած ավանդությունը՝ հավաստում է. «Սիրելի մանկավարժներ եւ կրթական ոլորտի երախտավորներ, այս նվիրական օրը թող լինի մի նոր առիթ ձեր առաքելության մեջ Աստծու առաջնորդությունն ու շնորհները խնդրելու: Վերաբեւոյնք ձեր ազնիվ ու պատվական կոչումը, որն իր նվիրական պարունակով ու ավանդությամբ մոտեցնում է ձեզ մեր Սուրբ Թարգմանիչների փաղանգին՝ պարտավորեցնելով ամեն ուսուցչի մեր զավակների միտքը վարժեցնելու ուղիղը խորհելու, սիրտը՝ բարին զգալու, եւ կամքը՝ բարին կամենալու տերունապատվեր առաքելությունը»¹⁷: Մատնանշելով, որ ուսյալ եւ կիրթ հասարակությունն է ընդունակ բարեփոխելու կյանքը, բարվոք վճիռներ գտնելու իր առջեւ կանգնած խնդիրներին եւ իրականություն դարձնելու առաջընթացի իր տեսիլքները՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը հայրական սիրով եւ օրհնությամբ մաղթում է, որ իրենց նվիրական եւ պատասխանատու կոչման ու առաքելության մեջ Աստված բազում հաջողություններով պսակի, շնորհազարդի ու զորակից լինի մանկավարժներին եւ կրթական գործի բոլոր մշակներին¹⁸:

Կրթության մշակների գործունեությունը որակելով «ազնիվ», «մեծ», «պատվական»՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը միաժամանակ պնդում է, որ մանկավարժական համակազմի եւ կրթության մշակների գովարժան աշխատանքը «կոչում է» եւ «առաքելություն», որը «...պահանջում է նվիրում, ոգի եւ պատասխանատվություն: Այս ըմբռնումով եւ զգացումով է մանկավարժի մատուցածն արժեք ստանում եւ կենսավորվում: ...Ձեր ջանքերով կրթված ու պատրաստված սերունդն է, որ մեր օրերի արագափոփոխ զարգացումներում հոգեւոր եւ մտավոր ներուժ եւ քաջություն կունենա ապահովելու մեր ժողովրդի ու պետականության շարունակականությունը եւ անընդմեջ զորացումն ու առաջընթացը»¹⁹: Հայոց նվիրապետը կրթության

¹⁷ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց կրթության մշակների օրհնության կարգ, «Էջմիածին», 2010, Ը., էջ 154–155:

¹⁸ Տես Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2015, սեպտեմբեր Ա., թիվ 17 (445), էջ 1:

¹⁹ Կրթության մշակների օրհնության կարգ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Քրիստոնյա Հայաստան», 2017, սեպտեմբեր Ա., թիվ 17 (493), էջ 2:

մշակների աշխատանքը «գովարժան», իսկ կրթության մշակներին «գիտության, եւ կրթության խոնարհ ու պարզ սպասավորներ» է որակում նաեւ այն դիտանկյունից, որ նրանք իրենց մտային ու հոգեւոր իմաստության լույսով ի զորու են «...առողջ եւ զորավոր սերունդ պատրաստել, ովքեր պիտի շենացնեն մեր հայրենի երկիրն ու ազգային կյանքը, պիտի պահպանեն մեր սահմանները եւ պիտի պաշտպանեն մեր ժողովրդի իրավունքները: Մենք համոզված ենք, որ այս գիտակցությունը, այս տեսլականն ամեն օր ձեր աշխատանքում ներշնչում է ձեզ՝ հավելելով կորով ու նվիրում»²⁰:

Հայ եկեղեցական ավանդությանը հավատարիմ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկ անգամ եւս հավաստում է, որ զորավիգ է բոլոր այն ջանքերին, որոնք ուղղված են ազգային ինքնության բարձր գիտակցությամբ եւ բարոյական նկարագրով սերունդներ կրթելու եւ դաստիարակելու գործին: Այդ մոտեցումը նա բացատրում է նրանով, որ «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մշտապես կարեւորել է մանկավարժի եւ ուսուցչի առաքելությունը՝ հստակ գիտակցությամբ, որ նրանց ձեռքերում է կերտվում ազգի ապագան, նրանց շնչի ներքո են հասակ առնում հայորդիները՝ իբրեւ ազնիվ սերմնահատիկ մեր ժողովրդի ազատ ու անկախ, բարօր ու առաջընթաց կյանքի եւ լուսավոր ապագայի»²¹: Բարձր գնահատելով հայ կրթական մշակույթի եւ կրոնամշակութային ավանդությունների պահպանության եւ վերարտադրելու ուղղությամբ կրթության մշակների կատարած շնորհակալ աշխատանքը եւ կարեւորելով նրանց առաքելությունը՝ Վեհափառը գրում է. «Աստվածահաճո եւ գովարժան է ձեր աշխատանքը, սիրելի՛ մանկավարժներ, կրթական գործի սիրելի՛ մշակներ, քանզի հակառակ ժամանակի բազում խոչընդոտներին եւ դժվարություններին՝ անմնացորդ սիրով եւ անօրինակ նվիրումով շարունակում եք մեսրոպաշունչ ձեր առաքելությունը՝ հավատալով գիտելիքի ուժին, աշխարհը վերափոխող ու գեղեցկացնող կրթյալ, բանիմաց եւ առաքինի անհատների պատրաստության կարեւորությունը»²²:

²⁰ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը «Լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթի մրցանակաբաշխության հանգիստությանը (12 դեկտեմբերի 2017 թ.), «Էջմիածին», 2017, ԺԲ., էջ 12:

²¹ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության արարողությանը, «Քրիստոնյա Հայաստան», 2019, սեպտեմբեր Ա., թիվ 17 (541), էջ 1:

²² Հայոց Եկեղեցին հոգեփրկչական իր ծառայությանը համընթաց շարունակելու է ազգապահպան առաքելությունը, «Քրիստոնյա Հայաստան», 2022, օգոստոս Բ., թիվ 16 (612), էջ 2:

Նրա հայրապետական մաղթանքը նաեւ այն է, որ մանկավարժների ջանքերը շարունակաբար արդյունավորվեն կրթության եւ դաստիարակության ասպարեզում, իսկ նրանց վաստակը մշտապես արժանավորապես գնահատեն ինչպես սովորողները, այնպես էլ համայն մեր ժողովուրդը: Այդ պատճառով էլ հայցում է նաեւ, որ Աստուծո օրհնությունը ուղեկից լինի մանկավարժներին եւ նրանց մշտապես առաջնորդի իրենց պատվական ծառայության մեջ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը միաժամանակ վկայում է, որ կրթության եւ դաստիարակության գործընթացը պետք է նաեւ հանրային ուշադրության կենտրոնում լինի այն պարզ պատճառով, որ «մեր երկրի հզորացման, հայրենյաց կյանքի բարօրության, մեր պետության սահմանների ամրության եւ մեր ժողովրդի պայծառ գալիքի համար անգնահատելի է ազգի ուսյալ զավակի եւ գիտակից քաղաքացու դերը»²³: Հետեւաբար, մատնանշում է նա, «նվիրական ու վսեմ, բայց միաժամանակ մեծ ու դժվարին պարտականություն ունենք բոլորս, բայց ի մասնավոր՝ մանկավարժներն ու ուսուցիչները՝ վառ պահելու կրթության առաջնահերթությունը եւ հագեցնելու մեր մատաղ սերնդի ունեցած ծարավն ուսման եւ գիտության հանդեպ»²⁴:

Վերոբերյալն ակնհայտորեն վկայում է կրթության ոլորտի գնահատման Գարեգին Բ. Կաթողիկոսի արժեքային մոտեցումները. ձեւավորել հայազգի երիտասարդ սերնդի քաղաքացիական դիրքորոշումը, ազգանպաստ եւ եկեղեցանպաստ հայացքները, իր իսկ խոսքերով ասած՝ «ազգի ուսյալ զավակ եւ գիտակից քաղաքացի» պատրաստել: Նրա համար անկասկած է, որ «գիտության ու դպրության հանդեպ սերը մեր ազգային դիմագծի անքակտելի մասն է, որ դրսևորվել է մշտապես թե՛ հայրենիքում, թե՛ նրա սահմաններից դուրս»: Այդ իսկ պատճառով է նա կրթության մշակների գործունեության գնահատումը անփոփոխ կերպով կապում նշյալ առաջնահերթությունները կյանքի կոչելու հորդորների եւ կոչերի հետ: Ահա թե ինչու Գարեգին Բ. Կաթողիկոսը պնդում է. «Նվիրական ու վսեմ, բայց միաժամանակ մեծ ու դժվարին պարտականություն

²³ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության օրվա առիթով (31 օգոստոսի, 2014 թ.), «Էջմիածին», 2014, Լ., էջ 5-6:

²⁴ Կրթության մշակների օրհնության կարգ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Քրիստոնյա Հայաստան», 2017, սեպտեմբեր Ա., թիվ 17 (493), էջ 2: Վեհափառ Հայրապետն իր արժեքային մոտեցումը բացատրում է նրանով, որ «Գիտելիքն ու ուսումը միշտ էլ առաջնահերթություն են եղել մեր ժողովրդի համար, եւ շնորհիվ կրթօջախների՝ մեր կյանքի մնայուն ընկերակից են եղել գիրն ու գրականությունը, իմացության փափագն ու ձգտումը...», անդ:

ունենք բոլորս, բայց ի մասնավորի՝ մանկավարժներն ու ուսուցիչները՝ վառ պահելու կրթության առաջնահերթությունը եւ հագեցնելու մեր մատաղ սերնդի ունեցած ծարավն ուսման ու գիտության հանդեպ»²⁵;

Վեհափառ Հայրապետն ամենատարբեր առիթներով բազմիցս բարձրաձայնում է առանցքային այն իրողությունը, որ կրթական համակարգը սովորողներին պետք է անպայմանավոր նվիրում ներարկի դեպի հայրենիքը, հայոց հոգեւոր եւ ազգամշակութային ավանդույթները, ինչպես նաեւ մարդու բնությանը ներդաշնակող բարոյական բոլոր դրական արժեքները: Եւ այդ կապակցությամբ դիմելով մանկավարժներին՝ մատնանշում է. «Ձեր ջանքերով կրթված ու պատրաստված սերունդն է, որ մեր օրերի արագափոփոխ զարգացումներում հոգեւոր եւ մտավոր ներուժ եւ քաջություն կունենա ապահովելու մեր ժողովրդի ու պետականության շարունակականությունը եւ անընդմեջ զորացումն ու առաջընթացը»²⁶: Այդ նպատակը կյանքի կոչելու գործում Վեհափառ Հայրապետը մանկավարժական համակազմին մեկ անգամ եւս հիշեցնում է, որ հայ երիտասարդ սերնդին դեպի կատարյալն ուղղորդելը ոչ միայն առաքելություն է, այլեւ պատմական փորձառության շարունակություն է եւ արդի պայմաններում այդ փորձառության վերարտադրություն: Այդ կապակցությամբ նա «կրթությունը համարում է ամենահզոր զենքը» եւ մատնանշում է, որ կրթական հաստատություններում «մատուցվող գիտելիքը եւ կրթությունը ամրորեն հաստատված պիտի լինեն ազգային-ավանդական արժեհամակարգի վրա»²⁷:

²⁵ Կրթության մշակների օրհնության կարգ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Քրիստոնյա Հայաստան», 2017, սեպտեմբեր Ա., թիվ 17 (493), էջ 2:

²⁶ Կրթության մշակների օրհնության կարգ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Քրիստոնյա Հայաստան», 2017, սեպտեմբեր Ա., թիվ 17 (493), էջ 2: Այդ կապակցությամբ Գարեգին Բ. Կաթողիկոսը պարզաբանում է նաեւ. «Կրթության ու գիտության նվաճումներով, համախումբ ջանքերով կրթական գործին սատարելով՝ հնարավոր պիտի լինի մեր պետության ու ժողովրդի առջեւ սկիզբ առած վերափոխումների նոր պայմաններում ընթանալ առաջադիմության ու զարգացման անհետադարձ ճանապարհով», Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2018, սեպտեմբեր Ա., թիվ 17 (517), էջ 1:

²⁷ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության արարողությանը, «Քրիստոնյա Հայաստան», 2021, օգոստոս Բ., թիվ 16 (588), էջ 1: Այդ կապակցությամբ Հայոց Հայրապետը պարզաբանում է նա. «Դարերի ընթացքում մեր ժողովուրդը մաքառել ու գոյատևել է եւ իր կյանքը կերտել ու վերակերտել է ամբարած գիտելիքի, ճանաչողության ու հմտությունների շնորհիվ: Այսօր նույնպես հայրենիքի անվտանգությունն ու ապահովությունը պետք է խարսխված լինեն մեր երիտասարդների ձեռք բերած գիտելիքների, ինքնաճանաչողության, հայրենասիրության ու ազգասիրության վրա», անդ:

Այդ հոլովույթում անհնար է չնկատել Ամենայն Հայոց Կաթողիկոսի արժեքային մոտեցումների կարեւորագույն մեկ այլ կողմը: Խոսքը վերաբերում է կրթության նկատմամբ նրա հայացքների անբաժան մասին եւ շարունակությանը՝ հոգեւոր կրթության եւ բարոյական նկարագրության անհրաժեշտության հիմնավորմանը: Այդ կապակցությամբ նա հռչակում է. «Հայրենիքի բարօր կյանքի երաշխիքը լուսավորված, կրթված, Քրիստոսի սիրով, Ավետարանի նվիրական պատվիրաններով հասակ առած եւ հոգի ու գիտակցություն կերտած զավակներն են»²⁸: Եւ մանկավարժական համակազմի բարոյական պարտքն է համարում, որ նրանք «մեր զավակներին կրթեն ու դաստիարակեն» «Քրիստոսի Ավետարանի լույս պատվիրաններով ու պատգամներով, մեր հայրերի կերտած սրբազան ժառանգությամբ եւ ավանդով, որպեսզի մեր զավակները ձեր ձեռքերի մեջ հասունանան, նկարագրի ձեռք բերեն՝ լինելու արժանավոր զավակը մեր հայրենիքի եւ մեր ժողովրդի»²⁹: Առավել եւս, այդ առիթով փաստում է Վեհափառը, որ հայ ժողովրդի համար Մեսրոպ Վարդապետի պայծառ ու հանճարագործ գլուխը աստվածային գիտության աղբյուր դարձավ հայոց համար, իսկ քրիստոսասեր մեր ազգը սնվեց եւ կրթվեց Աստվածաշնչի իմաստությամբ: Իսկ «Մայր Աթոռում սկիզբ առած հայ գիրը» հենք դարձավ «հավատքով ու գիտությամբ լուսավորելու մեր ժողովրդի հոգին, հանճարացնելու գիտության եւ իմացության սիրով, հաստատելու ճշմարիտ ուղիներում, զորացնելու եւ պահպանելու հոգեւոր ու ազգային մեր ինքնությունը»³⁰:

Գարեգին Բ. Կաթողիկոսը կրթության մշակներին հիշեցնում է, որ դպրոցական կրթության ընթացքում աստիճանաբար հիմք է դրվում դեռահասի կարողությունների զարգացմանը, որոնց անբաժան մասն են երիտասարդ սերնդի ընդունակությունների բացահայտումը եւ աստիճանական զարգացումը, ինչպես նաեւ՝ ապագա քաղաքացու վեհ նպատակների ձեւավորումը: Փաստերը վկայում են նաեւ, որ Հայոց Հայրապետը «աստվածատուր շնորհներից բխյալ հոգեւոր ու ազգային մեր ինքնությունը» զորացնելու եւ պահպանելու հիմնարար գործոններից մեկն էլ համարում է «քրիստոնեական մեր մշակույթը, որի փառավոր անդամատանում

²⁸ Կրթության մշակների օրհնություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Էջմիածին», 2013, Ը., էջ 153:

²⁹ Անդ:

³⁰ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության օրվա առիթով (31 օգոստոսի, 2014 թ.), «Էջմիածին», 2014, Ը., էջ 5:

բազում գանձուց մեջ անգին գոհար են հայոց գիրն ու դպրությունը՝ սկիզբ առած երանելի Թարգմանիչ Վարդապետների տքնությունամբ ու աղոթալի ջանքերով»³¹։ Ահա ինչու Հայոց Հովվապետը մեծապես կարեւորում է կրթության մշակների ջանքերը՝ հավաստելով, «Ազնվագույն ու ամենապատվական ծառայությունն է, որ բերում էք մեր ժողովրդին, որովհետեւ ձեր կողմից սերմանված արժեքներն ու փոխանցված գիտելիքներն են ձեւավորում մեր ժողովրդի ազգային դիմագիծը, պայծառացնում հոգու տաճարը՝ հանուն աշխարհասփյուռ հայ կյանքի առաջընթացի»³²։ Նա բարձր գնահատականի է արժանացնում նաեւ կրթության մշակների հայրենանվեր եւ ազգանվեր գործունեությունը, քանի որ նրանց «հաղորդած գիտելիքները, սերմանած հոգեւոր արժեքները ուժ եւ զորություն են մեր հայրենիքի ու մեր ժողովրդի համար»³³։

Իր արժեքային մոտեցումներում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադառնում է նաեւ կրթության եւ դաստիարակության նկատմամբ մանկավարժների պատասխանատու վերաբերմունքի հարցին։ Մասնավորապես նա կրթության մշակների ուշադրությանն է ներկայացնում այն փաստը, որ նրանց գործունեությունը կոչված է իմաստավորելու կրթության ոլորտի շահառուների աշխարհայացքը։ Հետեւաբար, դիմելով կրթության ոլորտի մշակներին, Վեհափառ Հայրապետը փաստում է. «Դուք միտք ու հոգի կրթողներ եք, այդ պատճառով ձեր առաքելությունն իրականացնում էք ինչպես մասնագիտական կարողություններով, այնպես եւ ձեր հեղինակությամբ, ձեր դավանած արժեքներով, ձեր սիրով առ հայրենին եւ ձեր հավատքով առ Աստված։ Ձեր աշակերտները կրում են կնիքը ոչ միայն ձեր մատուցած գիտելիքների, այլեւ ձեր հոգու եւ ներաշխարհի, ձեր ազգասիրության ու հայրենանվիրումի»³⁴։ Վկայակոչելով Աստվածա-

³¹ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցը Ֆրանսիա, «Էջմիածին», 2006, ԺԲ., էջ 19։

³² Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության արարողությանը, «Քրիստոնյա Հայաստան», 2019, սեպտեմբեր Ա., թիվ 17 (541), էջ 1։ Ասվածին համահունչ է Հայրապետի հետեւյալ հավելումը. «Ձեր անդուլ աշխատանքով է, որ ուսումնական տարին պիտի լինի հաջողված՝ գոհունակություն պարգևելով ինչպես ձեզ, այնպես եւ սովորողներին, նրանց ծնողներին եւ մեզ բոլորիս», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ, «Քրիստոնյա Հայաստան», 2020, սեպտեմբեր Ա., թիվ 17 (565), էջ 2։

³³ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ, «Քրիստոնյա Հայաստան», 2020, սեպտեմբեր Ա., թիվ 17 (565), էջ 2-3։

³⁴ Անդ, էջ 3։

շունչը՝ Հայոց Նվիրապետն այսպես է դիմում մանկավարժներին. «Կրթության դաշտում սերմնացանները կրթության ոլորտի մշակներդ եք, դուք ձեր աշխատանքով կարող եք մեր զավակների հոգիները վերածել եւ այրված ժայռերի, եւ չոր ճանապարհների, եւ մոլախոտերով, փուշ ու տատասկով ծածկված անդաստանների: Ձեր աշխատանքով դուք նաեւ կարող եք մեր զավակների հոգիները դարձնել բերրի արտեր, եթե հոգածություն մը ու խնամքով, նախանձախնդրությամբ եւ պատասխանատվության զգացումով իրականացնեք ձեր աշխատանքը...»³⁵:

Գարեգին Բ. Կաթողիկոսը լիահույս է, որ ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում ազգային կրթական հաստատությունների մանկավարժ-սերմնացանները մեծ հոգատարությամբ ու պատասխանատվությամբ ձեռնամուխ կլինեն իրենց նվիրական առաքելությանը: Այդ դիտանկյունից հայոց մանկավարժների եւ կրթական գործի նվիրյալների առաքելությունը Վեհափառ գնահատում է ապագայաբանության դիտանկյունից: Մասնավորապես համարելով, որ կրթությունը ցանկացած հասարակության առաջընթացի եւ զարգացման կարեւորագույն գործոններից է՝ Վեհափառն անդրադառնում է կրթության որակի եւ արդյունքների բնութագրմանը: Եւ, վկայակոչելով մեր պատմական անցյալը, հիշեցնում է, որ Մայր Աթոռում սկիզբ առած հայ գիրը ազգային ու հոգեւոր մեր ինքնությունը գերծ է պահել ոչ հարիր, անցանկալի երեւույթներից եւ նպաստել է ազգի ապագա ընթացքին՝ «հավատքով ու գիտությամբ լուսավորելու մեր ժողովրդի հոգին, հանճարացնելու գիտության եւ իմացության սիրով, հաստատելու ճշմարիտ ուղիներում, զորացնելու եւ պահպանելու հոգեւոր ու ազգային մեր ինքնությունը»³⁶: Հայոց Նվիրապետը դրանով է բացատրում այն իրողությունը, որ «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մշտապես կարեւորել է մանկավարժի եւ ուսուցչի առաքելությունը՝ հստակ գիտակցությամբ, որ նրանց ձեռքերում է կերտվում ազգի ապագան, նրանց շնչի ներքո են հասակ առնում հայորդիները՝ իբրեւ ազնիվ սերմնահատիկ մեր ժողովրդի ազատ ու անկախ, բարօր ու առաջընթաց կյանքի եւ լուսավոր ապագայի»³⁷:

³⁵ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ, «Քրիստոնյա Հայաստան», 2015, սեպտեմբեր Ա., թիվ 17 (445), էջ 2

³⁶ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության օրվա առիթով (31 օգոստոսի, 2014 թ.), «Էջմիածին», 2014, Ը., էջ 5:

³⁷ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության արարողությանը, «Քրիստոնյա Հայաստան», 2019, սեպտեմբեր Ա., թիվ 17 (541), էջ 1:

Հայաստանի եւ հայ ժողովրդի ապագային է միտված նաեւ Վեհափառի այն պնդումը, որ «...յուրաքանչյուր առողջ հասարակության շարժիչ ուժը երիտասարդությունն է՝ իր անսպառ աշխատասիրությամբ, մտքի թռիչքով, նախաձեռնությամբ, նվիրումով եւ լավատեսությամբ: Այսօրվա երիտասարդը մեր վաղվա պետական գործիչը, գիտնականը, մանկավարժը, բժիշկը, զինվորականն ու հոգեւորականն է, որոնց ձեռքերում են գտնվում դեռեւս երիտասարդ մեր հայրենիքի վաղվա առաջընթացն ու նվաճումները»³⁸: Հայոց Կաթողիկոսը լիահույս է, որ, այդ գործում շարունակելով դարավոր փորձը՝ ազգային կրթական հաստատությունների մշակները սովորողների եւ ուսանողների հետ իրենց նախանձախնդիր աշխատանքով ոչ միայն կշամբեն բարիքների լույս եւ աղբյուր գիտելիքներ, այլեւ կամրապնդեն ազգային ինքնագիտակցության ոգին: Այդ համոզմամբ նա մանկավարժական համակազմին դիմելով՝ հավաստում է. «Հոգեւոր արժեքների զորությամբ դարերի փորձությանց բովով ու հրով անցնելով՝ ձուլլ ոսկի է դարձել հայ դպրոցը, մաքուր ու անաղարտ, ինչպես նրա մեջ կրթվող հայ մանկանց միտքն ու հոգին, որոնց կոչված էք դուք առաջնորդելու: Սիրելիներ, կոչված էք առ Աստված հավատքով սնելու մեր մատաղ սերնդին, սովորեցնելու ճանաչել ու սիրել մեր հայրենիքն ու Եկեղեցին, հոգալ մարդկանց մասին, ստեղծել ու կերտել, մտածել ուղիղն ու արդարը. այս պետք է լինի կրթության ուղեծիրը, սրանով է լուսավոր եւ առաջատար դարձել ու դառնում ցանկացած ուսում եւ գիտություն»³⁹: Եւ գոհունակությամբ արձանագրում է նաեւ, որ «հավատարիմ իրենց կոչմանը եւ կրթադաստիարակչական հարուստ ավանդներին՝ այսօր նվիրյալ մեր մանկավարժները երիտասարդ սերնդին սնում եւ կրթում են ազգային ոգով եւ հայրենի սրբազան արժեքներով, սերմանում են նրանց հոգում ազնվության ու աշխատասիրության, հայրենասիրության ու ծառայասիրության բարի սերմերը»⁴⁰:

Գարեգին Բ. Հայրապետը նոր սերնդի կրթության ու դաստիարակության «աստվածահաճո առաքելության մշակներին» մաղթում է, որ նրանց

³⁸ Երիտասարդական ուխտերթ դեպի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի եւ օրհնության արարողություն, «Էջմիածին», 2011, Թ., էջ 143:

³⁹ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց կրթության մշակների օրհնության կարգ, «Էջմիածին», 2010, Ը., էջ 154:

⁴⁰ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական մաղթանքը նոր ուսումնական տարվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2011, սեպտեմբեր Ա., թիվ 17 (349), էջ 1:

ներդրած ջանքերը շարունակ արդյունավորվեն, իսկ վաստակը միշտ արժանավորապես գնահատեն ոչ միայն սովորողները եւ ուսանողները, այլեւ մեր ժողովրդի բոլոր զավակները: Եւ քանի որ նա գիտության եւ դպրության նկատմամբ սերը համարում է մեր ազգային դիմագծի անքակտելի մասն ինչպես մայր հայրենիքում, այնպես էլ արտերկրում, կոչ է անում պահպանել եւ ավելի զարգացնել մեր ժողովրդի կրթասեր եւ ուսումնատենչ ոգին: Այդ առիթով նա գրում է. «Սիրելի ուսուցիչներ, Ձեզ է վիճակված առաջնորդելու կյանքի անդրանիկ քայլերը մեր մանուկների ու պատանիների, բանալու նրանց առջեւ իմացության դռները, նրանց կրծքի տակ կրթելով նաեւ ծնողանվեր ու մարդասեր սիրտ, հայրենապաշտ ու առաքինզարդ հոգի: Ձեր նվիրումով ու հավատավոր ընթացքով, Ձեր հոգածու ձեռքով սերմանված հունդերը բարի պտուղներ պիտի բերեն ազգային մեր կյանքի անդատաններում: Արդարեւ մեծ է Ուսուցչի առաքելությունը, եւ երանի նրան, ով մեծ կլինի այդ առաքելության մեջ»⁴¹ (ընդգծումը մերն է. – Ա. Ք.):

Հայոց Նվիրապետը հանուն մեր երկրի, ազգության ու Եկեղեցու ապագայի կոչ է անում սովորողներին հաղորդել այն անհրաժեշտ գիտելիքները եւ կարողությունները, որոնք հիմք կդառնան նրանց ապագա գործունեության համար: Նա չափազանց կարեւորում է նաեւ այն հարցը, որ կրթության ու դաստիարակության արդյունքում շրջանավարտները դառնան բարոյական բարձր հատկանիշներով օժտված լիարժեք քաղաքացիներ: Եւ մեկ անգամ եւս հիշեցնելով գիտելիքների եւ դաստիարակության ներդաշնակեցման կարեւորությունը՝ դա հիմնավորում է նրանով, որ «հայրենաշինության, ազգային ոգու մշտանորոգման եւ պահպանման լավագույն գրավականն են կրթական կենտրոններն ու դպրոցները»⁴²: Եւ այդ հոլովությամբ գնահատելով ուսուցիչների դերը՝ Հայոց Նվիրապետը գրում է. «Մեծ շնորհ եւ պատասխանատվություն է ձեր ուսերին՝ գիտելիք հաղորդելու, իմացության եւ ճանաչողության ուղիներով առաջնորդելու մեր զավակներին, ձեւավորելու նրանց՝ որպես սկզբունքներ ունեցող անհատներ, որպես մեր երկրի հայրենասեր քաղաքացիներ ու մեր ժողովրդի ազգասեր որդիներ եւ դուստրեր: Այս նպատակն ընդհանուր հասարակությանն է, անշուշտ, բայց առավել չա-

⁴¹ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Ուսուցչի օրվա առիթով, «Էջմիածին», 2002, Ժ., էջ 27:

⁴² Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը «Վարպետաց դպրոց» հայորդյաց տան բացման առիթով, «Էջմիածին», 2017, Թ., էջ 21:

փով իրականանում է ձեր ամենօրյա աշխատանքի ու գործունեության արդյունքում: Ձեր նվիրումով, առօրյա ջանքերով են կրթվում եւ հասակ առնում մատաղ սերնդի միտքն ու հոգին, եւ այդ պատճառով երբեք բարձրագույն չէ ասելը, որ ձեր ձեռքերում մեր ժողովրդի ապագան է: Մենք կուզենայինք, որ այս գիտակցությունն ամեն օր ներշնչեր ձեր գործունեությունը»⁴³:

Գարեգին Բ. Կաթողիկոսը, վկայակոչելով կրթության եւ լուսավորության նկատմամբ հայ ժողովրդի անդամաճան սերը, վկայում է, որ դրանով է թելադրված նաեւ այն պարագան, որ գիտելիքը եւ ուսումը մշտապես էական եւ հիմնարար նշանակություն են ունեցել ազգային մեր կյանքում եւ բազմադարյա մշակույթում: Եւ մեկ անգամ եւս հիշեցնելով գիտելիքների եւ դաստիարակության ներդաշնակեցման կարեւորությունը՝ դա հիմնավորում է նրանով, որ «անբաժանելի է հայ ժողովուրդը մեր Սուրբ Եկեղեցուց, իր ստեղծած հոգեւոր ու մշակութային արժեքներից, որոնք շարունակում են հավելվել երկնահաճո նորանոր արարումներով՝ վկայելով հայոց ազգիս քրիստոսասիրությունն ու աստվածաշնորհությունը՝ ըստ տերունական խոսքի. «Ի պտղոյ նոցա ծանիշիք զնոսա» (Մատթ. է. 16)»⁴⁴: Այդ հոլովույթում մեկ անգամ եւս կարեւորելով կրթության մշակների շնորհակալ գործունեությունը՝ Վեհափառ մանկավարժներին դիմելով՝ գրում է. «Ձեր առաքելությունն արարչագործության պսակը հանդիսացող մարդու կրթությունն ու դաստիարակությունն է: Եւ մենք մեծապես կարեւորում ենք կրթության մշակների օրհնության այս արարողությունը, որպեսզի գաք Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Իջման ս. Սեղանի առջեւ ձեր աղոթքը կատարեք, ձեր ուխտը վերանորոգեք՝ անդրադարձումով, որ պիտի կրթեք, դաստիարակեք մեր զավակներին Քրիստոսի Ավետարանի լույս պատվիրաններով ու պատգամներով, մեր հայրերի կերտած սրբազան ժառանգությամբ եւ ավանդով, որպեսզի մեր զավակները ձեր ձեռքերի մեջ հասունանան, նկարագիր ձեռք բերեն՝ լինելու արժանավոր զավակը մեր հայրենիքի եւ մեր ժողովրդի»⁴⁵:

⁴³ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայ Եկեղեցու «Լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխության առիթով (10 նոյեմբերի, 2015 թ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին), «Էջմիածին», 2015, ԺԱ., էջ 7:

⁴⁴ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցը Ֆրանսիա, «Էջմիածին», 2006, ԺԲ., էջ 19:

⁴⁵ Կրթության մշակների օրհնություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Քրիստոնյա Հայաստան», 2013, սեպտեմբեր Ա., թիվ 17 (397), էջ 1:

Վեհափառի հավատամքն այն է, որ գիտելիքներ հաղորդելուն զուգընթաց դպրոցը սովորողներին պետք է կերտի հայրենասեր եւ բարոյական բարձր հատկանիշներով օժտված քաղաքացիներ: Եւ քանի որ կրթության ոլորտի հայազգի երիտասարդներին նա համարում է «կյանքի ամենաեռուն շրջանում գտնվող Աստծու որդիներ», նաեւ հավելում է, որ նրանք պետք է ամեն ջանք գործադրեն իմաստավորելու մեր կյանքն ու մեզ շրջապատող աշխարհը: Մաղթում է, որ, ապրումակցելու կարողություն ունենալով՝ իրենց ներուժը պետք է ծառայեցնեն հանրային շահի սպասարկմանը, «իմաստություն ունենան գիտենալու, որ իրենց՝ երիտասարդների ձեռքում է մեր վաղվա օրը, հայրենիքի եւ Եկեղեցու ապագան»: Այդ առիթով նա հայրական հորդորով կրթության ոլորտի հայազգի երիտասարդներին հավաստում է. «Ուսման մեջ ձեր ձեռքբերումներն այսօր պիտի ծառայեն մեր հայրենիքի շենացմանը, համայն մեր ժողովրդի բարօրությանը»⁴⁶: Եւ ապա հավելում է. «Աղոթում ենք, որ Տիրոջ օրհնությամբ ուսման սերը անբաժան լինի մեր գավակների սրտերից»⁴⁷: Իսկ մանկավարժներին բարեմաղթում է. «Թող ուսումնական նոր տարում առատորեն արդյունավորվեն Ձեր նվիրյալ ջանքերը՝ հանուն մեր նոր սերնդի որակյալ կրթության, հայրենյաց ավանդներով ու քրիստոնեական մեր արժեքներով դաստիարակության եւ մեր հայրենիքի եւ ի սփյուռս աշխարհի մեր ժողովրդի խաղաղ ու երջանիկ ապագայի: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը եւ ողորմությունը թող լինեն բոլորիդ հետ»⁴⁸:

Այդ ամենը մեկ անգամ եւս հավաստում է, որ Հայոց Հայրապետի մոտեցումներում մանկավարժների գործունեությունը որակվում է որպես «ամենապատվական ծառայություն», քանի որ նրանց նախանձախնդիր ջանքերով է դպրոցը ձեւավորում դրական հատկանիշներով օժտված «ազգի ուսյալ գավակ եւ գիտակից քաղաքացի»: Այդ իրողությունը

⁴⁶ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2010, սեպտեմբեր Ա., թիվ 17 (325), էջ 1: Տես նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական մաղթանքը նոր ուսումնական տարվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2011, սեպտեմբեր Ա., թիվ 17 (349), էջ 1, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը նոր ուսումնական տարվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2012, սեպտեմբեր Ա., թիվ 17 (373), էջ 1, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2013, սեպտեմբեր Ա., թիվ 17 (397), էջ 1:

⁴⁷ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության օրվա առիթով (31 օգոստոսի, 2014 թ.), «Էջմիածին», 2014, Ը., էջ 5–6:

⁴⁸ Անդ, էջ 6:

նկատի ունենալով՝ Հայոց Հայրապետը հավաստում է. «Հոգեւոր լույսով սուրբ ու նվիրական է հայ կրթական դարբնոցը, եւ միջնադարյան մեր վանական դպրոցների ավանդույթյան համաձայն՝ այսօր էլ նրանից վեր պիտի փայլի պատվիրանդ «Լոյծ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղիդ յորում կաս դու ի դմա՝ երկիր սուրբ է» (Ելից Գ. 5): Այն ամենը, որը կարող է խաթարել դպրոցի ազնիվ նկարագիրը, պետք է, ուրեմն, թողնել նրա շեմից դուրս եւ ազնիվ մտքով ու հոգով մտնել այնտեղ՝ լծվելու մանկավարժի երախտավոր գործին»⁴⁹: Այդ ամենով է բացատրվում այն իրողությունը, հավաստում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ գնահատելով մանկավարժների՝ դարերի ընթացքում անփոփոխ կերպով դրսևորած պարտքի եւ պատասխանատվության զգացումը, անփոփոխ կերպով հայ ժողովուրդը «մեծ պատկառանք ու խոնարհում է տաժում ուսուցչի եւ մանկավարժի հանդեպ, որ անմնացորդ նվիրումով ծառայում են սերունդների կրթության եւ դաստիարակության վսեմ գործին»⁵⁰:

Վերլուծական եւ արժեքային այդ մոտեցումների տրամաբանական արդյունք պետք է համարել այն, որ անդրադառնալով մանկավարժների դերին՝ Հայոց Կաթողիկոսը հավաստում է. «Կրթության ասպարեզի սիրելի մշակներ, ազնվագույն ու ամենապատվական ծառայությունն է, որ բերում եք մեր ժողովրդին, որովհետեւ ձեր կողմից սերմանված արժեքներն ու փոխանցված գիտելիքներն են ձեւավորում մեր ժողովրդի ազգային դիմագիծը, պայծառացնում հոգու տաճարը՝ հանուն աշխարհասփյուռ հայ կյանքի առաջընթացի: Այս իմաստով խիստ կարեւոր է ձեր նախանձախնդիր, համբերատար եւ հետեւողական աշխատանքը յուրաքանչյուր մանուկի, պատանու եւ երիտասարդի հետ՝ նրանց հոգեկերտվածքի մեջ տեսնելով նոր լուսավորիչների, մաշտոցների, վարդանների, թումանյանների, կոմիտասների, մանթաշանների, անդրանիկների եւ մոնթեների»⁵¹: Միաժամանակ բարձր գնահատելով «կրթության մշակների երախտարժան» վաստակը դպրոցականների «հայրենասիրական եւ ստեղծագործ հոգու այբուբեն» ձեւավորելու գործում՝ Վեհափառն ավելացնում է, որ մեծ է նաեւ նրանց դերը հայոց պետականության եւ հայ

⁴⁹ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց կրթության մշակների օրհնության կարգ, «Էջմիածին», 2010, Լ., էջ 154:

⁵⁰ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2015, սեպտեմբեր Ա., թիվ 17 (445), էջ 1:

⁵¹ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության արարողությանը, «Քրիստոնյա Հայաստան», 2019, սեպտեմբեր Ա., թիվ 17 (541), էջ 1:

ժողովրդի առջեւ կանգնած մերօրյա մարտահրավերները հաղթահարելու գործում: Եւ ազգային կյանքում արժեւորելով կրթության դերակատարությունը՝ մանկավարժներին վերստին հիշեցնում է. «Ձեր ամենօրյա աշխատանքի եւ նախանձախնդրության շնորհիվ է, որ կարող պիտի լինենք զերծ պահել մեր երկիրը ազգային ու հոգեւոր մեր ինքնությանը ոչ հարիր, անցանկալի երեւոյթներից»⁵²:

Ընդհանրացնելով այդ ամենը՝ պետք է փաստել, որ դպրոցական կրթության եւ դաստիարակության նկատմամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի արժեքային մոտեցումներն աչքի են ընկնում ընդհանրական բնույթով:

Իրողությունների ընդհանրացված վերլուծությամբ անդրադառնալով դպրոցական կրթության արժեւորմանը՝ նա հիմնահարցը համապարփակ ուսումնասիրում եւ գնահատում է բազմամակարդակ՝ եւ տեսական, եւ գործնական, եւ պատմական տեսանկյուններից: Ընդ որում՝ արժեքային այդ պնդումները վերաբերում են ինչպես հայրենիքի, այնպես էլ սփյուռքի «ազգապահպանության դարբնոց» որակվող ազգային դպրոցներին:

Դպրոցականներին եւ ուսանողներին ուղղված իր հայրապետական եւ հայրական խոսքում նա հիմնավորում է, որ կրթության ու գիտության զարգացումը առաջընթացի ու հաջողությունների գրավական է ինչպես անձնական, այնպես էլ ժողովուրդների ու պետությունների կյանքում: Այդ դիրքերից Վեհափառը պնդում է, որ մեր ազգային իղձերն ու դարավոր ձգտումները իրականացնելու, մեր երազած հայրենիքի խաղաղ ու ծաղկյալ կյանքն ապահովել եւ զարգացնել հնարավոր է միայն հոգու եւ մտքի արարումներով, ստեղծած գիտական, հոգեւոր ու մշակութային արժեքներով կրթված սերունդների շնորհիվ:

Եւ կրթության միջոցով հայ ժողովրդի ազգային ինքնության, մշակութային ժառանգության եւ հայ գենոֆոնդը պահպանելու առաքելությունը կարեւորում է մի շարք տեսանկյուններից: Վեհափառի արժեքային մոտեցումների հիմքում ամենից առաջ ընկած է այն տեսակետը, որ կրթության եւ լուսավորության ոլորտում բոլոր ձեռքբերումներն առաջին հերթին պետք է ծառայեցնել հայրենի մեր պետականության ամրացման եւ զորացման, մեր երկրի առջեւ ծառացած տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական եւ բազում այլ խնդիրների հաղթահար-

⁵² Անդ:

ման գործին: Եւ քանի որ նա համոզված է, որ հայ ժողովուրդը «աստվածապարգեւ հայոց այբուբենի յուրաքանչյուր տառը դիտարկել է որպէս հայոց ինքնութեան պահպանութեան կոչված զինվոր եւ դպրոցը՝ որպէս ազգի հարատեւման անխորտակելի ամրոց», համակարգված վերլուծութեամբ հիմնավորում է, որ նոր ժամանակներին համահունչ ԻԱ. դարի ազգային մեր առաքելութիւնը պետք է խարսխված լինի մեր ինքնութեան ու դիմագծի ամուր հիմքերի՝ ավանդականի ու ազգայինի վրա: Պատմաքննական վերլուծութեամբ նա հիմնավորում է նաեւ, որ այդ նպատակների իրագործումը հրամայաբար պահանջում է կրթութեան եւ դաստիարակութեան ոլորտը շաղկապել սահակմեսրոպյան դպրոցի ավանդույթներին, մեր ժողովրդի նկարագիրն ու էութիւնը դարձած հավատքին, ինչպէս նաեւ՝ ազգային ավանդներին եւ մշակույթին:

Գարեգին Բ. Կաթողիկոսի վերլուծական մոտեցումներում փաստվում է կրթութեան եւ դաստիարակութեան ոլորտում ազգային գաղափարախոսութեան ու արժեքային համակարգի արմատավորման հրատապ անհրաժեշտութիւնը: Նա համակողմանորեն հիմնավորված կերպով պնդում է, որ հայ ժողովրդի ինքնութեան պահպանութեան եւ նոր սերնդին հոգեւոր սնանկութիւնից զերծ պահելու համար համաշխարհայինացման գործընթացներով պարտադրվող արեւմտյան կաղապարները եւ դրանց անխուսափելի հետեւանք հանդիսացող «ազգային ինքնատարման» միտումները կարելի է հաղթահարել միայն ավանդապահ մոտեցմամբ, քանի որ համամարդկայինի հիմքը եւ բաղադրամասը ազգային արժեքներն են:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Գարեգին Բ. Կաթողիկոս, դպրոցական կրթություն, ժողովրդի ազգային ինքնություն, ազգային արժեքներ:

РЕЗЮМЕ


В данной статье на основе анализа фактического материала обосновывается, что Католикос Всех Армян Гарегин II с первого дня Его интронизации по сей день неизменно огромное внимание уделяет проблеме школьного образования и

воспитания подрастающего поколения. Указывая на многовековую культурную традицию армянского народа, Его Святейшество в своих проповедях, посланиях и публикациях констатирует, что образование и сегодня имеет первостепенное значение, так как знание, познание и моральные ценности являются неотделимыми элементами национальной жизни. В статье показано, что бережное отношение к школе и образованию Католикос Всех Армян рассматривает как «первостепенную цель», так как в современном бурно развивающемся мире знание, образование и нравственное воспитание являются необходимыми предпосылками общественного прогресса. Актуальность и важность образования и воспитания Его Святейшеством основывается также на той непреложной истине, что будущее нашего народа и Родины принадлежит молодому поколению. Автором статьи приводится также тот факт, что Католикосом Всех Армян Гарегином II были основаны новые традиции: ежегодные патриаршие поздравительные послания по случаю праздника дня знания, письменности и образования, а также по случаю благословения выпускников и работников образования.

SUMMARY

Based on the analysis of the factual information, the article substantiates that His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, has always paid great attention to the problem of school education and upbringing of the young generation. Pointing to the centuries-old cultural tradition of the Armenian people, His Holiness also asserts that education is of paramount importance even today, because knowledge, cognition and moral values are inseparable elements of national life.

The article shows that the Catholicos of All Armenians considers the careful attitude towards school and education as a “primary goal”, because in today’s rapidly developing world knowledge and education are the foundations of social progress. The relevance of education and upbringing is also based on the fact that the future of our nation and Motherland belongs to the young generation. The author also substantiates that Karekin II, the Catholicos of All Armenians, established new traditions in the Mother See of Holy Etchmiadzin to promote the upbringing and education of people: namely annual congratulatory messages of the Catholicos on the occasion of the Day of Knowledge, Writing and Education, as well as on the occasions of blessing the graduates and educators.



Doi: 10.56737/2953-7843-2023.10-94

ԱՍՍՏՈՒՐ ՍԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏՐԱՊԵՉՈՆՅԻՆ ԵՒ ՆՐԱ ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆԸ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՈՒՆԻ ՀՐԱՇԱԳՈՐԾ ԶՕՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ թիւ Ժ.

Յաջորդ թուականին շարունակուում է նոյն պահանջը՝ վերադառնալ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին: Ղուկաս կաթողիկոսի՝ Կ. Պօլսի պատրիարք Յովհաննէս Համադանցի վարդապետին, որ այդ պաշտօնում փոխարինել էր Զաքարիա Կաղզուանցուն, 1781 թուականի մարտին գրած նամակում կարդում ենք. «Այլ եւ՝ շնորհակալեցաք զսիրոյդ, որ զհաշիւն Գաղատիոյ նուիրակ Յովհաննէս վարդապետին տեսեալ էիր ընդ մեր նուիրակ Մինաս վարդապետին եւ Պետրոս վարդապետին, եւ զորպէսն մեզ գրեալ: Որում հաւանեցաք»¹: Կրկին Յովհաննէս պատրիարքին 1781 թուականի օգոստոսին ուղարկուած Ղուկաս Կարնեցու մէկ այլ նամակի նկարագրութիւնը բաւականաչափ լոյս է սփռում «կաթողիկոս-նուիրակ» որոշակի առումներով հակասական յարաբերութիւնների վրայ: Ըստ այդ նամակի, Յովհաննէս վարդապետն առանց կաթողիկոսի համապատասխան թոյլտուութեան մեկնել է Կոստանդնուպօլիս եւ այնտեղ վատնում է նուիրակութեան արդիւնքները: Ահա նամակի համառօտագրութեան այդ հատուածը. «Իսկ եւ յանձնարարութիւն վասն Մինաս եւ Պետրոս եւ Գալուստ վարդապետացն մերոց: Նաեւ զի Գաղաթիոյ նուիրակն մեր Յովհաննէս պետն Պօլսեցի անհամեմատութեամբն, թարց հրամանի սրբազան Վեհին գնացեալ էր ի Պօլիս եւ զժողովեալն վատնէր անդ: Գրեաց սմա ընդ մերայնոցն եւ մահտեսի Յարութիւն ամիրային՝ կոչել զնա առ ինքեանս եւ

¹ «Ղուկաս կաթողիկոսի կոնդակներ» (տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Դ., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1899), էջ 236:

հարկել ի դառնալ ի սուրբ Աթոռս: Եւ եթէ չեկեսցէ, զհաշիւն առնուլ եւ յանձնել Մինաս վարդապետին՝ առ ի հասուցանել ի Սուրբ Աթոռս»²: Միեւնոյն ժամանակ կաթողիկոսը նամակ է գրում Յովհաննէս վարդապետին. «Թուղթ ի Պօլիս առ Գաղատիոյ նուիրակ Յովհաննէս վարդապետն գրեաց (գորմէ յիշեցաք ի վերդ ի թղթոջ պատրիարքին) կա՛մ վերադառնալ հարազատօրէն ի սուրբ Աթոռս, կա՛մ զնուիրակութեան հաշիւն անպակաս տալ նուիրակին մերոյ, որ անդ, Մինաս վարդապետին, // վերահասութեամբ պատրիարքին եւ մահտեսի Յարութիւն ամիրային, առ ի հասուցանել ի սուրբ Աթոռս»³: Նոյն թուականի դեկտեմբերին Կ. Պօլիս՝ Մահտեսի Յարութիւն ամիրային յղուած նամակի նկարագրութեան մէջ դարձեալ անդրադարձ է արւում նոյն նիւթին՝ «...եւ յանձնարարութիւն Մինաս, Պետրոս եւ Գալուստ վարդապետացն. եւ զի՛ զլալատիոյ նուիրակն կա՛մ յղեսցեն աստ, եւ կա՛մ զհաշիւն առցեն...»⁴: Նոյն 1781 թուականի դեկտեմբերին Ղուկաս Կարնեցոյ «Պօլսոյ նորոգ Պատրիարք եւ սուրբ Երուսաղէմի միաբան Յովհաննէս վարդապետին» յղուած մի ուրիշ նամակի համառօտագրութեան մէջ բառացիօրէն կրկնում է նոյնը՝ նախորդ նամակին տրուող յղման յաւելումով. «որպէս եւ մահտեսի Յարութիւն Ամիրային եւս գրեցաւ ի վերն ի 297 համարն»⁵:

Ի վերջոյ, շատ չանցած ի կատար է ածում կաթողիկոսի վերը նշուած պահանջը, եւ Յովհաննէս վարդապետին ուղարկում են Վաղարշապատ, քանի որ մինչեւ 1782 թուականի երկրորդ կէսն ընկած շրջանում Յովհաննէս եպիսկոպոսին արդեն տեսնում ենք էջմիածնում: Ամեն դէպքում, ինչպէս տեղեկանում ենք Ղուկաս կաթողիկոսի Կ. Պօլսի նուիրակ Մինաս վարդապետին հասցէագրած մի նամակից, Յովհաննէս Տրապիզոնցին 1782 թուականի սեպտեմբերի 19-ին դուրս է գալիս Մայր Աթոռից՝ ոմն Գէորգ աղայի մինչեւ Կ. Պօլիս ուղեկցելու նպատակով: 1782-ի սեպտեմբերի 26-ին գրուած նոյն նամակից պարզ է դառնում, որ «ծայրագոյն նուիրակ» Մինաս վարդապետը դեռեւս յուլիսի 27-ին գրուած նամակով խնդրել էր կաթողիկոսին՝ Գէորգ աղային էջմիածնից դէպի Կ. Պօլիս ուղեկցելու գործը վստահել Յովհաննէս վարդապետին: Կաթողիկոսը պատասխա-

² Դիւան հաշոց պատմութեան, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատ. Ա. (1780–1785), աշխատասիրութեամբ՝ Վ. Գրիգորեանի, Երեւան, 1984, էջ 262:

³ Անդ, էջ 263:

⁴ «Ղուկաս կաթողիկոսի կոնդակներ» (տե՛ս Դիւան Հաշոց պատմութեան, գիրք Դ., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1899), էջ 243:

⁵ Անդ, էջ 292:

նուժ է, որ իրեն նոյն խնդրանքով արդեն դիմել են «յԱստուծով զօրացեալ» Մկրտիչ եւ «Հովուեանց Զօպան» ամիրաները, որոնց նամակները ինքը ստացել է Յովհաննէս վարդապետի ձեռքով: «Որք (ամիրաները.-Ա.Ս.) եւ զայս եւս էին գրեալ թէ խնդրեմք՝ զի Յովհաննէս վարդապետին հրամայեցես բերել աստ (Կ. Պօլիս.- Ա. Ս.) զաղայն, զի որպէս առանց վնասուց յասուցեալ է յայդր, նոյնպէս առանց իրիք վնասու՝ նա կարէ զդա աստ հասուցանել. եւ այլն»⁶: Կաթողիկոսը, ներքուստ դէմ լինելով Յովհաննէս եպիսկոպոսի միջոցով Գէորգ աղային Պօլիս ուղարկելուն եւ տարբեր պատճառներ բերելով, փորձում է ամեն կերպ համոզել վարդապետին եւ պահել նրան Մայր Աթոռում. «Եւ մեր կամելով զի այսպիսի փոքր պատճառաւ Յովհաննէս վարդապետն մի ելցէ աստի՝ եւ կրեսցէ զծանրութիւն ճանապարհաց, վասն որոյ կոչեցաք առ մեզ. եւ ասացաք թէ՝ թէպէտ այսպէս են գրեալ, այլ մեք ոչ կամիմք՝ զի դու յայդ ծերութեան ժամանակիդ ի սրբոյ Աթոռոյս տարագրեսցիս, եթէ վասն աղային է գնալդ, մեք կարեմք ընդ հաւատարիմ գնացողաց հասուցանել զնա ի Պօլիս: Դու մնա՛ աստ. եւ որպէս մինչեւ ցայժմ շահեցեալ ես, այլ եւս շահիլոց ես ըստ քոյոյ արժանւոյդ»⁷: «Հաւատարիմ գնացողներից» կաթողիկոսը քիչ աւելի ուշ տալիս է Սբ. Կարապետի միաբան Արաբկիրցի Յարութիւն վարդապետի անունը, «զոր այժմ յղեցաք ի նուիրակութիւն Անկիւրիոյ»⁸: Փաստօրէն Յարութիւն վարդապետն արդեն 1782 թուականի սեպտեմբեր ամսի դրութեամբ Գաղատիայի նուիրակ էր կարգուել՝ այդ պաշտօնում փոխարինելով Յովհաննէս վարդապետին: Վերջինս չի ցանկանում մնալ Մայր Աթոռում, «այլ խնդրեաց աղերսանօք թէ՝ աղաչեմ զի հրաման տացես ինձ երթալ. նախ վասն աղային՝ զի անվնաս հասուցից անդ՝ որպէս նոցա խնդիրքն է, եւ երկրորդ՝ զի ես եւս ինձ յատուկ բան եւ հոգալիք ունիմ, որոց վասն գնալս յոյժ հարկաւոր է...»⁹: Ինչեւիցէ, Ղուկաս Կարնեցու համաձայնութեամբ Յովհաննէս վարդապետն ուղեւորւում է Կ. Պօլիս 1782 թուականի սեպտեմբերի 19-ին: Այդ մասին կաթողիկոսը յիշատակում է նաեւ Մինաս վարդապետին նոյն թուականի նոյեմբերին ուղարկուած նամակում. «Իսկ Տրապիզոնցի Յովհաննէս վարդապետն ընդ Գէորգ աղային ել աստի եւ եկն յայդկոյս՝ ի սեպ. ԺԹ., զորոյ երկարապէսն գրեցաք քեզ յառաջ քան

⁶ Անդ, էջ 437:

⁷ Անդ:

⁸ Անդ, էջ 438, 458:

⁹ Անդ, էջ 437:

զայս ի սեպ. Ի.Զ.»¹⁰: Սոյն նամակը նոր փաստ է աւելացնում Յովհաննէս Տրապիզոնցու կենսագրութեանը. մասնաւորապէս յայտնի է դառնում, որ Գէորգ աղային Կ. Պօլիս հասցնելուց յետոյ Յովհաննէս վարդապետը մեկնել է Թոխատի Առաջնորդութիւն: Արդեօք Զաքարիա պատրիարքը Յովհաննէս վարդապետին կարգել է Թոխատի (Եւդոկիա) առաջնորդ, թէ՛ նրան ուղարկել է Թոխատի Առաջնորդարան՝ այնտեղ հոգեւոր սպասաւորութիւն կատարելու: Ինչպէս գիտենք, Թոխատի առաջնորդը ենթակայ էր Պօլսոյ պատրիարքութիւնը: Ա. Ալպօյաճեանը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում երկբայաբար Եւդոկիայի առաջնորդ է յիշում Թովմա վարդապետ Վանեցուն. «Հաւանօրէն Թովմա պաշտօնավարած պէտք է ըլլայ 1778–1784 թուականներուն միջեւ, թէեւ որոշ տուեալ մը չունիմ: Իր մասին ալ, ուրիշ տեղեկութիւններ չունիմ»¹¹: Գիտնականի սոյն վարկածի համար հիմք է ծառայել Պօղոս Կաղզուանցու «Գիրք պատմութեան» մի վկայութիւնը. Պօլսի Զաքարիա պատրիարքի կենսագիր Պողոս քահանան նոյն գրութեան «Տեառն Զաքարիա ազգասէր պատրիարքի կենդանութեան ստացեալ աշակերտքն յայտնին աստէն» վերտառութեամբ գլխում չափաբերուած խօսքով յիշատակում է Զաքարիա վարդապետի սաներին, որոնց թում եւ Թովմա Վանեցի վարդապետին. «վանցի Թօմայն Եւդօկիայ դէտարի»¹²: Եթէ անգամ Թովմա վարդապետ Վանեցին եղել է Թոխատի առաջնորդ, մենք չունենք ստույգ փաստեր նրա՝ պաշտօնավարելու տարիների վերաբերեալ: Զի բացառում, որ 1782–1784 թուականներին Յովհաննէս Տրապիզոնցու գործունեութիւնը ամեն դէպքում ինչ որ կերպ առնչուել է Թոխատի Առաջնորդութեանը:

Միաժամանակ նոյն նամակից պարզւում է, որ Մայր Աթոռի եւ Անկիւրիայի նուիրակի միջեւ դեռեւս առկայ էին դրամական չլուծուած խնդիրներ¹³: «Իսկ՝ Անկիւրիոյ հին նուիրակ Յովհաննէս վարդապետին աղազաւ

¹⁰ Անդ, էջ 457:

¹¹ Ա. Ալպօյաճեան, «Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց», տեղագրական, պատմական եւ ազգագրական տեղեկութիւններով, Գահիրէ, 1952, էջ 660:

¹² Տէն Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 212:

¹³ Մեր խնդրից դուրս է այստեղ անդրադառնալ նշուած խնդիրներին: Այդ հարցերին սպառիչ պատասխաններ կարելի է տալ միայն Յովհաննէս վարդապետի պատասխան նամակներին ծանօթանալու դէպքում: Այնինչ առայժմ հրապարակի վրայ են միայն կաթողիկոսների նամակները: Անկողմնակալ քննութիւնը անհնարին է դարձնում նաեւ այն, որ չի պահպանուել Յովհաննէս Տրապիզոնցու նուիրակութեան մատեանը: Յայտնի է, որ մեզ է հասել, օրինակ, Պօլսի նուիրակ Մինաս վարդապետի նմանօրինակ մի մատեանը

եւս զգրեալսդ յետ եւ առաջ՝ գիտացաք: Այսինքն զշտալն տալեացն, եւ առ քեզ մնալն թամասուկիցն¹⁴, եւ խալասին¹⁵, եւ ի Թոխաթ գնալն յԱռաջնորդութիւն: Ինքն եւս անտի գիր գրէ մեզ. այլ զտալեացն զոչինչ ասէ երկար, այլ այսքան միայն թէ՝ զտալիքս չեմ մոռացեալ, եւ տասնապատիկ հատուցանելոց եմ»¹⁶: Նամակի շարունակութեան մէջ արդեն տրոււմ են յատակ յանձնարարականներ. «Այլ դու որ որքան յայդ կողմունդ ես, մնասցեն առ քեզ այդ թուղթքդ զի եթէ հասուցէ առ քեզ զտալիսն, դու եւս տայցես զայդոսիկ ինքեան: Իսկ եթէ չտայցէ, իհարկէ բերելոց ես ընդ քեզ ի սուրբ Աթոռս եւ առ մեզ»¹⁷:

Մենք չգիտենք, թէ մինչեւ երբ է Յովհաննէս վարդապետը մնացել Թոխատում, բայց 1784 թուականին նրան կրկին տեսնում ենք Կ. Պոլսում: Նոյն թուականի սեպտեմբերին է վերաբերում Յովհաննէս վարդապետի անվան վերջին յիշատակութիւններից մէկը: Այդ ժամանակ տեղի ունեցած՝ Կիլիկիայի կաթողիկոսի ընտրութեանը եւ օծմանը վերաբերող դրուագով, ինչպէս գիտենք, աւարտւում է Մ. Զամչեանի «Հայոց Պատմութեան» վերջին՝ վեցերորդ գիրքը. «...Եւ կարգեցաւ ի տեղի նորա (Եփրեմ կաթողիկոսի.– Ա. Ս.) Թէոդորոս կամ Թորոս վարդապետ սսեցի. զորոյ զհանդէս օծութեան կատարեցին յամսեանն սեպտեմբերի ի Կոստանդինուպօլիս յեկեղեցոջ Սուրբ Աստուածածնի. ուր եւ գտան առաջիկայ վեց եպիսկոպոսունք, երկոտասան վարդապետ, եւ քսան եւ չորս քահանայք, ընդ որս եւ սարկաւագունք ինն...»¹⁸: Կ. Պօլսի Քումքաբուլի Մայր եկեղեցում

դրամական մուտքերի եւ ելքերի բաժիններով: Մատենանում արձանագրուած են տարբեր «կտակներ, նուիրատուութեան խոստումներ, անկտակ վախճանուածների յիշատակին արուած նուէրներ, նաեւ զանազան նուէրներ որպէս հոգեբաժին, որպէս սրբադրամ, որպէս զանձանակադրամ եւ այլն» (տէս ՄԱՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. հմր. 3, վավ. 6):

¹⁴ Թամասուկ կամ թէմեսուկ (արաբ.) - մուրհակ:

¹⁵ Խալաս, խալասագիր (արաբ.) - արձակման կամ ազատման գիր:

¹⁶ «Ղուկաս կաթողիկոսի կոնդակներ» (Տէս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Դ., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1899), էջ 458:

¹⁷ Անդ: Այստեղ կաթողիկոսը նկատի ունի Մինաս վարդապետի ակնկալուող վերադարձը էջմիածին՝ կապուած Կ. Պօլսի նուիրակութեան գործերն աւարտելու հետ: 1683 թուականի յունուարին թուագրուող մի նամակի նկարագրութեան մէջ կարդում ենք. «Թուղթ առ մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն զի եկեսցէ ի սուրբ Աթոռս, ըստ որում ի վաղուց էր աւարտեալ զգործ, եւ նոր նուիրակ երթալը անդ Իսահակ վարդապետն: Պատուէր յանձնել ի նա զամենայն հոգալիսն, եւ ինքն գալ, եւ այլ պատուէրք, որպէս ահա տեսանին» (անդ, էջ 488):

¹⁸ Մ. ԶԱՄՉԵԱՆ, Պատմութիւն Հայոց, հատ. Գ., Վենետիկ, 1786, էջ 878: Տէս նաեւ Ա. Պերպերեան, Պատմութիւն Հայոց, Բ. հրատարակութիւն, հրատարակութեան պատրաստեց Պ. Հովհաննիսեանը, էջմիածին, 2009, էջ 36:

սեպտեմբերի 6-ին Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս է ձեռնադրում Թէոփորոս (այլ աղբիւրներում՝ Թորոս) Աջապահեանը (1784–1791)¹⁹։ Մ. Օրմանեանը՝ հիմք ընդունելով օծման արարողութիւնը նախագահած Զաքարիա Բ. Փոքուզյան պատրիարքի եղբօր որդու՝ Պօղոս Կաղզուանցի դպրի «Գիրք պատմութեան»²⁰ կենսագրական գրուածքից յայտնի տուեալները, առաւել մանրամասն է ներկայացնում կաթողիկոսի ձեռնադրման հանդիսութեան մանրամասները։ Կաթողիկոսական օծումը «Մաշտոցի» ծիսակարգի պահանջներին համապատասխան կատարող տասներկու եպիսկոպոսներից Մ. Օրմանեանը յիշատակում է հինգի անունները, որոնց թւում եւ նշում է Յովհաննէս Տրապիզոնցի եպիսկոպոսին. «Հինգ ներկայ եպիսկոպոսներն եղած են. Սահակ Փառակեցին՝ էջմիածնի նուիրակ, Աւետիս՝ Երուսաղէմի փոխանորդ, Գէորգ՝ Սսոյ միաբաններէն, Յովհաննէս Սեբաստացի եւ Յովհաննէս Տրապիզոնցի»²¹։

Յովհաննէս վարդապետի անվան առաջժամ մեզ յայտնի վերջին յիշատակութիւնը գտնում ենք նոյն Պօղոս Կաղզուանցու «Գիրք պատմութեան» գրուածքի վերջին մասում՝ «Վասն տեսլեան իմոյ» գլխի՝ Կոստանդնուպօլսի պատրիարք Զաքարիա վարդապետի մահուանից յետոյ թափուր մնացած պատրիարքական աթոռին յաւակնող եպիսկոպոսների ընտրութեանը վերաբերող հատուածում, որ տեղի է ունեցել 1799 թուականի մարտի 15-ին. «Բայց այժմ մնայ մեզ խօսիլ զընտրութենէն յաջորդի նորին։ Քանզի՝ յետ երկուց աւուրց դնելոյ զնա ի դիր հանգստեան, ապա գումարեցաւ ժողով ի սուրբ Աստուածածին եկեղեցին յամենայն էսնաֆէն»²², հանդերձ եպիսկոպոսօք, եւ քահանայիւր, եւ կացուցել ի մէջ ժողովելոցն զերիս եպիսկոպոսս, այս է՝ զտէր Դանիէլ արհիպպանծ եպիսկոպոսն. զտէր Օհաննէս եպիսկոպոսն. եւ զփոխանորդ Պատրիարքին ննչեցելոյ զտէր Պետրոս եպիսկոպոսն, որոց միջի ընտրեցաւ ձայնակցութեամբ եւ

¹⁹ Կա տեսակէտ, որի համաձայն Թորոս Սսեցի Աջապահեան Ե. կաթողիկոսը մահուանացուն կնքել է 1796-ին (տե՛ս Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), գրեց Բաբգէն Ա. աթոռակից կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ, 1939, Անթիլիաս–Լիբանան, էջ 530)։

²⁰ Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 325–326։ «Գիրք պատմութեանցի» գրչագիր օրինակը, ինչպէս նշում է հրատարակիչը, Գ. Աղանյանցին տրամադրել է Մ. Օրմանյանը (նշ. աշխ., էջ 5)։

²¹ Մ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, Կ. Պօլիս, 1914, մասն Բ., էջ 3174։ Հմմտ.՝ Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 326։

²² «էսնաֆ» (թուրք.) – ա. արհեստավոր, բ. արհեստակից, գ. արհեստավորների դաս, դ. միջին դասակարգի մարդ։

համահաւանութեամբ բոլոր ազգին Դանիէլ սրբազանն ի պատրիարքութիւն, ըստ այնմ թէ ձայն բազմաց ձայն Աստուծոյ...»²³: Հնարաւոր է, որ վերելում յիշուած «տէր Օհաննէս եպիսկոպոսը» նոյն Յովհաննէս Տրապիզոնցի վարդապետն է: Ի թիւս այլ փաստերի, ասուածի վկայութիւններից կարող է լինել նաեւ այն, որ Պօղոս Կաղզուանցին Յովհաննէս վարդապետի անունը այստեղ գրում է նոյն կերպ՝ «Օհաննէս եպիսկոպոս», ինչ որ Թէոդորոս Աջապահեանի ձեռնադրութեանը վերաբերող դրուագում, որտեղ ընդամէնը յաւելում է «Տրապիզոնցի» մականունը՝ «Օհաննէս եպիսկոպոսն Տրապիզոնցի»²⁴: Հաւանականութիւնից զուրկ չէ այն վարկածը, որ յատկապէս պոլսահայ եկեղեցական շրջանակներում որոշակի հեղինակութիւն վայելող Յովհաննէս Տրապիզոնցին իսկապէս մասնակցած լինի պատրիարքի ընտրութեանը՝ որպէս պատրիարքի թեկնածու: Միւս կողմից՝ Յովհաննէս վարդապետի առաջացած տարիքի փաստը թոյլ չի տալիս մեզ անելու նման պնդում:

Այսպիսով, եթէ ամփոփելու լինենք վերելում շարադրուած նիւթը, կարելի է ստանալ Յովհաննէս Տրապիզոնցի վարդապետի կենսագրութեան հետեւեալ ժամանակագրական պատկերը.

1720 – ական թուականների սկիզբ – ծնունդ է Կ. Պոլսում,

1750 – տեսնում ենք Տրապիզոնում,

1755 – տեսնում ենք Աստրախանում, որտեղից երկու նամակ է գրում՝ ուղղուած Դազար եպիսկոպոսին,

1758 – Աստրախանից վերադառնում է Էջմիածին, որտեղ Յակոբ Շամախեցի կաթողիկոսը նրան եպիսկոպոս է ձեռնադրում եւ կարգում Հնդկաց նուիրակ,

1761 – Էջմիածնում մասնակցում է միւռոնօրհնութեան արարողութեանը, դուրս է գալիս Մայր Աթոռից՝ ճանապարհ ընկնելով դէպի Հնդկաց երկիր,

1762, յունուար 20 – դուրս է գալիս Բասրայից,

1762, մարտ 12 – հասնում է Բանդար Սուրաթ,

1762, ապրիլ 24 – դուրս է գալիս Բանդար Սուրաթից՝ ուղղութիւն վերցնելով դէպի Կալկաթա,

²³ Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 346–347:

²⁴ Անդ, էջ 326:

1762, հունիս 23 – վաթսուներորդի նաւարկելուց յետոյ, Կալկաթայի մատոյցներում նաւը խորտակուում է,

1762, յուլիս 8 – տասներօր նաւի վրայ մնալուց յետոյ, դուրս է գալիս ցամաք,

Վարդավառի շաբաթապահի ուրբաթ օրը – գտնում են Սրբալոյս միւռոնը,

1762, օգոստոս 16 – քառասուն օր ջունգլիներում մնալուց յետոյ անգլիացի զինուորականները գտնում են նաւաբեկեալներին,

1762, օգոստոսի 22 – վեց օր իր մօտ պահելուց յետոյ անգլիացի հազարապետը Յովհաննէսին եւ նրա խմբին ուղարկում է իր նստավայր Պաղրգանջ գիւղաքաղաքը,

1762, օգոստոսի 24 – հասնում են Պաղրգանջ գիւղաքաղաք,

1762, սեպտեմբերի 1 – ութ օր Պաղրգանջում մնալուց յետոյ ուղեւորւում են Դաքա,

1762, սեպտեմբեր 4 – հասնում են Դաքա,

1763, յունուարի 15 – Սեյդաբադում գրում է իր յայտնի նամակը՝ ուղղուած Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսին,

1763, մարտի 28 – հասնում է Կալկաթա քաղաք,

1763, յուլիս–օգոստոս – Բագրեւանդում Յովհաննէս Տրապիզոնցու նամակը ստանում է արդեն Սիմէոն Երեւանցի կաթողիկոսը,

որպես «հայ ոգու սահմանադրություն, որի սկզբունքներն են՝ ազատ անհատը, անկախ հայրենիքը, արդարադատ պետությունը, ոգու հաղթանակը՝ հանուն Աստծու եւ հանուն մերձավորի»⁵:

Հետեւաբար անորոշություններով եւ խառնաշփոթությամբ բնութագրվող համային քաղաքականության (public policy) բազմադերային միջավայրն ուղղակիորեն պատվիրակում է մշակել եւ իրականացնել Հայ Առաքելական Եկեղեցու բնականոն գործառնաման համար գիտականորեն հիմնավորված բանաձեւեր, եւ ոչ թե մեքենայորեն մերժել նրա կայացման առանձնահատկությունները եւ արդի կենսունակությունը:

1. Մեր համոզմամբ՝ Հայ Առաքելական Եկեղեցին (*այսուհետեւ՝ ՀԱԵ*) պետք է ի վիճակի լինի *անցյալ—ներկա—ապագա եռաչափ ժամանակի տիրույթում ի տես դեռել իր պատմականությունը հավաստող մշակութային բնագիրը*⁶ (text) *զարգացնելու համակարգային ներուժը: Միայն այդ-*

⁵ Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Գրիգոր Նարեկացին եւ մեր ժամանակը, Երեւան, 2023, էջ 53:

⁶ «Մշակութային բնագիր» (culture as a text) հասկացությունը միջգիտակարգային դիտանկյունից առաջին անգամ կիրառել է ամերիկացի մշակութաբան Քլիֆֆորդ Գիրցը: Այդ հասկացության միջոցով Ք. Գիրցը, ընդհանրացնելով Բալի կղզու մարդաբանական հետազոտությունը, ցանկացած ժողովրդի մշակույթ դիտարկեց որպես ժամանակի ընթացքում ձեւավորված «բնագրերի համախումբ»: Փաստարկելով տեղային մշակույթի քաղաքակրթական հիմքն ուսումնասիրելու իր տեսակետը՝ Ք. Գիրցը այն բխեցրեց Մ. Վեբերի մոտեցումից, ըստ որի՝ «մարդը կենդանի է, որը կախված է այն նշանակալի ցանցերից, որոնք հենց ինքն է հյուսել»: Ուստի մշակույթը, ըստ Ք. Գիրցի, «այն ցանցերն են, որոնց վերլուծությունը որպես հետեւանք եւ ոչ թե որպես օրինաչափություն ենթադրող փորձարարական գիտություն է, այլ ցանցը մեկնող (interpretive) իմաստ է պարունակում»: Հատկանշական է Ք. Գիրցի այն դիտարկումը, որ «իմաստները կարող են ի պահ տրվել միայն որպես խորհրդանիշներ (symbols)՝ խաչ, կիսալուսին, փետրավոր օձ: Այդպիսի կրոնական խորհրդանիշները, որոնք դրամայի են վերածվում ծեսերում կամ դրանց առնչվող առասպելներում, մի տեսակ ամփոփում են աշխարհի լինելության ձեւի մասին իմացությունը, այն հուզական կյանքի որակը, որը նրանք պահպանում են (support) եւ վարքականորեն կերպը, որը պետք է գրսետրել այդ կյանքում նրանց համար, ում համար նրանք նշանակալի են (resonant)»: Հետեւաբար կարող ենք վստահաբար եզրակացնել, որ «մշակութային բնագիրն» իմաստային նրբերանգներով խորհրդանշական հարստություն է, կրոնական, ծիսական, սովորութային, ինչն ու պետությունն ու համակարգային հիշողության ձեւ ու հասարակական վարքականոն: Այն կյանքի որակի ընթացակարգային ու հուզական կողմերը համախմբող, կանոնավորող, տարածաժամանակային չափումների մեջ ուղղորդող քաղաքակրթական երեւույթ է, ինչն ազգային ու մշակութային «ես»-երը տարբերակող, ընդգծող, վեր հանող գործառույթ ունի: Փաստորեն՝ մարդը որպես իր կերտած մշակութային ցանցի դերակատար, համաձուլվածք է իր ստեղծած խորհրդանիշների գաղափարաբանական կաղապարների ու մեկնաբանման ենթակա երեւույթների (K. E. HOFFMAN, "Culture as text: hazards and possibilities of Geertz's literary/literacy metaphor", The Journal of North African Studies Vol. 14, Nos. 3/4, September/December 2009, p. 417–430, К. ГИРЦ, Интерпретация культур, пер. с англ. О. В. Барсукова, А. А. Борзунов, Г. М. Дашевский, Е. М. Лазарева, В. Г. Николаев, послесл. А. Л. Елфимов; науч. ред. А. Л. Елфимов, А. В. Матешук, Москва, 2004):

պես է հնարավոր բացահայտել անհատապաշտական, սպառողական հասարակությանը բնորոշ անպատասխանատու ազատության սահմանագծերի խաղային բնույթը⁷։ Հետեւաբար պատմության հոլովույթում Հայ Եկեղեցու կերտած մշակութային բնագիրը կյանքի որակի ընթացակարգային ու հուզական կողմերը համախմբող, կանոնակարգող տարածաժամանակային շափումների մեջ ուղղորդող փաղափարական երեւոյթ է, ինչն ազգային ու մշակութային «ես»-երը տարբերակող, ընդգծող եւ վեր հանող գործառույթ ունի։ Համոզված ենք, որ նմանօրինակ մոտեցումը ոչ միայն առավել տեսանելի ու անընդունելի կդարձնի այն շահային խմբերի վարած քաղաքականությունը, որոնց անհարկի ներխուժումից խաթարվում են հայ հոգեւոր մշակութային, մշակութա-քաղաքակրթական, հասարակական-հոգեբանական իրողությունները, այլեւ ի ցույց կդրվեն հանուն սպառողականության անպատասխանատու ազատության վտանգները՝ որպես հոգեւոր անվտանգության ապահովման սպառնալիքներ։ Դա հնարավորություն կընձեռի համակարգված ձեւով դիտարկել համընդհանուր կառավարման կերպափոխման առկա հիմնախնդիրները՝ վերլուծելով քաղաքական անորոշությունների եւ խառնաշփոթության ցանցային իրավիճակը։ Միեւնույն ժամանակ ոչ միայն կբացահայտվի հայ ազգային ինքնության ժամանակատարածականության (chronotope) փլուզումը, այլեւ հավասարաբեք կմշակվի ազգային նախակերպարների (archetypes) ու մտահայեցողության (mentality) մեքենայական փոփոխության եւ արժեքանական մերժումը կանխելուն ուղղվող ռազմավարական ծրագիրը։ Այս առումով հարկ ենք համարում ընդգծել, որ մշակութային բնագրի զարգացման համակարգի՝ ազգային Եկեղեցու, ազգային կրթության եւ ազգային բանակի արժեզրկմամբ պայմանավորված՝ հայ ինքնության մեքենայական կերպափոխումը եւ քայքայումը եղծում են պատմականորեն ձեւավորված «հերոս–հակահերոս», «կարգ–ֆառս» համակարգը։ Վստահ ենք, որ համընդհանուր կառավարման ցանցային քաղաքականությունը եւ հանրային կյանքի բնականոն արդիականացման հրամայականներն անհրաժեշտություն են ստեղծում վերահաստատելու ազգային արժեքանական դաշտում ՀԱՅ գոյաբանական դերի պահանջվածությունն ու կարելորությունը։

⁷ Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Ֆ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Պոստմոդեռնիզմը որպես սոցիալ-քաղաքական փոխակերպումների խաղային համակարգ (տեսամեթոդաբանական վերլուծություն), «Հանրային կառավարում», 2023, 1, էջ 217–231։

Այս գիրքորոշման հիմքը Պ. Սորոկինի դասական դարձած տեսակետն է այն մասին, որ հասարակական ու մշակութային ընթացքի օրինաչափությունները, ըստ իրենց գծային կամ շրջափուլային դրսևորման, զարգանում են պատմականորեն ձևավորված երեք հայեցակարգում՝ գծային, փուլային եւ խառը, որոնք «...տատանվում են հունահունական ու արեւմտյան մշակույթների գոյության ընթացքում իրենց ազդեցությամբ»։ Իրենց հերթին «այս տատանումները շոշափելիորեն կախված են մշակույթի գաղափարական (Ideational), գաղափարապատական (Idealistic) ու զգացական (Sensate) տեսակներից»։ Առաջին. «աշխարհի ընթացքի ու հատկապես մարդկության զարգացման աստիճանական գծային հայեցակարգը հիմնականում վերելք է ապրում զգայական մշակույթի վերելքի հետ»⁸։ Ընդ որում, ըստ հեղինակի, այս տեսակի հասունացումն ու անկումն ուղեկցվում են զանազան խառը տեսակների առկայությամբ։ Միեւնույն ժամանակ մշակույթի «այն տեսակները, որտեղ շրջափուլերը եւ տատանումները չեն դիտարկվում մեքենայորեն, այլ՝ որպես վերին կամ ճշմարիտ հոգեւոր իրականության ներքին կերպափոխումներ ապրելու վկայություններ (Աստված, Բրահմա, Ճակատագիր, Դատ եւ նման երեւույթներ)», կոչվում են գաղափարական։ Ասվածից հետեւում է, որ աշխարհի ընթացքը կանոնավորող հայեցակարգերը զուգորդվում են մշակույթի տեսակների դասակարգման հետ եւ զուգահեռ տարածաժամանակային փոխալյամանավորված օրինաչափություններ են։ Հաջորդիվ Պ. Սորոկինը, որոշակի մշակույթների էության մեջ խորամուխ լինելով, բացահայտում է դրանց բովանդակային կապն իր իսկ դասակարգման մեջ առկա կարգերի հետ։ Այսպես՝ ըստ գիտնականի՝ հինդու մշակույթը հիմնականում գաղափարական է (Ideational), քանի որ հինդու միտքը կրկնվող է եւ շրջափուլային բնույթ է կրում, իսկ «այս շրջափուլերն ու կրկնությունները (cycles and recurrences) այն կերպափոխման դրսևորումներն են, որոնց բարձրագույն (ultimate)՝ հոգեւոր իրականությունը, դիցուք՝ Բրահման կամ Վիշնուն, անվերջանալի ենթարկվում են»⁹։ Մեկ այլ՝ չինական մշակութային մտահայեցողությանը (mentality) անդրադարձ կատարելով՝ Պ. Սորոկինը ներկայացնում է դրա երկակի բնույթը. «Սա մասամբ գաղափարական (հնագույն չինական ու

⁸ Տե՛ս P. SOROKIN, Social and Cultural Dynamics, Boston, 1970, էջ 371:

⁹ Անդ, էջ 372:

դառյական հոսանքը), մասամբ խառն է (Mixed) (կոնֆուցիուսական հոսանք), որը ներկայացնում է մեզ փուլային, անվերջ կրկնվող եւ ալիքաձեւ (undulating) հայեցակարգի համագոյակցությունը մասամբ գծային եւ նույնիսկ շրջափուլային-գծային (progressively linear) հայեցակարգերի հետ: Իսկ չինական քաղաքակրթության փուլային էությունն արտահայտվում է «Յինի եւ Յանգի հարատեւ կշռույթի» մեջ»¹⁰: Սակայն եթե հնդկական քաղաքակրթության դեպքում գործ ունենինք միարժեք գաղափարական (Ideational) երեւույթի հետ, ապա չինականը, ըստ Պ. Սորոկինի, բազմադեմ է, քանի որ կոնֆուցիոսական հոսանքը գծային է ու խառը, քանի որ հարում է «չինական մշակույթի զգացական (Sensate) հոսանքներին»¹¹: Վաղնչական ժամանակների հունական աշխարհընկալումը նույնպես, ըստ հեղինակի, հայտնի է մեզ որպես Հեսիոդոսի նահանջող գծային (regressively linear) հայեցակարգ՝ հիմնված «Ոսկե, Արծաթե, Բրոնզե, Հերոսական եւ Երկաթի դարաշրջանների հաջորդականության տեսության»¹² վրա: Այսպիսով՝ քաղաքակրթությունների հասարակական ու մշակութային զարգացման ընթացքը ենթակա է դասակարգման: Ավելին. բացի ժամանակի եռաչափ ընկալման դիտանկյունից՝ այն ունի ոչ միայն հիմնարկեքները որոշակիացնող օրինաչափություններ, այլեւ, ըստ հրամայականի, ենթակա է թե՛ պահպանման ու վերարտադրման, թե՛ այլակերպավորման: Հենց այս հանգամանքը նկատի ունենալով եւ Պ. Սորոկինի տեսական մոտեցումը հիմք ընդունելով՝ դիտարկեմք Հայ Առաքելական Եկեղեցին՝ որպես հայկական փառաբանության զարգացման պատմության համակարգային կամ հաստատությունական (institutional) հիշողության մեծ պաշարով օժտված միակ գերակա հաստատություն: Որպես այդպիսին՝ այն, ամբողջացնելով այլամշակույթ նվաճողական դրսեւորումների դեմ աշխարհիկ եւ հոգեւոր դասի կողմից զարգացրած ազգապաշտպան պատմական հիշողությունը, կարող է ոչ միայն վերլուծել եւ կառավարել ներկա ճգնաժամային իրավիճակը, այլեւ կանխել հոգեւոր անվտանգության դեմ ուղղված տարաբնույթ մարտահրավերները եւ կաղապարավորելով դրանք՝ բանաձեւել ապագաբանական խնդիրներ: Ակնհայտ է, որ Հայաստանի եւ հայության համար, երբ երկրի հասարակական-փառաբանական համակարգը եւ համընդհանուր կառավարման կերպափոխման գործընթացները հղի են

¹⁰ Անդ, էջ 374:

¹¹ Անդ, էջ 375:

¹² Անդ, էջ 377:

տարաբնույթ անորոշություններով, երբ արմատապես փոխվել է ազգային ինֆնության արդիականացման եւ հայապահպանության արժեշահային համակարգը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու՝ որպես հանրային փաղափականության (public policy) հաստատության գործառնման ուսումնասիրությունն ունի եւ գիտատեսական, եւ գործնական նշանակություն:

Վերոշարադրյալը թույլ է տալիս ընդհանրացնելու, որ համընդհանուր կառավարման հիմնախնդիրները հանգեցրել են «ճգնաժամ» եզրի բազմակիացմանը: «Համաշխարհային տնտեսական համաժողովը (World Economic Forum) բազմակի ճգնաժամը (policrisis) սահմանում է որպես «փոխկապակցված համընդհանուր վտանգների ամբողջություն՝ բարդացող (compounding) հետեւանքներով, երբ ընդհանուր ազդեցությունը գերազանցում է յուրաքանչյուր մասի գումարը»¹³: Ստեղծված իրողությունները հրամայական են դարձնում վերաիմաստավորելու ազգային հաստատություններ՝ մասնավորապես Հայ Առաքելական Եկեղեցու առաքելությունը՝ հաշվի առնելով պատմականորեն ամրագրված նրա համակեցային գործառույթի իրավունքը՝ պաշտպանել հանրային շահերը եւ անվտանգությունը: Հետեւաբար ՀԱԵ առաքելության համակարգային հիմքը բազմագործառույթ է: ՀԱԵ-ն կոչված է նախ կանխատեսել սպասվող մարտահրավերները, դիմագրավել այդ մարտահրավերներին եւ կազապարավորել դրանք, ապա, ինչո՞ւ ոչ, նաեւ պատասխան մարտահրավերներ նետել՝ պատրաստ լինելով ապահովելու Հայաստանի եւ Սփյուռքի բազմամակարդակ համախմբումը:

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԲԱԶՄԱԶԵՒՈՒԹՅԱՆ ԲՆԱՇՐՋՈՒՄԸ

Քաղաքակրթությունն իր արժեշահային զարգացման մեջ բնաշրջմամբ (evolution) իմաստավորված օրինաչափությունների հանրագումար է: Հասարակական եւ մշակութային երեւույթների պատմական, քաղաքակրթական, հասարակագիտական չափումները քաղաքակրթության փորձը մեկտեղում են՝ դրանց հաղորդելով շարունակական փոփոխականության կամ

¹³ Տե՛ս D. T. GABRIEL-DEAN AND V. GIAEVER-ENGER (eds.), Chandler institute of governance, Chandler Good Government Index 2023 Report, pp. 12–13, *տե՛ս* <https://www.cggi.com/images/resources/2023-Chandler-Good-Government-Index-Report.pdf>:

փոփոխական շարունակականության բնույթ: Արդի Եւրոպայի պատմության տեսաբան Գ. Մուռեյ-Միլլերը համոզված է, որ, «...լինելով լուսավորության դարաշրջանի ստեղծագործություն, քաղաքակրթության հայեցակարգն ինքնին արտահայտում էր Եւրոպայի սեփական զարգացման եւ դեպի արդիականություն տանող ճանապարհի արտացոլումը: Տասնութերորդ դարից սկսած՝ Եւրոպան իր ամբողջական էությունը (properly understood) սերտորեն առնչվում էր արդիականացման ու հասարակական առաջընթացի (ընդգծումը մերն է.— Մ. Մ., Գ. Պ.) գործընթացների հետ, իսկ քաղաքակրթության, արդիականության եւ Եւրոպայի այս եռամիասնությունն ստեղծեց իր եւ ողջ աշխարհի ստույգ պատկերը, որը մարմնավորում էր եւրոպական որոշակի որակներ եւ աշխարհայացք»¹⁴: Փաստորեն՝ եւրոպական քաղաքակրթության եռաչափ զարգացման պատմությունը նոր կողմերով է ներկայացնում արդիականացման գործընթացը՝ այն արմատապես կապելով հասարակական առաջընթացի հետ: Ասվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ հասարակական-մշակութային միջավայրի կերպափոխման ընթացքը դարերի հոլովույթում ապացուցել է իր կենսունակությունը: Այս շարակարգում վերստին կարեւորվում է այն տեսակետը, որ «լուսավորության համապարփակությունը (universalism) աշխարհը քարտեզագրում էր համեմատական բնաշրջման իմաստով՝ հաստատելով, որ համաշխարհային պատմության մեջ առկա են քաղաքակրթական առանձնահատկություններ: Հանրային եւ մշակութային տարբերությունները (ընդգծումը մերն է.— Մ. Մ., Գ. Պ.) համապատասխանում էին աստիճանակարգմանը, որում կարելի էր համեմատել ավելի փոքր եւ ավելի զարգացած քաղաքակրթությունները եւ դրանք հակադրել միմյանց»¹⁵: Մեր համոզմամբ՝ քաղաքակրթական-մշակութային բնագրի արժեքանական մրցունակության եւ զարգացած լինելու փաստը դրդապատճառ է, որ այսօր էլ աշխարհաքաղաքական խոշոր խաղացողներին մղում է նոր տեսակի գաղութատիրական մոտեցումներ որդեգրել երիտասարդ պետությունների եւ հընթաց կերպափոխվող նեոմալթուսականությամբ հասարակությունների նկատմամբ: Այն մասնավորապես արտահայտվում է¹⁶ ընդերքի պաշարներ

¹⁴ S. G. MURRAY-MILLER, Civilization, Modernity and Europe: The Making and Unmaking of a Conceptual Unity, History: The Journal of the Historical Association, 103:356. July 2018, էջ 2, տե՛ս <https://orca.cardiff.ac.uk/id/eprint/113120/1/2GMM.Europe-Civilization-Modernity-2017.pdf>.

¹⁵ Անդ, էջ 5:

¹⁶ Մալթուսականությունն ազգաբնակչության կենսագոյության մասին տեսություն է, որի հիմնադիրն է անգլիացի տնտեսագետ, քահանա Թոմաս Մալթուսը (1766–1834): 1805–

րի անխնա շահագործմամբ, քաղաքակրթական բնատարածքային ինքնության անտեսմամբ եւ այլն: Հավատացած ենք, որ պետական կառավարման արդյունավետ գործող համակարգին զուգահեռ պետք է ընդլայնել քաղաքակրթական-մշակութային բնագրի արժեքանությունը կրող ազգային հաստատությունների դերը: Վերջիններս անհրաժեշտ է դարձնել նաեւ ազգային-հանրային հաստատություններ՝ քաղաքացիների ինքնորոշման ու ազատ կամարտահայտման պայմաններում արտաքին ապակառուցողական եւ քայքայիչ փոխազդեցությունների հանդեպ դիմադրողականություն ձեռք բերելու եւ այն շարունակաբար զորացնելու նպատակադրումով: Այստեղից բխում է կառավարման տեսակի ու որակի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը եւ հասարակական տարբեր արժեշահային խմբերի քաղաքացիական-ազգային գիտակցության բարձրացումը: Այս առումով անհրաժեշտություն է առաջացել ստեղծել «ինքնորոշված անհատի ձեւավորմանը, հաստատմանը եւ զարգացմանը նպաստող այնպիսի ժողովրդավարական քաղաքական համակարգ, որի պայմաններում չեն անտեսվում մտածողական, բնատարածքային, բնապատմական առանձնահատկությունները»¹⁷: Ընդ որում՝ հավելեմք, որ անորոշություններով եւ խառնաշփոթությամբ հագեցած արդի մարտահրավերների անող բազմազանությունը հրամայական է դարձրել ազգային հաստատությունների՝ եկեղեցու, դպրոցի, ընտանիքի եւ բանակի համագործակցությունը՝ փառապան համակարգի նկունությունն ու օրինականացումն ապահովելու նպատակով: Տեղեկատվահաղորդակցական նորագույն եղանակներն ու միջոցներն (technology) այսօր արդեն ոչ միայն բարդացրել են հասարակական-մշակութային

1834 թթ. Արեւելա-Հնդկական ընկերության քուէջի ժամանակակից պատմության եւ քաղաքատնտեսության ամբիոնի պրոֆեսոր էր: Իր «Քաղաքատնտեսության սկզբունքներ» (1819) աշխատության մեջ նա հակադրվել է Դ. Ռիկարդոյի արժեքի աշխատանքային տեսությանը: Կարեւորելով բնակչության վերարտադրության մեջ կենսաբանական գործոնի որոշիչ նշանակությունը՝ Մալթուսը գտնում էր, որ բնակչությունն ունի երկաշափական առաջատվությամբ (պրոգրեսիվ) բազմանալու միտում, մինչդեռ գոյամիջոցները եւ բնական հարստությունները թվաբանական առաջատվության շրջագծում են: Հետեւաբար «ավելորդ» բնակչությունը, իբր, խախտում է հասարակության զարգացման բնականոն ընթացքը, եւ ըստ Մալթուսի՝ անհրաժեշտություն է գոյանում այն վերացնել սովի, պատերազմների, համաճարակների միջոցով: Դա կօգնի նաեւ նպատակային օգտագործել երկրի բնական սահմանափակ հարստությունները: Ընդ որում՝ մալթուսականությունն առավել ծրագրավորված կերպով կիրառվեց գաղութային լծի փուլումից հետո, երբ ակնհայտ էր, որ նորանկախ աֆրիկայի երկրները չեն կարողանում ինքնակառավարվել:

¹⁷ Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման հիմնախնդիրները եւ «Հայկական աշխարհը», «Հայկական բանակ», 2011, 1–2, էջ 123:

իրողությունների կերպարիման ընթացքը, այլև արհեստական բանականության գոյությունը ստեղծել են մարդկության զարգացման նոր մարտահրավերներ եւ նոր հնարավորություններ: Հետեւաբար «...անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել արհեստական բանականության (ընդգծումը մերն է,– Մ. Մ., Գ. Պ.) կառավարման՝ նոր հաստատություններում ներգրավված անձանց (սուբյեկտներին) եւ դրանցում կիրառվող ներկայացուցչության նախօրինակներին (մոդելներին): Կառավարությունների, միջազգային կազմակերպությունների եւ արդյունաբերության ոլորտի բազմաթիվ ջանքեր՝ ուղղված համընդհանուր արհեստական բանականության օգտակարությանը կամ պատասխանատու արհեստական բանականության քաղաքական նախաձեռնություններ մշակելուն, այնուամենայնիվ բախվում են մասնակցության տարամտությանը (պարադոքսին), որը ենթադրում է համընդհանուր հաբավի (ընդգծումը մերն է,– Մ. Մ., Գ. Պ.) շահագրգիռ կողմերի մասնակցություն մակերեսային մակարդակում՝ առանց ուղեկցող պաշարների եւ կառուցվածքային բարեփոխումների տրամադրման»¹⁸: Փաստորեն՝ գործ ունենք հետժամանակակից աշխարհում միջազգային համագործակցության մակարդակում առկա բազմամակարդակ խաղային դրսեւորման հետ¹⁹, երբ միջազգային դերակատարների գերիշխող դիրքը նպաստում է «համընդհանուր հաբավի» մասնակցային մեկուսացմանը՝ մարդկության ապագան վճռող տեխնոլոգիական համագործակցության ասպարեզում: Աշխարհակարգի ձեւափոխական (տեկտոնական) շարժերն ու տարատեսակ բախումները («արաբական գարուն», քաղաքացիական պատերազմի հետեւանքով սիրիացիների տեղահանում, 44-օրյա՝ արցախյան երկրորդ պատերազմ, ծագումնաբանական զտման մշակված քաղաքականությանը հետամուտ Արցախի տեւական եւ շարունակական շրջափակում, արցախցիների բռնի տեղահանություն, Արցախի Հանրապետության ողբերգական անկում) հաստատում են «համընդհանուր հաբավի» մասնակցության տարիմաստության (պարադոքսի) առկայությունը: Այս ամենը, ստեղծելով բազմամակարդակ «ինքնության ճգնաժամ», հանգեցնում է համընդհանուր կառավարման ցնցումային փոխակերպման, երբ

¹⁸ SŒu M. VEALE, K. MATUS, R. GORWA, AI and Global Governance: Modalities, Rationales, Tensions, Annual Review of Law and Social Science, Vol 19, 2023, էջ 21, տես <https://discovery.ucl.ac.uk/id/eprint/10171121/1/Veale%20Matus%20Gorwa%202023.pdf>.

¹⁹ Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Ֆ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ, Պոստմոդեռնիզմը որպես սոցիալ-քաղաքական փոխակերպումների խաղային համակարգ (տեսամեթոդաբանական վերլուծություն), «Հանրային կառավարում», 2023, 1, էջ 217–231:

մարդն իր հմտություններով եւ կենսափորձով օտարվում է իր իսկ քաղաքակրթական միջավայրից: Իր հասարակական դիրքի կորստի հետ կոնիվ մղելով՝ մարդն արժեքանական առումով դառնում է լուսանցային (marginal)²⁰: Որպես լուսանցային մարդ (marginal man)՝ նա ինքնահաստատման եւ ինքնաներկայացման նպատակով մասնակցում է ամբողջավարական տարատեսակ շարժումներին, որոնք քայքայելով «ես»-ի ինքնությունը՝ վտանգում են ինչպես հասարակության ներքին կայունությունը, այնպես էլ միջազգային աշխարհակարգը՝ առաջացնելով նոր որակի անկանխատեսելի անորոշություններ: Այս շարակարգում ակնհայտ են ինքնորոշված քաղաքացու (հատկապես՝ երիտասարդության) ու հոգեւոր անվտանգության գերակա դերերը, որոնք հիմնականում անտեսվում են հետարդիականությունը (հետմոդեռնիզմը) մեքենայորեն միայն որպես սպառում որդեգրած հասարակությունում: Հետեւապես նորից կարեւորություն է ստանում ինքնորոշված քաղաքացու, հումանիզացված համընդհանուր կառավարման համակարգի եւ իր գործառման ձեւով տարբեր կազմակերպություններից բաղկացած (արհմիություններ, եկեղեցական եւ կամավորական տարբեր կազմակերպություններ, հասարակական, մշակութային, մասնագիտական միություններ եւ այլն) քաղաքացիական հասարակության բնականոն գործառության հիմնախնդիրը²¹: Այս դիտանկյունից եւս Հայ Առաքելական Եկեղեցին, դարերի հոլովոյթում ապացուցելով իր կազմա-

²⁰ «Լուսանցային (marginal)» հասկացությունը միջգիտակարգային երեւոյթ է: Որպես այդպիսին՝ այն դիտարկվում է երկու հիմնական իմաստով. 1) լուսանցային է այն ամենը, ինչը գտնվում է ընդունված կառուցվածքների ու նորմերի սահմաններից դուրս, 2) լուսանցային է այն, ինչը գտնվում է երկու եւ ավելի իրողությունների միջակայքում: Այս երկու մոտեցումների միջեւ առկա էական տարբերություններն ակնհայտ են դարձնում այն, որ լուսանցայնությունն անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն հասարակական-մշակութային եւ ծագումնաբանական-մշակութային արժեհամակարգերի կերպափոխման շարակարգում, այլեւ որպես համադրական (սինթետիկ) երեւոյթ: Դեռեւս 1928 թվականին Ռ. Պարկը (1864–1944), առաջին անգամ շրջանառության մեջ դնելով «Լուսանցային մարդ» հասկացությունը, այդպիսին էր համարում երկու տարբեր մշակութային, հասարակական կառուցվածքների սահմանագծում հայտնված այն մարդուն, որը լիարժեքորեն ներառված չէ ոչ մեկի եւ ոչ էլ մյուսի մեջ: Ռ. Պարկը հոռուսորեն է վերաբերվում մշակութային խառնածիններին, քանի որ գոյություն չունի երկու կամ ավելի սոցիալականություն, այն մեկն է, եւ դրանում տեղ չկա լուսանցայնության (marginal) համար (տե՛ս R. PARK, Human migration and marginal man / American Journal of Sociology. Chicago, 1928, vol. 23, № 6. էջ 881–883, տե՛ս նաեւ Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, Երեւան, 2019, էջ 84–103):

²¹ Տե՛ս F. ELEK, C. GRIESSLER, Civil society Organizations and their “space” in backsliding democracies, ÖGfE Policy Brief 15, 2023, էջ 2, տե՛ս <https://www.oegfe.at/policy-briefs/civil-society-organisations-and-their-space-in-backsliding-democracies/?lang=en>:

կերպչական կարողությունները, եղել է, եւ անհրաժեշտ է, որ շարունակի մնալ արդի աշխարհում հայկական ֆաղափարության ֆաղափացիակենտրոն ներկայությամբ ժողովրդավարացման գործընթացը համակարգող, զարգացնող, վերաժեւորող, ինչպես նաեւ համայն Սփյուտում հայապահպանությունը ապահովող համայնին ֆաղափականություն (public policy) իրականացնող հաստատություն: *ՀԱՆ նախաձեռնողականությունը ու կազմակերպչական ներուժը մերժողներին հակադրվելու նկատառումով վկայակոչենք Խնդունեզիայի, Կամպուլիի, Մյանմարի երիտասարդների՝ մասնավորապես ուսանողների մասնակցությունն այդ երկրների բռնատիրական վարչակարգի դեմ կազմակերպվող բոլոր քաղաքական վերափոխումներին: Ընդդիմության մաս լինելով՝ երիտասարդներն իրենց երկրում ընդարձակված օրակարգով, անվտանգության ապահովման նկատառումներով, քննադատական մտածողության եւ գիտավերլուծական հարացույցի սկզբունքների հիմնավորմամբ բարելավեցին համագործակցության մշակույթը հասարակական շերտերի՝ Եկեղեցու եւ պետության միջեւ²²:*

Մեր համոզմամբ՝ ՀԱՆ ազգային կյանքում պատմականորեն ունեցած ծանրակշիռ ներկայությունը՝ մի կողմից, իսկ հանրային համակեցությունը զարգացնելու առաքելությունը՝ մյուս կողմից, հնարավորություն են տալիս նրան համակարգել եւ զարգացնել Հայրենիք–Սփյուտ կապերը: *Լինելով համագործակցության մշակույթ զարգացնող մարդակենտրոն ազգային-լուսավորչական կառույց՝ ՀԱՆ-ն արդի ցանցային գործընթացներում կարող է իր հանրային կապերի (PR) ցանցային կատարելագործման միջոցով դառնալ «կարգաստեղծ կայուն կետ» իր բազմամակարդակ գործառականությունում²³: Նոբելյան մրցանակի դափնեկիր Թ. Շելինգի «կարգաստեղծ կայուն կետ» տեսության կիրառումը մեզ հնարավորություն կտա ժամանակատարածական բնաշրջման առումով հիմնավորել առաքելականության արժեքանության սիներգետիկական²⁴ հիմքը՝ որպես հայկական*

²² Տե՛ս A. NORÉN-NILSSON, A. SAVIRANI, A. UHLIN (eds.), *Civil Society Elites: Field Studies from Cambodia and Indonesia*, Nordic Institute of Asian Studies, 2023, էջ 90, տե՛ս <https://www.niaspress.dk/book/civil-society-elites/>.

²³ Տե՛ս Т. ШЕЛЛИНГ, *Стратегия конфликта*, пер. с англ. Т. Даниловой под ред. Ю. Кузнецова, К. Сони́на., Москва, 2007, էջ 306:

²⁴ ՄԻՆԵՐԳԵՏԻԿԱՆ, որպես միջգիտակարգային երեւույթ, ուսումնասիրում է ինքնակազմակերպվող համակարգերի ընդհանուր սկզբունքները եւ զարգացման օրինաչափությունները: Սիներգետիկան դիտարկելով որպես ինքնակազմակերպման կամ ոչ գծայնության երեւույթ՝ Գ. Հակենը շրջանառության մեջ դրեց հատուկ լեզու, առանց որի անհնար է ուսումնասիրել քառսի սահմանային վիճակում գտնվող եւ չարդարացված

քաղաքակրթության ինքնատիպության առանցք: Այսօրինակ մոտեցմամբ էլ անհրաժեշտ է կարեւորել այն, որ Հայաստանում քրիստոնեությունը որպէս պետական կրոն հռչակվելը մեկնարկային է ոչ միայն հայկական, այլեւ քրիստոնեական քաղաքակրթության արժեքաբանության համակարգման համար:

Նմանօրինակ խնդրի առաջադրումը պայմանավորված է մարդկությանը սպառնացող ապագաբանական ճգնաժամերի հաղթահարման կարեւորմամբ՝ հիմնավորել առաքելականությունը որպէս «կարգաստեղծ կայուն կետ» դիտարկելու անհրաժեշտությունը ոչ միայն իբրեւ սեփական հայ տեսակի անվտանգ գոյաբանության, այլեւ համընդհանուր կայուն զարգացման հումանիզացման գործոն: Համոզված ենք, որ հայկական քաղաքակրթության առաքելականության հիմքի անաչառ վերլուծությունը հնարավորություն կտա լայն առումով վերարժեւորել եւ հիմնավորել քրիստոնեական քաղաքակրթության բարոյամարդասիրական բնույթն ու էությունը: Դա էլ իր հերթին կարող է նպաստել ինչպէս հայկական քաղաքակրթության առաքելականության, այնպէս էլ համընդհանուր քաղաքակրթության բնականոն արդիականացմանը: Իսկ այդ հանգամանքը երկուսի համար տեղեկատվահաղորդակցական նորագույն միջոցներով եւ արհեստական բանականությամբ հագեցած աշխարհի անորոշությունները եւ խառնաշփոթությունը հաղթահարելու հնարավորություններ

բացության ձգտող հասարակական եւ պետական համակարգերը: Պայմանավորված հասարակական հարաբերությունների բարդացմամբ՝ դա հնարավորություն է տալիս վերլուծելու եւ կանխատեսելու երեւույթները, որոնք մինչ այդ ընդհանրապէս հասկանալի չէին: Դրանով իսկ քաղաքական գործընթացներում կարեւորվում է «մուտք դեպի ֆառ» երեւույթը: Համաձայն սիներգետիկայի՝ քառսն ունի ինչպէս ստեղծարար (երբ կազմավորվում է նոր բարդ համակարգ), այնպէս էլ կործանարար (երբ առաջացած բարդ համակարգերը փոփոխությունների ժամանակ անկայուն են դառնում արտաքին ուժերի ազդեցությամբ եւ փլուզվում են) բնույթ: Ակնհայտ է, որ ամեն ինչ կախված է երկու հակառակ սկիզբների փոխադարձ խաղից, մի կողմից՝ կառուցվածքներ ստեղծող, համատարած միջավայրում բազմազանությունը մեծացնող սկիզբ, մյուս կողմից՝ տարաբնույթ բազմազանությունը ցրող սկիզբ: Բաց համակարգն ի վիճակի է յուրացնելու արտաքին ազդեցությունները՝ ֆլուկտուացիաները (տատանումներ) եւ գտնվելու անընդհատ փոփոխության մէջ: Ֆլուկտուացիաների առկայությունը քառսի ցուցանիշ է: Դրանք կարող են լինել այնքան ուժեղ, որ առաջանա հետադարձ կապ, ինչի արդյունքում նախկին համակարգը կամ որակապէս կերպափոխվում է, կամ ընդհանրապէս փլուզվում (տե՛ս Ե. Ն. КНЯЗЕВА, С. П. КУРДЮМОВ, Основания синергетики. Режимы с обострением, самоорганизация, темпомиры, Санкт-Петербург, 2002. С. П. КАПИЦА, С. П. КУРДЮМОВ, Г. Г. МАЛИНЕЦКИЙ, Синергетика и прогнозы будущего, 3-е изд, Москва, 2003, Синергетика. Антология / Научный ред., составитель, автор переводов и вступительной статьи Е. Н. Князева. Москва, Санкт-Петербург, ЦГИ, 2013):

կարող է ստեղծել ե՛ւ կարգադասյալ (hierarchical, ιεραρχία), ե՛ւ ցանցային ժամանակատարածքային չափումներում՝ սիներգետիկական առումով (հատկապես ինքնարդիականացման, ինքնաներկայացման եւ ինքնաիրացման) ապագայի մարտահրավերները կանխատեսելու համար: Նման նպատակադրված քաղաքականության իրականացման առաջին պայմանը բնաշխարհիկ-ներծին (endogenous)²⁵ ընտրանու դաստիարակությունն է: Քաղաքական կառավարման այսպիսի արժեքաճանական դիտանկյունով հիմնավորենք առաքելականությանը իբրեւ հայկական ֆաղափարություն իմֆնատիպության առանցք միջգիտակարգային մոտեցումը:

Մինչ հայ քրիստոնեական առաքելականության համակեցության հիմնախնդրի քննարկումը ներկայացնենք հայ լեզվամտածողության մեջ առկա կրոն-հավատ-հավատք հասկացությունների մեկնողական (hermeneutic) իմաստները, քանի որ նման մոտեցումը հնարավորություն կտա իմաստավորելու պատմության ընթացքում ձեւավորված նրանց ընդհանրությունը եւ առանձնահատկությունը: Հստ չր. Աճառյանի՝ «կրոն» բառն առաջացել է կիր (կրել) արմատից՝ -ոն (-ոն) մասնիկով, եւ ստուգաբանվում է որպես կարգ, կանոն, վարք, օրենք, սովորություն, վարդապետություն, հավատք²⁶: Գ. Զահուկյանը, հավատը ներկայացնելով որպես «...կրոն, հավատարմություն, վստահություն ստուգություն», նախապես ենթադրել է, որ այն ունի հնդեւրոպական ծագում՝ «զգալ», «հասկանալ» իմաստներով, սակայն հետագայում հակվել է իրանական ծագման վարկածին²⁷: Իսկ Հայկազյան բառարանում կրոնը մեկնաբանվում է նախ որպես «կրեալ եւ պահեալ», ապա հոգնակի «ք» վերջածանցով՝ «կրոնք»՝ որպես «կարգ եւ կանոն, օրէնք»²⁸: Բառերի լեզվական ստուգաբանությունից ակնհայտ է դառնում, որ «հավատը» իր կրոնական բեռնվածությամբ Աստծու գոյությունը (հաճախ՝ առանց ապացույցի) ընդունելու ներքին համոզմունքների ողջ համակարգն է,

²⁵ Բնաշխարհիկացումը (անգլ.՝ indigenization) որեւէ բան ավելի ազգային դարձնելու գործողությունն է, երբ որեւէ ծառայություն, գաղափար հարմարեցնում են տեղական մշակույթին՝ հատկապես կառավարչական համակարգում, գործունեության ոլորտում՝ ավելի մեծ թվով տեղաբնիկների ներգրավմամբ (տե՛ս “Oxford English Dictionary” (www.oed. Com. 2016), ինչպես նաեւ Ս. ХАНТИНГТОН, Столкновение цивилизаций, пер. с англ. Т. Велимеева, Москва, 2022):

²⁶ Հր. ԱՅԱՌԵԱՆ, Հայերէն արմատական բառարան, Երեւան, 1926, էջ 685:

²⁷ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 454:

²⁸ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, էջ 1138:

որն իր հերթին փոխկապակցված է աշխարհընկալման՝ աշխարհայացքի, վարագծի եւ կենսակերպի հետ: Այս տեսանկյունից «հավատը», ներառելով դիրքորոշված վերաբերմունք հանրային եւ քաղաքական հաստատությունների, նրանց ստեղծած կարգի, կանոնի, օրենքի նկատմամբ, միաժամանակ ունի հավատքի, այսինքն՝ դավանաբանական բովանդակություն: Ահա ինչու հավատքը «կարգաստեղծ կայուն կետ» է: Ավելին. գրաբարյան հոգնակիակերտ «ք» վերջածանցը հնարավոր է դարձնում «հավատք» բառը մեկնել (ընկալել) որպես «Մենքի» կրոնական ինքնությունն արժեւորող ամբողջական համակարգ: Պարզ է, որ տվյալ հասկացությունների միջոցով ակնհայտ տեսանելի է պատմական հոլովույթում ձեւավորված եւ զարգացած ծագումնաբանական-մշակութային արժեքների իմաստային բազմաշերտությունը: Հետեւաբար նրանց դիտարկումը հնարավորություն է տալիս հիմնավորելու մեր մոտեցումը՝ առաքելական հավատքային ինքնատիպությունը որպես «կարգաստեղծ կայուն կետ» դիտարկելով՝ ներկայացնել այն որպես հայկական քաղաքակրթության արժեքային առանցքի կարգաստեղծ եւ կարգապահական բաղադրիչ: Ըստ այդմ՝ սույն մոտեցումը ենթադրում է տվյալ համակեցության համակարգում դավանաբանական ինքնատիպությունների ամբողջության փաստարկում, որով նախ պայմանավորված են տվյալ համակեցության աշխարհընկալման առանձնահատկությունները, ապա նաեւ՝ համապատասխան կենսաքաղաքականության զարգացման (իրականացման) հնարավորությունները: Այսպիսի դիրքորոշումից ելնելով՝ կարող ենք պնդել, որ հավատքային ինքնատիպությունը ոչ միայն «կարգաստեղծ կայուն կետ» է, այլեւ քաղաքակրթությունների համար կենսունակություն է ապահովում: Սակայն, միաժամանակ, հարկ է ելակետ ընդունել եւ այն, որ, հավատքը, որպես կրոնական ինքնության արտահայտիչ, ենթադրում է մարդկային համակեցություն՝ ծագումնաբանությունից ազդ ձեւավորման մակարդակում:

Այստեղից միանշանակ կարելի է եզրակացնել, որ առաքելականությունը հայկական քաղաքակրթության ինֆնատիպության առանցքի արժեքային համակարգի հիմքն է, քանի որ անկախ ժամանակատարածային առկա չափումների ընկալման (ժամանակակից, հետժամանակակից)՝ պատմական փիլիսոփայության տրամաբանության մեջ միավորում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դավանաբանական ողջ համակարգը: Նման մոտեցումը քննադատության թիրախ կարող է դառնալ, քանի որ դավանա-

բանական առումով մենք ունենք նաեւ կաթոլիկ եւ բողոքական համայնքային համակեցություններ: Ընդունելով վերջիններիս գոյություն ունենալու իրավունքը՝ այնուհանդերձ փաստենք, որ հավատալին ինֆնությունը ցանկացած ֆաղափարության ձեւավորման, զարգացման եւ բնականոն առօրինակացման պարտադիր նախադրյալն է: Հետեւաբար առաքելականությունը՝ որպես հայկական ֆաղափարության ինֆնատիպության առանցքի արժեքային համակարգի հիմք դիտարկելը չի ենթադրում պատմական հոլովույթում ձեւավորված այլ հավատքների դավանող հայերի մերժում: Վերջիններիս հավաքական ամբողջությունից դուրս թողնելն անընդունելի է: Սակայն ակնհայտ է, որ միայն Հայ Առաքելական եկեղեցին է, որ ձեւավորել եւ զարգացրել է հայերի ազգային ինքնությունը՝ իր լեզվական, մշակութային, պետականության արժեքային բաղադրիչներով: Այս շարակարգում արժեքավոր է Ե. Տեր-Մինասյանի՝ հայկական Ոսկեդարին վերաբերող հետեւյալ դիտարկումը. Ոսկեդարը «...ծագել է իբրեւ ծառայություն քրիստոնեական կրոնի կարիքներին, բայց միեւնույն ժամանակ հենց իր հիմքում ունեցել է հայրենիքի անկախությանն ու հայ ժողովրդի ինքնությունությունը ծառայելու բուռն տենչը: Այդ տենչից է առաջացել ազգային եկեղեցի, ազգային լեզու եւ գրականություն ստեղծելու իրողությունը, որ դարեր շարունակ հայ ինքնապահպանության եւ ինքնուրույն զարգացման վառ փարոսն է եղել»²⁹: Հետեւաբար շեշտադրենք, որ պատմության հոլովույթում հենց առաքելականության առանցքի աստիճանակարգության (հիերարխիականության) փլուզումը խախտեց հայկական ֆաղափարության ինֆնատիպության համակեցության ողջ ներուժը, եւ ըստ այդմ՝ մինչ այսօր պայքար է մղվում այդ ամենի դեմ: Պատահական չէ, որ նմանօրինակ քաղաքականության իրականացման առաջին դերակատարը Բյուզանդական կայսրությունն էր՝ հատկապես Հուստինիանոսի շրջանում³⁰:

Այս մոտեցումը հիմնավորում ենք նրանով, որ կառավարման «բյուզանդական ոճի» հիմքում դրվեց բյուզանդական կայսրության քաղաքակրթական միավորների՝ մասնավորապես հայության առաքելական ինֆնության քայքայման, ցանցավորման, հատվածայնության, տրոհման, հեղափոխականացման գործընթացը: Ընդ որում՝ դա ոչ թե արտահայտ-

²⁹ Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ, Հայոց եկեղեցին, ուսումնական օժանդակ ձեռնարկ, հրատարակության պատրաստեց ԳԵՆՈՐԳ ԵՊՍ. ՍԱՐՈՅԱՆԸ, Ս. Էջմիածին, 2014, էջ 56–57:

³⁰ Ն. ԱԳՈՆՅ, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, թարգմ.՝ Ա. ԽՈՆԳԿԱՐՅԱՆԻ, Երեւան, 1987, էջ 639:

վեց արհեստականորեն, այլ դրսևերովեց կառավարման «բյուզանդական ոճին» բնորոշ «բաժանիր, որ տիրես» սկզբունքի տրամաբանության տիրույթում, որի հիմքում դրվեց եւ շարունակում է մնալ մարդու ազատության արժեքային բաղադրիչը՝ որպես դավանաբանական այլընտրանքային համակեցության ազատ ընտրության նախապայմաններից մեկը, որպես այլ քաղաքակրթական համակեցության անդամագրվելու ազատ հնարավորություն (այսօրինակ մոտեցումը դրվեց պավլիկյան, թոնդրակյան եւ այժմ էլ դրվում է աղանդավորական շարժումների հիմքում):

Այդուհանդերձ՝ Քաղբեդոնի ժողովից հետո շարունակվեց վիճահարույց մնալ այն հարցը, թե արդյո՞ք Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դավանաբանությունն է հայի համակեցության միակ (ճշմարիտ) հավատքային բաղադրիչը: Այստեղից նմանօրինակ մոտեցումը ներմուծվեց հայ առաքելական իրականություն եւ առավել բարդացավ հայ համակեցության ժամանակակից՝ արդեն բազմադավան հանրությունների գոյության պայմաններում: Ավելին, այսօր արդեն ակնհայտ է, որ նույնիսկ ազգային ինքնությունը փորձում են արդիականացնել հակաքրիստոնեության եւ հակաառաքելականության հիմքի վրա: Փորձելով վերարժեւորել հայ համակեցության պատմական վաղ ընթացքի հավատքային տարրերը (հեթանոսական շրջանի)՝ դրանք ներկայացվում են որպես ազգայնականության առանցքներ: Ենթադրվում է, որ մեր համակեցության անհաջողությունների պատճառը քրիստոնեական, կամ ավելի ճիշտ՝ Քրիստոսի խաչելության, համբարձման եւ հարության երեւույթի մեջ է ամփոփվում: Սակայն դա պետք է բացատրել մշակութային բնագրի չհիմնավորված վերարժեւորմամբ՝ որպես աշխարհաքաղաքական պատվիրված մարտահրավեր: Չպետք է անտեսել այն, որ հետքրիստոնեական բոլոր ժամանակներում աշխարհի աշխարհաքաղաքական կառուցվածքի հիմնական խաղացողները եղել են քրիստոնյա պետությունները:

Նկատի պետք է ունենալ, որ քրիստոնեության ընդունումը պայմանավորված էր քաղաքակրթական անհրաժեշտությամբ, իսկ առաջնական ինֆնությունը՝ հասարակական-քաղաքական զարգացման գործընթացում սեփական տեսակի տարածաժամանակային չափումներում կյանքի կազմակերպման արժեքաբանական հիմքով: Ասվածի տիրույթում քրիստոնեության ընդունումն անհրաժեշտ է դիտարկել եւ որպես ժամանակի մարտահրավերներին պատասխան, եւ որպես պետականության պահպանման եւ քաղաքակրթական ինքնուրույն միաձուլվ հիմքով

կառավարման համակարգ ստեղծելու միջոց: Այս տրամաբանությունն է, որ Մեծ Հայքի Արշակունի թագավոր Տրդատ Մեծին (255/250–330) ստիպեց փնտրել արժեքային նույնականացման նոր եւ համարժեք բաղադրիչ, ինչը հնարավոր դարձավ քրիստոնեության ընդունումով: Դա էլ ապահովեց ոչ միայն հայկական քաղաքակրթության յուրահատկությունը եւ վերածնունդը, այլեւ հիմք դարձավ համընդհանուր քաղաքակրթության զարգացման ընթացքի մասնակիցը դառնալու համար: Փաստորեն՝ քրիստոնեության ընդունումով, իսկ հետագայում առաքելականության շնորհիվ սեփական տեսակի հիշողությունը անցյալ–ներկա–ապագա չափումներում զատելու տրամաբանությամբ դարերի հոլովոյթում ապահովեց հայկական քաղաքակրթության ինքնատիպ կենսունակությունը: Դա ժամանակի միակ պահանջն էր՝ ապահովելու հայ տեսակի, այսինքն՝ հայկական քաղաքակրթության համակեցային ինքնատիպության գոյությունը: Պարսկաստանի եւ Բյուզանդիայի պես հզոր հարեւանների հետ ձուլումը կանխելու լավագույն միջոց ընտրվեց հոգեւոր-արժեքային նոր տիրույթի սահմանումը: Պատահական չէր նաեւ Մեծ Հայքի թագավոր Պապի (370–374/375)՝ Հայ Առաքելական Եկեղեցու ինքնուրույնության ապահովումը: Դա ժամանակի հրամայականն էր, ուղղակի անհրաժեշտություն՝ զարգացնելու հայ տեսակի հավատքը՝ որպես հայկական քաղաքակրթության իմֆնության առանցքի գերակա արժեքային համակարգ:

Անկասկած է, որ քրիստոնեության ընդունումը մեր համակեցության արժեքային համակարգը բոլորովին նոր հարթություն տեղափոխեց: Բայց այստեղ պետք է նշել, որ քրիստոնեական բարոյականության արժեհամակարգն ամբողջովին համապատասխանում էր հայ համակեցության բարոյական վարքականոնային արժեհամակարգին, եւ ժամանակի ընթացքում արդեն համաշխարհային կրոն դարձած քրիստոնեությունն իր առաքելական դրսեւորմամբ հայ մարդու ինքնագիտակցության մեջ ձեւավորվեց իբրեւ հայոց (ազգային) կրոն: Այսպիսով՝ հայ առաքելական հավատքն ինքնատիպ է ոչ միայն այն հանգամանքով, որ հավատացյալները միայն հայեր են, այլեւ այն պատճառով, որ հավատքը ժամանակի ընթացքում դարձել է հայի ինքնության բարոյական վարքականոնի տիրույթի եւ կենսունակության ապահովման արժեքանական գերակա չափորոշիչ: Սույն մոտեցմամբ առաջնությունը միաձուլվել էր արժեքանությամբ, ազգային կրոն է: Այս մակարդակում «ազգային կրոն» հասկացության կիրառումով նկատի ենք ունեցել հավատքի

ինքնությունը, միայն տվյալ համակեցությանը բնորոշ լինելը, այն, որ նրա հիմքի վրա կառուցվում են ազգային ինքնության արժեքային մյուս բաղադրիչները: Այս շարակարգում «ազգային կրոն», «ազգային Եկեղեցի» եզրույթները մեր ընկալմամբ առավելապես համահունչ են կենսաքաղաքականության իրականացման արդի հանրային զարգացման իրողություններին եւ իրենց բովանդակային իմաստով բացառապես արտահայտում են տվյալ համայնքային համակեցությանը բնորոշ լինելու հանգամանքը: «Ազգային կրոն» բնորոշումը ենթադրում է նաեւ, որ այն իր դավանաբանական բովանդակությամբ փոխազդեցության մեջ է գտնվում ազգային կենսափիլիսոփայության հետ: Այսինքն՝ այն իր դավանաբանական առանձնահատկությունների զարգացման մեջ կրում է ազգային ինքնությունն ու մտահայեցողությունը (mentality) եւ ուղղակի ու անուղղակի կերպով պատասխանատու է վերջիններիս բնականոն արդիականացման համար: Հետեւաբար հայ առաքելական հավատքից դուրս ցանկացած այլ դավանաբանական ձեւ կարող է ոչ միայն խաթարել համակեցության համար անհրաժեշտ ազգային ինքնության, մտահայեցողության եւ անվտանգության հիմքերը, այլեւ զրկել ազգային ինքնությունը քաղաքակրթական ինքնատիպությունից:


Պետք է փաստենք նաեւ, որ հայկական ինքնությունը քաղաքակրթական ներուժն իրացվեց հենց քրիստոնեության հիմքով՝ արտահայտվելով հայ միջնադարյան արվեստի ու դպրության միջոցով: Ընդ որում՝ այն իր մեջ ներառել է անգամ նախաքրիստոնեական շրջանի բոլոր այն տարրերը, որոնք կենսունակ էին եւ շարունակեցին գոյատևել նոր դավանաբանության շրջանակներում: Խնդիրն առավել դիպուկ է բնութագրել Ն. Աղբալյանը. «...եթե չորրորդ դարում Հայաստանը քրիստոնեացավ, ապա հինգերորդ դարում քրիստոնեությունը հայացավ»³¹:

Հենց այս ընդհանրացումը հիմք ընդունելով՝ անդրադառնանք Հայ Առաքելական Եկեղեցու ինքնատիպության վիճահարույց խնդրին: Պարզ է, որ «ազգային կրոն», «ինքնատիպ կրոն» բնորոշումները կարող են միանշանակ չընկալվել քրիստոնեության՝ համամարդկային կրոնի պարագայում, մանավանդ որ բաց հասարակության հայեցակարգում կրոնի բաղադրիչը ենթադրում է ազատ ընտրություն: Ավելին. համընդ-

³¹ ՏԵՐ ՎՐԹԱՆԵՍ ԵՊՍ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ, *Ազգային-հոգեւոր արժեքների նկատմամբ սպառնալիքները եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը հոգեւոր արժեքների, հասարակության ինքնության եւ պետության պահպանման գործում*, «Հայկական բանակ», 2018, 3, էջ 37–53:

հանուր քաղաքակրթության գործառույթը, նվազեցնելով ազգի, ազգային ինքնության, ազգային պետության պատմականորեն ձևավորված հանրային համակեցության գործառույթը, խրախուսում է նոր տեսակի ազատական համակարգից օգտվելու ցանկացած ցանցային նոր տարածությունն ստեղծելու նախաձեռնությունը (աղանդներ, տարաբնույթ բողոքի կրիչ շեղումներ ունեցողներ): Նման հիմնախնդրի կարեւորումը պայմանավորված է մեր այն մոտեցմամբ, որ սիներգետիկական մեթոդաբանության հիման վրա հնարավոր է դիտարկել առաքելականությունը՝ որպես հայկական քաղաքակրթության ինքնատիպության առանցք եւ դրանով իսկ հիմնավորել հայկական քաղաքակրթությունը որպես համընդհանուր քաղաքակրթության մաս դիտարկելու գիտական վարկածը:

Շարունակությունը՝ հաջորդիվ



ՄԱՐԻՆԷ ՍԱՐԳՍԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ԳԻ

ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՈՒԹԻՒՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ՝

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Վահան Տերեանը Ի. դարասկզբին հայոց ճակատագրի գոյաբանական հարցերի պատասխանները փնտրում էր ինչպես մարդկութեան հասարակական-քաղաքական մտքի, տեսութիւնների, այնպես էլ գործնական քաղաքականութեան տիրոջներում, այսինքն՝ եւ որպէս մտաւորական, եւ որպէս հասարակական-քաղաքական գործիչ²:

Հայոց պատմութեան բեկումնային-բախտորոշ՝ 1914–1916 թթ. տպագրուած նրա «Մեր պարտքը», «Հոգեւոր Հայաստան», «Արջի ծառայութիւն», «Ակակի Ծերեթելին Մոսկուայում», «Պատասխան Մոսկուայի հայ ուսանողական բիւրոյին», «Ինքնակոչ փրկիչներ», «Մի բացատրութիւն» յօդուածները եւ «Նամակներ հիւսիսից», «Ռուսաստան եւ Կովկաս», «Պետրօգրադի Հայ Գեղարուեստական Ընկերութեան մէջ» թղթակցութիւններն աւելի քան մէկ դար անց էլ չեն կորցրել իրենց արդիականութիւնը: Դրանցում արծարծուած հիմնական խնդիրները՝ ազգային պետութեան չգոյութեան եւ տարածքային մեծ ցրուածութեան պայմաններում ազգակերտում՝ «հայութեան հաւաքում», ազգային շահերի ու

^{1*} Ստացուել է՝ 20.04.2023, գրախօսուել է՝ 30.08.2023:

էլ. հասցէ՝ m.sargsyan.msy@gmail.com:

² 1905 թ. վերջից մինչեւ 1906 թ. վերջը Հայ յեղափոխական դաշնակցութեան անդամ էր (տե՛ս Ե. Զարեանցի անվան գրականութեան եւ արուեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Վ. Տերեանի ֆ., № 313), 1907-ից՝ Սոցիալ-դեմոկրատական բանուորական հայ կազմակերպութեան (սպեցիֆիկներ) (տե՛ս Դ. ԱՆԱՆՈՒՆ, Հանդիպումներ Վ. Տերեանի հետ, Հայաստանի կօօպերացիա երկաթաթափերթ, 1920 թ., թ. 13, յուլիսի 15, էջ 521)՝ «մինչեւ, ըստ երեւոյթին, 1915 թուականը...» (Դ. ԷՄԻՆ-ՏԵՐԵԱՆ, Վահան Տերեան. Անտիպ եւ անյայտ էջեր, Երեւան, 2014, էջ 70): ՍԴԲՀ-ի հետ խզումը տեղի է ունեցել, թերեւս, աւելի վաղ, եւ 1914 թ. «Մշակ»-ին աշխատակցելու որոշումը, ամենայն հաւանականութեամբ, կապ ունէր դրա հետ: Այս հարցի քննութիւնն առանձին ուսումնասիրութեան նիւթ է: Ընդամին, հարկ է նկատել, որ Տերեանի կուսակցական, քաղաքական կենսագրութիւնը դեռեւս կարօտ է էական գիտական ճշգրտումների:

նպատակների ձեւակերպում, դրանց իրագործման համար ազգային ողջ ներուժի կազմակերպում եւ կառավարելու արդիւնաւէտ ձեւերի ու գործիքակազմի որոնում, գրեթէ նոյնչափ կենսական են այսօր եւս. աշխարհասփիւռ հայութիւնը եւ հայոց պետութիւնը դեռեւս չունեն այդ հիմնախնդիրների լուծումները: Եւ ուրեմն՝ կարելոր է դրանց վերաբերեալ ժամանակի հայ ամենաուսեալ եւ ամենագործուն մտաւորական-քաղաքական գործիչներից մէկի, անձնուէր հայրենասէր հրապարակային բոլոր անդրադարձների քննութիւնը³: Իրողութիւնն այն է, որ մի կողմից՝ Վ. Տէրեանի 1914 թ. առանցքային երկու հրապարակումները՝ «Հոգեւոր Հայաստան» հիմնաքարային յօդուածը եւ 1914 թ. ապրիլի 30-ին Թիֆլիսում կարդացած «Հայ գրականութեան գալիք օրը» հայեցակարգային գրական-քաղաքական զեկուցում-դասախօսութիւնն⁴ են ստուերում թողել նշուած ժամանակահատուածի նրա հրապարակախօսական ժառանգութեան մնացեալ մասը, միւս կողմից՝ վերջինիս մի հատուածը՝ «Մեր պարտքը», «Ինքնակոչ փրկիչներ», «Նամակներ հիւսիսից», «Ռուսաստան եւ Կովկաս», պահուել է ստուերում քաղաքական նկատառումներով՝ բոլշեւիկ Տէրեանի խորհրդային կարծրատիպային բնութագրին չհամապատասխանելու պատճառով: Այսպէս վերոնշեալ նիւթերը հիմնականում դուրս են մնացել ուսումնասիրողների տեսադաշտից⁵:

³ 1914–1916 թթ. հրապարակումները, ամենայն հաւանականութեամբ, համընկնում են Տէրեանի քաղաքական դեգերումների հերթական նոր հանգրուանին: Նշուած ժամանակահատուածում նրա կուսակցական պատկանելութեան մասին փաստեր չայտնի չեն:

⁴ Առաջին անգամ տպագրուել է 1925 թ. (Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, էջ 127–194):

⁵ Գ. Էմին-Տէրեանը, անդրադառնալով Վ. Տէրեանի հրապարակախօսական ժառանգութեանը՝ մասնատրապէս «Մեր պարտքը», «Ինքնակոչ փրկիչներ», «Նամակներ հիւսիսից», «Ռուսաստան եւ Կովկաս» յօդուածներին, գրում է, որ վերջիններիս «կարելի է... տալ անտիպ երկի «կարգավիճակ» այն պատճառով, որ դրանք «ընդհանուր առմամբ անծանօթ են հայ հասարակութեանը», թէեւ նոյն պարբերութեան սկզբում իրաւացիօրէն նկատում է, որ «այդ յօդուածները չի կարելի կոչել անտիպ, քանի որ դրանք տպագրել է նախ ինքը՝ Տէրեանը...» (տե՛ս Գ. ԷՄԻՆ-ՏԵՐԵԱՆ, Վահան Տէրեան. անտիպ եւ անյայտ էջեր, Երեւան, 2014, էջ 108): Ժշմարիտ է, սակայն, որ դրանք խորհրդային Հայաստանում գիտական շրջանառութեան մէջ չեն եղել մեծապէս քաղաքական նկատառումներով եւ պետական պարտադրանքով: Հետխորհրդային ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետութիւնում, երբ Վ. Տէրեանի նաեւ անյայտ ժառանգութիւնը հանրայնացնելու, ուսումնասիրելու եւ նրա քաղաքացիական-հայրենասիրական կերպարը վերականգնելու, դիմանկարն ամբողջացնելու ոչ մի պետական արգելք ալլեւս չկար, բարեբախտաբար վերոնշեալ գրքում յիշատակուած «Ինքնակոչ փրկիչներ»-ի վերաբերեալ էդ. Զրբաշեանի «Մի յօդուածի պատմութիւն»-ը չի եղել միակ բացառութիւնը (տե՛ս է. Զ. ԶՐԲԱՇԵԱՆ, Փաստերի հետքերով: Գրականագէտի նօթքեր, Երեւան, 2001, էջ 92–105): «Մեր պարտքը», «Ինքնակոչ փրկիչներ» յօդուածների քննութեան փորձ

Սոյն յօդուածի նպատակն է բացայայտել Տէրեանի հրապարակախօսական ժառանգութեան՝ մասնաւորապէս չքննուած հատուածի առաւելապէս քաղաքական ուղերձներն ու առանցքային գաղափարները «Հոգեւոր Հայաստան» ազգային ռազմավարութեան համաբնագրում, ինչպէս նաեւ դրանց տողատակերն ու ենթաբնագրերը⁶:

**ՀՐԱՊԱՐԱԿԱՆ ՕՍՈՒԹԵԱՄԲ ԶԵՒԱԿԵՐՊՈՒԱԾ ԱԶԳԱՅԻՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ**

Վ. Տէրեանի՝ հայ հանրութեանը 1914–1916 թթ. մամուլի միջոցով սեփական ստորագրութեամբ հասցէագրած ուղիղ, բացորոշ խօսքը, բուն ասելիքն ամփոփուած են «Մեր պարտքը»⁷ եւ «Հոգեւոր Հայաստան»⁸ յօդուածներում, որոնք կազմում են «Հոգեւոր Հայաստան» պատմափիլիսոփայական հայեցակարգի եւ ազգային ռազմավարութեան⁹

առանցքը: Նոյն թուականների միւս՝ «Մեր պարտքը», «Արջի ծառայութիւն», «Ակակի Ծերեթելին Մոսկուայում», «Պատասխան Մոսկուայի հայ ուսանողական բիւրոյին», «Ինքնակոչ փրկիչներ» յօդուածները (բացի «Մի բացատրութիւն»-ից) եւ «Նամակներ հիւսիսից», «Ռուսաստան եւ Կովկաս», «Պետրոգրադի Հայ Գեղարուեստական Ընկերութեան մէջ» թղթակցութիւնները, որ տպագրուել են Վ. Տ. կեղծանունամբ, բազմակող-

տէն Մ. ՍԱՐԳՍԵԱՆ, Վահան Տէրեանի «Հոգեւոր Հայաստան» պատմափիլիսոփայական հայեցակարգը եւ «Երկիր Նաիրի» բանաստեղծական շարքը, թեկն. ատենախօսութիւն, Երեւան, 2001, էջ 16–24. ինչպէս նաեւ Մ. ՍԱՐԳՍԵԱՆ, Վահան Տէրեանի «Հոգեւոր Հայաստան» պատմափիլիսոփայական հայեցակարգը, ՊԲՀ, 2004, թ. 3, էջ 81–90):

⁶ Մանաւանդ որ այս հրապարակումները ներկայացուել են Ռուսական կայսրութեան հպատակ արեւելահայութեան «Մշակ» ազատական թերթում՝ արտաքին ու ներքին գրաքննութեան (պատերազմական իրավիճակում առաւել խստացած պետական գրաքննութեան եւ ներհայկական տիրոջ թում քաղաքակիրթ բանավէճի բացակայութեան, գերշխող՝ ՀՅԴ գաղափարաբանութեան գրեթէ դոգմատիկ կարգավիճակի) պայմաններում: Ինչի մասին հրապարակաւ վկայում է նաեւ Վ. Տէրեանը «Հոգեւոր Հայաստան»-ի շուրջ բանավէճում իր հայեցակարգը պաշտպանելիս. «Դա ցոյց կը տայ ապագան, ... Երբ, յուսով եմ, ես հնար կունենամ աւելի ազատ արտայայտելու իմ գաղափարները...» («Պատասխան Մոսկուայի հայ ուսանողական բիւրոյին», «Մշակ», 1915 թ., մարտի 17, թ. 57:

⁷ «Մշակ», 1914 թ., հոկտեմբերի 2, թ. 220:

⁸ «Մշակ», 1914, դեկտեմբերի 26, 27, 28, 30, թ. 293–296:

⁹ Այս մասին մանրամասն տէն Մ. ՍԱՐԳՍԵԱՆ, Վահան Տէրեանի «Հոգեւոր Հայաստան» պատմափիլիսոփայական հայեցակարգը եւ «Երկիր Նաիրի» բանաստեղծական շարքը, թեկն. ատենախօսութիւն, Երեւան, 2001, էջ 1–86. նոյնի՝ Վահան Տէրեանի «Հոգեւոր Հայաստան» պատմափիլիսոփայական հայեցակարգը, ՊԲՀ, 2004, թ. 3, էջ 81–90:

մանիօրէն եւ իւրօրինակ կերպով միանում են այդ առանցքին Սրանց առաջնային հասցէատէրը եւ հայութեան առջեւ ծառացած մարտահրաւէրին դիմակայելու գլխաւոր պատասխանատուն եւս հայ մտաւորականութիւնն է՝ ըստ Վ. Տէրեանի, ընդ որում՝ ինչպէս նրա քաղաքականապէս գործուն, որոշումներ կայացնող հատուածը, որն ազգային պետութեան կամ կառավարման ազգային համակարգի բացակայութեան պայմաններում ստանձնել է, ըստ էութեան, վերջինի գործառնությունները, այնպէս էլ հասարակականն ու կրթամշակութայինը:

Եւ այսպէս՝ Առաջին աշխարհամարտում Ռուսական եւ Օսմանեան կայսրութիւնների միջեւ պատերազմի բռնկման գրեթէ նախօրէին՝ 1914 թ. հոկտեմբերի 11-ին եւ 12-ին, «Մշակ»-ի 229, 230 համարներում տպագրւում է «Նամակներ հիւսիսից» «Տպաւորութիւններ ու նօթեր» ենթախորագրով եւ երկու՝ «Պատերազմն ու Մոսկուայի հայերը» եւ «Վիրաւոր զինուորները» մասերից բաղկացած թղթակցութիւնը: Այն Վ. Տէրեանի անդրադարձն է Մոսկուայի հայ համայնքի գործունէութեանը պատմական բախտորոշ պահին, երբ յատկապէս ռուսահպատակ հայութեան գերակշիռ զանգուածը Ռուսաստանից ակնկալւում էր Հայկական հարցի հայանպաստ լուծում: Հայրենիքից հեռու հայութեան մոսկուաբնակ հատուածին բնորոշելով որպէս «անծայր Ռուսաստանի զանազան վայրերում ցրւած հայ գաղութների մէջ» «իր կուլտուրական-պատմական նշանակութեամբ» «բացառիկ տեղ» գրաւող, «ազգային բացառիկ միասիայի» զգացում եւ «կուլտուրական-ազգային տրադիցիայ» (ընդգծ.՝ Մ. Ս.) ունեցող իրեն հայ «վերածնիչների» գործի շարունակողը համարող¹⁰, նաեւ մարդկային մտաւոր եւ նիւթական կարողութիւններով եզակի համայնք՝ հեղինակը միաժամանակ մատնանշում է ազգային մի քանի հիմնահարցեր, որոնց գոյութիւնն աղէտալիօրէն նուազեցնում է մինչեւ իսկ բացառիկ գաղութի «ազգային» գործունէութեան արդիւնքը:

Հարցերի հարցը, «հայութեան հաւաքում» ռազմավարական գերակայ խնդրի տեսանկիւնից, հայութեան ցրւածութիւնն է հսկայ կայսրութեան զանազան մասերում եւ տարտղնուած հայ համայնք-գաղութների միջեւ փոխգործակցութեան բացակայութիւնը:

¹⁰ «Մշակ», 1914 թ., հոկտեմբերի 11, թ. 229. Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 202:

Յաջորդ հիմնահարցն ազգային շահերը ձեւակերպողների կտրուածութիւնն է պարտադիր օրգանական հիմքերից՝ հայրենի հողից ու հայրենի ժառանգութիւնից¹¹, որի արդիւնքն ազգային շահերին ծառայութեան արձանագրուող ձեւն է, երբ չլինելով դրա հետեւանքների կրողը՝ կարելի է բաւարարուել Հայոց եկեղեցու շուրջ հաւաքուելով, «հայկական ցուցեր» անելով, եւ արտակարգ կարեւոր համարուող ազգային նախաձեռնութիւնը մերժել՝ սոսկ փաստելով, որ «շատ է դժուար համաձայնութիւն կայացնել հայութեան զանազան հատուածների մէջ...»¹²:

Հիմնահարցերից միւսն էլ ինչպէս ընդհանրապէս հայութեան, այնպէս էլ մասնաւորապէս գաղութահայութեան լինել-ներկայանալն է ոչ թէ որպէս քաղաքական-քաղաքացիական միաւոր, այլ կրօնական համայնք. «եկեղեցու շուրջն է հաւաքում, եկեղեցու հետ է կապում ազգային գործերը»¹³:

Մատնանշուած եւս մէկ հիմնահարց «գաղութային պատրիոտիզմն» է, ասել է՝ հատուածական գաղութային ինքնութեան գերակայ լինելն ազգայինին, ինչն ի սկզբանէ տապալման է դատապարտում հայութեան մի ազդեցիկ մասի՝ գաղութահայութեան կազմակերպուելու փորձերն անգամ ճակատագրական ժամին¹⁴:

¹¹ «Ահա այդ տեղական «հին», «բնիկ» հայը, — գրում է Տէրեանը, — որքան եւ հեռու լինի հայրենի հողից, դեռ իսպառ չէ վատնել իր գեղեցիկ ժառանգութիւնը. նա դեռ ընդունակ է գիտակցելու եւ զգալու ազգային շահերը, ազգային ցան ու խինը» (ընդգծ.՝ Մ. Ա.) («Մշակ», 1914, հոկտեմբերի 11, թ. 229. Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 203): Սրանից հետեւում է, որ ազգային շահերը լաւագոյն գիտակցելու կարեւորագոյն նախապայմանը հայրենի հողի, ասել է՝ եւ հայրենի ժողովրդի հետ ամուր կապն է, ազգային շահն էլ նախեսեռաջ հայրենի հողի վրայ ապրողների շահն է («Մշակ», 1914 թ., հոկտեմբերի 11, թ. 229. Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 205):

¹² «Մշակ», 1914, հոկտեմբերի 11, թ. 229. Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 205:

¹³ «Մշակ», 1914, հոկտեմբերի 11, թ. 229. «Մշակ», 1914, հոկտեմբերի 11, թ. 229. Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 203: «Ապոլիտիցիզմը»՝ ապաքաղաքականութիւնը, համարում էր նաեւ հայ մտաւորականութեան գլխաւոր մեղքերից մէկը՝ «Հոգեւոր Հայաստան» յօդուածում այդ հարցում լիակատար համաձայնութիւն յայտնելով Դ. Անանունի կարծիքին: Եւ «Քաղաքացիութիւնն» էր անվերապահօրէն հռչակում «ապոլիտիցիզմի» կամ իբրեւ դրա հոմանիշ իր գործածած «ծխականութեան» այլընտրանքը (տե՛ս Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 225):

¹⁴ «...Հէնց դրանումն է մեր դժբախտութիւնը, — գրում է Վ. Տէրեանը, — որ մենք չենք կարողանում ազգովին հրապարակ գալ, չենք կարողանում ամենաբարձր ազգային նպատակների համար իսկ զոհաբերել նոյն իսկ մեր գաղութային պատրիոտիզմը» («Մշակ» 1914 թ., հոկտեմբերի 11, թ. 229. Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 205):

Վերոնշեալ հիմնախնդիրները թոյլ չեն տալիս բարձրանալու հայ հաւաքական, ասել է՝ ազգային միտք եւ կամք խմորելու, ազգային նպատակներ, ռազմավարութիւն ձեւակերպելու, համահայկական ծրագրեր մշակելու եւ իրականացնելու, այսինքն՝ ազգային ինքնութեանը, սեփական ճակատագրին տէր կանգնելու մակարդակի: Օրինաչափ եւ աղէտալի հետեւանքը ԺԹ-Ի. դդ. պարբերաբար կրկնուող իրավիճակն է, երբ մինչեւ իսկ յստակօրէն չսահմանուած ազգային նպատակների իրականացումը, փաստօրէն, «պատուիրակուում» է մի կողմից՝ Ռուսական կայսրութեան ռազմաքաղաքական վերնախաւին, միւս կողմից՝ հայ զինուորին ու կամաւորին: Եւ հայութիւնը հերթական անգամ ռուս ժողովրդի հետ հաւասար թափած արեան, պատերազմի բոլոր արհաւիրքներն ու աղէտները տանելու դիմաց առաջիններից ստանում է միայն անորոշ յոյսեր¹⁵ եւ նորանոր զոհաբերութիւնների առատաբաշխ ոգեշնչումներ¹⁶:

Տէրեանի յաջորդ հրապարակման՝ 1915 թ. յունուարի 17-ին (թ. 10) «Մշակ»-ում տպագրուած «Արջի ծառայութիւնը» յօդուածի առիթը նոյն Մոսկուայի հայ գաղութի ուսանողների «ազգային» մի նախաձեռնութիւնն է, որի վերաբերեալ թերթի տարածած յայտարարութեան մէջ ասուում է. «Մոսկուայի Հայ Ուսանողական Բիւրոն, նպատակ ունենալով ծանօթացնել ռուս հասարակութեան լայն խաւերը Հայաստանի անցեալի եւ ներկայի հետ, խնդրում է բոլոր ցանկացողներին ուղարկել իրանց յօդուածները Բիւրոյին՝ զետեղելու համար ռուսական մամուլի օրգաններում...»¹⁷:

Հեղինակին զայրացնում է հռչակուած նպատակի, ըստ էութեան, ազգային գործի հանդէպ հայ մտաւորական նոր սերնդի ներկայացու-

¹⁵ Մօտաւորապէս այնպիսիք, որպիսիք տրուում են Մոսկուայում հայոց լազարեթի բացման հանդիսաւոր արարողութեանը քաղաքային վարչութեան մի անդամի «ազգու եւ սրտառու» ճառից Տէրեանի մէջբերած խօսքերով. «Ես չեմ կասկածում, չը պէտք է կասկածի եւ հայ հասարակութիւնը, որ երբ գայ այդ բաղձալի յաղթանակը, հայ ժողովրդի համար էլ բացուելու է նոր կեանքի, ազատութեան, լուսեղէն յարութեան վառ արշալոյսը...» («Մշակ», 1914, թ. 229, հոկտեմբերի 11. Վ. ՏԵՐԵԱՆ, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 206):

¹⁶ Ինչպէս խորամտօրէն նկատում է ժամանակաշրջանի գրապատմական իրողութիւններին քաջատեղեակ Ալ. Զաքարեանը. «Հետեւելով ժամանակի մամուլի արձագանքներին՝ յաճախ ունենում ես այն տպաւորութիւնը, որ ծայր առած կամաւորական շարժումով հայութիւնից աւելի ոգեւորուած է ռուս հասարակայնութիւնը, իսկ մամուլն էլ գործում է «կրակի վրայ իւղ լցնելու» տրամաբանութեամբ» (Ալ. ԶԱԿԱՐԵԱՆ, Եղիշէ Զարեանց: Կեանքը, գործը, ժամանակը, Երեւան, 1997, էջ 153):

¹⁷ «Մշակ», 1914, դեկտեմբերի 12, թ. 281:

ցիշների անլուրջ եւ անպատասխանատու վերաբերմունքը (իր էջերում այդ որակի յայտարարութիւն տարածելու համար քննադատութեան հասցէատէրն անուղղակիօրէն, բայց գուցէ առաւել «Մշակ»-ն էր՝ որպէս հայ մամուլի հնագոյն եւ առաջատար օրգան)՝ նրանց՝ այլոց շահերի սպասարկուի, ընդդէմ սեփական ազգային շահերի գործիքի ակամայ վերածուելու կանխատեսելի հետեւանքներով:

Յայտարարութիւնը նաեւ առիթ էր անդրադառնալու հայեցակարգային մի կարեւոր խնդրի՝ գլխաւորապէս ռուսական (բայց եւ կայսրութեան այլ ազգերի) քաղաքական, հասարակական շրջանակներում հայութեան, Հայկական հարցի շուրջ բարենպաստ հանրային կարծիք ձեւաւորելու եւ մեծապէս նաեւ մամուլով մղուող կազմակերպուած հակահայկական արշաւներին հակազդելու, ժամանակակից եզրոյթով՝ տեղեկատուական պատերազմ վարելու համար համապատասխան քաղաքականութեան անհրաժեշտութեանը:

Ինչպէս ազգային կարեւոր միւս գործերը, դա եւս, ըստ Տէրեանի, պիտի անել կազմակերպուած, պատրաստուած, համակարգուած, յստակ ռազմավարութեամբ, ազգային ծրագրի շրջանակներում, կարող եւ փորձառու ուժերով, որեւէ հեղինակաւոր մարմնով, որն ի հարկէ ունակ է եւ պէտք է դպրոց լինի երիտասարդների համար: Ուստի յատկապէս «Մոսկուայի գիտակից ինտելիգենցիային» յորդորում է մտածել «մեր վաղուայ մասին» (ընդգծ.՝ Վ. Տ.). «Պէտք է վերջապէս ըմբռնել, որ որքան եւ ծանր լինի ներկայ րօպէն, որքան էլ խոշոր՝ մեր աչքի առջեւ կատարուող գործը, այնու ամենայնիւ նրանք, որոնք կռուի դաշտում չեն, պէտք է մտածեն եւ մեր վաղուայ մասին, պէտք է հասկանան, որ այսօր չէ վերջանում ազգաշինութեան խոշոր ու վեհ գործը»¹⁸: Եւ կռուի դաշտում Հայաստանի համար չպայքարող հայ երիտասարդ մտաւորականութեանը Վ. Տէրեանը կոչ է անում ոչ պակաս կարեւոր առաքելութեան՝ «հզօր կամքով ու սիրով ներշնչուած» «մտաւոր-կուլտուրական զինուորութեան»՝ մէկ անգամ եւս ամրագրելով «Հոգեւոր Հայաստան»-ի ամենահիմնարար գաղափարներից մէկը:

Այս յօդուածին հետեւում է հրապարակային բանավէճ Վ. Տէրեանի եւ Մոսկուայի հայ ուսանողական բիւրոյի միջեւ՝ «Մշակ»-ի էջերում: 1915 թ.

¹⁸ «Մշակ», 1915, յունուարի 17, թ. 10, Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 236. Վ. Տէրեան, Երկերի ժողովածու չորս հատորով, հտ. 3, Երեւան, 1975, էջ 122:

փետրուարի 24-ին (թ. 40) «Audiatur et altera pars»¹⁹ սկզբունքին յղումով տպագրւում է բիւրոյի պատասխանը, ապա 1915 թ. մարտի 17-ին (թ. 57)՝ Տէրեանինը բիւրոյին՝ նախորդ յօդուածում, իր գնահատմամբ, «կտրուկ եւ անկեղծ կերպով» արտայայտուած կարծիքը հիմնաւորող լրացուցիչ փաստարկներով: Ընդդիմախօսները, հակադարձելով իրենց քննադատին, վէճը կապել էին Տէրեանի «Հոգեւոր Հայաստան»-ին՝ որպէս անառարկելի ճշմարտութիւն յայտարարելով. «Ուսանողական բիւրօն աւելի մեծ իրաւամբ «արջի ծառայութիւն» կարող է համարել Վ. Տ.-ի հոգեւոր Հայաստանի անընդունելի բեցեպտով հանդէս գալը: Վ. Տ.-ն պիտի հասկանայ, որ բոլոր այն բացասական երեւոյթները, որոնց նա մատնանշում է իր յօդուածում, եւ որոնք նրան ցաւ եւ պատճառում, այն հանգամանքը, որ հայ ինտելիգենցիայի մեծ մասը անծանօթ է Հայաստանի անցեալի եւ ներկայի հետ» -այս բոլորը հետեւանք է նրա, որ չը կայ Նիւթական Հայաստան եւ որ ի զուր չէ՝ որ հայ ազգի 90%-ը տարբային ուժով ձգտում է ստեղծել Նիւթական Հայաստան»²⁰: Դա առիթ է դառնում «Հոգեւոր Հայաստան»-ին Տէրեանի նոր անդրադարձի, որով կրկին ամրագրում է հակադրուող երկու հայեցակարգերի ելակէտերի ու վերջնակէտերի աշխարհայեացքային տարբերութիւնը՝ մէկ անգամ եւս հաւաստելով հաւատարմութիւնը ժողովրդավարութեանը եւ ժողովրդավարական Հայաստանի տեսլականին. «...ցաւում եմ, որ դուք «անտեղի» էք համարում. «իմ հանդէս գալը», այսինքն՝ իմ ազատ կարծիքն ունենալն ու այն արտայայտելը: Ցաւում եմ մանաւանդ նրա համար, որ դուք այդպիսով յարում էք նրանց, որոնք կուզէին Հայաստանում ջնջել ամեն ազատ, անկախ միտք ու կարծիք, բացի իրանց մտքից ու կարծիքից, մինչդեռ դուք ասում էք, որ դուք «հայ ինտելիգենցիայի ամենաերիտասարդ ներկայացուցչական մարմինն էք» կազմում» (ընդգծ.՝ Մ. Ս.)²¹: Իսկ առանց խօսքի ազատութեան, որը ժողովրդավարութեան հիմնարար սկզբունք է եւ արժէքը, Վ. Տէրեանը հնարաւոր չէր համարում ո՛չ անհատական, ո՛չ ազգային առաջընթաց. «Մեր երկրում էլ վերջապէս պէտք է ազատ խօսք հնչէ, թէ՛ մեր սերունդն էլ պիտի մնայ մեր խնամիական

¹⁹ «Audiatur et altera pars».— Լատ. «Պէտք է հակառակ կողմին էլ լսել» («Բառգիրք լատիներէն եւ օտարազգի դարձուածների», 1911, Թիֆլիս, էջ 12–13):

²⁰ «Մշակ», 1915, փետրուարի 24, թ. 40:

²¹ «Մշակ», 1915 թ., մարտի 17, թ. 57. Վ. ՏԵՐԵԱՆ, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 258. Վ. ՏԵՐԵԱՆ, Երկերի ժողովածու չորս հատորով, հտ. 3, Երեւան, 1975, էջ 127:

անձնական ցեխի մէջ, որի մէջ խրուած է մեր մամուլը այսօր, մեր ամբողջ կեանքը...»²²:

Ըստ էութեան՝ արտաքին քաղաքականութեանը, աւելի ստույգ՝ դրա կարեւորագոյն գործիքներից մէկի՝ ժամանակակից եզրոյթով՝ հանրային դիւանագիտութեան²³ կիրառմանն առնչուող հետաքրքիր ուղերձներ է պարունակում վրացի գրական եւ քաղաքական յայտնի գործիչ, ազգային-ազատագրական շարժման ղեկավարներից Ակակի Ծերեթելիի մահուան առիթով «Մշակ»-ի 1915 թ. փետրուարի 18-ի համարում (թ. 35) տեղ գտած «Ակակի Ծերեթելին Մոսկուայում» (Մի թուղթիկ յուշ նրա կեանքից) հրապարակումը: Ներկայացնելով Մոսկուայում ի պատիւ Ծերեթելիի կազմակերպուած մի ընդունելութիւն՝ Վ. Տէրեանն ընդգծում, այդպիսով օրինակելի է համարում իրենց մեծերից մէկի նկատմամբ սիրոյ, յարգանքի ու մեծարանքի՝ խանդաղատանքով եւ պատասխանատվութեամբ կազմակերպուած ցոյցը կայսրութեան կարեւոր քաղաքներից մէկում: Այն համարում է հայրենիքից հեռու երիտասարդների ազգային ինքնութեան գիտակցութեան միաւորող, ամրացնող արտայայտում՝ մահաւանդ ի տես ռուսների եւ այլ ազգերի:

Իսկ կարեւորագոյն ուղերձը միջոցառմանը ներկայ ռուս լրագրողի՝ «Ինչո՞վ է բացատրուում այս անօրինակ սէրը դէպի մի պօէտ» հարցին իր՝ հայ երիտասարդ մտաւորականի՝ «Զգիտեմ» պատասխանին յաջորդող հետեւեալ տողերում է. «...առաջին անգամ կէանքումս ինձ շատ վատ զգացի վրացերէն չիմանլուս համար, որովհետեւ ես չը գիտէի անգամ, թէ ինչ է գրել Ծերեթելին:

Ինչ կարող էի պատասխանել հարցասէր ռուսին, որը գիտէր, որ ես հայ եմ, բայց հաւատացած էր, որ ես պիտի լաւ ճանաչեմ վրացիներին: Եւ իրաւացի էր ի հարկէ իմ ծանօթ ռուսը, սպասելով, որ ես աւելի տե-

²² Տէս Ա. МАКИНЦЯН, Штрихи к портрету, Ереван, 2006, «Нжар», էջ 27:

²³ Հանրային դիւանագիտութիւնը, որ նաեւ կոչւում է ժողովրդական դիւանագիտութիւն, կառավարութեան կողմից հովանաւորուող ջանքերն են ուղղուած օտարերկրեայ հանրութեան հետ անմիջական շփմանը: Հանրային դիւանագիտութիւնը ներառում է բոլոր պաշտօնական ջանքերը՝ համոզելու օտարերկրեայ կարծիքի թիրախաւորուած հատուածներին աջակցել կամ հանդուրժել կառավարութեան ռազմավարական նպատակները: Մեթոդները ներառում են որոշումներ կայացնողների յայտարարութիւնները, հանրային դիւանագիտութեանը նուիրուած պետական կազմակերպութիւնների իրականացրած նպատակաւորողական արշաւներն ու ջանքերը՝ միջազգային լրատուամիջոցներին համոզելու, որ օտարերկրեայ լսարանին բարենպաստ կերպով ներկայացնեն պաշտօնական քաղաքականութիւնը: Տէս Encyclopedia Britannica <https://www.britannica.com/topic/public-diplomacy>

ղէակ կը լինեմ մեր դարաւոր հարեւան մօտիկ մի ժողովրդի կեանքին ու գրականութեանը: Սակայն քանի՞ հայ կարող է պարծենալ մի այդպիսի գիտութեամբ»²⁴: Վստահաբար՝ ուղեւոր գլխաւորապէս մարդկային, մշակութային ճանաչողութեան, շփումների միջոցով ռուսների, Ռուսական կայսրութեան հպատակ ազգերի երկկողմ եւ բազմակողմ յարաբերութիւնների բարդ հանգոյցներում կողմնորոշուելու հիմքեր ստեղծելու մասին է:

Ազգային արտաքին քաղաքականութեան հանրային դիւանագիտութիւն գերակայութեանն է վերաբերում նաեւ երկու օր անց՝ փետրուարի 20-ին (թ. 37), տպագրուած «Ռուսաստան եւ Կովկաս» վերնագրուած թղթակցութիւնը Ռուսական կայսրութեան մայրաքաղաքի տեղական ինքնակառավարման մարմնում՝ դումայում, քաղաքագլխի (կոմս Ի. Ի. Տոլստոյի) նախագահութեամբ օրեր առաջ տեղի ունեցած միջոցառման մասին, որի ընթացքում կարգացուել էին Կովկասի եւ Ռուսաստանի փոխյարաբերութիւններին նուիրուած մի շարք զեկուցումներ գլխաւորապէս ռուս հասարակութեամբ «ծայրէ ի ծայր» լի դահլիճի առջեւ: Վ. Տէրեանը թուարկում է զեկուցողներին, որոնք բոլորն էլ ռուսական քաղաքական եւ ակադեմիական շրջանակներից էին եւ գրեթէ առանց մեկնաբանել-վերլուծելու՝ ծաւալուն մէջբերումներ է ներկայացնում յատկապէս Րոդիչեւի եւ Միլիկովի զեկուցումներից: Երկուսն էլ Ռուսաստանի լիբերալ-միապետական բուրժուազիայի գլխաւոր կուսակցութեան՝ Սահմանադրական-դեմոկրատների (կադետներ) կուսակցութեան ներկայացուցիչներ էին, Պետական դումայի պատգամաւորներ: Ուստի նրանց տեսակէտները կարելու էին հայութեան ազգային շահերի վերաբերեալ ռուսական քաղաքական ընտրանու դիրքորոշումների առումով: Ըստ մէջբերումների՝ Ռոդիչեւի²⁵ գլխաւոր ասելիքը, աւելի ճիշտ՝ ինչ պիտի հասկանար հայութիւնը՝ Կովկասին շռայլած գովեստի եւ այնտեղ ռուսական 100-ամեայ տիրապետութիւնը քննադատող ու Կովկասի ժողովուրդներին յուսադրող խօսքերից անդին, այն է, որ Կովկասը ազգերի,

²⁴ «Մշակ», 1915 թ., փետրուարի 18, թ. 35. Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 240–241. Վ. Տէրեան, Երկերի ժողովածու չորս հատորով, հտ. 3, Երեւան, 1975, էջ 130:

²⁵ Ռոդիչեւ Ֆեոդոր Իգմայիլովիչ, 1854, Սանկտ Պետերբուրգ – 1933, Լոզան, ռուս հասարակական եւ քաղաքական գործիչ, Ռուսաստանի Սահմանադրական-դեմոկրատական (կադետական) կուսակցութեան եւ նրա վարչութեան անդամ, Պետական դումայի պատգամաւոր (1906–1917 թթ.), կադետների խմբակցութեան գլխաւոր հռետորներից (տե՛ս «Большая российская энциклопедия: 2004–2017», https://old.bigenc.ru/domestic_history/text/3512549#):

էթնիկ միատոհմերի բազմազանութեան բնականաւոր է Ռուսական կայսրութիւնում, ռուսական ընդարձակ հայրենիքի վարչատարածքային միատոհմերից մէկը՝ գերազանցապէս հետաքրքիր թշնամի պետութիւններին սահմանակցութեամբ: Հայկական հարցերն էլ ռուսական քաղաքական գործիչներին զբաղեցնում են այնքանով, որքանով առնչում են կամ կարող են առնչուել կայսրութեան՝ Կովկասի հետ կապուած նպատակներին, ծրագրերին: Նրա խօսքում չեն հնչում «Հայաստան», «հայ» բառերը, իսկ Կովկաս անուանուած երկիրը բնութագրւում է որպէս կուլտուրական ցածր մակարդակով ծայրագաւառ, որը «....հազիւ եւ այն՝ ահռելի ճիգերով, բարձրացել է միայն այն աստիճանին, որից ցածր անհատը ազգային չէ, այսինքն՝ անկուլտուրական է», «....ահագին ճիգեր է թափում յանուն կուլտուրական վերածնութեան», որտեղ «....ազգային գիտակցութիւնը (պարզ չէ՝ որ ազգին կամ ազգերին նկատի ունի՝ Մ. Ս.)հասել է արդէն սեփական շահերի եւ կարիքների ըմբռնման աստիճանին եւ հրամայաբար պահանջում է կուլտուրա, լուսաւորութիւն»²⁶: Բաւարարելի համարող ազգային շահերի ու կարիքների բարձրակէտն էլ Թիֆլիսում Կովկասեան համալսարանն է դիտարկում, աւելի ցածր՝ ժողովրդական լուսաւորութեան գործը տեղական հասարակական ուժերին վերապահելով՝ որպէս ինքնավարութիւն: Եւ եզրափակում է Կովկասի պայծառ ապագայի՝ բուռն ծափահարութիւնների արժանացած հետեւեալ տեսլականով. «Այսպիսով... երբ կազմակերպւած կը լինի Կովկասում դատարան, լուսաւորութիւն եւ ինքնավարութիւն, ամէն մի կովկասցի, որ ազգին ու ցեղին էլ պատկանի նա, հպարտութեամբ կասէ, որ նա քաղաքացի է մեծ Ռուսաստանի»²⁷:

Միլիկովը²⁸, «Հայ փախստականները» թեմայով զեկուցման մէջ անդրադառնալով նաեւ ընդհանուր հայութեան, թուրքահայոց հարցին, ռուս-հայկական յարաբերութիւններին, յիշեցնում է հայերի փրկութեան ակնկալիքները Ռուսաստանից բոլոր պատերազմների, կոտորածների,

²⁶ «Մշակ», 1915 թ., փետրուարի 20, թ. 37. Վ. ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 24:

²⁷ Անդ, էջ 247:

²⁸ Միլիկով Պաէլ Նիկողաեիչ (1859–1943 թթ.) – ռուս քաղաքական գործիչ, պատմաբան եւ հրապարակախօս: Կադետական կուսակցութեան (Կադետներ) հիմնադիրներից, կուսակցութեան ԿԿ նախագահը (1907-ից) եւ կուսակցութեան օրգան «Ռեչ» թերթի խմբագիրը: III եւ IV Պետական դումաների անդամ (Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 7, Երեւան, 1981, էջ 539):

աղէտներ ընթացքում, ինչպէս նաեւ արձանագրում, որ հայութիւնը չափազանց ծանր է վնասել Ռուսաստանի նկատմամբ համակրանքի, «ռուս զօրքին ցոյց տուած սրտաբաց ընդունելութեան» պատճառով:

Եւ քանի որ այս պատերազմում եւս Ռուսաստանն ունէր հայութեան աջակցութեան կարիքը, պէտք էր աւելի շուայլ խոստումներով յուսավառել նրան: Եւ Միլիւկովը շուայլութեամբ գերազանցում է ինքն իրեն՝ կոչ անելով. «Պէտք է հաւատանք ու կամենանք, որ ազատագրուի վերջապէս հայ ժողովուրդը ստանալով այն, ինչ իր ազգային բաղձանքն է, այսինքն՝ իր ազգային ատօնօմիան»²⁹: Ուշագրաւ է Վ. Տէրեանի՝ դրան վերաբերող ծանօթագրութիւնը, որում նա մասնաւորապէս նշում է, թէ «անեկսիայի» կողմնակից յայտնի գործչի այդ կոչը շփոթեցնում է շատերին, եւ այդպէս էլ չի հասկացում՝ լեզուի սպթաքոնում էր, թէ՛ «այլ իմաստ ունեն նրա բերանում այդ «ազգային ատօնօմիայ» բառերը...»³⁰: Իսկ ինչպէ՞ս կարող էին հայերը հասկանալ, թէ ինչ են իրականում մտածում եւ ցանկանում ռուսական քաղաքական վերնախաւի ներկայացուցիչները...

Հրապարակման հեղինակը նաեւ որոշ ուշագրաւ դիտարկումներ է անում միջոցառման վերջում կովկասեան տեսարանների ցուցադրութեան վերաբերեալ, ինչպէս, օրինակ, որ գերակշռում էին Ռազմավիրական ճանապարհի պատկերները, իսկ «...յայտնի չէ՝ ինչու էջմիածին «անուան տակ ցոյց տուին մի պատկեր», որ... ռուսական մատուռ էր, թէ ինչ, յամենայն դէպս էջմիածինը չէր...»³¹: Եւ անհրաժեշտ է համարում նշել, որ երեկոյթի կարգադրիչը կովկասցի էր՝ Դոլիձէ ազգանունով: Նաեւ յուշում «աւելի յաճախ եւ բազմակողմանի կերպով» ռուս հասարակութեան առջեւ մեր մասին խօսելու, ասել է՝ Հայաստանն ու հայերին պատշաճ ներկայացնելու, հասարակական համակրանք ստեղծելու ուղղութեամբ համակարգուած եւ կանոնաւոր աշխատանքի կարեւորութիւնը:

«Պետրոգրադի հայ գեղարուեստական ընկերութեան մէջ» թղթակցութեան («Մշակ», 1915 թ., փետրուարի 26 (թ. 42) «հերոսը» Ռուսական կայսրութեան մայրաքաղաքի հայ գաղութի հասարակական մի կազմակերպութիւն է, նիւթը՝ ազգային տօներից մէկի՝ Վարդանանց տօնի առիթով նրա կազմակերպած երեկոյթը՝ հայ ուսանողների եւ մշակութային մտա-

²⁹ «Մշակ», 1915 թ., փետրուարի 20, թ. 37. Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 249:

³⁰ Անդ:

³¹ Անդ, էջ 250:

ւորականութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ: Բուն ասելիքը, սակայն, ազգային ռազմավարութեան գլխավոր գերակայութեան՝ հայութեան հաւաքման, իր կարծիքով՝ մեզանում չգնահատուող եւ չխրախուսուող գործիքներից մէկի՝ հասարակական-մշակութային միաւորման կարեւորութիւնը հիմնաւորելն է: «Այս Հնկերութիւնը կարող է որոշ կապ հաստատել ու պահպանել տեղիս ցրած ուսանողութեան եւ հասարակութեան միջեւ: Որոշ հոգեւոր շահերի շուրջը անտարակոյս կարող են միանալ տեղական հասարակութեան դեմոկրատիկ մասը մի կողմից եւ ուսանողութիւնը միւս կողմից»,— գրում է Տէրեանը եւ շարունակում:— «...Այսօր, չէ՞ որ, աւելի քան երբեւիցէ, անհրաժեշտ ու բաղձալի պիտի լինի մի այդպիսի կապ մեր ցիրուցան հայրենակիցների մէջ» (ընդգծ.՝ Մ. Ս.)³²: Այսպիսով՝ տարբեր բաց հասարակական կազմակերպութիւնների, ընկերութիւնների, ժամանակակից լեզուով՝ հարթակների միջոցով եւ շուրջ անշահախնդիր, կամաւոր ազգային-հասարակական ինքնակազմակերպումն ու համախմբումը (ի մասնաւորի՝ մտաւորականութեան նոր սերնդի) համարում է կենսականօրէն անհրաժեշտ՝ ամրացնելու ներհամայնքային մարդկային, մշակութային, մասնագիտական, հասարակական կապերը, ազգային ինքնութեան տարրերը, իրապէս արժեւորելու դրանք եւ միմեանց: Եւ հայրենիքի ցրուած ուժերը միացնելու ու նրանց հոգեւոր կապը հաստատ ու ամուր դարձնելու աշխատանքի հրատապ անհրաժեշտութեան հիմնաւորումը նոյնն է. «...չէ՞ որ, ի վերջոյ, այդ կապն է հայրենիքի ստեղծողն ու պահողը» (ընդգծ.՝ Մ. Ս.):

Վերոյիշեալ միաւորումների առանձնայատուկ դերի եւ նշանակութեան գրաւականը, ըստ Տէրեանի, դրանց ձեւաւորման հիմնարար սկզբունքներն են՝ կամաւորութիւնը եւ իմնականաւարումը, որոնք ենթադրում են սեփական հանրոյթի հոգեւոր կարիքներն ինքնուրոյն ձեւակերպելու եւ հոգալու ցանկութիւն, պատրաստակամութիւն, կարողութիւն, իսկ գործունէութեան արդիւնաւէտութեան երաշխիքը՝ «կանոնաւոր ու անընդհատ կերպով»³³ իր գործը շարունակելն է, այսինքն՝ պարբերականութիւնն ու շարունակականութիւնը:

³² «Մշակ», 1915 թ., փետրուարի 26, թ. 42. Վ. ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 253. Վ. ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու չորս հատորով, հտ. 3, Երեւան, 1975, էջ 134:

³³ «Մշակ», 1915 թ., փետրուարի 26, թ. 42. Վ. ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու չորս հատորով, հտ. 3, Երեւան, 1975, էջ 135:

Վ. Տէրեանի յաջորդ հրապարակումը բոլորովին այլ իրականութիւնում էր արդէն, հայոց պատմութեան միանգամայն այլ ժամանակում... իրագործում էր Հայոց ցեղասպանութեան երիտթուրքական ծրագիրը՝ հայերի վերաբերեալ թուրքական պետական քաղաքականութեան, ազգային ռազմավարութեան հերթական փուլը: Ռուսական կայսրութեան պետական օրակարգում էլ չկար հայերին փրկելու հարց: Հաւանաբար վերջին իրողութեան ընկալման հետեւանքով հիմնարար փոփոխութիւն էր տեղի ունեցել նաեւ Վ. Տէրեանի քաղաքական-քաղաքակրթական կողմնորոշումներում, ինչի մասին վկայում է նրա հետեւեալ խոստովանութիւնը. «Ռուսներ (ոչ միայն Ռուսիայի) նկատմամբ ես բաւականաչափ հիասթափուած եմ — а ведь я ли не был руссофилом /даже страдал за эту идею от داشнаков/. ի հարկէ, սա դեռ նահանջ չէ, բայց ստիպում է աւելի լուրջ մտածելու, ռուս պետութեան չեմ ասում, ռուս ժողովրդի «միասիայի» նկատմամբ»³⁴:

Ըստ այդմ՝ աւելի ու աւելի էր համոզւում, որ փրկութեան միակ ճարն ազգային ռազմավարութիւն եւ ազգային հաստատութեանական (ինստիտուցիոնալ) համակարգ ստեղծելն է, ուստի առաւել անողոք էր դատապարտում դրան կամայ թէ ակամայ դէմ գործող հասարակական, քաղաքական ուժերին՝ բացառելով նրանց որեւէ արդարացում:

Եւ այսպէս՝ 1915 թ. հոկտեմբերի 15-ին (թ. 227) տպագրւում է «Ինքնակոչ փրկիչներ» քաղաքական յօդուածը³⁵: «Մեր պարտքը» յօդուածից մէկ տարի անց՝ արդէն յանգած այն աղէտալի հետեւանքներին, որոնց մասին նախազգուշացնում էր դրանով, այս անգամ կեղծանուամբ՝ գրեթէ նոյնութեամբ կրկնում է ազգային անդառնալի աղէտներից խուսափելու հնարաւորութիւն ընձեռող միակ գործիքը՝ «համազգային ընդհա-

³⁴ Մէջբերումը Վ. Տէրեան, Երկերի ժողովածու չորս հատորով, հտ. 4, Երեւան, 1979, էջ 233–236-ում տպագրւած (1915, 13 սեպտեմբերի, Պետրոգրադ) նամակի էջ 233-ի 2-րդ պարբերութեան կրճատուած շարունակութիւնից է (տե՛ս ԳԱԹ, Վ. Տէրեանի ֆ., № 194):

³⁵ 1915 թ. հոկտեմբերի 15-ին «Մշակ»-ի թ.227-ում տպագրւածը յօդուածի առաջին մասն է: Յօդուածի շարունակութիւնը չի տպագրւում: Փոխարէնը «Մշակի» հոկտեմբերի 21-ի թ. 232-ում հրապարակւում է խմբագրութեան հետեւեալ ծանուցումը. «Պետրոգրադ, Վ. Տ.-ին.— «Մշակ»-ի թ. 227-ում լոյս տեսած Ձեր յօդուածի («Ինքնակոչ փրկիչներ») յետագայ մասերը չկարողացանք լոյս ընծայել մեզնից անկախ պատճառով»:

Յօդուածի կառուցուածքի եւ անտիպ շարունակութեան վերաբերեալ կան տարբեր կարծիքներ (է՛. ԶՐԵՄԵԱՆ, Փաստերի հետքերով: Գրականագէտի նօթեր, Երեւան, 2001, էջ 92–105, Գ. ԷՄԻՆ. Տէրեան, Վահան Տէրեան. Անտիպ եւ անյայտ էջեր, Երեւան, 2014, էջ 2014, 189–197): Այդ հարցի քննութիւնը, սակայն, առանձին ուսումնասիրութեան նիւթ է:

նուր ընտրուած մարմին» ստեղծելու մտաւորականութեան որոշման ճակատագրականութեան հիմնաւորումները: Որպէս շատ առարկայական հիմնաւորում էլ յաւելում է ընթացող պատերազմի առաջին զոհերից դարձած «պետական ամուր կազմակերպութեան մէջ ձուլուած» ազգերից մէկի՝ արիւնաներկ Բելգիայի օրինակը: Եւ աններելի, ազգակործան համարում այն ուժերի դիրքորոշումը, որոնց պատճառով «չը կայացաւ այն համազգային կազմակերպութիւնը, որին ձգտում էր հայութեան անկեղծ եւ գիտակից մասը»³⁶: Ըստ խմբագրութեան ծանուցման³⁷ եւ Տէրեանի արխիւում պահպանուած յօդուածի անտիպ հատուածների³⁸՝ մեղադրանքն ուղղուած է Պետրոգրադի հայկական յանձնախմբին (կոմիտէ): Թէ որքանով էր հիմնաւոր ու արդարացի մեղադրանքը, ինչո՞ւ չտպագրուեց յօդուածի շարունակութիւնը, եւ յօդուածի հետ կապուած մի շարք այլ հարցերին յետագայում կը լինի առանձին անդրադարձ: Այս պարագայում կարելորդ ոչ թէ մեղադրանքի հասցէատէրն է, այլ մեղադրանքը՝ փրկչական առաքելութեամբ ներկայանալով, խոստանալով փրկութիւն՝ ոչ միայն կարելի անել չցանկանալ՝ արհաւիրքից ազգը փրկելու համար, դեռ մի բան էլ խափանել փրկութեան՝ այլոց փորձերը:

Վ. Տէրեանը չի քննում «ինքնակոչ փրկիչների» գործելակերպի պատճառները³⁹, այլ ներկայացնում է նրանց հռչակած «Հայաստանն ազատագրելու» առաքելութեան կեղծ փրկչական լինելը՝ իրավիճակի ճշմարիտ գնահատականով եւ որեւէ մտածուած ծրագրով հիմնաւորուած չլինելու պատճառով: Իրավիճակի գնահատման կարեւորագոյն ցուցիչը, ըստ Վ. Տէրեանի, ազգի վիճակն է, որը, նրա հետեւեալ անողոք ախտորոշմամբ, լաւատեսական ակնկալիքների որեւէ յոյս չէր կարող ներշնչել. «Ինչ կարող էր անել այսպիսի պարագաներում մի ազգ, որի միակ ազգային կազմակերպութիւնը եկեղեցին է, մի ազգ, որի բաղաձայնական հասունութիւնը

³⁶ «Մշակ», 1915 թ., հոկտեմբերի 15, թ. 227. Վ. ՏԵՐԵԱՆ, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 260:

³⁷ Թէեւ յօդուածագիր չէր յիշատակել Պետրոգրադի հայկական յանձնախմբը (կոմիտէ) կամ նրա որեւէ անդամի անուն, խմբագրութիւնը հարկ է համարել ծանուցել. «Այս յօդուածի՝ Պետրոգրադի հայկական կոմիտէի մասին գրածների պատասխանատուութիւնը թողնում ենք հեղինակի վրայ»:

³⁸ Տէս ԳԱԹ, ՎՏՖ, № 95, 97:

³⁹ Պատճառներն ինքնին երեւակում են «ինքնակոչ փրկիչներ»-ի մասին Փրկչի յայտնի նախազգուշացման աղերսներով. «Զգոյշ եղէք, գուցէ մէկը ձեզ խաբի, որովհետեւ շատերը կը գան իմ անունով ու կասեն, թէ՛ ես եմ Քրիստոսը, եւ շատերին կը մոլորեցնեն» (Մատթ. ԻԴ. 4–13):

նը աւելի քան կասկածելի է, մի ազգ, որ իր տառապանքն է միայն վահան դարձրել իր համար, վերջապէս մի ազգ, որ հոգեկան սնանկութեան դուռն է հասել, որի կուտուրական տարրերը կատարելապէս ապագգայնացել են»⁴⁰ (ընդգծ.՝ Մ. Ս.): Այս իրավիճակը միանգամից, կարճ ժամանակում փոխել հնարաւոր չէ ո՛չ յեղաշրջման, ո՛չ բնաշրջման ճանապարհով, ո՛չ հրաշքով: Եւ ուրեմն կարո՞ղ են արդեօք իրավիճակը փոխել կռուի դաշտ ուղարկուած «ազնուագոյն ուժերը», ի հարկէ՝ ոչ, այդ դէպքում ինչի՞ համար է այդ թանկ զոհաբերութիւնը: Ինչպէ՞ս պիտի այն իմաստաւորուէր, եթէ ոչ նրանց ուղարկողների ծրագրային գործողութիւններով, որոնք ծրագրուած չէին մտքի, կամքի անբաւարարութեան, անկարողութեան կամ գուցէ այլ պատճառով: Իսկ այդ դէպքում նրանց մնում էր միայն մի ճանապարհ, որն էլ, ըստ Տէրեանի, ընտրում են. «...գերադասեցին գնալ հիմ, ծեծուած, անօգուտ ուղիներով՝ ողորմութիւն խնդրելու, պետական բարձրաստիճան աղուէսների շեմքերը մաշելու, նրանց թակարդ-սալօններում ճեմելու ճանապարհը»⁴¹:

Տէրեանի դիրքորոշումը հետեւեալն է. հայութիւնը՝ ի դէմս իր առաջնորդների, պէտք է վերջ տայ ազգային կենսական կարիքներն անգամ իբրեւ խնդրանք ձեւակերպելուց, ողորմութիւն ակնկալողի դերում հանդէս գալուց, քանի որ, իբրեւ հաւաքականութիւն, իր նուիրուածութիւնը Ռուսական պետութեանը վկայել է անվերջ արիւնով ու տանջանքով, վտանգի ենթարկելով անգամ իր ֆիզիկական գոյութիւնը եւ նուաճել է իրաւունք՝ պահանջելու նրանից ազնիւ եւ շիտակ կերպով նուազագոյնը՝ թոյլ տրուի իրեն ազգովին կազմակերպուել⁴²:

«Շատ վայրերում» տեղական հայութեան կազմակերպման եւ մասնաւորապէս «Մոսկուայի հայկական կոմիտէի» ստեղծման ու գործունէութեան օրինակով Տէրեանը ժխտում է հայութեան համախմբուելու, միասնաբար, համակարգուած գործելու անհնարինութեան՝ տարածուող թէ սերմանուող գաղափարը՝ ե՛ւ գաղափարն ինքնին, ե՛ւ դրա իրագործման, յանուն դրա չարուած եւ ընդդէմ դրա արուած ցանկացած քայլ համարելով արդարացում չունեցող ազգակործան գործունէութիւն: Որով-

⁴⁰ «Մշակ», 1915 թ., հոկտեմբերի 15, թ. 227. Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 259:

⁴¹ Անդ, էջ 261:

⁴² Տես «Մշակ», 1915 թ., հոկտեմբերի 15, թ. 227. Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, հտ. IV, Երեւան, 1925, էջ 260:

հետեւ, իր համոզմամբ, չինքնակազմակերպուելը տուեալ իրավիճակում պարզապէս չէր կարող երաշխաւորել այլ հետեւանք, քան ինքնասպանութիւն կամ օժանդակութիւն սեփական սպանութեանը:

Եւ օրէջօր սրուող ճակատագրական մարտահրաւէրների պայմաններում Վ. Տէրեանը հարկադրուած է լինում անդրադառնալ ազգային ռազմավարութեան չգոյութեան հերթական, բայց իւրօրինակ դրսեւորմանը: 1916 թ. փետրուարի 23-ին «Մշակ»-ում (թ. 40) տպագրուած է նրա «Մի բացատրութիւն» յօդուածը: Բացատրութիւնը հայ գրականութեան՝ ռուսերէն լոյս ընծայուելիք երկու ժողովածուների՝ «Поэзия Армении»-ի եւ «Сборник армянской литературы»-ի շուրջ նոյն թուականի սկզբից հայ մամուլի՝ մասնաւորապէս «Հորիզոն»-ի եւ «Մշակ»-ի էջերում բարձրացուած աղմուկի՝ փոխադարձ վիրաւորանքներով ու մեղադրանքներով ծաւալուող վէճի առիթով է⁴³: Հեղինակի գլխաւոր ասելիքն այդ անիմաստ ու տգեղ վէճը դադարեցնելու նպատակով «Поэзия Армении» ժողովածուն կազմելու սկզբունքները, գրական, թարգմանական գործի տարրական կանոնները բացատրելը, պարզաբանելը չէ, այլ վէճի մասնակիցներին իրենց իրական առաքելութեան ու պատասխանատուութեան գերակայութիւնը յիշեցնելն է: Ինչն անում է ժողովածուի ստեղծման պատմաքաղաքական առիթն ու նպատակը հարկադրուած յիշեցնելով եւ կոչ անելով ազգային աղէտի այդ պահին անպատշաճ, անզուսպ պահուածքով յատկապէս ռուս հասարակութեանը (որից աջակցութեան ակնկալիք ունէր հայութիւնը) արհամարհանքի եւ ծաղրի առարկայ չդարձնել ի դէմս իրենց՝ ողջ հայութեանը, համակրանք, օգնելու ցանկութիւն առաջացնելու ջանքերը գոնէ չփոշիացնել: «Հասկանանք վերջապէս, որ այս աղէտալի ժամին, երբ հայութեան լինել-չը լինելու հարցն է դրւած մեր առաջ, մեզ բոլորիս զբաղեցնելու է այդ հարցը. հաւատանք, որ մեզանից ամեն մէկը ըստ կարեաց չափու աշխատելու է այդ մեծ հարցի համար: Եւ եթէ վիճաբանութեան առարկայ դարձած ժողովածուները յարուցանեն ռուս հասարակութեան համակրութիւնը դէպի հայ ժողովուրդը եւ նպաստեն այդ արինլուրիկ ժողովրդի վշտի թեթեւացման, դա լաւ գործ է ուրեմն եւ հարկ չը կայ այլանդակելու այն՝ անտեղի ու անհիմն ամբաստանու-

⁴³ Վէճի մասին տե՛ս Վ. Տէրեան, Երկերի ժողովածու չորս հատորով, հտ. 3, Երեւան, 1975, էջ 357–358:

թիւներով ու բամբասանքներով⁴⁴», — այս ծանր խօսքերով է աւարտում յօդուածը Վ. Տէրեանը (ընդգծ.՝ Մ. Ս.): Ծանր մանաւանդ այն պատճառով, որ ազգային մեծագոյն ողբերգութեան իրողութեան եւ ենթադրուող նորերի, ազգային ապագայի անորոշ հեռանկարի պայմաններում մտաւորականների միտքը եւ գրիչը կարող են զբաղուած լինել այդօրինակ հարցերով, փոխանակ «մտաւոր-կոլտուրական զինուորութեան», այսինքն՝ հոգեւոր արարման, ազգային ինքնութեան կերտման, որն ինքն առաւել հաստատամտօրէն ամրագրում էր որպէս ազգային ռազմավարութեան մշտական գերակայութիւն՝ ֆիզիկական գոյութիւնն ապահովելուն հաւասարազօր: Ամրագրում էր նաեւ, որպէս նշուած ժողովածուների ստեղծման գործուն մասնակից, յօդուածից դեռ մօտ երեք ամիս առաջ ընկերոջն ուղղուած նամակի հետեւեալ տողերով՝ «...այժմ աւելի եւս խոր է իմ մեջ այն համոզումը, թէ մենք չպիտի վատնենք մեր ուժերը այնպիսի գործերի վրայ, ինչպէս այդ ժողովածուները, եւ գլուխներս կախ պիտի մեռ գործին նայենք. հայերէն գրուած մի պատմութեամբ իմ աչքում աւելի արժէք ունի, քան քսան այդպիսի ժողովածու ռուսերէն»⁴⁵:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Վահան Տէրեանի՝ 1914–1916 թթ. «Մշակ» ազատական թերթում տպագրուած «Արջի ծառայութիւն», «Ակակի Ծերեթելին Մոսկուայում», «Պատասխան Մոսկուայի հայ ուսանողական բիւրոյին», «Ինքնակոչ փրկիչներ», «Մի բացատրութիւն» յօդուածների եւ «Նամակներ հիւսիսից», «Ռուսաստան եւ Կովկաս», «Պետրոգրադի Հայ Գեղարուեստական Ընկերութեան մէջ» թղթակցութիւնների համագրական վերլուծութիւնը հիմք է տալիս պնդելու, որ, թէեւ դրանք գրուել են միանգամայն տարբեր առիթներով եւ տարատեսակ խնդիրների առնչութեամբ, բոլորի առանցքային նիւթը ազգային գոյաբանական, հիմնարար հարցեր են, հայոց ազգային ապագայի, Հայաստանի պատմական հեռանկարի հիմնախնդիրներ, հիմքը եւ համատեքստը՝ հեղինակի «Հոգեւոր Հայաստան» պատմափիլիսոփայական հայեցակարգը եւ ազգային ռազմավարութիւնը: Արծարծելով ազգային հասարակական-քաղաքական օրախնդիր հար-

⁴⁴ «Մշակ», 1916 թ., փետրուարի 23, թ. 40. Վ. Տէրեան, Երկերի ժողովածու չորս հատորով, հտ. 3, Երեւան, 1975, էջ 139:

⁴⁵ Վ. Տէրեան, Երկերի ժողովածու չորս հատորով, հտ. 4, Երեւան, 1979, էջ 241–242:

ցեր, իրողութիւններ, գաղափարներ, հարցադրումներ, դիտարկումներ, պատասխաններ՝ այդ հրապարակումները՝ բնագրային եւ ենթաբնագրային ուղերձներով ներկայանում են որպէս ազգային ռազմավարութեան, ըստ էութեան, ներքին եւ արտաքին քաղաքականութեան գերակայութիւններ ձեւակերպող կարեւոր բաղադրիչներ: Այդ գերակայութիւնները՝ հայութեան քաղաքացիական, հասարակական եւ քաղաքական ինքնակազմակերպում, ինքնակառավարում համայնքային եւ ազգային մակարդակներում, ազգային հաստատութեան (ինստիտուցիոնալ) ենթահամակարգերի, համակարգերի ստեղծում, միասնական ազգային ցանցի մէջ միաւորում ու ցանցային կառավարում եւ հանրային դիւանագիտութիւն, թէեւ վերաբերում են որոշակի պատմական պայմաններում ազգային պետութեան ձգտող հայութեանը, նոյնքան արդիական են նաեւ այսօր՝ ազգային պետութիւն ունեցող հայութեան համար: Քանի որ գլխաւորապէս ազգային պետութեան մէջ հայութեան միայն մի հատուածի միաւորուած լինելու եւ հայութեան կէսից աւելիի տարածքային մեծ ցրուածութեան պայմաններում դեռեւս ազգային հիմնախնդիրներ են ազգահաւաքը, ազգակերտումը, ազգային շահերը, նպատակները ձեւակերպելը եւ դրանք իրագործելու համար հայութեան ողջ ներուժը կազմակերպելու եւ կառավարելու արդիւնաւէտ ձեւեր ու միջոցներ գտնելը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Վահան Տերեան, հրապարակախօսութիւն, «Հոգեւոր Հայաստան», ազգային ռազմավարութիւն, գերակայութիւններ, ցանցային կառավարում, ազգային համակարգեր, ժողովրդավարութիւն, քաղաքացիութիւն, ինքնակառավարում, ինքնակազմակերպում, հանրային դիւանագիտութիւն, մտաւորականութիւն:

РЕЗЮМЕ


В судьбоносный период армянской истории, 1914–1916 гг. в либеральной газете «Мшак» были опубликованы статьи одного из самых образованных и деятельных армянских интеллектуалов, общественного деятеля, преданного

патриота, великого поэта-лирика Ваана Терьяна «Медвежья услуга», «Акакий Церетели в Москве», «Ответ Армянскому студенческому бюро в Москве», «Самозванцы-спасители», «Пояснение» и корреспонденции «Письма с севера», «Россия и Кавказ», «В Петроградском армянском художественном обществе». Сопоставительный анализ этих публикаций дает основание утверждать, что хотя эти статьи и написаны по совершенно разным поводам и вопросам, однако ключевой темой всех их являются национальные экзистенциальные, фундаментальные вопросы, проблемы армянского национального будущего и исторической перспективы Армении, основой и контекстом которых является авторская историко-философская концепция и национальная стратегия, изложенные в статье «Духовная Армения». Затрагивая насущные общенациональные и общественно-политические вопросы, реалии, идеи, проблемы, наблюдения, а также касаясь ответов на них, эти публикации с текстовыми и контекстуальными меседжами представляются важными составляющими национальной стратегии, формулирующие по существу внутри- и внешнеполитические приоритеты. Эти приоритеты, такие как: гражданская, общественно-политическая самоорганизация, самоуправление армян на общинном и национальном уровнях, создание национальных институциональных подсистем, систем, интеграция в единую национальную сеть и сетевое управление и публичная дипломатия, хотя и касались всего армянства, в ту пору стремящегося к национальному государству в определенных исторических условиях, однако они одинаково актуальны и важны также и для современного армянства, ныне имеющего свое национальное государство. Так как, в условиях объединения в национальном государстве лишь части армянства и большой территориальной рассеянности более половины ее, по-прежнему остаются насущными проблемы национально-государственного строительства, возврата на историческую родину всех армян, формулирования национальных интересов, целей и поиска эффективных путей и механизмов организации и управления всем потенциалом армянства для их реализации.

SUMMARY

From 1914 to 1916, in the fateful period of the Armenian history, the liberal newspaper “Mshak” published the articles “A Disservice”, “Akaki Tsereteli in

Moscow”, “Answer to the Armenian Student Bureau in Moscow”, “Imposters-Saviors”, “Explanation”, as well as the correspondence - “Letters from the North”, “Russia and the Caucasus” “In the Petrograd Armenian Art Society” by one of the most educated and active Armenian intellectuals and politicians, a devoted patriot Vahan Teryan. Their comparative analysis gives grounds to assert that although they are written on completely different occasions and issues, the key theme for all of them is national-existential, fundamental issues, the problems of Armenian national future and historical perspective of Armenia, and the basis and context is the author’s historical-philosophical concept and national strategy «Spiritual Armenia». Touching upon national socio-political pressing issues, realities, ideas, problems, observations, answers, these publications with textual and contextual messages appear to be important components of the national strategy, formulating essentially domestic and foreign policy priorities. These priorities are: civil, socio-political self-organization, self-government of the Armenians at the community and national levels, the creation of national institutional subsystems, systems, integration into a single national network and network management and public diplomacy. Although they concerned Armenians who strived to establish a national state in certain historical conditions, they are no less relevant for Armenians who have a national state today. In the conditions of unification in the national state, nation-building, gathering the nation, formulating national interests, goals and finding effective ways and mechanisms for organizing and managing the entire potential of the Armenians for their implementation remain national issues.



ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ ՊԻ, ՀԱԱՀ

ԽԱՐԿՈՎՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ՀՈՎՍԵՓ ԿԱՐԱՆՆՅԱՆԻ ՆԱՄԱԿ-ՁԵԿՈՒՑԱԳՐԵՐՆ ՈՒԿՐԱԽՆԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ (1921–1922 ԹԹ.)¹

Մեր օրերում, երբ Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական առնչություններով կապված է բազմաթիվ երկրների հետ եւ ձգտում է բարեկամական ու գործընկերային հարաբերություններ կառուցել նրանց հետ, առավել քան այժմեական է միջպետական գործընթացների նախահիմքերի ուսումնասիրությունը: Ասվածի շրջանակներում կարելու է նաեւ խորհրդային տարիների հայ-ուկրաինական դիվանագիտական հարաբերությունների քննությունը:

Կարելու է խորհրդային Ուկրաինայի հետ բարեկամական հարաբերությունների զարգացումը՝ Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) իշխանությունները 1921 թ. գարնանը որոշեցին դիվանագիտական հարաբերություններ հաստատել եւ փոխշահավետ գործակցություն սկսել Ուկրաինայի հետ՝ ուշադրության կենտրոնում պահելով այնտեղ ապաստանած արեւմտահայ բազմահազար գաղթականների խնդիրները:

ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը 1921 թ. մայիսի 23-ին Գեորգյան հոգեւոր ճեմարանի շրջանավարտ, ճանաչված հեղափոխական գործիչ, հրապարակախոս Հովսեփ Կարախանյանին (1878–1931) նշանակեց խորհրդային Ուկրաինայի կառավարությանը կից ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ: Նրան տրված մանդատն ստորագրել են ժողկոմ-խորհի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը եւ արտգործժողկոմ Ասքանազ Մուսվաթյանը²: Հայկական լիազոր ներկայացուցչության կենտրոնատեղին լինելու էր երկրի մայրաքաղաք Խարկովը: Հ. Կարախանյանի նշանակման մասին ՀՍԽՀ արտգործժողկոմ Ա. Մուսվաթյանը հեռագրով

¹* Ստացվել է՝ 29.10.2023, գրախոսվել է՝ 1.11.2023:

էլ. հասցե՝ hamosukiasyan@mail.ru:

² Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 114, ց. 1, գ. 215, թ. 8:

տեղեկացրեց ինչպես Խորհրդային Ուկրաինայի արտգործոժողկոմ Քրիստիան Ռակովսկուն, այնպես էլ Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանին: Եւ քանի որ այդ ժամանակ նորանշանակ լիազոր ներկայացուցիչը գտնվում էր Մոսկվայում, Ս. Տեր-Գաբրիելյանին ուղղված հեռագրում մասնավորապես պատվիրվեց, որ նա Հ. Կարախանյանին առաջարկի առանց հապաղելու ճանապարհվել նշանակման վայրը³: Նշենք, որ Մոսկվայի լիազոր ներկայացուցչությունը հետագայում եւս կապող օղակ էր Երեւանի եւ Խարկովի միջեւ: Մոսկվայից դուրս գալով մայիսի 25-ին՝ Հ. Կարախանյանն ամսի 27-ին հասավ Խարկով: Նա շատ արագ ձեւավորեց լիազոր ներկայացուցչության աշխատակազմը եւ անցավ իր պարտականությունների կատարմանը: 1921 թ. հունիսի 30-ով թվագրված մի վավերագրից տեղեկանում ենք, որ լիազոր ներկայացուցչությունն ուներ հինգ աշխատակից՝ ներկայացուցիչ, քարտուղար, հատուկ հանձնարարություններ կատարող պաշտոնյա, մեքենագրուհի եւ աղախին⁴:

Խորհրդային Ուկրաինայում լիազոր ներկայացուցիչ նշանակվելուց հետո Հ. Կարախանյանն իր գործունեության կարեւոր ուղղությունն է դարձնում Ուկրաինայի հայության շահերի պաշտպանությունը, այստեղ ապաստանած արեւմտահայ հազարավոր գաղթականների խնդիրների կարգավորումը: Խարկովի՝ ՀՍԽՀ-ի լիազոր ներկայացուցչությունը մեր ուսումնասիրած արխիվային փաստաթղթերում վերջին անգամ հիշատակվում է 1922 թ. ապրիլին: Հ. Կարախանյանի՝ ՀՍԽՀ արտգործոժողկոմատ ուղարկած 1922 թ. ապրիլի 1-ով թվագրվող մի գրությունից տեղեկանում ենք, որ նա Երեւան էր առաքում Խորհրդային Ուկրաինայի արտգործոժողկոմատի հրատարակած գրքերի խմբաքանակը⁵:

Հովսեփ Կարախանյանը վերադասին պարբերաբար տեղյակ է պահել իր գործունեության մասին: 1921–1922 թթ. հայ-ուկրաինական հարաբերությունների համակողմանի ուսումնասիրման համար առանձնահատուկ կարեւորություն են ներկայացնում Երեւան ուղարկած նրա շուրջ մեկ տասնյակ նամակ-զեկուցագրերը՝ հասցեագրված արտաքին գործերի ժողկոմատին: Դրանք անտիպ են եւ պահվում են Հայաստանի ազգային արխիվում:

³ Անդ, թ. 4:

⁴ Անդ, թ. 15:

⁵ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 275, թ. 1–2:

Կարախանյանի նամակները տեղեկություններ են պարունակում Ուկրաինայի հայկական համայնքների վերաբերյալ: Նամակներում խոսվում է ինչպես համայնքի հին բնակիչների, այնպես էլ արեւմտահայ գաղթականների մասին: Հաղորդվող տեղեկությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ Ուկրաինայի հայկական համայնքների կրթամշակութային կյանքի կազմակերպմանը վերաբերող տվյալներ եւ այնտեղ ապաստանած արեւմտահայ գաղթականների դրույթունը ներկայացնող զեկուցումներ:

Հ. Կարախանյանի նամակներից տեղեկանում ենք, որ Ուկրաինայի հայերը ջանքեր են գործադրել համայնքային կառույցներ ստեղծելու ուղղությամբ: Դա առավելապես վերաբերում է Խարկովի բազմամարդ համայնքին: Այսպես՝ 1921 թ. սեպտեմբերի 3/4-ին Ա. Մուսվանին գրած նամակում Հ. Կարախանյանը հաղորդում է, որ քաղաքում գոյություն ունի հայկական ակումբ, ուր շաբաթը մեկ անգամ դասախոսություններ են ընթերցվում: Ուշագրություն է արժանի այն հանգամանքը, որ տեղի հայությունն ամենից շատ հետաքրքրվել է հայաստանյան անցուդարձով: Կարախանյանը տեղեկացնում է, որ ակումբի լեփ-լեցուն դահլիճում ինքը երեք անգամ դասախոսություն է կարդացել Խորհրդային Հայաստանի մասին⁶: Մեկ այլ նամակից պարզվում է, որ յուրաքանչյուր հինգշաբթի եւ կիրակի օրերին ակումբում զեկուցումներ են ընթերցվել նորագույն շրջանի հայ գրականության վերաբերյալ, կազմակերպվել են անգրագետներին տառաճանաչ դարձնելու դասընթացներ, դասավանդվել են հայերեն, ռուսերեն, թվաբանություն եւ աշխարհագրություն: Խարկովում գոյություն ունեին նաեւ հայկական դպրոց եւ դրամատիկական խմբակ: Վերջինը ամիսը երկու-երեք անգամ ներկայացումներ էր բեմադրում⁷:

Խորհրդային Հայաստանի կառավարությունն իր ունեցած սուղ միջոցներից բաժին էր հանում Խորհրդային մյուս հանրապետությունների բուհերում սովորող հայազգի ուսանողներին: Այսպես՝ Խարկովի՝ ՀՍԽՀ-ի լիազոր ներկայացուցչության միջոցով օժանդակություն էին ստանում Խարկովի, Կիեւի եւ Օդեսայի բուհերում սովորող հայ ուսանողները, որոշակի օժանդակություն էին ստանում նաեւ տեղի հայկական կրթամշա-

⁶ Անդ, գ. 215, թ. 25 շրջ.:

⁷ Անդ, թ. 11 շրջ. - 12:

կուլթային կազմակերպությունները: Նոյեմբերի 30-ին Երեւան ուղարկած նամակում Հ. Կարախանյանը բարձրացնում է ուկրաինական բուհերում սովորող հայ ուսանողներին տրվող նպաստներն ավելացնելու հարցը⁸:

Հաշվի առնելով խորհրդային Հայաստանի հանդեպ եղած հետաքրքրությունը՝ ամենեւին պատահական չէ, որ Ուկրաինայի հայությունը պատրաստակամ էր հնարավորության ներածի չափով օժանդակել կթած մեջքն ուղղող հայրենիքին, նպաստել նրա տնտեսության վերականգմանը: Ասվածի ապացույցներից է այն արձագանքը, որ այստեղ եղավ 1921 թ. սեպտեմբերին Երեւանում Հովհաննես Թումանյանի գլխավորությամբ Հայաստանի օգնության կոմիտեի հիմնադրման առնչությամբ: 1921 թ. հոկտեմբերի 29-ին Երեւան ուղարկած նամակում Հ. Կարախանյանը հայտնում է, որ կոմիտեի կանոնադրությունն ստանալուց հետո իրենց մոտ եւս դրա մասնաճյուղը կբացեն՝ հայրենիքին նյութապես օգնելու համար⁹: Իսկ նոյեմբերի 30-ով թվագրված մեկ այլ նամակից տեղեկանում ենք, որ խարկովում կազմվել է Հայաստանի սովյալներին օժանդակող կոմիտե, որը խնդիր է դրել դրամի, զգեստների, զանազան մթերքների հանգանակություններ կազմակերպել¹⁰:

Լինելով գրական գործիչ ու հրապարակախոս՝ խարկովում ՀՍԽՀ-ի ներկայացուցիչը կարեւոր էր համարում համայնքային մամուլի միջոց ունենալը: 1921 թ. հունիսի 27-ին արտգործոցը Ա. Մռավյանին հասցեագրած նամակում Հ. Կարախանյանը նշում է, որ պատրաստվում է տեղի համայնքի համար թերթ հրատարակել: Նա հույս ուներ հայկական տառատեսակներ ստանալ Մոսկվայից կամ Պետրոգրադից¹¹: Այս գաղափարը ողջունում է արտգործոցը¹²: Արդեն սեպտեմբերի 3/4-ին Ա. Մռավյանին հղած նամակում Հ. Կարախանյանը տեղեկացնում է, որ գրեթե պատրաստ է «Նոր ճանապարհ» անվանումով թերթի առաջին համարը: Նախատեսվում էր թերթի էջերում նյութեր զետեղել Ուկրաինայի հայկական գաղութի, արեւմտահայ գաղթականների խնդիրների, նրանց եւ ուկրաինական խորհրդային իշխանությունների փոխհարաբերությունների, խորհրդային երկրներում կենսագործվող տնտեսական

⁸ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 13 եւ շրջ.:

⁹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 215, թ. 11:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 13 շրջ. – 14:

¹¹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 215, թ. 13:

¹² Անդ, թ. 19:

նոր քաղաքականության մասին: Թերթն ունենալու էր գրական, լուրերի, հայտարարությունների բաժիններ: Կարելուր տեղ էր հատկացվելու հայաստանյան նորություններին: Հ. Կարախանյանը հաղորդում է նաև, որ պատրաստվում էին առաջիկա կիրակի օրը, այսինքն՝ սեպտեմբերի 11-ին, լրագրի անդրանիկ համարի բովանդակությունը ներկայացնել խարկովի հայկական ակումբում¹³:

Ինչպես երևում է, Կարախանյանին չի հաջողվել հայկական տառատեսակներ ստանալ Մոսկվայից կամ Պետրոգրադից: Այդ պատճառով էլ 1921 թ. նոյեմբերի 30-ին Ա. Մռավյանին գրած մեկ այլ նամակում նա բարձրացնում է Երեւանից տառատեսակներ ուղարկելու հարցը՝ ընդգծելով, որ Ուկրաինայում հայերեն թերթի կարիք է զգացվում, սակայն տառատեսակներ չունենալու պատճառով չեն կարողանում թերթ հրատարակել: Լիազոր ներկայացուցիչը կարծիք էր հայտնում, թե առավել արդյունավետ կլիներ հայության շրջանում տարվող քարոզչական աշխատանքներն իրականացնել թերթի միջոցով, որովհետեւ «մի կողմից կոմունիստական մտածելակերպ, կոմունիստական աշխարհայացք կպատվաստվեր հայկական աշխատավորությանը, մանավանդ նրա երիտասարդ մասին, եւ մյուս կողմից իրազեկ կպահեր նրանց Հայաստանի իրադարձություններին»¹⁴:

Հայտնի է, թե ինչ ճակատագիր ունեցավ թերթ հրատարակելու՝ խարկովի ներկայացուցչության փորձը, սակայն հայ պարբերական մամուլի ցանկերում նման անվանումով թերթ չկա¹⁵: Այս իրողությունը հիմք է տալիս պնդելու, որ թերթ հրատարակելու՝ Հ. Կարախանյանի փորձը հաջողութամբ չի պսակվել:

Խորհրդային Ուկրաինայում լիազոր ներկայացուցիչ նշանակվելուց հետո Հ. Կարախանյանն իր գործունեության առաջնային խնդիրներից էր համարում այստեղ ապաստանած արեւմտահայ գաղթականության օժանդակություն ցուցաբերելը:

Արտգործոցը Ա. Մռավյանին ուղղված 1921 թ. հունիսի 27-ով թվագրված նամակում Հ. Կարախանյանը տեղեկացնում է, որ իր առ-

¹³ Անդ, թ. 25 շրջ. – 26:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 15:

¹⁵ Մասնավորապես տե՛ս Հալոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչեւ մեր օրերը (1794–1934), կազմող՝ Գ. ԼԵՒՈՅԱՆ, Երեւան, 1934, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794–1967), կազմող՝ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Երեւան, 1970, Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794–1980), կազմող՝ Մ. ԲԱՐԼՈՅԱՆ, Երեւան, 1986:

ջեւ ծառացած կարեւոր հարցերից է հայ գաղթականների խնդիրներով զբաղվելը, քանի որ հենց նրանք էին կազմում խարկովի հայկական համայնքի մեծամասնությունը: Լիազոր ներկայացուցիչը գրում է, որ հայ համայնքին ամենից շատ անհանգստություն է պատճառում բռնի հանրային աշխատանքների հարցը: Նշելով, որ ինքը դեմ չէ, որ Ուկրաինայում ապաստանած հայերը եւս իրենց աշխատանքով օգտակար լինեն հյուրընկալող երկրին, Հ. Կարախանյանը մատնանշում է հետեւյալ հանգամանքը. «Այստեղ ապաստանած տաճկահայերից յուրաքանչյուրը խնամում է իր այս կամ այն ազգականից հետո մնացած որբերին կամ այրիներին, որ նրանց մեջ չկա գրեթե մեկը, որ առնվազն հինգ անձ չկերակրի իր աշխատանքով, ապա պետք է ինձ հետ համաձայնեք, որ մեկ տաճկահայ աշխատանքի ընդունակ տղամարդու երկար ժամանակով բռնի աշխատանքների տանելը հավասարազոր է հինգ հոգու քաղցած գոյության դատապարտելուն, որովհետեւ այստեղ օրաբաժինները շատ չնչին են, եւ աշխատավորի ընտանիքի անդամները ոչինչ չեն ստանում»¹⁶: Այնուհետեւ տեղեկացնում է, որ այդ խնդրի՝ «բռնի աշխատանքների գործը կանոնավորելու» համար դիմել է Ուկրաինայի աշխատանքի կոմիսարին, որը, սակայն, դեռեւս չի պատասխանել, եւ ինքը մտադիր է հարցը բարձրացնել մինչեւ անգամ ուկրաինական կառավարության առջեւ¹⁷: Պատասխան գրության մեջ Ա. Մռավյանը հարցի կարգավորումը թողնում է Հ. Կարախանյանի հայեցողությանը¹⁸: Խնդիրն այն է, որ այս պարտադիր աշխատանքների պատճառով Ուկրաինայում ապաստանած հայերի (եւ ոչ միայն) շրջանում խորհրդային իշխանությունը համակրանքի չէր արժանանում:

Կարախանյանը մեծ ուշադրություն էր դարձնում Ուկրաինայում բնակվող հայության շահերի պաշտպանությանը: Այս առումով նա կարեւոր խնդիր էր համարում երկրի հայաշատ քաղաքներում հայկական ներկայացուցչությունների ստեղծումը: ՀՍԽՀ արտգործժողկոմ Ա. Մռավյանին ուղղած 1921 թ. սեպտեմբերի 3/4-ի իր նամակում Հ. Կարախանյանը տեղեկացնում է, որ պատրաստվում է այցելել Կիև եւ Կրասնոդար՝ ծանոթանալու տեղի հայկական համայնքներին հուզող խնդիրներին: Նա գրում է, որ, իր ունեցած տեղեկությունների համաձայն, Կիևի

¹⁶ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 215, թ. 11 շրջ.:

¹⁷ Անդ, թ. 11 շրջ. – 12:

¹⁸ Անդ, թ. 19:

պարսկական հյուպատոսը, որին հանձնված էր քաղաքի հայերի շահերի պաշտպանությունը, թալանում է նրանց՝ կաշառք պահանջելով նույնիսկ ամենասովորական վկայաթղթի համար¹⁹։ Ա. Մուավյանի կարգադրությամբ գրված պատասխան գրության մեջ ժողկոմատի ընդհանուր բաժնի վարիչ Ալեքսանդր Մեյլանն առաջարկում է լիազոր ներկայացուցչության իրավասության ներքո վերցնել Ուկրաինայի քաղաքներում բնակվող հայահպատակներին եւ նրանց ազատել Կիևի պարսկական հյուպատոսի կեղեքումներից, ինչպես նաեւ վերահսկել հայկական համայնքների կրթամշակութային հիմնարկները՝ ներգրավելով նաեւ տեղական գործիչներին²⁰։

Հայ-ուկրաինական հարաբերություններում խնդրահարույց էր արեւմտահայ գաղթականների քաղաքացիության հարցը։ 1921 թ. սեպտեմբերի 27-ին Հ. Կարախանյանին ուղարկած գրության մեջ Ա. Մուավյանը նշում է. «Տաճկահայ փախստականները, որոնք ներկայումս ապրում են Հայաստանի սահմաններում եւ Ռուսաստանի եւ Խորհրդային հանրապետությունների զանազան վայրերում, Հայաստանի ԽՍՀ (պետք է լինի՝ ՍՍՀ,– Հ. Ս.) կառավարության կողմից համարվում են որպես Հայաստանի քաղաքացիներ։ Ըստ որում՝ Ուկրաինայում ապրող տաճկահայերի վերաբերմամբ Ձեզ մնում է հետեւել նույն սկզբունքին»²¹։ Խնդիրն այն է, որ հայ գաղթականների հարցն ուկրաինական իշխանությունները դիտարկում էին թուրք-ուկրաինական հարաբերությունների տեսանկյունից։ Նոյեմբերի 30-ին Ա. Մուավյանին ուղղված նամակում Հ. Կարախանյանն այս առթիվ հայտնում է. «Խորհրդային Ուկրաինայի կառավարությունը իմ կրկնակի եւ եռակի դիմումներին՝ ճանաչելու Ուկրաինայում ապրող հայ գաղթականներին իբրեւ հայկական հպատակներ, ինձ միշտ պատասխանում է, որ նրանք տաճկացի եւ հատկապես Անգորայի (Անկարայի, այսինքն՝ Թուրքիայի ազգային մեծ ժողովրդ,– Հ. Ս.) կառավարության հպատակներ են»²²։ Այնուհետեւ Հ. Կարախանյանը տեղեկացնում է, որ արեւմտահայ գաղթականները դրականորեն են տրամադրված Խորհրդային Հայաստանի հանդեպ եւ «իրենց սրտին մոտիկ են ընդունում Հայաստանի կառավարության եւ

¹⁹ Անդ, թ. 24 շրջ. – 25:

²⁰ Անդ, թ. 41 եւ շրջ.:

²¹ Անդ, թ. 53:

²² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 14:

հայ ժողովրդի պետքերն ու կարիքները, սակայն չեն գրվում մասսայորեն հայկական հպատակ՝ երկյուղ կրելով այն հանգամանքից, որ պատերազմի դեպքում խորհրդային Ուկրաինան նրանց կգինվորագրի՝ իբրեւ խորհրդային քույր հանրապետության հպատակների եւ կողարկի պատերազմի դաշտ»²³։ Բանն այն է, որ 1921 թ. աշնանն ուկրաինական հասարակական-քաղաքական շրջանակներում այն համոզումն էր տիրում, թե 1922 թ. գարնանը պատերազմ է սկսվելու խորհրդային Ռուսաստանի եւ Հեհաստանի միջեւ, ինչը արեւմտահայ գաղթականներին դրդում էր խորհրդային հպատակություն ընդունելու հարցում զգուշանալ։

Հայ-ուկրաինական հարաբերություններում թուրքական գործոնի նշանակությունը Հ. Կարախանյանի համար ի հայտ է եկել նաեւ Ուկրաինայի կոմկուսի կենտկոմի քարտուղար Ֆելիքս Կոնի հետ հանդիպման ժամանակ։ Զրույցի ընթացքում վերջինս շեշտել է Մուստաֆա Քեմալի կառավարության հետ բարեկամական կապեր պահպանելու՝ Ուկրաինայի դիրքորոշման մասին²⁴։ Ահա թե ինչու 1921 թ. սեպտեմբերի 4-ին Երեւան ուղարկած նամակում Հ. Կարախանյանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ուկրաինական կառավարությունը մեծաթիվ կազմով (50 մարդ) դեսպանություն է ուղարկում Անկարա։ Նշվում է նաեւ, որ առաջիկայում խարկով է ժամանելու քեմալական կառավարության ներկայացուցիչը²⁵։

1921 թ. աշնանը, Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միավորման գործընթացի համատեքստում, խորհրդային Հայաստանում քննարկվում էր խորհրդային հանրապետություններում ՀՍԽՀ ներկայացուցչությունների լուծարման հարցը։ Արտգործոպղկոմատն այս մասին տեղեկացրել է նաեւ խարկովում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությանը։ 1921 թ. նոյեմբերի 9-ին Ա. Մուսվյանին գրած նամակում, ի պատասխան վերջինիս այն դիրքորոշմանը, թե Ուկրաինայում ՀՍԽՀ ներկայացուցչության պահպանումն առաջնահերթ չէ, Հ. Կարախանյանը տեղեկացնում է, որ պատրաստ է լիազոր ներկայացուցչության աշխատակիցների քանակը կրճատել մինչեւ երեքը, սակայն դեմ է արտահայտվում ներկայացուցչության փակմանը։ Այս առթիվ նա բերում է հետեւյալ փաստարկները.

²³ Անդ, թ. 14 եւ շրջ.։

²⁴ Վ. ՂԱԶԱՆԵՑՅԱՆ, Հայաստանը 1920–1940 թթ., Երեւան, 2006, էջ 250։

²⁵ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 215, թ. 20 շրջ. - 21։

ա. Ուկրաինայում կենտրոնացած է մեծաքանակ հայություն (նրա ունեցած տեղեկությունների համաձայն՝ միայն Խարկովում բնակվում էր 10000, իսկ Կրասնոդարում՝ 20000 հայ): Ներկայացուցչությունը պետք է իր ձեռքում կենտրոնացնի տեղի հայկական համայնքի վարչական եւ կրթամշակութային գործը, պաշտպանի հայ բնակչության շահերը:

բ. Ներկայացուցչությունը պետք է ստանձնի Ուկրաինայի եւ Հայաստանի միջեւ ապրանքափոխանակության կազմակերպման գործը: Հայկական գինին, կոնյակը կարող են փոխանակվել ուկրաինական ալյուրի, ցորենի, յուղի, շաքարի հետ, Ուկրաինայից Հայաստան կարող է ներմուծվել յոգ, խինին եւ այլ ապրանքներ: Այս գործառույթյունների արդյունքում հայկական ներկայացուցչությունը կարող է ոչ միայն իր պահպանման ծախսերը ապահովել, այլեւ որոշակի օգուտ բերել Հայաստանին²⁶:

Արդեն 1921 թ. նոյեմբերի 16-ին ՀՍԽՀ ժողկոմխորհը որոշում կայացրեց 1922 թ. հունվարի 1-ից դադարեցնել խորհրդային հանրապետություններում (բացառությամբ Մոսկվայի) հայկական դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեությունը²⁷: Սակայն այս որոշումը միանգամից չգործադրվեց, եւ հայկական ներկայացուցչությունների լուծարման գործընթացն ամիսներ տեւեց: Այս առումով Խարկովի հայկական լիազոր ներկայացուցչության 1922 թ. առաջին ամիսների գործունեության վերաբերյալ արխիվային նյութերն ավելի կցկտուր են:

Փաստորեն՝ Հովսեփ Կարախանյանի նամակներում վեր է հանվում հարկովի լիազոր ներկայացուցչության՝ Ուկրաինայում բնակվող հայության շահերի պաշտպանությանն ուղղված գործունեությունը: Նամակներից տեղեկանում ենք, որ հարկովի հայկական համայնքի մեծ մասն արեւմտահայ գաղթականներ էին, ուստի Հ. Կարախանյանի առջեւ ծառացած կարեւոր խնդիրներից էր հայ գաղթականների կենսական խնդիրներով զբաղվելը: Հատկապես խնդրահարույց էր արեւմտահայ գաղթականների քաղաքացիության հարցը, ինչը ուկրաինական իշխանությունները դիտարկում էին թուրք-ուկրաինական հարաբերությունների տեսանկյունից: Վերը հիշատակված նամակ-զեկուցագրերն Ուկրաինայի հայության պատմության ուսումնասիրման վստահելի աղբյուր-

²⁶ ЗУУ, §. 113, г. 3, ч. 46, п. 6–7 2р2.

²⁷ Վ. ՂԱԶԱՆԵՅՅԱՆ, *հղ. աղ/ւ.*, էջ 254:

ներ են: Դրանցում քննարկվող մի շարք հարցեր արդիական են նաև մեր օրերում:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Խորհրդային Հայաստան, Խորհրդային Ուկրաինա, Խարկով, Հովսեփ Կարախանյան, գաղթավայր, գաղթականներ, լիազոր ներկայացուցչություն:

РЕЗЮМЕ

Оценивая важность развития дружественных отношений с Советской Украиной, весной 1921 года власти Социалистической Советской Республики Армения (ССРА) решили установить дипломатические отношения и начать взаимовыгодное сотрудничество с Украиной, сосредоточив внимание на проблемах тысяч западных армянских беженцев, нашедших там приют после геноцида. 23 мая 1921 года Совет Народных Комиссаров Советской Армении назначил Овсепя Караханяна полномочным представителем ССРА на Советской Украине. Армянское представительство располагалось в столице страны Харькове.


О. Караханян периодически информировал правительство о своей деятельности. Он направил в Наркомат иностранных дел в Ереване около десятка писем, имеющих особое значение для изучения армяно-украинских отношений в 1921–1922 годах. Они до сих пор не опубликованы и хранятся в Национальном архиве Армении. В этих письмах раскрывается деятельность представительства, направленная на защиту интересов армян, проживающих на Украине. Согласно этим письмам, большую часть армянской общины Харькова составляли выходцы из Западной Армении, поэтому одним из важных вопросов, стоящих перед Караханяном, было решение проблем тысяч соотечественников. Особенно остро стоял вопрос о гражданстве беженцев: украинские власти обсуждали его с точки зрения турецко-украинских отношений. Вышеупомянутые письма-отчеты являются надежным источником для изучения истории армян Украины. Некоторые из вопросов, обсуждаемых в письмах, актуальны и в настоящее время.


SUMMARY

Assessing the importance of developing friendly relations with Soviet Ukraine, in the spring of 1921, the authorities of the Armenian Soviet Socialist Republic (ASSR) decided to establish diplomatic relations and start mutually beneficial cooperation with Ukraine, focusing on the problems of thousands of Western Armenian refugees who had found shelter there. On May 23, 1921, the Council of People's Commissars of Soviet Armenia appointed Hovsep Karakhanyan as the plenipotentiary of the ASSR in Soviet Ukraine. The Armenian representative office was located in Kharkov, the capital of the country.

H. Karakhanyan periodically informed his superiors about his activities. He sent about a dozen of letters to the People's Commissariat of Foreign Affairs in Yerevan, which are of special importance for the study of Armenian-Ukrainian relations in 1921–1922. They have not been published so far and are kept in the National Archives of Armenia. These letters reveal the activities of the representative office aimed at protecting the interests of Armenians living in Ukraine. According to the letters, the majority of the Armenian community in Kharkov were immigrants from Western Armenia, so one of the important issues facing Karakhanyan was to solve the problems of thousands of Armenian refugees. The issue of their citizenship was particularly acute: the Ukrainian authorities discussed it from the point of view of Turkish-Ukrainian relations.

The above-mentioned letter-reports are a reliable source for studying the history of the Armenians of Ukraine. Some of the issues discussed in the letters are still relevant today.





ՍՅՈՒՆԻՔԻ ՍԱՐՁԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (2001–2022 ԹԹ.)¹

ՀՀ Սյունիքի մարզը մասնավորապես հարուստ է բնության եւ պատմամշակութային անկրկնելի հուշարձաններով:

Հայ միջնադարյան եկեղեցական ճարտարապետության պատմության մեջ, հիրավի, պատվավոր տեղ ունի Սյունյաց ճարտարապետական դպրոցը՝ իր շնորհաշատ ճարտարապետներով, փառքործ ու խաչփառագործ վարպետներով: Այս դպրոցի ներկայացուցիչներն ստեղծել են բազմաթիվ հույակերտ կոթողներ: Սյունիքի եկեղեցական կառույցներում ուշագրավ եւ արժեքավոր են նաեւ ժողովրդական ճարտարապետության հուշարձանները, որոնք լրացնում եւ ամբողջացնում են ճարտարապետական նույն դպրոցին պատկանող հուշարձանաբույլը:

Հոգվածի նպատակն է ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզի նորակառույց եկեղեցիների (Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի, Դավիթ Բեկի Ս. Գայանե եկեղեցի, Քաշունի Ս. Սարգիս եկեղեցի, Շինուհայրի Ս. Գրիգոր Տաթևացի եկեղեցի, Շաֆի Ս. Աստվածածին եկեղեցի, Տոլորսի Ս. Հովսիսիմե եկեղեցի, Դարբասի Ս. Ստեփանոս եկեղեցի, Ճակատենի Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռ, Տոլորսի Ս. Մարտիրոս մատուռ) ճարտարապետական ձևերն ու հորինվածքները, արտաքին ու ներքին կառուցվածքը, հարդարանքը, կառուցման պատմությունը եւ հարակից այլ հարցեր՝ մամուլի ու հեռուստատեսության, ինչպես նաեւ այլ աղբյուրներում առկա տեղեկությունների համադրմամբ ու վերլուծությամբ եւ պատմա-համեմատական ու տրամաբանական մեթոդների կիրառումով:

Սյունիքի մարզի նորակառույց եկեղեցիները նախագծվել եւ կառուցվել են հայ միջնադարյան եկեղեցական ճարտարապետության եւ Սյունիքի

^{1*} Ստացվել է 18.06.2023, գրախոսվել է 20.06.2023: էլ. հասցե՝ armanmaloyan@mail.ru, armanmaloyan1976@gmail.com:

ժողովրդական ճարտարապետության ու շինարարական արվեստի լավագույն ավանդներով:

Սյունիքի մարզի տարածքը կազմում է Հայ Առաքելական Եկեղեցու Սյունյաց թեմը, որը ստեղծվել է 1988 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա. Պալճյանի սրբատառ կոնդակով եւ վերակազմավորվել 1996 թ. մայիսի 30-ին: Թեմի առաջնորդանիստը Գորիս քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է:

Դեռեւս վաղ միջնադարում ձեւավորված հայկական եկեղեցական ճարտարապետությունը հայոց բազմադարյան մշակույթի ինքնատիպ եւ կարեւոր բնագավառներից է: Հայկական եկեղեցական ճարտարապետության բազմաթիվ կառույցներ աչքի են ընկնում իրենց յուրօրինակությամբ, գեղարվեստական հարուստ ավանդների կիրառմամբ, ներքին ու արտաքին հարդարանքի ինքնատիպ լուծումներով, կառուցողական արվեստի բարձր մակարդակով:

Ի սկզբանե Սյունիքը եղել է Հայոց աշխարհի յուրօրինակ ու զարգացած ճարտարապետությամբ առանձնացող նահանգներից մեկը²: Հայ միջնադարյան եկեղեցական ճարտարապետության պատմության մեջ, հիրավի, կարեւոր տեղ ունի Սյունյաց ճարտարապետական դպրոցը՝ իր քանքարավոր ճարտարապետներով, շինարարներով ու վարպետներով: Այս ճարտարապետական դպրոցի ներկայացուցիչները³ հայ միջնադարյան եկեղեցական ճարտարապետության անդաստանում թողել են իրենց ուրույն հետագիծը եւ հայ եկեղեցական ճարտարապետությունը հարստացրել են բազմաթիվ գեղակերտ կոթողներով: Սյունյաց ճարտարապետական դպրոցի եկեղեցական ճարտարապետության կառույցներն ուշագրավ եւ արժեքավոր են եւ իրենց ինքնատիպությամբ լրացնում եւ ամբողջացնում են հայ եկեղեցական ճարտարապետության համապատկերը: Իր յուրօրինակ ու ինքնամփոփ հասարակական-պատմա-

² Տե՛ս Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ, Սյունիքի XVII–XVIII դդ. ճարտարապետական համալիրները, Երեւան, 1973, էջ 7:

³ Սյունյաց ճարտարապետական դպրոցի ներկայացուցիչների եւ ճարտարապետական կոթողների մասին մանրամասն տե՛ս Ս. ԲԱՐԵՈՒԴԱՐՅԱՆ, Միջնադարյան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, Երեւան, 1963, Հ. ԻՍԱԲԵԿՅԱՆ, Հայկական ռենեսանսի ճարտարապետությունը, Երեւան, 1980. Ս. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ, Վարպետաց վարպետներ, Մանուել, Տրդատ, Մոմիկ, Երեւան, 1982, Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայկական ճարտարապետության պատմություն, Երեւան, 1992, Հայկական ճարտարապետության պատմություն, հտ. 2, Երեւան, 2002, հտ. 3, Երեւան, 2004:

կան միջավայրով ու դրան բնորոշ կառույցներով առանձնանում է նաեւ Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը⁴:

1991 թ. հետո նորանկախ Հայաստանի Հանրապետությունում հայկական եկեղեցական ճարտարապետությունը վերածնունդ, ապա նաեւ վերելքի մի նոր շրջան ապրեց: ՀՀ մարզերում եւ քաղաքամայր Երեւանում կառուցվեցին մի շարք նոր եկեղեցիներ: Բնականաբար, անմասն չմնաց նաեւ Սյունիքի մարզը:

1. ԿԱՊԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ ԵԿԵՂԵՑԻ

Հայաստանի Երրորդ Հանրապետության հոյակապ եկեղեցական կառույցներից է Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, որի հիմնարկեքի արարողությունը կատարվել է 1996 թ. նոյեմբերի 25-ին երջանկահիշատակ Գարեգին Ա. Սարգիսյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի (1995–1999 թթ.) հանդիսապետությամբ: Եկեղեցու կառուցման հովանավորությունն ստանձնել էր Սյունիքի մարզպետարանը, որի ներդրումն ամբողջացել էր ժողովրդի կատարած հանգանակությամբ ու մի քանի բարեպաշտ հայորդիների նվիրատվություններով:

Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին ՀՀ-ի անկախությունից հետո Սյունիքի մարզում կառուցված առաջին եկեղեցին է: Եկեղեցին կառուցվել է ճարտարապետ Արտյոմ Գրիգորյանի նախագծով⁵: Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին արտաքուստ՝ քառանկյուն, ներքուստ՝ խաչաձեւ կենտրոնագմբեթ հորինվածքով, ավագ խորանի հյուսիսային եւ հարավային կողմերին մեկական ավանդատներով կառույց է: Ունի երեք մուտք՝ արեւմտյան, հյուսիսային ու հարավային կողմերից: Հարավային պատը, որը մշակված է մեկ զույգ «հայկական խորշերով», արեւմտյան եւ արեւելյան անկյուններին ունի եկեղեցու ընդհանուր ծավալից փոքր-ինչ դուրս եկած գեղակերտ զանգաշտարակներ: Եկեղեցին լուսավորվում է բազմանիստ թմբուկին եւ պատերին թողնված լուսամուտներից: Եկեղեցին երեսպատված է բաց մանուշակագույն ու կաթնաթուր երանգի կրացված մարմարի սրբատաշ սալաքարերով:

⁴ Տե՛ս Ն. ՊԱՊՈՒՅԱՆ, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երեւան, 1972, էջ 9:

⁵ Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունները մեզ տրամադրել է Կապանի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տ. Խաչատուր քհն. Հայրապետյանը:

Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու ավագ խորանը գեղազարդել է գեղանկարիչ Տիգրան Հակոբյանը: Նա խորանի աջ եւ ձախ կողմերին պատկերել է Ս. Մեսրոպ Մաշտոցին ու Ս. Սահակ Պարթեւին, իսկ ավելի խորքում՝ մեջտեղում՝ Հիսուս Քրիստոսին, իսկ Նրա աջ եւ ձախ կողմերին՝ վեցական առաքյալներին:

Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու նավակատիքի հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել 2001 թ. դեկտեմբերի 1-ին՝ Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնի օրը, երբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռքով եկեղեցին օծվեց ու սրբազործվեց⁶: Հայոց Հայրապետի ձեռքով նախ օծվեցին ու սրբազործվեցին սուրբ սեղանը եւ սուրբ խորանը, ապա թեմակալ առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանն օծեց մկրտության սուրբ ավազանը:

Օծման շնորհաբաշխ արարողությունից հետո կապանցիներին հայրապետական օրհնության իր խոսքն ուղղեց Նորին Սրբությունը: Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու օծման եւ սրբազործման հանդիսությունն ավարտվեց մատաղի օրհնությամբ եւ ժողովրդական տոնախմբությամբ:

2016 թ. սեպտեմբերի 26-ին Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բակում էդգար Բաղդասարյանի նախաձեռնությամբ բացվեց խաչքար-հուշաղբյուրը:

2. ԴԱՎԻԹ ԲԵԿԻ Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑԻ

Սյունիքի մարզի նորակառույց եկեղեցիներից է Դավիթ Բեկ գյուղի Ս. Գայանե եկեղեցին, որը կառուցվել է 2008 թ.⁷ հայտնի գործարար Միրիկ Մնացականյանի բարերարությամբ: Եկեղեցին խաչաձեւ կենտրոնազմբեթ կառույց է՝ նուրբ ու գրավիչ համաչափություններով: Կառուցված է սրբատաշ քարով: Գմբեթին կան երկարավուն պատուհաններ, մուտքն արեւմտյան կողմից է: Տարածքը շրջափակված է ոչ բարձր ցանկապատով, բարեկարգ է ու խնամված:

⁶ Տէ՛ս ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Օծվեց Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, էջմիածին, 2001, ԺԲ., էջ 120:

⁷ Տ. Արարատի հրապարակած ցուցակում Ս. Գայանե եկեղեցու կառուցման թվական է նշված 2007-ը: Տէ՛ս Տ. ԱՐԱՐԱՏ ՔԷՆ. ՊՈՂՈՍՅԱՆ, Նախանձախնդիր Հայրապետը, էջմիածին, 2011, ԺԱ., 2011, էջ 88. [https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2011/2011\(11\).pdf](https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2011/2011(11).pdf) առ 23.10.2022:

3. ՔԱՇՈՒՆԻԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

Մարզի նորակառույց եկեղեցիներից է Քաշունիի Ս. Սարգիս եկեղեցին: Նրբակերտ այս եկեղեցու կառուցումը հովանավորել են ծնունդով Տաթև գյուղից Քաշիկ Կարապետյանը (1939–2004 թթ.)⁸, ինչպես նաև Արարատ ու Արմեն Սարգսյան եղբայրները⁹: Քաշունիի Ս. Սարգիս աղոթատուն-եկեղեցին ուղղանկյուն հատակագծով դահլիճ է (5x4 մ), կառուցվել է 2002 թ.: Միակ մուտքն արեւմտյան կողմից է: Եկեղեցու տանիքը, դռան եւ պատուհանների շրջանակները շարված են սրբատաշ բազալտով, իսկ պատերը՝ տեղական մշակված քարով: Ներսի պատերին կան աստվածաշնչյան թեմաներով որմնանկարներ:

4. ՇԻՆՈՒՀԱՅՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ ԵԿԵՂԵՑԻ

Մարզի՝ առայժմ վերջին նորակառույց եկեղեցին Շինուհայրի Ս. Գրիգոր Տաթևացի եկեղեցին է, որի կառուցման նախաձեռնողը Տաթևի վանքի վանահայր Տ. Միքայել վրդ. Գեւորգյանն է: Հստ Տ. Միքայել վարդապետի պնդման՝ եկեղեցու կառուցման տեղում նախկինում սրբավայր է եղել, որի մասին վկայող խաչքարը մինչ օրս պահպանվել է:

Ճարտարապետական նախագիծը կազմել է Աշոտ դպիր Հակոբյանը: Եկեղեցու հիմնօրհները 2018 թ. մայիսի 17-ին հանդիսավորությամբ կատարել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Տ. Հովնան եպս. Հակոբյանը¹⁰: Նորակերտ աղոթատունը մեկտեղել է հայ ավանդական եկեղեցական ճարտարապետության լավագույն եւ Սյունիքի ժողովրդական ճարտարապետության շինարարական ավանդույթները: Միանավ բազիլիկ եկեղեցին ունի 17 մ երկարություն, 10 մ լայնություն եւ 11 մ բարձրություն (խաչի հետ միասին՝ 13 մ): Եկեղեցին կառուցվել է բարեպաշտ հայորդիների հանգանակության եւ նվիրատվությունների շնորհիվ: Տեղական շինաքարերով կառուցված եկեղեցին հիացմունք է պատճառում

⁸ Քաշիկ Մնացականյանի մասին ավելի մանրամասն տե՛ս Ս. ՊՈՂՈՍՅԱՆ, Տաթևի համառոտ պատմություն, Երևան, 2007, էջ 131–134:

⁹ Տե՛ս Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Մալդաշ, որ հիմա Քաշունի է կոչվում. մերձիմահ գյուղի դեռևս բաբախող սիրտը՝ Ս. Սարգիս մատուռը <https://syuniacyerkir.am/maldash-or-hima-qashuni-e-kochvum-merdzimah-gyukhi-dere%D6%82s-babakhokh-sirty-sur-b-sargis-matury> առ 15.10.2022:

¹⁰ Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Անհիշելի հին, բայց եւ հավերժող Շինուհայրի պաշտամունքային վայրերը <https://syuniacyerkir.am/anhisheli-hin-bayts-e%D6%82-haverzhokh-shinuhayri-pashtamunqayin-vayrey-1> առ 22.10.2022:

սրբատաշ ու «գորիսյան» շարվածքների արհեստավարժ համադրություններ: Շինուհայրի Ս. Գրիգոր Տաթեւացի եկեղեցին կառուցվել է մշակույթի կենտրոնի եւ մանկապարտեզի մերձակա հրապարակում:

2022 թ. հոկտեմբերի 8-ին¹¹ նորակառույց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ, Տ. Մուշեղ եպս. Բաբայանն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանորերից տեսուչ Տ. Արտակ եպս. Տիգրանյանը:

5. ՇԱՔԻԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Սյունիքի մարզի նորակառույց քրիստոնեական սրբավայրերից է Շաքիի Ս. Աստվածածին եկեղեցին (2004 թ.¹²): Եկեղեցու կառուցումը հովանավորել է ծնունդով մեղրեցի, որոշ ժամանակ Շաքիում ապրած, այնուհետեւ Մոսկվայում հաստատված Նվեր Օհանյանը: Եկեղեցու կառուցման գործում իրենց մասնակցությունն են ունեցել նաեւ համայնքի բնակիչները: Ս. Աստվածածին եկեղեցին ունի վաղմիջնադարյան հայկական եկեղեցական ճարտարապետության մեջ հայտնի խաչաձեւ կենտրոնագմբեթ, փոքր եկեղեցիներին բնորոշ կառուցվածք ու համաչափություններ: Եկեղեցին կառուցված է սրբատաշ ու կիսամշակ քարով: Տարածքը բարեկարգ է ու խնամված: Առայժմ չունի մշտական խորհրդակատար քահանա: Համայնքի անդամների հոգեւոր պահանջմունքները բավարարում է երթեւեկ քահանան:

6. ՏՈՂՈՐՍԻ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑԻ

Սյունիքի մարզի հաշորդ նորակերտ եկեղեցական կառույցը Տոլորսի Ս. Հռիփսիմե եկեղեցին է: Հին Տոլորս գյուղն ուներ Ս. Հռիփսիմե անունով բազիլիկ եկեղեցի (կառուցված՝ 1861 թ.), որը խորհրդային տարիներին օգտագործվել է ոչ հոգեւոր նպատակներով: 1970-ական թթ., երբ կառուցվեց Տոլորսի ջրամբարը, Ս. Հռիփսիմե եկեղեցին պատշաճ վե-

¹¹ Տե՛ս Օծվել է Շինուհայր գյուղի Սբ. Գրիգոր Տաթեւացի եկեղեցին <https://news.am/arm/news/724243.html>, <https://www.lin.am/3175357.html> առ 22.10.2022. Տե՛ս նաեւ Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Շինուհայրի գեղաշեն եկեղեցին՝ Ս. Գրիգոր Տաթեւացու անունով, օծվեց սրբալույս մյուստոնով <https://syuniacyerkir.am/shinuhayri-gekhashen-ekekhetsin-surb-grigor-tate%D6%82atsu-anunov-otsvets-srbaluy-smyuronov> առ 22.10.2022:

¹² Տե՛ս Ս. ԱՐԱՐԱՏ ՔԷՆ. ՊՈՂՈՍՅԱՆ, Նախանձախնդիր Հայրապետը, Էջմիածին, 2011, ժԱ., էջ 86, [https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2011/2011\(11\).pdf](https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2011/2011(11).pdf) առ 16.10.2022:

րաբերմունքի չարժանացավ եւ չտեղափոխվեց, այլ հանձնվեց բախտի եւ ջրային տարերքի քմահաճույքին: Տարվա մեջ ընդամենը մեկ-երկու ամիս, երբ ջրամբարում ջրի մակարդակն իջնում է, եկեղեցին հասանելի է դառնում այցելուներին, իսկ մնացած ամիսներին շինությունը մինչեւ տանիքը ծածկվում է ջրով, ուստի եկեղեցուն մոտենալ հնարավոր է լինում միայն նավակով:

Տարիներ անց տոլորսեցիները որոշեցին նոր եկեղեցի կառուցել հենց ջրամբարի հարեւան բարձունքին՝ ջրասույզ եղած Ս. Հռիփսիմեից ոչ հեռու¹³:

Նոր եկեղեցու կառուցման գաղափարը մտահղացել էր երեւանաբնակ տոլորսեցի Ալեքսանդր Սուքիասյանը, նա որոշել էր գյուղի մասին գիրք հրատարակել ու վաճառքից գոյացած հասույթով իրականացնել իր փափագը: Սկզբնական տարբերակով պետք է կառուցվեր մի փոքրիկ աղոթատուն՝ 25 քառ. մ ընդհանուր տարածքով ու 10 մ բարձրությամբ, սակայն հետագայում որոշվեց կառուցել մի քանի անգամ ավելի մեծ մակերեսով եկեղեցի, ինչպես նաեւ զանգակատուն ու մատաղատուն:

Տոլորսի Ս. Հռիփսիմե եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 2012 թ. հունիսին՝ ձեռամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ, Տ. Հովնան եպս. Հակոբյանի¹⁴, իսկ խաչօրհնեքի արարողությունը՝ նույն տարվա դեկտեմբերին, երբ ներքին հարդարման ու տարածքի բարեկարգման աշխատանքները դեռ չէին ավարտվել: Եկեղեցու կառուցումն ավարտվել է նույն տարվա վերջին: 2014 թ. հոկտեմբերի 11-ին կատարվել է Տոլորս գյուղի Ս. Հռիփսիմե եկեղեցու զանգի տեղադրման արարողությունը¹⁵: Նորաշեն եկեղեցու կառուցումն իրականացել է հիմնականում Ալեքսանդր Սուքիասյանի որդիներ Տիգրան ու Վարդան Սուքիասյանների աջակցությամբ: Շինարարական աշխատանքների իրականացմանն

¹³ Մ. ՓԱՅՏՅԱՆ, *Խորտակված եկեղեցու առեղծվածը. ինչու Սյունիքում վանքը ջրի տակ հայտնվեց* <https://webcache.googleusercontent.com/search?q=cache:99PGV714KosJ:https://armeniasputnik.am/20200815/xortakvac-ekexecu-arexcvacy-inchu-syuniqu-m-vanqy-jri-tak-haytnvec-24112195.html&cd=16&hl=hy&ct=clnk&gl=am>, առ 24.09.2022:

¹⁴ Տէս Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, *Նոր եկեղեցին կկրի հնի անունը՝ Ս.Հռիփսիմե* <https://alplus.am/hy/article/60882> առ 16.10.2022. Տոլորսցիները ջրամբարի տակ մնացած եկեղեցու փոխարեն նորն են կառուցում <https://armenpress.am/arm/print/686548/> առ 16.10.2022. Հ. ԳԵՒՈՐԳՅԱՆ, *Տոլորս գյուղում կառուցվում է նոր եկեղեցի* <http://www.irates.am/ru/1341565268> առ 16.10.2022:

¹⁵ Տէս ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Գրիգորյանը մասնակցել է Տոլորսի եկեղեցու զանգի տեղադրման հանդիսավոր արարողությանը <http://syunik.mtd.am/news/item/2014/10/15/tolors/avto> առ 16.10.2022:

ու ֆինանսավորմանն իրենց նպաստն են բերել նաեւ համայնքի բնակիչներն ու նախկին տոլորսեցիները: Ս. Հռիփսիմե եկեղեցին ուղղանկյուն հատակագծով դահլիճ է, նրան կից է խաչաձեւ կենտրոնագմբեթ փոքր եկեղեցիներին բնորոշ կառուցվածք ու համաչափություններ ունեցող զանգակատունը: Եկեղեցին կառուցված է սրբատաշ քարով:

2019 թ. Ս. Հռիփսիմե եկեղեցու հարակից բարձունքում դեպի երկինք խոյացավ երկաթակերտ խաչը: Այն կանգնեցվել է տոլորսեցի Բադամ Հովսեփյանի դուստրերի ու ժառանգների անունից՝ տիկին Վարսիկի հովանավորությամբ եւ ի հարգանք իրենց ծնողների հիշատակի ու ի փարատումն հայրենի գյուղի հանդեպ մեծ կարոտի: Երկար տարիներ Միացյալ Նահանգներում բնակվելով՝ տիկին Վարսիկն իր հոգում խտացած սերն առ հայրենիք արտահայտեց այս կերպ՝ գյուղին թողնելով բարձունքից գյուղը հսկող մի զգոն, աննկուն պահապան: Խաչի օծման արարողությունը կատարվեց 2019 թ. օգոստոսի 25-ին Սիսիանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ, Տ. Պարգեւ քահանայապետի ձեռամբ¹⁶:

Տոլորսի Ս. Հռիփսիմե եկեղեցին առաջմ չունի մշտական խորհրդակատար քահանա: Համայնքի անդամների հոգեւոր պահանջմունքները բավարարում է երթեւեկ քահանան (Սիսիանից):

7. ԴԱՐԲԱՍԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Մարզի հաջորդ նորակառույց քրիստոնեական սրբավայրը Սիսիանի տարածաշրջանի Դարբասի Ս. Ստեփանոս եկեղեցին է: Ըստ հնաբնականների՝ Դարբասն ունեցել է յոթ սրբավայր-եկեղեցի, ընդ որում՝ առաջին եկեղեցին 1272 թ. կառուցել են Օրբեւյան Տարսայիճ իշխանն ու նրա կինը՝ Մինա Խաթունը: Երկրորդ եկեղեցին, որը թվագրվում է 1288-ով, նույնպես կառուցել են Օրբեւյանները¹⁷: Սակայն 1931 թ. տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետեւանքով վերջնականապես խոնարհվել է նաեւ գյուղի միակ կիսավեր Ս. Ստեփանոս եկեղեցին:

Գործող եկեղեցի ունենալու անհրաժեշտությունն զգում էր ոչ միայն բուն Դարբասի, այլեւ Զորերի (Շամբ–Դարբաս–Լոր տարածաշրջան) ողջ ժողո-

¹⁶ Տե՛ս Խաչի օծում՝ Սիսիան համայնքի Տոլորս գյուղում <https://syuniacyerkir.am/khachiso%D6%82m-sisiani-hamaynqi-tolors-gyoiKhoim> առ 15.10.2022:

¹⁷ Տե՛ս Գ. ԴԱՐԲԱՍԻ-ԱՆՎԵՐԳԱՆ (ԴԱԳՈՒՐ, Գ. ԱՆՎԵՐԳԱՆ, Ըղովերձ–Դարբաս, Երևան, 2010, էջ 53:

վուրդը: Ի կատարումն իրենց փափագի ու ժողովրդի ցանկության՝ մոսկվայաբնակ դարբասցի գործարար Արամ եւ Արմեն Ստեփանյան եղբայրները ձեռնամուխ եղան հայրենի Դարբաս գյուղում նոր՝ Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցմանը: 2010 թ. գործարար եղբայրները Շամբում հիմնում են պահածոների եւ «Տատնի» հանքային ջրերի գործարանները: Նրանց բարերարությանմբ գյուղում բացվել եւ գործում են նաեւ թանգարան եւ արվեստի դպրոց:

Դարբասի Ս. Ստեփանոս եկեղեցու հիմնարկերի արարողությունը կատարվել է 2007 թ.: Կառույցը նախագծել են ճարտարապետներ Նունե Պետրոսյանը, Մարտին Զորոյանը եւ Մանվել Համբարձումյանը: Ս. Ստեփանոս եկեղեցին առինքնում է հայ ավանդական ու արդի եկեղեցական ճարտարապետության լավագույն ավանդույթների ներդաշնակությամբ: Եկեղեցին ունի խաչաձև կենտրոնագմբեթ հորինվածք ու համաչափություններ, կից՝ զանգակատուն: Եկեղեցին կառուցված է երկգույն սրբատաշ քարերի՝ վարպետորեն կատարված գունային համադրությամբ: Եկեղեցու կառուցման գործում իրենց շոշափելի ներդրումն են ունեցել համայնքի նախկին ու ներկա բնակիչներ, բարեգործներ, զինվորականներ, հատկապես՝ տեղացի շնորհալի վարպետներ ու բանվորներ:

Ս. Ստեփանոս եկեղեցու նավակատյաց հանդեսը կատարվել է 2010 թ. մայիսի 5-ին¹⁸: Այդուհետ ամեն տարվա այդ նույն օրը դարբասցիները որոշել են նշել որպես իրենց բնօրրանի օր՝ կազմակերպելով դիտարժան տոնախմբություններ ու զվարճանքներ:

Նորաշեն եկեղեցին ոչ միայն Դարբասի, այլեւ մերձակա գյուղերի բնակչության համախմբման եւ հոգեւոր կյանքի վերածննդի սկիզբ է դրել: Եկեղեցու շրջակայքը բարեշեն է ու խնամված: Ս. Ստեփանոս եկեղեցին գործող եկեղեցի է, որտեղ քահանայագործում է Դարբասի եւ շրջակա գյուղերի հոգեւոր հովիվ Տ. Ընծա քհն. Միրզոյանը:

Բացի վերոհիշյալ եկեղեցիներից՝ 1991 թվականից ի վեր Սյունիքի մարզում կառուցվել են նաեւ ավելի համեստ չափերով հատկանշվող փոքրածավալ աղոթատուն-սրբավայրեր, որոնք հայտնի են որպես մատուռներ: Հարկ ենք համարում այստեղ նշել, որ անկախացումից հետո ՀՀ-ում կառուցված բազմաթիվ փոքրածավալ եկեղեցական կառույցներ կոչվել են մատուռներ ընդհանուր անվանումով: Այդ կառույցների

¹⁸ Տե՛ս Վ. ՕՐԲԵԼՅԱՆ, Դարբասում համաժողովրդական տոնախմբություն էր՝ գյուղի հոգեւոր վերածննդի օրվա կապակցությամբ <https://syuniacyerkir.am/darbasum-hamazhokhovrdakan-tonakhmbutyun-er-gyukhi-hoge%D6%82or-veratsnndi-orra-kapaktsutyamb> առ 15.10.2022:

համեստ չափերը նկատի ունենալով՝ սովորաբար դրանք համարում են մատուռներ, ոչ թե եկեղեցիներ: Սակայն մատուռները (վկայարաններ) քրիստոնեական պաշտամունքային յուրօրինակ կառույցներ են, որոնք կառուցվում են որեւէ վկայի՝ մարտիրոսի կամ նահատակի գերեզմանի կամ մասունքների վրա: Մատուռները, ըստ էության, պարզ հորինվածքով փոքր չափեր ունեցող եկեղեցիներ են՝ ուղղանկյուն հատակագծով, թաղածածկ, երկթեք կտուրով: Այդ շինությունները հաճախ կառուցվել են բնակավայրերում, ճանապարհների եզերքին, աղբյուրների ակունքների մոտ, գերեզմանատներում, վանական համալիրներում: Հետագայում մատուռ են անվանվել ընդհանրապես փոքրածավալ եկեղեցիները, սակայն իրականում մատուռի եւ եկեղեցու տարբերության հիմքում ոչ թե այդ կառույցների չափերն են, այլ այն, որ մատուռի հիմքերն օրհնված եւ օծված քարերով նվիրագործված չեն: Մատուռներ են կոչվում նաեւ եկեղեցիների օծված ավանդատները, որոնք պատարագամատույց անշարժ սեղան ունեն¹⁹:

Անկախացումից հետո Սյունիքի մարզում կառուցվել են հետևյալ փոքրաչափ եկեղեցական կառույցները. 1. Ս. Վարդան (Տեղ, 1997 թ.), 2. Ս. Աստվածածին (Արծվանիկ, 2007 թ.), 3. Ս. Տրդատ (Գորիս, 2007 թ.), 4. Ս. Խաչ (Աշտարկան, 2008 թ.), 5. Ս. Հովհաննես Մկրտիչ (Ճակատեն, 2009 թ.), 6. Ս. Նարեկ (Ախլաթյան)²⁰: Այս ցանկում հիշատակված Ճակատենի նորակառույց Ս. Հովհաննես Մկրտիչ աղոթատունը գտնվում է գյուղից մոտ 3 կմ հարավ՝ Ծավ տանող ավտոմայրուղու աջ կողմում՝ բարձունքի վրա: Մատուռի կառուցումն սկսվել է 2009 թ. բարերար Արշավիր Սարգսյանի հովանավորությամբ: Նույն թվականին էլ մատուռն օծվել է Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի ձեռամբ²¹: Օծումից անմիջապես հետո Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռն ուխտատեղի է դարձել ոչ միայն ճակատենցիների, այլեւ տարածաշրջանի հավատացյալ բազմաթիվ հայորդիների եւ Սյունիք այցելող ուխտավորների համար:

¹⁹ Տե՛ս ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ծիսական բառարան, Անթիլիաս-Լիբանան, 1979, էջ 157–158, Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 696:

²⁰ Տե՛ս Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Վ. ՍԱՐԴԻԱՆՅԱՆ, Սյունիքի նոր եկեղեցիները կամ Սուրիկ Խաչատրյանի «աստվածահաճո» գործը. նա որդու անունով մատուռ է կառուցել <https://hetq.am/hy/article/64990> առ 15.10.2022:

²¹ Տե՛ս Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, «Դավիթ բեկ» հասարակական կազմակերպությունը՝ Սյունիքի սրբավայրերի եւ հնավայրերի պատշաճ պահպանության ջատագով <https://syuniacyerkir.am/davit-bek-hasarakakan-kazmakerputyuny-syuniqi-srbavayreri-e%D6%82-hnavayreri-patshach-pahpanutyantagov> առ 23.10.2022:

Բացի վերը թվարկված կառույցներից՝ Տ. Արարատ քհն. Պողոսյանի հրապարակած ցուցակում (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության շրջանում նոր կառուցված, վերականգնված եւ մասնակիորեն վերանորոգված եկեղեցիների ու վանքերի ցանկ) Սյունիքի մարզում նշված են նաեւ հետեւյալ եկեղեցական կառույցները. Ս. Աստվածածին (Եղվարդ, 2008 թ.), Ս. Աստվածածին (Քաջարան, 2010 թ.), Ս. Գրիգոր Նարեկացի (Տոլորս, 2005 թ.), Ս. Մարտիրոս (Տոլորս, 2010 թ.), Ս. Պողոս-Պետրոս (Ուլծ, 2007 թ.)²²:

Տոլորս գյուղի Ս. Մարտիրոս մատուռը կառուցվել է Սուրեն Գրիգորյանի երազի հիման վրա: 2009 թ. դեկտեմբերի 31-ին Սիսիան–Գորիս ավտոմայրուղում տեղի ունեցած վթարը ճակատագրական եղավ 29-ամյա Սուրենի համար: Տուժածին բժիշկներն ախտորոշել էին ողնուղեղի վնասվածք: Մոտ երեք ամիս անգիտակից վիճակում գտնվելուց հետո երիտասարդը բոլորի համար անսպասելի կերպով ոտքի է կանգնել ու պատմել հետեւյալը. «Հիշում եմ՝ մի դուռ կար՝ ուզում էի բացել, ներս մտնել, չէի կարողանում: Տարիքով մի մարդ եկավ ու ասաց. մի մտիր, կոշիկներդ հագիր, գնա այստեղից, դեռ քո ժամանակը չէ: Փորձում էի հագնել, մի կոշիկս չէր մտնում, էդ մարդը թե՛ տար, տանը կհագնես»²³:

Հրաշակերտ Ս. Մարտիրոս մատուռն օծել է Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Զավեն աբղ. Յազիչյանը: Նոր կառուցված մատուռում են մկրտվել տարիներ առաջ վթարից փրկված Սուրեն Գրիգորյանի կինն ու երկու երեխաները:

Սյունյաց թեմի հոգեւորականութունն իր գնահատելի գործունեություններ մասնակցում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Սյունյաց թեմի իրականացրած բարեգործական, մարդասիրական միջոցառումներին: Թեմի նորակառույց եկեղեցիներում քահանայագործող Հայ Առաքելական Եկեղեցու նվիրյալ հոգեւորականներն իրենց գործուն մասնակցությունն են բերում մարզային կյանքի տարբեր ոլորտներում իրականացվող աշխատանքներին:

²² Տե՛ս Տ. ԱՐԱՐԱՏ ՔԷՆ. ՊՈՂՈՍՅԱՆ, Նախանձախնդիր Հայրապետը, Էջմիածին, 2011, ԺԱ., 2011, էջ 85–92, [https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2011/2011\(11\).pdf](https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2011/2011(11).pdf) առ 23.10.2022:

²³ Տե՛ս Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, Հոգու եւ մարմնի փրկության տաճար <https://www.lragir.am/2011/02/22/44445/> առ 23.10.2022:

Այսպիսով՝ 1991 թ. հետո նորանկախ Հայաստանի Հանրապետությունում հայկական եկեղեցական ճարտարապետությունը վերածննդի եւ վերելքի շրջան ապրեց: Ժամանակակից հայ ճարտարապետներն ու վարպետ-շինարարները, կիրառելով նոր տեխնոլոգիաներ, լուծումներ ու մտահղացումներ, նորակառույց եկեղեցիները՝ այդ թվում նաեւ Սյունիքի մարզի եկեղեցիները, բացառապես նախագծում եւ կառուցում են՝ պահպանելով ու զարգացնելով հայկական միջնադարյան եկեղեցական ճարտարապետության եւ Սյունիքի ժողովրդական ճարտարապետության ու շինարարական արվեստի լավագույն ավանդները:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Սյունիքի մարզ, եկեղեցի, 2001–2022 թթ., եկեղեցական ճարտարապետություն, Սյունյաց ճարտարապետական դպրոց, Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի, Դավիթ Բեկի Ս. Գայանե եկեղեցի, Քաշունիի Ս. Սարգիս եկեղեցի, Ծինուխայրի Ս. Գրիգոր Տաթևացի եկեղեցի, Ծաքիի Ս. Աստվածածին եկեղեցի, Տոլորսի Ս. Հռիփսիմե եկեղեցի, Դարբասի Ս. Ստեփանոս եկեղեցի, Ճակատենի Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռ, Տոլորսի Ս. Մարտիրոս մատուռ:

РЕЗЮМЕ

В истории средневекового армянского церковного зодчества архитектурная школа Сюника с ее талантливыми архитекторами, мастерами-строителями и мастерами хачкаров занимает поистине почетное место. Представители этой архитектурной школы обогатили армянское церковное зодчество прекрасными и уникальными памятниками, оставив неизгладимый след в истории церковной архитектуры Армении. С 1991 года современные армянские архитекторы и мастера-строители, применяя новые технологии, решения и идеи, при проектировании и возведении новых церквей и часовен, в том числе и в Сюникской области, главным образом сохраняют и развивают лучшие традиции нашей средневековой армянской церковной архитектуры.

В этой статье нами будут рассмотрены только нововозведенные церкви и часовни Сюникской области Армении (церковь Св. Месропа Маштоца в Ка-



ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ
(2001–2022 թթ.)

1. Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի
2. Դավիթ Բեկի Ս. Գայանե եկեղեցի
3. Քաշունիի Ս. Սարգիս եկեղեցի
4. Շինունայրի Ս. Գրիգոր Տաթևացի եկեղեցի
5. Շաֆիի Ս. Աստվածածին եկեղեցի
6. Տոլորսի Ս. Հովսեփսյան եկեղեցի
7. Դարբասի Ս. Ստեփանոս եկեղեցի
8. Հակատենի Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռ
9. Տոլորսի Ս. Մարտիրոս մատուռ



1. Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի



2. Դավիթ Բեկի Ս. Գայանե եկեղեցի



3. Քաշունիի Ս. Սարգիս եկեղեցի



4. Շինունայրի Ս. Գրիգոր Տաթևակացի եկեղեցի



5. Շաֆիի Ս. Աստվածածին եկեղեցի



6. Տոլորսի Ս. Հովսիսիմե եկեղեցի



7. Դարբասի Ս. Ստեփանոս եկեղեցի


пане, церковь Св. Гаяне в Давид Беке, церковь Св. Саргиса в Кашуни, церковь Св. Григора Татеваци в Шинуайре, церковь Св. Аствацацина в Шаки, церковь Св. Рипсима в Толорсе, церковь Св. Степаноса в Дарбасе, часовня Св. Ованеса Мкртича в Чакатене, часовня Св. Мартироса в Толорсе). В статье также представлены архитектурные формы вышеназванных церквей и часовен, история их строительства и ряд других смежных вопросов.

SUMMARY

In the history of the medieval Armenian Church architecture, the architectural school of Syunik has a truly honorable place with its talented architects, master builders and cross-stone masters. Representatives of this architectural school left an immortal memory in the history of the medieval Armenian Church architecture, raising it to a new level. In 1991, and later in the newly independent Republic of Armenia, the Armenian Church architecture experienced a revival, and a new period of growth. Modern Armenian architects and master builders now continue the best traditions of the medieval Armenian Church architecture applying new technologies, solutions and ideas in the building of new churches, including the churches of the Syunik province.

In this article, we present the newly built churches and chapels of the Syunik province of Armenia (St. Mesrop Mashtots Church in Kapan, St. Gayane Church in Davit Bek, St. Sarkis Church in Kashuni, St. Gregory of Tatev Church in Shinuhayr, Holy Mother of God Church in Shaki, St. Hripsime Church in Tolors, St. Stepanos Church in Darbas, St. John the Baptist Chapel in Chakaten, St. Martiros Chapel in Tolors). In the article, we touched upon the architectural forms of the above-mentioned churches and chapels, the history of construction and other related issues.





ՀԱՅՈՅ ՊՈԼՍՈՅ ՎԱՆԱԿԱՆ ԵՒ ԴՊՐԵՎԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ.
ԳԻՏԱՔՆԱԿԱՆ ՀԱՅԵԱՅՔ Ի ՆԵՐՔՈՅ ԿՈՂՄԱՆԷ

Նոգեւոր լուսաւորութիւնը մշտապէս Հայ Եկեղեցու սրբազան առաքելութեան կարեւորագոյն բաղադրիչներէից է եղել, այժմ եւս է ու լինելու է առյաւէտ: Ընդհանրապէս ուսումն ու կրթութիւնը, դաստիարակութիւնը մեր Առաքելական կառոյցի հայրերի յատուկ հոգածութեան եւ ուշադրութեան ծիրում են եղել: Եւ ամենեւին պատահական չէ, որ Գարեգին Բ. Ներսիսեան կաթողիկոսը ժամանակին շեշտել է՝ «Մարդ ոչ ուսեալ, է կորուսեալ»¹: Նոյն խնդրով էր մտահոգ Մկրտիչ Ա. Խրիմեան հայրապետը, երբ ասում էր. «Աշխարհի լոյսերը բաւական չեն մեր կեանքի համար, եթէ մենք մտքի լոյս չունենանք, այն է՝ ուսում եւ կրթութիւն...»²:

1901 թ. Թուրքիայի միայն 33 գաւառներում եղել է 478 հայկական վարժարան, ուր ուսանել է 38 274 տղայ, 15 640 աղջիկ, եւ դասաւանդել է 1005 տղամարդ ու 398 կին ուսուցիչ³: Ընդ որում՝ բերուած տուեալները սպառիչ չեն, որովհետեւ հայկական կրթարանների մասին տեղեկութիւններ հաղորդող միայն «Ա.» տետրակն է հրատարակուել՝ արձանագրելով անցեալ դարասկզբին տիրած իրավիճակը, որ 1915-ին կտրուկ փոխուելու էր: 2020-ին Ստամբուլի Բիլգի համալսարանի սոցիոլոգիայի եւ կրթական աշխատանքների բաժանմունքը մի ուշագրաւ գիտաժողով է կազմակերպել՝ «Թուրքիայում փոքրամասնութիւնների դպրոցները եւ փոքրամասնութիւնների կրթական իրաւունքը. անհաւասարութեան եւ վերանալու դէմ հարիւրամեայ պայքար» խորագրով⁴: Այս գիտաժողովի ընթացքում ազգային փոքրամասնութեանց իրաւունքներ

¹ Տէս ԳԵՒՈՐԳ ՄԱԴՈՅԵԱՆ, Հայկական ընտանիք, Երեւան, 2018, էջ 38:

² Անդ:

³ Տէս «Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանաց Թուրքիոյ», Տետր Ա., Կոստանդնուպոլիս, 1901, աղյուսակ 33. http://greenstone.flb.sci.am/gsd/collect/-hajgirqn/book/vichakacuyc_1901.pdf:

⁴ Տէս <https://allturkey.org/1168/jonpphiaynol-16-haykական-դպրոց-է-մնացել/>:

րի ուսումնասիրությունները զբաղվում են միջազգային խմբի (Minority Rights Group) Թուրքիայի գծով համակարգող Նուրջան Քաեան (Nurcan Kaya), Վկայակոչելով Bianet.org լրատուական կայքը, յայտարարել է, որ «Օսմանեան տիրապետության ժամանակաշրջանում փոքրամասնությունները 2596 դպրոցներից այսօր ընդամենը 22 դպրոց է գործում Թուրքիոյ մէջ»: Իր զեկոյցում նա ի մասնաւորի ասել է. «Թուրքիայում ներկայումս ընդամենը 16 հայկական, 5 յունական եւ մէկ հրէական դպրոց է գործում: Թէեւ փոքրամասնությունների դպրոցները մասնաւոր եւ օտարներին պատկանող չեն, սակայն նրանք իրենց կարգավիճակի վերաբերեալ օրէնսդրութիւն չունեն եւ յիշատակում են միայն իրենց անուններով: Լինելով Թուրքիայի Հանրապետության քաղաքացիներ՝ այդ մարդիկ սեփական երկրում որպէս «պատանդ» են ապրում»,— ասել է նա»⁵: Սրան պէտք է զուգահրել գրող-հրապարակախօս տիկնոջ 2012-ին հնչեցրած տուեալները, ուր գրեթէ բոլոր ցուցանիշները նոյնն են, սակայն հայկական դպրոցների թիւը 15 է⁶:

Թուրքիայում հայկական գիտակրթական եւ մշակութային ներկայութիւնը շարունակական եւ խորին ուսումնասիրութեան կարիք ունի, եւ այս ուղղութեան հետազոտությունները խրախուսելի եւ սպասուած են:

Հրամանաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգնի Երկրորդի Վեհափառ եւ Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց՝ Մայր Աթոռի հրատարակչութիւնն ի լոյս է ընծայել Յարութիւն վարդապետ Տամատեանի՝ «Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան վանական-դպրեվանական կեանքը» աշխատութիւնը⁷: Առաջինն ուշադրութիւն է գրաւում այն, որ գրքի խմբագրութիւնն իրականացրել են պատմական գիտութիւնների թեկնածուներ, Գէորգեան Ճեմարանի եւ Վազգէնեան հոգեւոր դպրանոցի երկարամեայ սիրուած դասախօսներ Աւետիս Յարութիւնեանն ու Անի Ֆիշենկճեանը: Սա մի հանգամանք է, որ շեշտում է հրատարակչութեան լուրջ վերաբերմունքը գործին: Այստեղ ցաւով պէտք է նկատենք, որ վերջին տարիներին Հայաստանեան որոշ «հրատարակչութիւններ» գրքերը «թողարկում» են ընդհանրապէս առանց խմբագրական եւ սրբագրական միջամտութեան: Եւ թերեւս հէնց այս պարագայում է շահեկանօրէն առանձ-

⁵ Անդ:

⁶ Տե՛ս <https://www.hurriyetdailynews.com/turkeys-minority-schools-problems-inquired-18581>

⁷ Ս. էջմիածին, 2023, 184 էջ:

նանում Մայր Աթոռի հրատարակչությունը, որ սրբօրէն պահում է գրատպութեան դարաւոր օրէնքները: Նոյն բժախնդրութիւնը նկատելի է նաեւ էջկապի-էջադրման հարցում, երբ Մայր Աթոռի ձեւաւորողները կիրառում են աւանդական պահանջներ, որ թերեւս անյայտ են մերօրեայ շատ տպագրատների (իբրեւ օրինակ յիշենք յատկապէս «կախեալ» կամ «շարդած» տողերի երեւոյթը, որ անցեալում գրեթէ բացառուած էր, իսկ հիմա ասես «պարտադիր» է դարձել):

Գալով խնդրոյ առարկայ հրատարակութեանը՝ նախ նկատենք, որ այն Յարութիւն Տամատեանի վարդապետական թեզն է՝ երկարատեւ եւ քրտնաջան աշխատանքի, անքուն գիշերների արգասիք: Եւ միայն իր այս գրուածքը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում ներկայացուող չափանիշների համապատասխանութեամբ շարադրելով եւ հրապարակելով կերպով պաշտպանելով է երիտասարդ աբեղան արժանացել վարդապետական աստիճանի: Սրանով իսկ կարելի է արձանագրել, որ գիտական բոլոր պահանջներն արդէն իսկ բաւարարուած են եղել պաշտպանութեան ժամանակ, այլապէս արդիւնքը (յանձնախմբի որոշումը) որեւէ դէպքում չէր կարող լինել դրական: Գրքի առաջին իսկ էջերում կարելի է նկատել հեղինակի կրած դժուարութիւնների, գիտակցուած պատասխանատւութեան ակնարկներ: Տամատեանը խոստովանում է՝ «Այս ինքնին աննախընթաց, սակայն նոյնքան խորհրդաւոր, ծրագիր մըն էր, որով Պոլսոյ Պատրիարքութեան եւ Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռոյ միջեւ եկեղեցաբանական նոր համագործակցութեան մը սկիզբ կը դրուէր»⁸: Անկախ հեղինակի նշումներից, անշուշտ, կարելի էր ենթադրել, որ Կոստանդնուպոլսի պատրիարքութեան կառույցների պատմութիւնը քննելիս խոչընդոտները շատ էին լինելու: Սակայն, ինչպէս գիտենք, բոլոր դժուարութիւնները նահանջում են, երբ հաւատքն ու սէրն են դառնում գերակայ, առաւել եւս, երբ ապրում եւ ստեղծագործում ես Աստուածորդու մատնանշած վայրում՝ առաքելապատիւ Գրիգոր Լուսաւորչի հիմնած սրբավայրում. «Մայր Աթոռոյ միաբանութիւնը, վանական մթնոլորտը եւ մատենադարանը, արդէն իսկ յոյժ նպաստաւոր պայմաններ ստեղծած էին նուաստիս, որպէսզի սկսէի ուսումնասիրութեան եւ Մայր Աթոռոյ վարդապետական համակարգին զուգահեռ լծուէի աշխատանքին»⁹: Ինչպէս դիտելի է Նախաբանից բե-

⁸ Անդ, էջ 5:

⁹ Անդ:


րեալ հատուածներից, այս բաժնում հեղինակն անմիջական զրոյց է վարում ընթերցողի հետ՝ կիսելով իր յոյզերն ու ապրումները: Սակայն ոճն իսկոյն փոխում է, երբ սկսում է բուն շարադրանքը: Այն ներկայանում է Ա. (էջ 13), Բ. (էջ 30), Գ. (էջ 139) գլուխներով, Եզրակացութեամբ (էջ 151) եւ Յաւելուածով (էջ 157): 176-րդ էջից Օգտագործուած գրականութեան ցանկն է, որով եւ աւարտում է գիրքը:

Առաջին գլուխը՝ «Ակնարկ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան Արմաշ վանքին», բաղկացած է 8 ենթաբաժնից, որոնցում մանրամասն եւ համակողմանի տեղեկութիւններ տալով քննուող նիւթի վերաբերեալ, հեղինակը համապատասխան կերպով վերլուծում եւ մեկնում է հանգամանքները: Յաջորդող՝ «Կ. Պոլսոյ վանական (դպրեվանքի) կեանքը» վերնագրուած երկրորդ (5 ենթագլուխ) եւ երրորդ՝ «Վանական կանոնները ազգային սահմանադրութեան գծով» (9 ենթաբաժին) վերտառեալ գլուխներում մշտապէս նկատելի են հետազօտողի քաջատեղեակութիւնը, համապարփակ եւ խորին իմացութիւնը:

Տարբեր աղբիւրներից հաւաքուած վկայութիւնները, փաստերն ու տեղեկութիւնները ամբողջական պատկեր են ստեղծում, ընթերցողին ծանօթացնելով այն անբաւելի հոգեւոր հարստութեանը, որ ստեղծուել եւ կուտակուել է պոլսահայոց վանական եւ դպրեվանական կեանքի դարաւոր ընթացքում: Սա վստահաբար մի նիւթ է, որ կարօտ է մշտամնայ ուշադրութեան եւ նորանոր ուսումնասիրութիւնների:

ԱՐՄԷՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ԵՊՀ



СОДЕРЖАНИЕ

ПРОПОВЕДИ

- Проповедь **ЕПИСКОПА АРМАША НАЛБАНДЯНА**, по поводу 24-ой годовщины восшествия на престол и помазания Его Святейшества Гарегина II, Верховного Патриарха и Католикоса всех армян, произнесенная в монастыре Св. Гаяне 5
- Проповедь **ИЕРОМОНАХА ДЕРЕНИКА СААКЯНА**, произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне 10
- Проповедь **АРХИМАНДРИТА ТОВМЫ ХАЧАТРЯНА**, произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне 14
- Проповедь **АРХИМАНДРИТА ГАРЕГИНА АМБАРДЗУМЯНА**, произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне 18

РЕЛИГИОВЕДЕНИЕ

- СВ. ГРИГОРИЙ БОГОСЛОВ (НАЗИАНЗИН)** — Слово 27, против евномиян и о богословии первое, или предварительное. 22
- КАТОЛИКОС СИМЕОН ЕРЕВАНЦИ** — Возвращенный долг 31
- АВЕТИС КАЛАШЯН** — Его Святейшество Гарегин II, Верховный Патриарх и Католикос Всех Армян о школьном образовании. 51

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

- АСАТУР САРЯН** — Ованес Трапизонци и его Путевые заметки о чудотворной силе святого миро 71
- МАРИАМ МАРГАРЯН, ГАРИК ПОГОСЯН** — Армянская Апостольская Святая Церковь и проблемы всеобщего преобразования правления 98

МАРИНЕ САРКСЯН — Публицистика Ваана Терьяна, касающаяся некоторых приоритетов национальной стратегии. 119


АМО СУКИАСЯН — Письма-докладные полномочного представителя Советской Армении в Харькове Овсеп Каракхяняна об армянах на Украине (1921—1922) 140

СООБЩЕНИЯ

АРМАН МАЛЮЯН — Новопостроенные церкви Сюникской области (2001—2022) гг. 151

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

АРМЕН ОВАКИМЯН — Монашеская и монастырская семинарская жизнь константинопольских армян: научно-исследовательский обзор. 164



CONTENTS

SERMONS

- Sermon delivered by **H.G. BISHOP ARMASH NALBANDIAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery on the occasion of the 24th anniversary of enthronement of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians 5
- Sermon delivered by **REV. FR. DERENIK SAHAKYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 10
- Sermon delivered by **ARCHIMANDRITE THOVMA KHACHATRYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 14
- Sermon delivered by **ARCHIMANDRITE KAREKIN HAMBARDZUMYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 18

RELIGIOUS STUDIES

- ST GREGORY THE THEOLOGIAN (OF NAZIANZUS)** – Oration 27:
Against the Eunomians and the First Theological Oration. 22
- CATHOLICOS SIMEON OF YEREVAN** – Debt repayment 31
- AVETIS KALASHYAN** – His Holiness Karekin II, Supreme Patriarch
and Catholicos of All Armenians, on the school education 51

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

- ASATUR SARYAN** – Hovhannes of Trebizond and his Travelogue about
the miraculous power of the Holy Chrism 71
- MARIAM MARGARYAN, GARIK POGHOSYAN** – Armenian Apostolic
Holy Church and the problems of transformation of universal governance 98


MARINE SARGSYAN — Vahan Terian’s publicism on some priorities of the national strategy	119
HAMO K. SUKIASYAN — Letter-reports of Hovsep Karakhanyan, the plenipotentiary of Soviet Armenia in Kharkov, on the Armenians of Ukraine (1921 — 1922)	140

ESSAYS

ARMAN MALOYAN — Newly built churches of Syunik province (2001—2022) . .	151
--	-----

LITERARY REVIEW

ARMEN HOVAKIMIAN — Monastic and seminary life of the Armenian Constantinople: inward-looking scientific perspective.	164
--	-----



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

- Տ. ԱՐՄԱՇ ԵՊՍ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ** քարոզը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան եւ օծման 24-րդ տարեդարձի առթիվ՝ խօսուած Ս. Գայանէ վանքում 5
- Տ. ԴԵՐԵՆԻԿ ԱԲՂՅ. ՍԱՀԱԿԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում մատուցուած Ս. Պատարագին. 10
- Տ. ԹՈՎՍԱ ՎՐԴ. ԽԱԶԱՏՐԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում մատուցուած Ս. Պատարագին. 14
- Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում մատուցուած Ս. Պատարագին. 18


ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

- Ս. ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ (ՆԱԶԻԱՆՉԱՅԻ) —** Ճառ ԻԷ.
Ընդդէմ եւնոմիոսականների եւ աստուածաբանութեան մասին՝ առաջին կամ նախնական 22
- ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՑԻ —** Պարտավճար 31
- ԱԵՏՏԻՍ ՔԱԼԱՇԵԱՆ —** Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը դպրոցական կրթութեան մասին 51

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- ԱՍԱՏՈՒՐ ՍԱՐԵԱՆ —** Յովհաննէս Տրապիզոնցին եւ նրա Ուղեգրութիւնը սրբալոյս միւռոնի հրաշագործ զօրութեան մասին 71

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐԵԱՆ, ԳԱՐԻԿ ՊՕՂՈՍԵԱՆ — Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ համընդհանուր կառավարման կերպավորիման հիմնախնդիրները	98
ՄԱՐԻՆԷ ՍԱՐԳՍԵԱՆ — Վահան Տէրեանի հրապարակախօսութիւնը՝ ազգային ռազմավարութեան մի քանի գերակայութիւնների մասին	119
ՀԱՄՍՕ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ — Խարկովում Խորհրդային Հայաստանի լիազօր ներկայացուցիչ Յովսէփ Կարախանեանի նամակ-գեկուցագրերն Ուկրաինայի հայերի մասին (1921—1922 թթ.)	140
<i>ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ</i>	
ԱՐՄԱՆ ՄԱՂՈՅԵԱՆ — Սիւնիքի մարզի նորակառոյց եկեղեցիները (2001—2022 թթ.)	151
<i>ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ</i>	
ԱՐՄԷՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ — Հայոց Պոլսոյ վանական եւ դպրեվանական կեանք. գիտաքննական հայեացք ի ներքոյ կողմանէ	164



- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ալգերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՅՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՃ** - Գեղորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեան), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյան, Կ. Կոտանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲՆ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Մարդարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Սո. Մալխասյան), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Սո. Ս. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բաբսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՑՀԶ** - Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Անտիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վէմ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- АГВ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, ИАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- CAH** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829—4243
eISSN 2953—7843

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրույթեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քնյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Հեռ. (+374-10) 517-276

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.12.2023 թ.



ԷՋՄԻԱԾԻՆ
ԷԶՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ